ԳՈՎՀԱՆՆԵՍ ՏԵՐ-ԳԱՎՈՅԱՆ

ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՀԱՇՎԵՏՈՒՄՍՐ

ԵՐԵՎԱՆ

«МАТЕНАДАРАН»
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ им. МАШТОЦА
ПРИ СОВЕТЕ МИНИСТРОВ АРМЯНСКОЙ ССР

ТОРГОВЫЙ ДНЕВНИК ОГАНЕСА ТЕР-ДАВТЯНА ДЖУЛЬФИНЦА

Подготовили к изданию
Л. С. ХАЧИКЯН и А. Д. ПАПАЗЯН

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1984

9(47.925)
Ղ-85

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌՈՒՆԹԵՐ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՏԵՐ-ԴԱՎԹՅԱՆ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՀԱՇՎԵՏՈՒՄԱՐԸ

1791

Աշխատասիրությամբ
Լ. Ս. ԽԱՉԻԿՅԱՆԻ և Հ. Դ. ՓԱՓԱԶՅԱՆԻ

ՀԱՅԿ ԳԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆ-Տ
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
Ин-т востоковед. АН Арм. ССР

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1984

ԳՄԴ 63.2
Հ 853

«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ»
ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ս. Ա. Ավագյան, Վ. Ա. Բայբուրդյան, Վ. Ռ. Դերիգոսյան *(գիտական քարտուղար)*,
Լ. Ս. Խաչիկյան *(գլխավոր խմբագիր)*, Խ. Ա. Մուշեղյան, Հ. Գ. Փափազյան
(գլխավոր խմբագրի տեղակալ)

Խմբագիր՝
Վ. Ա. ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

Հովհաննես Ջուղայեցի.
Հ853 *Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու Հաշվետումարը /Աշխատասիրությամբ Լ. Ս. Խաչիկյանի և Հ. Դ. Փափազյանի; Խմբ.՝ Վ. Ա. Բայբուրդյան.—Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984.—425 էջ.—(Տնտ. պատմ. վավերագրեր /Մատենադարան, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Մաշտոցի անվ. հին ձեռագրերի ինստ., Ա.).*

«Հաշվետումարը» պարունակում է Հովհաննես Ջուղայեցու 1682—1693 թթ. Հնդկաստանում, Նեպալում և Տիբեթում ծավալած առևտրական գործունեության նկարագիրը, հանդիսանալով բացառիկ ինքնատիպ մի սկզբնաղբյուր հայ վաճառականության միջազգային առևտրում խաղացած դերի և հատկապես հիշյալ երկրների արտաքին ու ներքին առևտրի և տնտեսական կյանքի ուսումնասիրության համար։

Սույն հրատարակությամբ մասնագետների ուշադրությանն են ներկայացվում «Հաշվետումարում» ընդգրկված բոլոր հաշվապահական մատյանների վերծանված բնագրերը, օտար բառերի ու տերմինների ընդարձակ բառարանով և առաջաբանով։

Նախատեսված է պատմաբանների և տնտեսագետների համար։

0504030000 / 703(02)—84 — 92—81 Հ

ԳՄԴ 63.2
902.9

© *Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1984*

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Սույն հատորի հրապարակումով Մաշտոցի անվան Մատենադարանը անկյունաքարն է դնում «Տնտեսական պատմության վավերագրեր» հայագիտական մի նոր մատենաշարի, որը բաղկացած է լինելու Հայաստանի և հարևան ու հեռավոր մի շարք երկրների տնտեսական կյանքի բազմազան երևույթների ուսումնասիրության համար հարուստ նյութեր պարունակող մի քանի տասնյակ հատորներից:

Առաջին հերթին գիտական շրջանառության մեջ են դրվելու այն հաշվետումարներն ու դիվանական փաստաթղթերը, որոնք ստեղծվել են հայ խոշոր կապիտալի ներկայացուցիչների կողմից ԺԷ—ԺԸ դդ. ընթացքում նրանց գործունեության ոլորտի մեջ մտնող տարբեր աշխարհամասերում՝ Հոլանդիայից սկսած մինչև Տիբեթ, Ռուսաստանից մինչև Իրան և Հնդկաստանի տարբեր նահանգները:

Այդ աղբյուրները բացառիկ նշանակություն ունեն ինչպես հայրենի երկրում, այնպես էլ հեռավոր երկնակամարների տակ հայ վաճառականների ծավալած առևտրավոխադրական գործունեության ամենատարբեր բնագավառների ուսումնասիրության համար: Իր հնությամբ ու հարուստ բովանդակությամբ առանձնահատուկ տեղ է գրավում մատենաշարի անդրանիկ այս հատորի նյութը կազմող Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու հաշվետումարը, որի գրանցումները կատարվել են 1682—1693 թթ. ընթացքում և վերաբերում են Իրանի, Հնդկաստանի, Նեպալի ու Տիբեթի տնտեսական կյանքի պատմությանը:

Սրան հաջորդելու են մի շարք այլ հաշվետումարներ. Շահվելու որդի Սարհադի մատյանը՝ գրանցված 1712—1718 թթ. Իրանում, Անդրկովկասում, Ռուսաստանում և Հոլանդիայում, ռուսահայ մեծահարուստ արդյունաբերողկալվածատեր Լազարյանների նախահայր Նազարեթի որդիների՝ Հարությունի, Աղազարի և Մանուկի առևտրական ընկերության օրագիրը, որի գրառումները կատարվել են 1741—1759 թթ. Սպահանում, Ռեշտում, Աստրախանում, Մոսկվայում և Պետերբուրգում (այս երկու մատյանները պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում), Եղիա Մուշեղյանի առևտրական օրագրերը, որոնք ընդգրկում են գրական ու գիտական մեծ վաստակ ունեցող այդ անձնավորության 1711—1725 թթ. գործունեության մասին արժեքավոր տվյալներ (պահվում է Մոսկվայի հին փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվում) և Սովետական Միության ու արտասահմանյան մի շարք այլ գրադարաններում ու վանական հաստատություններում պահվող նմանատիպ այլ մատյաններ և վավերագրեր: Այդ վավերագրերից շատերի մասին գիտական գրականության մեջ դեռևս ոչինչ չի ասված: Ըստ նախնական տվյալների, մեծ հետաքրքրություն են ներկայացնում Լիբանանի Զմմառ ավանի հայ

կաթուղիկե վանքի մատենադարանում պահվող քանից ավելի մատյաններն ու տարբեր վանառականների նամակների հավաքածուները. դրանցից մեկն, օրինակ, կրում է «Օրքսաօրական Ըստամպոլու Սոֆիալեան Աբրահամ աղային առևտրոյն, որ ի Պաղտատ, ընդ կառավարութեամբ պարոն Խօճասարի՝ եղբօր իւրոյ, սկսեալ յամի տեառն 1784, յունվարի 2» խորագիրը և պարունակում է Բաղդադի ու Հալեպի վրայով կատարվող միջազգային ապրանքափոխանակության մասին հետաքրքրական տվյալներ:

Ջանձին մի հատորի նյութ է Նոր-Ջուղայի առևտրական դպրոցի նշանավոր վարժապետ Կոստանդ Ջուղայեցու 1685 թ. շարադրած «Աշխարհաժողով» ձեռնարկը, ուր ստույգ տեղեկություններ են զետեղված ջուղահայ վանառականների գործունեության ոլորտի մեջ մտնող երկրներում կիրառվող չափ ու կշռի սիստեմների, դրամական միավորների, ներմուծվող ու արտածվող ապրանքների, նրանց տեսակների և գների մասին:

Հիշատակելի է Բրիտանական գրադարանի O. P. B. Lansdowne 1047 և 1048 համարների տակ պահվող երեք հարյուրից ավելի պարտամուրհակների, վարկային տարբեր բովանդակության փաստաթղթերի, կտակների և այլ գրությունների հավաքածուն, որի նյութերը վերաբերում են ԺԸ դարի առաջին հինգամյակին և ստեղծվել են Նոր-Ջուղայում, Սուրաթում, Մադրասում, Կալկաթայում, Բասրայում և այլ վանառաշահ քաղաքներում:

Սկզբնաղբյուրների մյուս խոշոր խումբը իր հիմնական մասով վերաբերում է գյուղատնտեսության բնագավառին: Պահպանվել են միջնադարյան վանական ու եկեղեցական մի շարք հաստատությունների կալվածքների, դրանց ձեռքբերման աղբյուրների, մշակման եղանակների և հարակից հարցերի մասին ուշագրավ տվյալներ պարունակող մի շարք ձեռագրեր, որոնց շարքում առանձնանում է Սանահնի վանքի «Քյոթուկ» կոչվող նշանավոր մատյանը: Տնտեսական գործունեության տարբեր երևույթների մասին հարյուրավոր բովանդակալից գրանցումներ են պահպանվել միջնադարյան վանական հաստատություններում գործածության մեջ եղած ծիսական մի շարք գրքերի, մասնավորապես Հայսմավուրքների, Ճաշոցների և Ավետարանների ազատ էջերի և լուսանցքների վրա. դրանց, ինչպես նաև համանման վիմագիր արձանագրությունների համանավաք ժողովածուները նույնպես կարող են մեծ նպաստ բերել վանական հողատիրության և կալվածքների օգտագործման եղանակների, բազմաթիվ ու տարատեսակ հարկային տերմինների, գյուղական համայնքի ներքին կյանքի բազմազան երևույթների ուսումնասիրության գործին:

Բացառիկ նշանակություն ունեն ԺԸ դարի 40-ական թվականներից մինչև ԺԹ դարի կեսերը անընդմեջ շղթայով մեկը մյուսին հաջորդող այն հաշվեմատյանները, որոնք ընդգրկում են Ամենայն Հայոց կաթողիկոսության տրնտեսական գործունեության տարբեր բնագավառները: Պահպանվել են առանձին մատյաններ Մայր աթոռի ստացած հասույթների, գյուղատնտեսական տարբեր աշխատանքների համար վճարված և վանքի վերանորոգման ու շրջապատի բարեկարգման համար ուղարկված գումարների մասին: Կան առանձին մատյաններ Իրանի պետական պաշտոնեության անհագուրդ պահանջները բավարարելու համար կաթողիկոսների ու վանքի մյուս ղեկավար պաշտոնյաների կողմից տրված գումարների, միաբանության անդամներին, ուխտավորներին և բազմաթիվ հրավիրյալ ու անկոչ հյուրերին տրված սընդամբերքի ու ոգելից խմիչքների (գինի, օղի) չափի ու արժեքի մասին և այլն, և այլն:

Կուսական վիճակում գտնվող այդ մատյաններում ամփոփված հսկայածավալ նյութը գիտական շրջանառության մեջ դնելով, լայն հնարավորություններ կստեղծվեն միջնադարյան Հայաստանի ու հարևան երկրների գյուղատնտեսության և արհեստագործության տարբեր բնագավառների տնտեսագիտական ուսումնասիրման համար: Ագրարային հարաբերություններ, հողօգտագործման ու ջրօգտագործման եղանակներ, նստակյաց հայ բնակչության և քոչվոր թուրքական ցեղերի միջև տեղի ունեցող հարաբերություններ ու բախումներ, պետական և եկեղեցական հարկերի տեսակներ ու չափեր, ռայաթների պարտականությունները մուլքադարների և թիուլդարների նկատմամբ, գյուղացիների՝ իրենց բնակության վայրերին ամրացված լինելու կամ մեկ այլ վայր փոխադրվելու, վարձու աշխատանքի օգտագործման, բանվորական ուժի ապրյուրների, աշխատավարձի չափերի հետ առնչվող հարցեր և այլն: Եվ այսպես, կարելի է թվարկել տնտեսական գործունեության և դասակարգային ու դասային հարաբերությունների հետ առնչվող բազմաթիվ այլ մարզեր, որոնց խորագնին ուսումնասիրության համար վանական հաստատությունների ելևմտից մատյաններն անսպառ հնարավորություններ են ընձեռում:

Անշուշտ, և՛ վանառականների հաշվետվությունները, և՛ վանական տրնտեսությունների հետ առնչվող մատյանները առաջին հերթին տնտեսական կյանքի պատմության վավերագրեր են: Սակայն սխալ կլիներ կարծել, թե նրանց գիտական նշանակությունը սպառվում է այդ բնագավառով: Նորաստեղծ այս մատենաշարով լույս ընծայվելիք հատորների ընթերցողները նրանց էջերում կգտնեն բազմազան նյութեր նաև հայ ժողովրդի քաղաքական պատմության, մշակութային կյանքի, նշանավոր շատ գործիչների կենսագրության ու գործունեության մասին:

Անցյալում ևս հրապարակվել են տնտեսական պատմության մեկ-երկու արժեքավոր սկզբնաղբյուրներ՝ Սիմեոն կաթողիկոս Երևանցու «Ճամբոր», Զաքարիա Ագուլեցու «Օրագրությունը», հայերեն կալվածագրերի մի փոքր ժողովածու և այլն: Սրանց գիտական նոր հրապարակումները, օժտված անհրաժեշտ պատմաբանասիրական ներածականներով ու ծանոթագրություններով նույնպես ընդգրկվելու են հրատարակվող մատենաշարում:

Հայ ժողովրդի բազմադարյան բարդ ու խռովահույզ քաղաքական պատմության համակողմանի ուսումնասիրության ուղղությամբ վերջին տարիների ընթացքում կատարվել է մեծ աշխատանք: Եվ, անտարակույս, այդ աշխատանքի հաջողության կայուն գրավականներից մեկն էլ բազմաթիվ այն ընկզբնաղբյուրներն էին՝ ձեռագրային հիշատակարաններ, մաքր ժամանակագրություններ, պարսկերեն և արաբերեն հրովարտակներ ու կալվածագրեր, որոնք վերջին տասնամյակների ընթացքում ուսումնասիրվեցին և դրվեցին գիտական շրջանառության մեջ:

«Տնտեսական պատմության վավերագրեր» մատենաշարի խմբագրական մարմնի շուրջ համախմբված բանասերները լիահույս են, որ տնտեսական կյանքի մութ ու խավարչտին մարզերի վրա պայծառ լույս սփռող այս մատյանների հրապարակումով նոր թափ է հաղորդվելու հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական պատմության ուսումնասիրության գծով տարվող բարդ ու դժվարին աշխատանքին, որն առ այսօր դուրս չի եկել խանձարուրային իր վիճակից:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՀԱՇՎԵՏՈՒՄԱՐԸ

Այս երգս քեզ եմ ձոնում, ո՜վ ճանապարհորդ,
Ո՜վ անհայտ հորիզոնների զննիչ,—
Ընթացի՛ր, գնա քո ուղին, և լինի թող այն
քարքարոտ,
Անվհատ թող լինի ոգիդ և կարոտդ թող լինի
աննինջ,—
Հազար կարավանի բեռներից ավելի
Հարուստ կլինի ոգիդ վերադառնալիս...
ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

1

1682 թ. դեկտեմբերի 17-ին[1] *Նոր Ջուղայում կնքվում է առևտրական մի համաձայնագիր մի կողմից խոջա Գերաքի որդիներ Զաքարիա և Ըմպրումաղա վաճառականների, մյուս կողմից Տեր Դավթի որդի Հովհաննեսի միջև։ Ըստ այդ համաձայնագրի Հովհաննեսը Հնդկաստանում վաճառելու համար վերոհիշյալ եղբայրներից ստանում է շուրջ 217 թումանի արժողությամբ անգլիական մահուդ և մի քանի թուման կանխիկ դրամ։ Համաձայնագիրը կընքվում է վաղնջական ժամանակներից հայ խոջայական միջավայրում ձևավորված այն սովորույթների հիման վրա, որոնք 1765 թ. որպես «հաստատ և ստուգագոյն կանոն իրաւանց» գրանցվեցին Աստրախանի հայոց «Դատաստանագրքի» մեջ և, հաստատվելով ռուսական պետական մարմինների կողմից, ստացան օրենքի ուժ, մի քանի տասնամյակների ընթացքում կիրառվելով Հարավային Ռուսաստանի հայկական գաղթօջախներում*[2]։

Այդ Դատաստանագրքի «Վասն վաճառականական կարգաց» խորագրով ԺԴ գլուխն ամբողջապես նվիրված է խոջաների ու նրանց գործակատարների փոխհարաբերություններին և կողմերից յուրաքանչյուրի՝ մեկը մյուսի նկատմամբ ունեցած պարտավորություններին (խոջան կոչվում է աղա, *իսկ նրա կողմից վարկավորվող վաճառականը՝* ընկեր)։ *Վերոհիշյալ գլխի 11-րդ հոդվածում ասված է. «Ամենայն ընկեր պարտաւորի վասն իւրաքանչիւր առևտրոյ գրել մի ըստ միոջէ օրինաւոր գիրք հաշուի... ճշմարտութեամբ, առանց զանցառութեան ժամանակի». «Իսկ եթէ ընկեր ոմն ոչ ցուցանիցէ զգիրք հաշուոյ տեառն իւրում՝ ըմբռնեսցի ի բանտի, լոկ հացիւ և սոսկ ջրով կերակրիցի, երբեմն-երբեմն ձաղկեսցի՝ մինչև ի մի տարի»*[3]։ *Ընկեր կոչվող գործակատարը աղայի առաջին իսկ պահանջով պարտավոր է եղել վերադառնալ իր գտնված վայրից և «տալ զհաշիւ ընկերութեան», հակառակ պարագայում «զոր ինչ արդիւնք ըստասցի ընկերն՝ տիրեսցէ տէրն, և զոր ինչ վնաս պատահեսցէ ընկերին՝ վնասն հարկաւորի միայն ընկերն կրել և ոչ տէրն նորին»*[4]։

Ինչպես տեսնում ենք, իրավական այս կանոնները ձևակերպվել են խոջաների տնտեսական ու դասային շահերի թելադրանքով. գործակատար-վաճառականները եղել են նրանց կամակատարները։ Այդպիսի բազմաթիվ վաճառականներից մեկն է եղել նաև վերոհիշյալ համաձայնագիրը ստորագրող Տեր Դավթի որդի Հովհաննեսը, որն սկսած 1682 թ. դեկտեմբերի 17-ից մինչև 1693 թ. դեկտեմբերի 4-ը, այսինքն 11 երկար ու ձիգ տարիների ընթացքում կազմել է առևտրական իր գործունեության օրահաշիվ մատյանը՝ կոչված «Ռուզնամայ», և առանձին ապրանքների առուծախին վերաբերող բազմաթիվ զուգահեռ հաշիվներ՝ «քաթաներ»։

Արժեքավոր այս հաշվետումարն այժմ պահվում է Լիսաբոնում՝ Պորթուգալիայի ազգային մատենադարանի ձեռագրական բաժնում F. G. *7970 համարի տակ. բաղկացած է 18 սմ լայնություն և 54 սմ երկարություն ունեցող 44 առանձին, իրար վրա դարսված թերթիկներից*[5], *որոնցից յուրաքանչյուրի երկու երեսի վրա գրանցված են մանրատառ հաշիվներ*[6]։

Այս մատյանի գոյության մասին 1961 թ. հունիսին գրած իր մի նամակով մեզ տեղեկացրեց Պորթուգալիայի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, բանասեր Ռոբերտո Կյուլպենկյանը, որի ջանքերով էլ Մաշտոցի անվան Մատենադարանի տրամադրության տակ դրվեց Հաշվետումարի ոչ շատ հաջող մանրաժապավենը։ Անհրաժեշտ եղավ պատրաստել բոլոր էջերի լուսանկարները, որից հետո սկսվեցին խիստ դժվարընթեռնելի ու խրթին այդ բնագրի վերծանության դանդաղորեն առաջ ընթացող և բազմիցս ընդմիջվող դժվարին աշխատանքները, որոնք իրենց ավարտին հասան միայն 1978 թվականին։ Վերծանությանը զուգընթաց նյութեր հավաքվեցին բառարանի և ներածական այս ուսումնասիրության համար, որի նպատակն է. պարզել Հաշվետումարի ստեղծման հանգամանքները, ճշգրտել Տեր Դավթի որդի Հովհաննեսի դեգերումների ուղեգիծը, համառոտ տեղեկություններ հա-

---

[1] *Այստեղ և ամենուրեք ամսաթվերը տրված են ըստ նոր տոմարի։ XVII դարի եղելությունների ամսաթվերը հին տոմարով նշելու համար պետք է տրված թվից 10 օր ետ գնալ։ Դեկտեմբերի 17-ը, օրինակ, ըստ հին տոմարի կհամապատասխանի դեկտեմբերի 7-ին։*

[2] *«Դատաստանագիրք Աստրախանի հայոց», աշխատասիրությամբ Ֆ. Գ. Պողոսյանի, Երևան, 1967, էջ 130 և հտն. հմմտ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 7383, էջ 57բ և հտն.։*

[3] *Նույն տեղում, էջ 132—133, հմմտ. ձեռ. № 7383, էջ 59ա։*

[4] *Նույն տեղում, էջ 59բ։*

[5] *Մեր ձեռքի տակ եղող միկրոպատճենի միջոցով խիստ դժվար է ճշգրիտ որոշել հաշվետումարի թերթերի իրական քանակը, հավանաբար բաղկացած է 44 թերթից, բայց կարող է լինել նաև 42 կամ 43։*

[6] *Տիբեթցիների կենցաղի լավագույն ուսումնասիրողներից Ն. Կյունները հայտնում է, որ նրանց գրքերը սովորաբար մեկը մյուսի վրա դարսված առանձին թերթիկներ են, որոնցից յուրաքանչյուրը 2 ֆուտ (շուրջ 66 սմ) երկարություն և 3—4 դյույմ (7—10 սմ) լայնություն ունի (տե՛ս Н. В. Кюнер,* Описание Тибета, Часть вторая, Этнографическая, вып. 1-й, Состав и быт населения, Владивосток, 1908, стр. 117). *Հովհաննես Ջուղայեցին գրանցում ունի Նեպալում թուղթ գնելու մասին. ըստ երևույթին այդ թղթերի վրա էլ նա գրանցել է իր Հաշվետումարը։*

զորդել նրա այցելած երկրների, մասնավորապես Հնդկաստանի, Նեպալի ու Տիբեթի մասին, ուշադրություն հրավիրել ջուղահայ կապիտալի ներկայացուցիչների առևտրական ու դրամավարկային գործարքների վրա, անհրաժեշտ բացատրություններ տալ կիրառված չափ ու կշռի միավորների, հաշվապահական դիտելիքների, թվերի ու կոտորակների գրանցման եղանակների մասին և, վերջապես, գնահատել այս մատյանը որպես մի շարք երկրների տնտեսական կյանքի պատմության ուշագրավ սկզբնաղբյուր։ Որոշ դեպքերում, փոքր-ինչ շեղվելով այս ծրագրից, փորձել ենք լուսաբանել նաև արևելյան հեռավոր երկրների հետ հայերի ունեցած պատմատնտեսական կապերին և առնչություններին աղերսվող որոշ հարցեր՝ շրջանառության մեջ դնելով նոր նյութեր։

2

Հաշվետումարն սկսվում է այսպես. «Կամաւն ամենակալին Յիսուսի Քրիստոսի և առաջնորդութեամբ հոգւոյն սրբոյ, ես տէր Դաւիթի որդի Յովանէսս՝ Ըսպահան Ջուղայ, թվին ՌՃԼԱ, և Փոքր թվին Աղարի ԿԷ (=1682) համիրայ ամսին ԻԲ-ումն ընկերացայ, սարմաեայ յինք առի Գերաքէ որդիքս խոջայ Զաքարիցն և պարոն Ըմպրում-աղիցն, ջամն երկու խերհուր և յիսուն թուման. Աստուծով տանեմ Յընդուստան, թուշարաթ առեմ, ինչ որ Աստուած շախ տայ, սարմաէն բաղայ, շախին երեք յըռասաթն պարոնացն լինի, չոթային իմ Յովանէսիս լինի։ Տէր Յիսուսն շարմ պախէ, ամէն»։

Այստեղ որպես վարկատու կողմ հանդես են գալիս Ըմպրումի որդի Գերաք Միրմանենցի որդիներ խոջա Զաքարն ու նրա եղբայր պարոն Ըմպրում-աղան։ Ի՞նչ է հայտնի Ջուղայեցի այս վաճառականների մասին։ Զաքար Գերաքենցի մասին մեզ հայտնի հնագույն տեղեկությունը վերաբերում է 1666 թ., երբ նա, ջուղայեցի այլ նշանավոր վաճառականների հետ միասին, հանդես է եկել որպես վկա։ Սպահանի Շար'ի դրասենյակում կազմված և Նոր Ջուղայում գտնվող անշարժ մի կալվածքի օտարմանը վերաբերող պարսկերեն մի կալվածագրի վկաների շարքում գրված է. زکر یا بن خواجه گرك ارمنی جلفائی («Ջուղայեցի հայ խոջա Գերաքի որդի Զաքարիա»)[7]։ Հաջորդ տեղեկությունը 1671 թվականից է. Նոր Ջուղայի ամենաազդեցիկ գերդաստանների 23 ներկայացուցիչներ՝ Աստվածատուր Միրեթենց քալանթարի գլխավորությամբ, այդ թվականին համապատասխան մի գրություն են հղել ռուսաց թագավորին, իրենց բանագնաց Գրիգոր Լուսիկենցի լիազորությունները հաստատելու կապակցությամբ։ Այստեղ ևս, որպես ստորագրողներից վեցերորդը, հանդես է գալիս Զաքար Գիրաքենցը. նրանից առաջ գտնում ենք միայն քալանթարի և Շահիխասենց (Սարֆրասենց), Շախաթունենց, Շահրիմանենց ու Թոփչենց նշանավոր գերդաստանների ներկայացուցիչների ստորագրությունները[8]։ Գերաքենց գերդաստանի մասին ու-

[7] Հիշյալ կալվածագիրը, այլ վավերագրերի հետ միասին, տարիներ առաջ Կալիֆորնիայի համալսարանի գրադարանին է վաճառել նորջուղայեցի գոկտոր Կ. Մինասյանը։ Մեր ձեռքի տակ են հիշյալ վավերագրերից մի քանիսի լուսանկարները։ Դրանցից մեկ ուրիշ կալվածագրի լուսանցքում հիշրեթի 1092 (1681) թ. կա հայերեն հետևյալ մակագրությունը. «ես Գերաքի որդի Ըմբրում-աղես վկա»։ Երկու եղբայրների մակագրություններն էլ հաստատված են նրանց անընթեռնելի կնիքներով։

[8] «Армяно-русские отношения в XVII веке», Сборник документов, Ереван, 1953, стр. 91.

շագրավ տվյալներ կան 1643 թ. ընդօրինակված մի Ճաշոցի և հաջորդ (1644 թ.) ընդօրինակված մի Ավետարանի հիշատակարաններում։ Դրանցից առաջինում գրված է. «Դարձեալ յիշեցէք պարոն խոջայ Գրիգորն, եւ եղբարքն իւր պարոն Զաքարէն, Ըմպրում-աղէն։ Տէր աստուած իւրեանց կեանս յերկարեաց շնորհեսցէ, և զհանգուցեալ առ Քրիստոս Աստուած Ըռուստամն, Մարդարէն»[9]։ Ավետարանի հիշատակարանը, որ գրվել է վերոհիշյալ վաճառականների մոր՝ Ծաղիկի, պատվերով, շատ ավելի ընդարձակ է. այնտեղ, մասնավորապես, կարդում ենք. «Աղաչեմ յիշել առ տէր զհեղահոգի քրիստոնեա և քրիստոսապաշտ Գէրաքն (տրված է նաև նրա ծնողների՝ Ըմպրումի և Շուշանի անունները) և իւր պարոն և աշխատասէր որդիքն՝ Գրիգորն, Ըռըստամն, Ըմպրումն, Զաքարէն, Մարդարէն, և Գրիգորին դեռաբուսիկ որդին՝ Փիր-Աթամն»[10]։

Այս տվյալներից պարզ է դառնում, որ XVII դարի 40-ական թվականներին խոջա Գերաքի որդիներից կենդանի էին երեքը՝ Գրիգորը, Զաքարեն և Ըմպրումը։ Անդրանիկը, անշուշտ, եղել է Գրիգորը։ Ֆլորենցիա քաղաքի Bargello թանգարանի Մեդիչիների հավաքածուի մեջ պահվում են երկու դեղեցիկ մեդալներ, որոնց շիտակ երեսին քանդակված է մի հայ վաճառականի պատկեր, առաջինի վրա՝ ամբողջ հասակով, իսկ երկրորդի՝ մինչև գոտկատեղը (սրա խոշորացված լուսանկարը տե՛ս հաջորդ էջում)։ Մեդալների հաջորդ երեսին պատկերված է «Գառն Աստծոյ». ձախ կողմում՝ մի առյուծ, որի մեջքից բարձրանում է արեղակը, իսկ ցածում՝ մեղվի մի փեթակ, դեպի որը շեշտակի ճեպում է մի մեղվապարս[11]։ Մեդալների երկու երեսներին էլ շրջանաձև գրված է արձանագրություն, որը մեծ ճիգով հնարավոր է լինում վերծանել այսպես.

Ա.—«Գրիգոր դի Միրմանենց Գերաքի
ես /// Ք[րիստոս]ի անճառ առենից///

Բ.—«Տ[է]ր Յ[իսուս] գառն Ա[ստուծո]յ, որ շնորհեց մեզ
մանանայ երկրի. թվ. ՌՃԻԲ (1673)»։

Այսպիսով, այս մեդալների վրա քանդակված է Գերաքի որդի Գրիգորի դիմապատկերը՝ ջուղայեցի հայ վաճառականի հագուստ-կապուստով[12]։ Պետք է ենթադրել, որ այս Գրիգորը, Զաքարեի և Ըմպրումի ավագ եղբայրը, դարի 60-ական թվականներին արդեն արտագաղթել էր Նոր Ջուղայից և մշտական բնակություն հաստատել Վենետիկում։ Ղ. Ալիշանի տվյալներով այդ ժամանակաշրջանում Վենետիկ քաղաքում իրոք կար Գերաք-Միրման ազգանունով հայ վաճառականների մի ընտանիք[13]։

[9] Ս. Տեր-Ավետիսյան, Յուցակ հայերեն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, հտ. Ա, Վիեննա, 1970, էջ 264—265։

[10] Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № 6665, էջ 281բ—282բ (հմմտ. Մ. Սմբատեան, Նկարագիր սուրբ Ստեփանոսի վանաց Սպահանի, Տփխիս, 1896, էջ 240—241, որտեղ բերված է հիշատակարանից մի հատված)։

[11] Հիմքեր կան ենթադրելու, որ դրոշմված պատկերը Նոր Ջուղայի հայաքաղաքի ինքնավար մատմինների խորհրդանշանն է։

[12] *Arménag Sakisian*, Pages d'Art Armenian, Paris, 1940, պատկեր XLIII (մեդալների անբավարար քննությունն ու սխալաշատ վերծանությունը տե՛ս նույն տեղում, էջ 115—116)։

[13] Ղ. Ալիշան, Հայ-Վենետ, կամ առնչութիւնք Հայոց և Վենետաց ի ԺԳ—Դ և ի ԺԵ—Զ դարս, Վենետիկ, 1896, էջ 501։

Համադրելով 1682 թ. համաձայնագրի մեջ վարկատու վաճառականի հանգամանքով հանդես եկող Զաքարիա և Ըմպրում-աղա եղբայրների մասին առկա այս տվյալները, կարող ենք արձանագրել, որ նրանք հին Ջուղայից Սպահան գաղթեցված նշանավոր ընտանիքներից մեկն են եղել։ Նրանց տոհմի նահապետը, որ հավանաբար Միրիման անունն է ունեցել, ապրել է հին Ջուղայում XVI դարի կեսերին. սրա որդին եղել է խոջա Ըմպրումը, որի անվամբ («Էմպրում» աղճատ ձևով) 1573 թվականը կրող մի խաչքար է պահ-

Մեդալ, Հովհաննես Տեր-Դավթյանի պարոնների եղբոր՝ խոջա Գրիգորի պատկերով։

պանվել հին Ջուղայի Ամենափրկիչ մատուռի մուտքի աջակողմում, կիսեղծ մի արձանագրությամբ[14]։ Ըմպրումի որդի Գերաքն է եղել այն անձնավորությունը, որը բռնագաղթվել է համաքաղաքացիների հետ միասին հայրենի իր քաղաքից և հաստատվել Նոր Ջուղայում։ Այստեղ 1623 թ., այսինքն գաղթից ընդամենը 20 տարի անց, հիմնադրված Ս. Կատարինեի անվան կուսանաց անապատի նվիրատուների շարքում հիշված են նաև «խոջայ Գերաքն և կողակիցն Տալիթան»[15]։ Գերաքենց գերդաստանը Նոր Ջուղայում բնակվում էր

[14] Տե՛ս «Արարատ», 1872, էջ 391։

[15] Կուսանաց անապատին կատարված նվիրատվությունների ընդարձակ արձանագրության բնագիրը ևս գտնվում է Կ. Մինասյանի կողմից Կալիֆորնիայի համալսարանի դրադարանին վաճառված վավերագրերի ժողովածուում։

սուրբ Աստվածածնի եկեղեցու թաղամասում (այդ եկեղեցուն է նվիրված 1644 թ. ընդօրինակված վերոհիշյալ Ավետարանը)։ Անդրադառնալով այս թաղամասի պատմությանը, Նոր Ջուղայի անցյալ կյանքի լավատեղյակ հետախույզ Հ. Տեր-Հովհաննիսյանցը ուշադրություն է դարձրել ոմն խոջա Գերաքի վրա, որի «տուրևառութեանն բազուկ ձգեալ կայր յԵւրոպայ և ի կողմ Աստրախանայ և Գիլանայ»[16]։ Այս Գերաքը, սակայն, տարբեր է մեր խոջա պարոնների հայր Գերաքից, բայց, հավանաբար, նույն տոհմից է սերում, և ավագ Գերաքի եղբորորդին կամ մերձավոր այլ ազգականներից մեկն է եղել։

Խոջա Զաքարի և Ըմպրումի «տուրևառության բազուկը» նույնպես ձգված էր աշխարհով մեկ. նրանց գրամագլխով առևտրի ասպարեզ մտած վաճառականները ելումուտ ունեին Լևանտյան առևտրի կարևոր հանգրվանները՝ մինչև հեռավոր Տիբեթի Լհասա մայրաքաղաքն ու Չինաստանի Սինին վաճառաշահ կենտրոնը։

Ասացինք արդեն, որ Գերաքի որդի Գրիգորի պատկերով զարդարված մեդալների վրա քանդակված է նաև մեղվի մի փեթակ, դեպի որը շեշտակի թռիչք են կատարում բազմաթիվ մեղուներ։ Ա. Սաքզյանի կարծիքով, այդ «մի այլաբանություն է աշխատանքի և ծավալուն գործունեության»[17]։ Կարծում ենք, սակայն, որ ճշմարտությանն ավելի մոտեցած կլինենք, եթե քանդակված մեղվի փեթակի տակ տեսնենք խոջա Գերաքի մեծահարուստ որդիների գանձարանը, իսկ ի դեմս մեղուների պարսի՝ նրանց տասնյակ գործակատարներին, որոնք ոսկու քսակներով այդ գանձարանը լցնելու համար թափառում էին երկրից երկիր, անցնում «մագն կամուրջներով ու գժոխքի ճամփաներով»։

Ավելի աննշան են մեր տվյալները հաշվետումարի հեղինակ Տեր Դավթի որդի Հովհաննեսի մասին։ Հաշվետումարի բազմաթիվ գրանցումներից պարզ է դառնում, որ նա բաջատեղյակ է տարբեր երկրներում գործածվող չափ ու կշռի համակարգերին, դյուրությամբ յուրացրել է այլևայլ երկրներում կիրառվող դրամական միավորները, որոշում նրանց պարունակած ոսկու կամ արծաթի չափերը, անսխալ վճռում թվաբանական դժվարին խնդիրներ՝ կապված տարբեր ապրանքների վաճառքի, վարկային խճողված ու բարդ գործարքների հետ և այլն։ Այս բոլորը վկայում են այն մասին, որ մեր վաճառականը սովորել է մասնագիտական ինչ-որ հաստատության մեջ, անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերել առևտրի ասպարեզ մտնելու համար։ Հովհաննեսի գործունեության տարիներին Նոր Ջուղայում իրոք կար այդպիսի հաստատություն՝ Կոստանդ Ջուղայեցու գլխավորած առևտրական դպրոցը, որն իր գոյության ընթացքում տվել է շուրջ 250 շրջանավարտ, սովորեցնելով նրանց «թվաբանութիւն, հասարակ ընթերցողութիւն, գրագրութիւն և ըստ մեծի մասին խրատ յաղագս վաճառականութեան»[18]։

Երբ համեմատում ենք 1685 թ. իր աշակերտների համար Կոստանդ Ջուղայեցու կազմած «Աշխարհաժողով» կոչվող դասագիրքը Հովհաննեսի Հաշ-

[16] Հ. Տեր-Հովհաննեսյանց, Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, հ. Ա, ի Նոր Ջուղա, 1880, էջ 139։

[17] A. Sakisian, նշված աշխ., էջ 115։

[18] Հ. Տեր-Հովհաննեսյանց, նշված աշխ., հ. Բ, էջ 253։

Կոստանդ Ջուղայեցու, «Աշխարհաժողովի» ամբողջական և լավագույն օրինակը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում և գրանցված է 10704 համարի տակ. ամբողջական և ուշագրավ ձեռագիր է նաև № 5995-ը։

վեստումարի հետ՝ փարատվում է ամեն կասկած, և մենք համոզվում ենք, որ նա իրոք Կոստանդ վարժապետի ուսումնարանի բազմաթիվ սաներից մեկն է եղել, կամ էլ դաստիարակվել է այդ դպրոցի ավանդույթներով։

Հաշվեստումարի մի գրանցումից պարզվում է, որ մինչև Հնդկաստան մեկնելը Հովհաննեսը եղել է Լևանտյան առևտրի խոշոր կենտրոններ Իզմիրում և Բուրսայում. «Մեր Իզմիրն գնալէ ջահտան Ղարագօզի որդի Մուրատխանին փող ենք փոխ տվէլ. էստուր խսեպն Բուրսայ էր կարվէլ»։



Հայ խոջայի առանձնատուն Նոր Ջուղայում։

Ասել ենք արդեն, որ Հաշվեստումարն ավարտվում է 1693 թ. դեկտեմբեր ամսվա գործունեության մասին գրանցումներով. այդ ժամանակ Հովհաննեսը, Տիբեթից Հնդկաստան վերադառնալով, գտնվում էր Կալկաթայում, ինչպես նաև մերձակա Հուգլի քաղաքում։ Նրա հետագա թափառումների մասին առայժմ տվյալներ չունենք։

Հ. Տեր-Հովհաննիսյանը, ձեռքի տակ ունենալով Ամենափրկիչ վանքի դիվանի փաստաթղթերը, թվարկում է 1702 թ. Նոր Ջուղայի Մեյդանի թաղում բնակվող 75 վաճառականների անուններ, որոնցից հինգը խոջա, չորսը աղա տիտղոսներով, իսկ մյուսները՝ առանց որևէ մակդիրի։ Այս վերջինների շարքում՝ 19 և 20-րդ համարների տակ, հիշատակված են «Յովհաննէս և Ալամ Տէր Դաւթեան» եղբայրները։ Հայտնի է, որ միջնադարյան Հայաստանում ազգանունների ճնշող մեծամասնությունը կազմվում էր տվյալ անձնավորության հոր անունից՝ «եան» վերջավորությամբ. ըստ այդմ այստեղ հիշատակված է Հաշվեստումարի հեղինակ Տեր Դավթի որդի Հովհաննեսը՝ իր Ալամ եղբոր հետ միասին։ Հովհաննեսն, ըստ երևույթին, ունեցել է մի այլ եղբայր ևս, որն ընթանալով հոր հետքերով, դարձել է քահանա։ Բրիտանական թանգարանում պահվող և ջուղահայ վաճառականների առևտրավաշխառուական գործունեությանը վերաբերող մի փաստաթղթի մեջ հիշատակված է Տեր

Դավթի որդի Տեր Կարապետը, որը 1746 թ. Սպահանում 1200 ռուփի պարտք է վերցրել Ղևոնդի որդի պարոն Մուրադխանից[19]։

Պորթուգալիայի ազգային մատենադարանում տվյալներ չկան, թե ինչ ճանապարհով է Հաշվեստումարն ընկել այնտեղ։ Գուցե հետագայում Հովհաննեսն առևտուր է արել Հնդկաստանում հաստատված պորթուգալացիների հետ, կամ էլ անձամբ ուզևորվել հարավ-արևմտյան Եվրոպայի այդ ծայրաշխարհն ու փակել իր աչքերը հայրենի երկրից հեռու, օտար երկնակամարների տակ, այնտեղ թողնելով նաև իր տնտեսական գործարքներին վերաբերող թղթերի կապոցները. որոշակի ոչինչ չգիտենք այդ մասին[20]։

3

1682 թ. դեկտեմբերի 17-ին Տեր Դավթի որդի Հովհաննեսը դուրս է եկել Սպահանի արվարձան Նոր Ջուղայից և ուղևորվել Բանդար-Աբաս՝ ծովով Հնդկաստան մեկնելու նպատակով։ Հետևենք նրա երթուղուն, անհրաժեշտ տեղեկություններ հաղորդելով նրա կատարած տնտեսական գործարքների մասին։



Նոր Ջուղայի համայնապատկերը (18-րդ դ.)։

[19] British Museum, O. P. B. Lansdowne 1047, p. 40.

[20] Պր. Ռ. Կյուլպենկյանը, Հաշվեստումարի ձեռագրի Լիսաբոնի գրադարան մուծվելու հանգամանքների մասին մեր հարցումին, 1964 ապրիլի 10 թվակիր իր նամակով, հետևյալ պատասխանն է տվել. «Լիզբոնի Փորթուգալյան ազգային մատենադարանի ձեռագրաց բաժնին մեջ այս ձեռագիրը կը կրե F. G. 7970 թիվը։ Ձետեղված է մի քանի արևելյան լեզուներով շարադրված փոքրաթիվ ձեռագիրներու հետ միասին, սակայն հնարավորություն չկա ստուգելու թե ձեռագիրներու այս փոքր հավաքածուն միաժամանա՞կ ստացված է, թե յուրաքանչյուրը առանձին բերված է տարբեր ժամանակ։ Ձեռագիրներեն ոմանք կը կրեն կնքամոմ կնիք, որուն կը հաջորդե ստորագրությունը Գամբոսելիս գուքսին։ Փարիզ, հոկտեմբեր, 1881, ինչպես նաև արձանագրություն մը, թե Մատենադարանին նվիրված են այդ անձին կողմանե. սակայն ուրիշներ այդպիսի հիշատակություն չեն կրեր, և այս է պարագան F. G. 7970 հայերեն ձեռագրին»։

Գիտենք արդեն, որ Հովհաննեսը Հնդկաստան էր մեկնում իր հետ տանելով խոշոր գերաքի որդիներից ստացած շուրջ 738 մետր կարմիր ու կանաչ անգլիական մահուդ. «ԺԸ (28) ճոթ նեղայքնաբ լօնտրինայ՝ ալ և կանանչ, ջամէն էՃԻԶ (726) գազ և Զ (6) գրէ», 217 թուման 9150 դիան արժողությամբ։

Բացի մահուդից Հովհաննեսին տրվում է մի մուրհակ, որով նա Շիրազում մահդասի Պետրոսի որդի պարոն Ավետիքից, ստանալու էր 29 թուման դրամ։ Մեկ թուման էլ տրվում է մահուդի հակերը փաթաթելու նպատակով անհրաժեշտ կտորեղեն (յափնջի ու վառփուշ) գնելու համար։ Առձեռն նա ստանում է ընդամենը 2 թուման 8500 դիան։ Այսպիսով, ամբողջանում է Հովհաննեսին ապրանքով ու դրամով տրված 250 թուման դրամագլուխը։

Ծովափ հասնելու համար Հովհաննեսն ընտրում է Սպահան—Մահեար—Եզդըխաս—Շիրազ—Լար—Բանդար-Աբաս ուղեգիծը։ 1683 թ. փետրվարի 4-ին նա արդեն Բանդար-Աբասումն է, և մի քանի օրից «Նավ-ի Սլէմանի» նավով ուղևորվում է Հնդկաստան։ «Թիվն ՌՃԼԲ և փոքր թիվն Ազարի Կէ, նիրհան ամսին ԻԴ-ումն. (1683 թ. մարտի 19), օրն ուրբաթ Նավ-ի Սլէմանին Բանդարի Սուրաթին լանկարգահումն լանկար գրՃեց. նիրհան ԻԶ-ումն (մարտի 21), օրն կիրակի դուս եկինք Բանդարի Սուրաթն. տէր աստուած բարին առաջնորդեսցէ, ամէն»,—գրում է Հովհաննեսը Սուրաթ հասնելու կապակցությամբ։

Գրեթե ողջ XVII դարի ընթացքում, մասամբ նաև XVIII դարում, Սուրաթը բացառիկ դեր էր կատարում Հնդկաստանի արտաքին առևտրում՝ հանդիսանալով դեպի եվրոպական երկրներ և Իրան ու Թուրքիա ձգվող ծովային ճանապարհների խոշորագույն հանգուցակետ. Սուրաթն էր անգլիական ու հոլանդական առևտրի և ապրանքափոխանակության կենտրոնը. այստեղից էին ներմուծվում Մեծ Մողոլի կայսրության տարբեր երկրամասերի համար բերվող եվրոպական ապրանքները, ինչպես և այստեղից էին Եվրոպա արտածվում հնդկական քաղաքների արտադրանքը՝ մետաքսյա գործվածքներ, լեղակ, բուրավետ նյութեր, համեմունքներ, շաքար և այլն[21]։

Մարտի 28-ին Սուրաթի նավահանգստի պահեստից դուրս է բերվում Հովհաննեսի բերած ապրանքը, բայց ոչ մեր վաճառականի («չուն որ ես լեզու չի գիտէլ»), այլ նրա աղանների մի այլ գործակատարի՝ Նազարեթի անունով։

Հաշվետումարի գրանցումներում ուշագրավ տվյալներ կան Սուրաթի հայկական գաղութի մասին։ Այստեղ Հովհաննեսը զատիկ է անում, նվերներ տալիս Հայոց եկեղեցուն, և տարբեր առիթներով հանդիպում ու գործ է ունենում բազմաթիվ հայրենակիցների հետ, որոնց անունները թվարկում ենք այստեղ. Նազարեթ, Սիմեոն, Խաչիկի որդի ու Մուսեսի եղբայր Հովան, Թուփչենց Պողոսի որդի Մարկոս, Ղարագողի որդի Մուրատխան, ագուլեցի Ոսկան, վանեցի Ատոմի որդի Թումաջան, շամբեցի Գասպար, Էլդրումի որդի Մարտիրոս, Խանումաղենց Հովանեսի որդի Մկրտում, Մուշեղենց Փանոսի որդի Գալուց, Մանվել[22]։ Բացի վերոհիշյալ հայերից, Հովհաննեսը գործ է ունեցել տեղացի դալալներ Թրիքամի, Մադանի և այլոց հետ։

[21] „История Индии в средние века", М., 1968, стр. 454; *А. Б. Каплан*, Путешествие в историю (Французы в Индии), 1973, М., стр. 160.

[22] Այստեղ թվարկված են նաև այն անունները, որոնց հիշատակել է Հովհաննեսը երկրորդ անգամ Սուրաթում եղած ժամանակ (1684 թ. գարնանը)։

Սուրաթի հայկական գաղթօջախի մասին կան ձեռագրական ու արխիվային բազմաթիվ տվյալներ։ Հաշվետումարի մեջ առկա գրառումները լրացնում են դրանք և հնարավորություն տալիս ճշգրտելու հայերի գրաված տեղը այդ նշանավոր քաղաքի տնտեսական կյանքի տարբեր ոլորտներում[23]։



Առևտրական առագաստանավ (18-րդ դ.)։

Ավելի քան 4 ամիս Սուրաթում մնալուց հետո Հովհաննեսն ուղևորվում է Ագրա 1683 թ. մայիսի 13-ին, և նույն ամսի 27-ին հասնում Օվրանկապատ (Ավրանգաբադ)[24]. այստեղից դուրս է գալիս հուլիսի 13-ին և վեց օրից հասնում Բերամփուռ (Բուրհամփուր), ուր հանդիպում է Շիրազի եկեղեցու համար դրամ ժողովող ոմն Շոռենց Թաթոսի։ Երևանցի (Նոր Ջուղայի Երևան թաղամասի բնակիչ) Բաղումի ընկերակցությամբ ճանապարհ է ընկնում և օգոս-

[23] Սուրաթի մեծահարուստ հայ վաճառականների հակաեկեղեցական տրամադրությունների և աշխարհական հաճույքների մասին Հ. Տեր-Հովհաննիսյանցին հայտնի են եղել հետաքրքրքրական տեղեկություններ, որոնք վերաբերում են, հավանաբար, XVIII դ. վերջերին։ Դրանց համաձայն Սուրաթի մեծատունները հաճախ իրենց բնակարաններում խնջույքներ են կազմակերպել՝ գուսանների ու կաքավող կանանց մասնակցությամբ։ Բացի կերուխումից, գինարբուքից և աշխարհական երգերից, նրանք անպատկառ ծաղրանքով կատարել են նաև եկեղեցական-ծիսական երգեր («Պատմութիւն Նոր Ջուղայու», Ա, էջ 188)։

[24] Տեղանունները տալիս ենք Հովհաննեսի տառադարձությամբ, նշելով նաև ճիշտ ձևերը։

1791

ՀԱՅԿ ԳԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍ
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
Ин-т Востоковед. АН Арм. ССР

տոսի 9-ին հասնում Սրինճ (Սիրոնջ) քաղաքը, ուր մնում է երկուսուկես ամիս (մեկնել է նոյեմբերի 22-ին)։ Այստեղ հիշատակում է Աղազարին և մի հայ սարկավագի (անունը չի տալիս)։

Սրինճից, Կաշկարի վրայով, մեկնում ու նոյեմբերի 30-ին հասնում է Ագրա (գրում է էկրայ), որ 1527—1658 թվականներին Մեծ Մողոլի կայսրության մայրաքաղաքն էր և Հնդկաստանի ամենավաճառաշահ ու փարթամ քաղաքը։ Մի անգլիացի ճանապարհորդի վկայությամբ «Ագրան հանգուցակետն էր կայսրության ճանապարհների, որից դուրս էին գալիս բոլոր ուղղություններով՝ ինչպես անվաճաղերը սոնիից»[25]։

Վաղուց ի վեր Ագրայում գոյություն ուներ հայկական կայուն գաղթօջախ։ 1652 թ. այստեղ կառուցվել էր եկեղեցի, ըստ ոմանց՝ Հնդկաստանի հնագույն հայկական եկեղեցին[26]։

Գաղութի սկզբնավորումը վերագրվում է Ջելալ-էդ-դին Աքբար շահի (1542—1605) ժամանակներին։ Այդ մասին է վկայում նաև առ այսօր բարեկարգ վիճակում գտնվող հայոց գերեզմանատունը, որտեղ պահպանված հարյուրից ավելի հայերեն, պարսկերեն և անգլերեն տապանագրերից հնագույնը վերաբերում է 1611 թվականին[27]։

Հայ գաղթօջախի կյանքում կարևոր նշանակություն ուներ հայկական կարավանատունը, որն, ըստ եվրոպացի ուղեգիրների, հավաքատեղին էր հայերի. այստեղ էին նրանք քննարկում համայնքին առնչվող հարցերը, կնքում առևտրական ու վարկային զանազան պայմանագրեր և այլն։ Կարավանատան հռչակը հասել է նույնիսկ Եվրոպա։ Ագրա ժամանող բազմաթիվ օտարականներ այստեղ հանդիպումներ էին ունենում հայերի հետ և օգտակար խորհուրդներ ստանում փորձված ու բանիմաց հայ վաճառականներից[28]։

Հովհաննեսի գրառումներից կարելի է հետևցնել, որ XVII դ. 80-ական թթ. Ագրայի հայկական գաղթօջախում կենտրոնական դիրք էր գրավում մահդասի Պետրոսի որդի շիրազցի պարոն Ավետիքը, որի հետ մեր վաճառականը զանազան գործարքների մեջ է մտնում[29]։

Ագրայից, Փանոսի որդի Բաբայի ընկերակցությամբ, 1684 թ. հունվարի 4-ին, Հովհաննեսը մեկնում է Խուռջա՝ լեղակ գնելու. մարտի 11-ին վերադառնում է Ագրա, բերելով 92 չարմ (2 տոննայից ավելի) լեղակ։ Այս կապակցությամբ նա գրում է. «Նիրհան ամսին ԺԶ (16)-ումն եկի էկրայ, ընկերօվի ՂԲ (92) չարմ լեղակ ինք առել ... Սարհանջամն պարոն Ավետիկն էր. ՂԲ չարմ լեղակէն յինք վեռէց Յովանին ջահտան ԼԴ (34) չարմ, Բաբէն վեռէց ԽԲ (42) չարմ. ես՝ Յովանէսս վեռի ԺԶ (16) չարմ, որ գնանք Սուրաթումն ղրսմաթ գրձենք, կիսենք»։

---

[25] *К. А. Антонова*, Очерки общественных отношений и политического строя могольской Индии времен Акбара (1556—1605), М., 1962, стр. 121.

[26] Տե՛ս «Արարատ», 1880, էջ 229։

[27] Տե՛ս Դ. Փոլադյան, Ագրայի հայերը, Բեյրութ, 1963, էջ 41։

[28] Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Երևան, 1964, էջ 448։

[29] Մեզ արդեն ծանոթ Ավետարանի հիշատակագրություններից մեկում թվարկված են խոջա Գերաքի կնոջ՝ Ծաղիկի ազգականները. «Դարձեալ յիշեցէք զԾաղիկն և զքոյրն ...Սիպրիկն և զորդին՝ Ավետիկն» (Մատենադարան, ձեռ. № 6665, էջ 97բ)։ Եթե այստեղ հիշատակվածը մահդասի Պետրոսի որդի Ավետիքն է, ուրեմն Ագրայում հաստատված այդ խոջան՝ Հովհաննեսի սահիպ պարոնների՝ Զաքարի և Ըմպրումի հարազատ մորաքրոջ որդին է եղել։

Սուրաթ է մեկնում Հովհաննեսը մարտի 19-ին։ Նույն ամսի 27-ին հասնում է Սրինճ (այստեղ հանդիպում է Դիլաքի որդի Ստեփանին), 2 օր հետո ճանապարհվում է և ապրիլի 10-ին ժամանում Սուրաթ։

Իր ապրանքը՝ 16 չարմ (368 կգ) լեղակը, 7 հակ սրնճի ու 4 հակ դերգազի կոչվող գործվածքեղենը բարձում է դեպի Բասրա ուղևորվող նավերի վրա, լիազորելով իր «աղալուզ ընկեր» (այսինքն՝ նույն աղաների գործակատար) Շիրազի Հովանին՝ այդ ապրանքների մի մասը հասցնել Սպահան, իսկ մյուս մասը՝ վաճառել Բասրայում։

1684 թ. մայիսի 27-ին Հովհաննեսը Սուրաթից դուրս է գալիս և, անցնելով նույն Օվրանգաբադ—Բերամփուռ—Սրինճ—Լաշկար ճանապարհով, նույն թվականի դեկտեմբերի 11-ին մտնում է Ագրա։ Ընդամենը 10 օր հետո նա մեկնում է Խերապատ (Խայրաբադ) և Լահուռփուռ քաղաքները՝ բարդար կամ խերապատի կոչվող գործվածք գնելու նպատակով։ Այս կապակցությամբ Հաշվետումարի մեջ նոր բաժին է սկսվում, որի բացատրական նախաբանում ասված է. «Տէր աստուած խէրն և բարին առաջնորդէ, ամէն։ Փոքր թիվն ԿԹ (69) համիրայ ամսի ԻԶ (26)-ումն, էկրայ, պարոն Ավետիկին խետ ղարար արարի, որ գնամ Խէրապատ, Լահուռփուռ, մինչև ԺԲՌ (12000) թան բարդար առում։ Էկրայ քարսաղին պարոն Ավետիքն առէ, ես խրիտն թայար առեմ, վեռում գնամ էկրայ. կէսն Պողոսի որդի Յովանին ջանըպէ լինի և կէսն իմ՝ Յովանիսիս ջանըպէ լինի... Համիրայ ամսին ԻԶ (26)-ումն էկրայ դուս ելայ դապի Խէրապատ և Լահուռփուռ»։

Հովհաննեսը հաջողությամբ կատարում է իր ստանձնած պարտավորությունը. Լահուռփուռում գնում է 102 հակ կամ 10 հազարից ավելի զգեստացու խերապատի (իմա՛ այդ քաղաքում գործված կտորեղեն)։ 1685 թ. հոկտեմբերի 31-ին ապրանքը բերում է Ագրա. 162 հակից 50-ը վերցնում է ինքը, մյուս մասը՝ պարոն Ավետիքը Շիրազի Հովհանի համար։

Իր բաժին 50 հակ խերապատին 1686 հունվարի 19-ին Հովհաննեսն ուղարկում է Սուրաթ, որ «խասանէ Պողոսի որդի Շիրազի Յովանն. ըխտիար ունի յոր տեղ որ ձեռ տայ՝ ծախէ, զրայ մեր ընկերութիւնն Յովանին խէտ տայ»,—գրում է նա։

Հաշվետումարի ամենաբովանդակալից ու հետաքրքրական մասն սկսվում է վերոհիշյալ գործարքին վերաբերող գրանցումներից հետո։

1686 թ. փետրվարի 8-ին Հովհաննեսը, համաձայնագիր կնքելով Պողոսի որդի Շիրազի Հովհանի հետ (Հովհանը Ագրայում չէր գտնվում, նրա անունից հանդես է գալիս պարոն Ավետիքը), ձեռնարկում է ամենահեռավոր ճամփորդությանը—ուղևորվում է դեպի Տիբեթ[30]։

Առևտրական այս գործարքի մեջ ընդգրկված վաճառականների միմյանց նկատմամբ ստանձնած պարտավորությունների մասին ուշագրավ տվյալներ են գրանցված Հաշվետումարի այդ բաժնի ներածականում, որ մեջ ենք բերում ամբողջությամբ.

«Տէր աստուած խէրն և բարին առաջնորդեսցէ, ամէն։ Թիվն ՌՃԼԵ (1686) և փոքր թիվն Ազարի Հ (70), ովդան ամսին ԺԵ (15)-ումն (փետրվարի 8-ին) Յնդուստան էկրայ. ես տէր Դաւթի որդի Յովանէսըս ընկերացայ մահդասի Պետրոսի որդի պարոն Ավետկին խետ, որ գընամ Բութանտ (իմա՛ Տիբեթ)։

---

[30] Տիբեթի փոխարեն ամենուրեք գրում է Բութանտ. այդպես է կոչվում այդ երկիրը հայ ու եվրոպական մի շարք աղբյուրներում։

Մեր խրիտն փիշաղին թարեղս այ եղել. մեք թիքն էս թարեղումս ղրինք. չուն որ ովդան ԺԷ (17)-ումն (փետրվարի 10-ին) էկրայ դուս ելայ դաբի Փաթանայ։ Մասկուրիս ջահդան պարոն Ավետիքն սարմաեայ մէջ իբեր Պողոսի որդի Յովանին ջանպէ, ջամէն ԴՌՉՃՁԵ (4685 ռուփի). ես Յովանէսըս սարմաեայ մէջ բերի, ջամէն ԴՌՉՃՁԵ-ի (4685 ռուփի), որ ելաւ Բ (2) ջամէն ԹՌԴՃՀ. (9370 ռուփի)։ Էս ջամէն ես՝ Յովանէսըս խրիտ արարի, վեռի զընացի. ինչ որ շախ տայ՝ իմ Յովանիսիս և Յովանին միջօվի լինի։

Դարձեալ, ես՝ Յովանէսըս պարոն Ավետկին խետ զարար ունիմ, ինչպէս որ մեր մին զմինու տված գրումն գրած այ, որ իմ ջանպէ Ծ. (50) խակ խէրապատի և մին բանդրի ամ ըռավանայ արարէլ Սուրաթն, խասանի Յովանին ձեռն. ըխտիար ունի Սուրաթումն ծախե, կամ թէ տանի Ըսպահան ծախե. ինչ որ պարտկ լինի՝ վերայ տայ, մայբաղին ուր ջամումն պախէ և այլ իմ Յովանիսիս ջանպէ։ Փիշաղին Յընդուստանայ աղարկած ապրանքի թահթիմայ ունիմ պարոնաց մօտ, ինչ և իցէ, էն էլ ջամայ բիրե իմ ջահտան։ Բ (2) ղալամն, ուր սարմաէն բաղայ, ինչ որ ուր ջանպէգնէ՝ միայպէս թարայդդի առե. մինչև հոսարմաէն բաղայ, ինչ որ ուր ջանպէգնէ՝ միայպէս թարայդդի առե. մինչև հոգին սուրբն կամակից լինի, ես Բութանտայ յետ գում Յընդուստան կամ թէ Ըսպահան, յորտեղ որ Յովանն տեսնում՝ մեր խըսէպն մին զմինու խետ տեսնունք, յամէն մարթ ուր հախին տէր այ ուր խըսէպօվն» (էջ 78)։

Համաձայնագիրը պարզ է իր հիմնական բովանդակությամբ. Տեր Դավթի որդի Հովհաննեսն ու Պողոսի որդի Հովհանը ընկերություն են կազմում, շրջանառության մեջ դնելով հավասարաչափ դրամագլուխ։ Յուրաքանչյուրը մասնակցում է առևտրական այդ ձեռնարկին 4685 շահիջահանի կամ ռուփի գումարով. ընկերության ընդհանուր գումարն է, այսպիսով, 9370 ռուփի (106 կգ 227 գր արծաթ)։

Սակայն, ինչպես պարզվում է Հաշվետումարի բազմաթիվ գրառումներից, Հովհաննեսը (հավանաբար նաև նրա ընկեր Պողոսի որդի Հովհանը) այս գործն սկսելուց հետո էլ չի դադարում կախման մեջ լինել Նոր Ջուղայի իր սահիպ պարոններից։

Անշուշտ, նա այլևս խոջա Գերաքի որդիների անդրամագլուխ գործակատարը չէ, որ 4 տարի առաջ Հնդկաստան էր գալիս ստացված շահի մեկ քառորդը ստանալու պայմանով իր պարոններին պատկանող 18 ճոթ մահուդը վաճառելու համար։ Այժմ նա սեփական դրամագլխի տեր է, բայց անխզելի կապերով շղթայված վերոհիշյալ իր պարոններին՝ որպես Գերաքենց առևտրական տան գործակատարներից մեկը։ Նույնիսկ հեռավոր Տիբեթի մայրաքաղաք Լհասայում նա վայրկյան անգամ չի մոռանում այն իրողությունը, որ ինչպես ինքը, այնպես էլ իր աղալուղ ընկերները՝ «ողջ ուրն (այսինքն իրենց սահիպ պարոնին) ենք ծառայ, դոր օր կուզէ կու խըսէպէ»։ Բազմիցս նա աղերսում է աստծուն ամոթով չթողնել իրեն իր աղաների առաջ, խղճալ ու ազատել փորձություններից[31]։

Տիբեթում, ինչպես և իր երթուղու վրա գտնվող խոշոր քաղաքներում վաճառելու համար Հովհաննեսը գնում է բազմապիսի ապրանքներ, հատկապես թանկագին քարեր. 365 սեր (323 կգ 760 գր) քահրբար (սաթ), 1127,5 տանկ, թանկագին քարեր. 365 սեր (323 կգ 760 գր) քահրբար (սաթ), 1127,5 տանկ, այնուհետև ևս 823 տանկ (միասին հաշված՝ 32 կգ) մարջան, 273 դանա

[31] Ստորև բերում ենք այդ կարգի մի քանի գրանցումներ. «Տէր Յիսուս մեր շարմն պախես, մին ազատում տաս, խեղջ անք», «Տէր Յիսուս մեր ախիրն խէր առես, խեղջ ամ» «Տէր Յիսուս, մեր շարմն պախես, զմեզ մեր աղինացէն շարմանդայ ոնչ առես»։

(հատ) մարգարիտ, 96 աղեղի (սարդիոնի) համրիչ, 24 թան (զգեստացու) փալանկիփուշ, 72 թան տարբեր տեսակի չիթ, 16 թան կտավ և բազմաթիվ այլ ապրանքներ, ընդամենը 8216,5 ռուփի արժողությամբ։

Ինչպես երևում է այս թվարկումից, Տիբեթ տարվող հիմնական ապրանքը սաթն է—քահրբարը։ Կոստանդ Ջուղայեցին նշում է, որ այս քարը լավ վաճառվում է աշխարհի բոլոր կողմերում. «Քարպարն,—գրում է նա,—Ֆռանկստան՝ Տանծկու (Դանցիգի) ծովումն բհամ կգոյ. քուլուչայ է, որ կտաշեն, կուլուլակ թսպեհ էլ կշինեն. թախտայ էլ կայ, որ կերպ կերպ իքմին կշինեն ... Աշխարհումս ամենայն տեղ խարջ այ, Հնդստան էվել այ խարջ»[32]։ Արխիվային փաստաթղթերում նշված է, որ Իրանից Լվով ժամանող հայ վաճառականները իրենց հետ արևելյան երկրներ էին տանում մեծ քանակությամբ սաթ, իսկ ոմանք էլ այդ նպատակով անձամբ գնում էին Մերձբալթյան երկրներ, հատկապես՝ Դանցիգ[33]։

Տիբեթ տանելու համար մեծաքանակ սաթ գնող մեր վաճառականը անշուշտ լավատեղյակ էր, որ այդ երկրի բնակիչների (ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց) տարազի բաղկացուցիչ մասն էին կազմում տրան-վա կոչվող համրիչները (թաղբեհ), որ կրում էին որպես վզի կամ դաստակի զարդ, և որոնցից յուրաքանչյուրը պետք է պարունակեր 108 հատիկ[34]։

Իր հետ Տիբեթ տանելու համար Հովհաննեսն Ագրայում վարձում է 2 հայ ծառաներ՝ Տեր Պետրոսի որդի Պողոսին՝ տարին 50 ռուփի աշխատավարձով ու «խորակ-փուշակ»-ով (այսինքն՝ ուտելիք-հագնելիքով) և Ղալամ Պետրոսին՝ նույն պայմաններով, բայց 40 ռուփի աշխատավարձով։ Ինչպես ինքը, այնպես էլ իր ծառաները զինված էին. Հաշվետումարի մեջ 2 անգամ գրանցում կա «բարութ ու գլուլայ» (վառոդ ու գնդակ) գնելու մասին։

Ագրայից մեր վաճառականը, ինչպես ասացինք, դուրս է գալիս 1686 թ. փետրվարի 10-ին։ Շքուրապատ (Շիքոհաբադ) քաղաքում նա միանում է դեպի Փաթնա մեկնող կարավանին և, անցնելով Մաքվանփուռ (Մաքանփուռ), Ջանապատ (Ջահանապատ), Բանարիս (Բենարես) ու Շահզադփուռ քաղաքներով, նույն թվականի մարտի 9-ին հասնում է Փաթնա (ամենուրեք գրում է Փաթանայ)։

Փաթնայում ևս գոյություն ունի հայ գաղութ. Հովհաննեսն այստեղ, այլևայլ առիթներով, գործ է ունենում հայ և օտարազգի մի շարք անձանց հետ. հիշատակում է վարպետ Պետրոսին, ուստա Գրիգորի որդի Խաչիկին, Ջաքում Հակոբջանին, Մուրատին, Քաչալ Ծատուրի թոռ Պետրոսին, Ստեփանի որդի Վարդանեսին, Մուսի Դարվան ֆրանկսկին (այսինքն՝ ֆրանսիացուն), սրա որդի Փանոսին և նոքար Մանվելին, Ընուփ դալալին և վալանդզենց (այսինքն՝ հոլանդացիների) առևտրական տունը[35]։

[32] Մատենադարան, ձեռ. № 5994, էջ 10ա։

[33] Տե՛ս Н. К. Кривонос, Армянская колония во Львове в первой половине XVII в., Львов, 1965, стр. 147 (դիսերտացիոն աշխատանք. օգտվել ենք մեքենագիր օրինակից)։ Այստեղ հիշատակված է Ջաքար Կիրկորովիչ (այսինքն Գրիգորի որդի) անունով իրանահայ մի վաճառական, որ Լվովից մեկնել է Մերձբալթյան երկրներ սաթ գնելու նպատակով (նրա աղբյուրն է ЛЦГИА, ф. 52, оп. 3. Акты войт. суда, т. 398, стр. 1083).

[34] Տե՛ս Н. В. Кюнер, նշված աշխ., էջ 73—74։

[35] Այս ցանկի մեջ ներմուծել ենք նաև այն անձանց անունները, որոնց Հովհաննեսը հիշատակել է Փաթնա կատարած երկրորդ այցելության ժամանակ՝ 1692 թվականին։

Փաթնայում Հովհաննեսը հյուրընկալվում է հայ քահանայի տանը և Տիբեթ տանելու համար լրացուցիչ գնումներ կատարում։ Գնում է 680 ռուփի արժողությամբ ապրանքներ, գերազանցապես տարբեր գործվածքներ՝ չափլա, ալաջա, բիարի խասա, ճերմակ չերա, հաստ ու բարակ չիթ, սոլագազի և այլն։

Փաթնայից դուրս է գալիս մարտի 29-ին. անցնում է Հաշիփուռ, Մինափուռ, Բիրբան, Պատրինկա քաղաքներով։ Բիրբանից սկսվում է ճանապարհի վերելքը՝ դեպի Հիմալայների փեշերին ծվարած Նեպալ։ Հետաքրքրական են այստեղ փոխադրական միջոցների մասին գրանցած տեղեկությունները։ Հովհաննեսը մի քանի անգամ նշում է կովեր վարձելու մասին. ըստ երևույթին կով է անվանում եղնուղտի (յակի) և կովի խառնուրդով ձո կոչվող կենդանուն, որը շատ դիմացկուն էր ցրտի նկատմամբ և կարող էր տանել շուրջ 5 փութ բեռ։ Սպասավորների համար ևս երկու կով է վարձել, վճարելով 5 ռուփի. «Բ կօվ տղէքոնց վեր ելնելէ խմար բոնեցի»։ Բազմապիսի տեղեկություններ կան տեղաբնիկ վարձու բեռնակիրների («համալ», «բարիայ», «ադվայ», «բօլավայ») ու նրանց աշխատավարձի մասին։ Նեպալում և Տիբեթում եղնուխտներից ու ձոյերից բացի ապրանքափոխադրումների համար օգտագործում էին նաև ոչխարներ ու այծեր, որոնց բարձում էին շուրջ 10 կգ բեռ[36]։

Հաշվեմատյանում գրաստների հիշատակությունից բացի, որպես ապրանքների փոխադրամիջոց հաճախ նշված է «տավար» կամ հոգնակի «տավարանի»։ Դրանց հսկող գրաստապանները տարբեր տեղերում տարբեր անվանումներ ունեն՝ «չարվադար», «մուքիայ» և այլն։ Ցամաքային ուղիներում բեռների փոխադրության համար տեղանքին ու ճանապարհներին համապատասխան փոխադրամիջոցներ են օգտագործվել։ Սպահանից մինչև Բանդար-Աբաս, ինչպես նաև Սուրաթից մինչև Ագրա օգտագործվել են ջորիներ («գաթը»), ձիեր, որոնց սովորաբար թաթու է անվանում։ Երբեմն թե՛ բեռների և թե՛ իր ծառաների («տղաներ») փոխադրության համար վարձել է տարբեր տեսակի սայլեր («բալ», «գանտի», «գադի») և սայլապաններ («բալդի», «գանտիվալե», «գադիվան») և վարձատրել կանխիկ դրամով կամ որևէ ապրանքով։

4

1686 թ. ապրիլի 19-ին Հովհաննեսը հասնում է Նեպալ, կամ Նէքպալ՝ ինչպես գրում է ինքը. այստեղ մնում է 3 ամիս։

Նեպալի հովիտը, հնագույն ժամանակներից ի վեր, խոշոր նշանակություն է ունեցել որպես Տիբեթից Հնդկաստան և հակառակ ուղղությամբ կատարվող մեծածավալ առևտրի անցուղի։ Նեպալն այդ առևտրին մասնակցում էր ոստայնանկության ոչ բարձրորակ իր արտադրանքով, պղնձյա ու դեղնապղնձյա իրերով, թանկագին մետաղներից պատրաստվող զարդերով և այլն։ Անհամեմատ ավելի մեծ նշանակություն ուներ Նեպալի համար տրանզիտ առևտուրը։ Հնդկաստանից այդ հովտով դեպի Տիբեթ էին արտածվում մետաքսյա գործվածքներ, թանկագին քարեր և այլն, իսկ Տիբեթից Հնդկաստան, այնուհետև այլ երկրներ՝ արծաթ, ոսկի, մուշկ, բորակ, եղնուխտի պոչ և Չինաստանից բերվող ապրանքներ։

[36] Տե՛ս Н. М. Пржевальский, Из Зайсана через Хами в Тибет, М., 1948, стр. 211: „Непал. История, этнография, экономика", М., 1974, стр. 17.

XV դարի վերջերից Նեպալը մասնատվել էր 3 իշխանությունների՝ Բհատգաոն, Քաթմանդու և Փաթան, որոնք կառավարվում էին Մալլա հարբստությունից սերվող պայազատներով։ Քաթմանդուի իշխան Պրատապ Մալլան (1624—1674), Տիբեթի դեմ կազմակերպած հաղթական արշավանքի շնորհիվ իր հսկողության տակ էր առել Քութիի և Կիրոնգի ցժվարանց լեռնանցքներով դեպի Տիբեթ ձգվող առևտրական կածանները և մի շարք առանձնաշնորհումներ ստացել։ Քաթմանդուի վաճառականները, Նիվար ազգից, իրավունք էին ստացել Լհասայում 32 առևտրական տնից բաղկացած կայուն գաղթօջախ ունենալու. Տիբեթը պարտավորվել էր իր առևտուրը Հնդկաստանի հետ ամբողջապես իրականացնել Քաթմանդուի հովտով և չօգտվել Սիկիմի կամ Բութանի ճանապարհներից։ Միջազգային նշանակություն ունեցող այս առևտուրը, սակայն, հիմնականում կատարվում էր ոչ թե Նեպալցիների (Նիվարների), այլ քաշմիրցի մահմեդական վաճառականների (գոսայինների) միջոցով[37]։

Հովհաննեսը լինում է Նեպալի վերոհիշյալ երեք իշխանություններում։ Քաթմանդուի ռաջային և պետական պաշտոնյաներին վճարում է մաքսատուրք՝ 167 ռուփի, ինչպես և զանազան նվերներ (տարբեր տեսակի գործվածքներ, միրգ ու քաղցրավենի)։ Գրառումներից պարզվում է, որ ռաջան մաքսատուրքերի հաշվին Հովհաննեսից վերցնում է նրա անգլիական հեռադիտակը։ («Իմ մին ինկլիզի դուրբին ունի, ըռաջէն վեռեց»)։ Այդ հեռադիտակը գնահատվել է 50 մանտրմելի կամ 25 ռուփի և համապատասխան չափով կրճատվել է Հովհաննեսից գանձվելիք տուրքը։ Թերևս այդ երկրորդ հեռադիտակն է, որ հասել է հեռավոր այդ երկիրը և դարձել տեղական իշխանավորի սեփականություն։ Առաջին հեռադիտակը Փաթանի իշխանին նվիրել էր 25 տարի առաջ Նեպալ այցելած Իոհան Գրյուբերը։ Երբ իշխանը հեռադիտակը ուղղել էր թշնամու բանակի կողմը և շատ մոտ տեսել նրանց հրամանատարին, իսկույն հրամայել էր հարձակման անցնել, սակայն նրան հասկացրել էին, որ այդ հեռադիտակի առաջացրած խաբկանքն է. «Դժվար է նկարագրել իշխանի ուրախությունը նվերն ստանալիս»,—պատմում է Ի. Գրբյուբերը։ Հաշվետումարի չորուցամաք գրառումները կենցաղային մանրամասնություններ չեն պարունակում, բայց պետք չէ տարակուսել, որ Քաթմանդուի ռաջան մեր վաճառականի հեռադիտակով ոչ պակաս հրճվանք է ապրել։

Քաթմանդու քաղաքում ևս մանր-մունր գնումներ կատարելով, Հովհաննեսը հուլիսի 19-ին մեկնել է Տիբեթ, անցնելով Բադգամ (Բահադգաոն)—Սանքո—Լիստի—Քասա—Քութի—Ջիգիչա[38]—Լհասա (գրում է միշտ Լասա) ուղեգծով։ Այս ճամփորդությունը տևել է շուրջ երկուսուկես ամիս՝ 1686 թ. հուլիսի 17-ից մինչև սեպտեմբերի 28-ը։

[37] Տե՛ս И. Б. Ребько, Социально-экономические отношения в Непале в первой половине XVIII в. и воздействие на них горкхских завоевателей („Непал, история, этнография, экономика", стр. 17—19, 46—49); Его же, Непал, Ташкент, 1958, стр. 10—15.

[38] «Ջիգիչայ» ձևով տառադարձված բնակավայրը, հավանաբար, Տիբեթի վարչական ու կրոնական երկրորդ կենտրոն Շիկատզե քաղաքն է, Պանչենլամայի աթոռանիստը (գրվում է նաև Շիխացզե, Սիկացզե, Ջիգարչի, Բժիկ'ա-ցցէ և այլ ձևերով)։ Այս մասին տե՛ս И. Я. Бичурин (Никиф), Собрание сведений по исторической географии восточной и средней Азии, Чебоксары, 1960, стр. 537. И. М. Пржевальский, նշված աշխ., էջ 218։ И. В. Кюнер, նշված աշխ., էջ 1—2։

Տեր Դավթի որդի Հովհաննեսի Հաշվետումարի տիբեթյան գրառումները իրենց հնությամբ և, մանավանդ, հարուստ բովանդակությամբ հատուկ տեղ են գրավում աշխարհի տանիքը համարվող այդ երկրի մասին օտարազգի այցելուների ուղեգրությունների շարքում։



Տիբեթի մայրաքաղաք Լհասայի միջնաբերդը։

Տիբեթ այցելած առաջին եվրոպացին համարվում է ֆրանցիսկյան քարոզիչ Օդորիկոս Ֆրիուլացին կամ Պորդենոնցին (Odorico de Pordenone)։ Հայտնի է, որ նա եղել է Հայաստանում և սովորել է հայերեն։ 1321 թ. կամ հաջորդ տարում Հ. Օդորիկոսը նավարկել է Հնդկաստանի հարավային ծովափերով և հետագայում վկայել, որ նավապետը ազգությամբ հայ է եղել և որ նավում նա առիթներ է ունեցել հայերեն զրուցելու[39]։ Մի քանի տարի անց՝ 1325—1326 թթ., եռանդուն այս քարոզիչը Չինաստանից մտել է Տիբեթ ու ապրել Լհասայում՝ շատ համառոտ և մասամբ կասկածելի տեղեկություններ գրանցելով տիբեթցիների կենցաղի ու հավատալիքների մասին[40]։

Երկրորդը եղել է պորթուգալացի Անտոնիո Անդրադցին (Antonio de Andrade)։ Սա 1600 թ. մեկնել է Գոա՝ Հնդկաստանի պորթուգալական հենակետը, այնտեղ ավարտել ուսումը և դարձել հիսուսյան միաբանության կրոնավոր, ապա պաշտոնավարել է Ագրայում, իսկ 1624 թ. մեկնել է Տիբեթ,

[39] Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 372։ Ս. Ալպոյանյան, Պատմություն հայ գաղթականության, հ. Բ, Գահիրե, 1955, էջ 453։

[40] „Les voyages en Asie au XIVe siecle du bienheureux frère Odoric de Pordenone, religieux de st. François“, ed. H. Cordier, Paris, 1891, p. 449—454; *Рихард Хенниг*, Неведомые земли, т. III, М., 1962, стр. 188—189.

հիմնադրել այնտեղ միսիոներական կենտրոն։ Պահպանվել են սրա երկու նամակները, որոնք տեղեկություններ են պարունակում Տիբեթ կատարած նրա ճամփորդության մասին[41]։ Հայտնի է, որ ընթանալով Անտոնիո Անդրադցու հետքերով, Տիբեթում քրիստոնեություն տարածելու փորձեր են կատարել նաև այլ քարոզիչներ, սակայն 1652 թ. սրանք բոլորն էլ տեղական իշխանությունների պահանջով արտաքսվել են երկրից[42]։

Հաջորդը եղել է ավստրիացի ճիզվիտ Իոհան Գրյուբերը։ 1661 թ., ֆրանսիացի Ալբերտ դ'Օրվիլի ընկերակցությամբ, նա Չինաստանից, Սի-նինի ու Նագ-չուի վրայով, անցել է Լհասա, մնացել այնտեղ 2 ամիս, որից հետո, Նեպալի ճանապարհով, մտել Հնդկաստան ու հասել Ագրա։ Գրյուբերն արևելյան երկրներում կատարած իր ուղևորությունների ընթացքում՝ 1658—1665 թթ. գրել է հինգ նամակ, որոնց մեջ կան հետաքրքիր տեղեկություններ Տիբեթի աշխարհագրության և տիբեթցիների կյանքի ու կենցաղի մասին[43]։

Ըստ այդմ՝ Հովհաննես Ջուղայեցին Տիբեթ այցելած չորրորդ անձնավորությունն է, որ գրավոր հիշատակ է թողել այդ մասին։ Իր եվրոպացի նախորդներից մեր վաճառականը տարբերվում է նախ նրանով, որ լինելով աշխարհական անձնավորություն (ինչպես ասել էնք, նախորդ այցելուներն անխբտիր եղել են կաթոլիկ քարոզիչներ), ունեցել է այլ հետաքրքրություններ և գրանցումներ է կատարել նախորդներին քիչ հետաքրքրող երևույթների մասին։ Եվ ապա, դարձյալ տարբերվելով իր նախորդներից, որոնք շատ կարճ ժամանակ են ապրել այդ երկրում, նա մնացել է այնտեղ անընդմեջ հինգ տարի, գործ է ունեցել տասնյակ պետական պաշտոնյաների, բուդդայական հոգևորականների և վաճառականների հետ, սովորել տիբեթերեն, վաճառել ու գնել բազմապիսի ապրանքներ, վճարել հարկեր ու տուրքեր, դատել-դատվել, և այս ամենի մասին իր Հաշվետումարում գրանցել ստույգ ու արժանահավատ տեղեկություններ։

Հովհաննեսը միակ հայ վաճառականն է, որի տիբեթյան հաշվետումարը պահպանվել ու հասել է մեզ. սակայն, անտարակույս, նա ունեցել է բազմաթիվ նախորդներ։ Նոր Ջուղայի վաճառականական դպրոցի համար պատրաստած իր դասագրքում Կոստանդ Ջուղայեցին ստույգ տեղեկություններ է

[41] Անտոնիո Անդրադցու այդ նամակները վերահրատարակված են պորթուգալացի գիտնական F. M. Esteves Pereira-ի կողմից „Novo Pescobrimento do Grao-Cataio ou Reinos de Tibete, pelo padre Antonio de Andrade de Compantia de Jesus Português no ano de 1624“ աշխատության մեջ։ (Այս գրքի մասին մեզ տեղեկություններ է հաղորդել պր. Ռ. Կյուլպենկյանը, որին հայտնում ենք մեր շնորհակալությունը)։

[42] Տե՛ս *В. П. Леонтьев*, Иностранная экспансия в Тибете в 1888—1919 гг., М., 1956, стр. 13.

[43] Տե՛ս *M. Thevenot*, Relations de divers voyages curieux, T. 4, Paris, 1966։ Այս հազվագյուտ գրքի մանրաժապավենը, հանված Վիեննայի ազգային մատենադարանի օրինակից, շնորհակալությամբ ստացել ենք դր. Մեսրոբ ծ. վ. Գրիգորյանից։ Տե՛ս նաև *И. В. Кюнер*, Описание Тибета, ч. I, Географическая, вып. 1-й, Владивосток, 1907, стр. 32—34; *Сарат Чандра Дас*, Путешествие в Тибет, пер. с английского, под ред. Вл. Котвича, СПб., 1904, стр. XVII—XVIII; *В. Бартольд*, История изучения Востока в Европе и в России, СПб., 1911, стр. 97.

Հովհ. Ջուղայեցուց շուրջ մեկ տասնամյակ հետո Տիբեթ այցելած եվրոպացիների մեջ առանձնանում է ճիզվիտ քարոզիչ Իպոլիտո Դեզիդերին, որի թողած ուղեգրությունները Տիբեթի աշխարհագրության, ներքին կյանքի և տնտեսական հարաբերությունների մասին ուշագրավ տվյալներ են պարունակում (տե՛ս *L. Desideri*, An aecaunt of Tibet, London, 1932)։

հաղորդել Տիբեթում (Բութանդ) կիրառվող չափ ու կշռի միավորների մասին, անշուշտ հարց ու փորձ անելով ջուղայեցի այն վաճառականներին, որոնք Հովհաննեսից շատ առաջ լինելով այդ երկրում, քաջատեղյակ էին տեղական կենցաղին ու բարքերին[44]։

1686 թ. սեպտեմբերի 28-ին Հովհաննեսը հասնում է Լհասա։

Իր իսկ վկայությամբ նա ոչ տեղի լեզուն գիտեր, ոչ սովորությունները. «Ես որ Լասայ գնացի նոր չախտա, ոչ տեղին լեզուն, ոչ խամպարքն, ոչ տեղին քաշն խաբար չի»։ Բայց նա մեծ դժվարություններ չի կրում այստեղ. Լհասայում գտնվող հայերը, հատկապես Հովհաննեսի աղաների այստեղ գտնվող գործակատարները, օգնում են նրան այդ նոր միջավայրին ընտելանալու։

Լհասայում գտնված տարիներին Հովհաննեսը առևտրական գործարքների մեջ է մտնում ինչպես իր ազգակիցների, այնպես էլ բազմաթիվ տիբեթցի, նեպալցի (նիվար) և քաշմիրցի վաճառականների ու գնորդների հետ[45]։ Հաշվետումարում հիշատակված են նրանցից շատ-շատերի անունները. Կուկասի որդի Ծատուր, Պողոսի որդի Մելիջան, Գազկցի Կարապետի որդի Աբրահամ, Մելիջանենց Մաթոս, Մարտիրոսի որդի Նեկղոս (Նիկողոս), Հակոբ, Խումցի Աղան, Դավութ, Մուրատ, Սարգսի որդի Հովան, Ակնցի Ասլան, Պետրոս, նիվար (նեպալցի) Կանաչնքու, նիվար Ջեկալիան, նիվար Մադո, նիվար Գառու, քաշմիրցի Հաֆիզ Ընահատ, քաշմիրցի Մադեղ, քաշմիրցի խոջա Ըսմահել, քոթվալ Շամուգոնէ, նեմո Անճոլե, ցոմգո Լովզան, լամալ Կիսին, Ազիզ լամու, Գամպայ լամու, լամու Բուինե, Հակու լամու, դեվ Նասու, դեվայ Ճալինկ Պոմուլե, Հաճի Մահմուդ, Մոլայ Հաշութ, ոսկերիչ Դեվմուն, դարբին Ասիթ, դերձակ Ջանսի և այլն։ Հիշատակված հայ վաճառականներից մի քանիսը Լհասայում ապրել են իրենց ընտանիքներով։ Հաշվետումարում գրանցում կա Դավութի որդու մահվան և այդ առիթով որոշ գումար տալու, ինչպես և զատկին Նիկողոսի կնոջը (խիղանին) «շորի խարճ» նվիրելու մասին։ Հովհաննեսը որոշ ժամանակ ապրել է Նիկողոսի ընտանիքում և նրանք միասին են կատարել իրենց «խորակի խարճն», այսինքն՝ սննդի ծախսերը։

Լհասան եղել է Հովհաննեսի ամենահեռավոր հանգրվանը, որտեղ նա մընացել է շուրջ 5 տարի և նոր ճամփորդություններ չի ձեռնարկել։ Սակայն հայ վաճառականներից մի քանիսը, հատկապես Ծատուրը, Մելիջանը, Նիկողոսն ու Դավութը հաղթահարելով բազմաթիվ խոչընդոտներ, կտրելով լեռնային դժվարանց ճանապարհներ ու անմարդաբնակ տարածություններ, Տիբեթից ուղևորվել են Չինաստանի Սինին վաճառաշահ քաղաքը[46] և այնտեղից

[44] Կ. Ջուղայեցու «Աշխարհաժողովի» մեջ կան այսպիսի արժեքավոր տեղեկություններ. «Դարձեալ Բութանդ, ուր քուլի երկրներովն՝ քաշին անումն լանկ այ, որ մին լանկն ժ մսխալ այ, որ կասեն մին գաթուրի, որ մին մսխալն Ե ֆուն այ, որ մին ֆունն ԺԹ գրան այ, որ Բութանդայ ժ մսխալն Հաջամստան Ը մսխալ դուս կգոյ. որ Բութանդայ Ա մսխալն Հաջամստան ՀԷ գրան այ» (Մատենադարան, ձեռ. № 10704, էջ 36ա, ձեռ. № 5994, էջ 15ա)։

[45] Քաշմիրցի այս վաճառականները, որոնց անվանում էին նաև քաշիսներ, Տիբեթի մայրաքաղաք Լհասայի տնտեսական կյանքում մեծ դեր են կատարել ինչպես Հովհաննեսի ճամփորդության տարիներին, այնպես էլ հետագա դարերում։ Ըստ եվրոպացի ուղեգիրների, նրանք Լհասայի բնակչության ամենահարուստ խավն են եղել, ունեցել են իրենց մզկիթը և համայնքի գործերը ղեկավարող պաշտոնյա (տե՛ս „Путешествие через Монголию в Тибет, к столице Тале-ламы, сочинение Гюк и Габэ“ пер. с французского, М., 1866, стр. 239—240).

[46] Լհասայից Սինին ձգվում էր երկու ճանապարհ, մեկը 1860, մյուսը 1700 կմ երկարությամբ (ըստ երևույթին այս վերջին ճանապարհն է, որ գործում է նաև այսօր)։ Իրենց մեծա-

Լհասա առաքել կամ անձամբ բերել մեծ քանակությամբ ձույլ ոսկի, մուշկ, թեյ, «Սլնկի շալ» և այլ ապրանքներ։ Որոշ գրանցումներ հնարավորություն են տալիս ենթադրելու, որ մի քանի հայ վաճառականներ (հաստատապես կարելի է ասել Պողոսի որդի Մելիջանի մասին) տևական բնակություն են հաստատել Սինին քաղաքում։

Չին ժողովրդի հետ հայերի ունեցած պատմական շփումների և առնչությունների հարցն առ այսօր քննության հատուկ առարկա չի դարձել։ Այդ իսկ պատճառով, փոքր-ինչ շեղվելով մեր ծրագրից, փորձել ենք համառոտ մի ակնարկ նետել այդ հարցի վրա։

6

Հայտնի է, որ նեստորական ասորիները, Մերձավոր Արևելքի քրիստոնյա այլ ժողովուրդների (մասնավորապես հայերի) հետ միասին, նշանակալից քայլեր են կատարել Չինաստանի և արևմտյան երկրների միջև տնտեսական կապեր հաստատելու բնագավառում։ Թան դինաստիայի տիրապետության դարաշրջանում, այսինքն 618—907 թթ., Չինաստանի մի շարք վայրերում, առաջին հերթին Չանյան (Կումդան) և Լոյան (Սարոգ) մայրաքաղաքներում, հիմնադրվել էին քրիստոնեական եկեղեցիներ ու վանական հաստատություններ. վանքեր էին ստեղծվել նաև Չինաստանի հարավարևմտյան տարածեղ բնակչություն ունեցող շրջաններում։ Դրանք, իհարկե, կյանքի էին կոչվում ոչ թե ազգությամբ չին քրիստոնյաների հոգևոր կարիքների բավարարման համար (նրանց քանակն աննշան է եղել), այլ այն վաճառականների և այլ զբաղմունքի տեր մարդկանց, ովքեր Մերձավոր Արևելքից և Իրանից մեկնում էին Չինաստան ու հաճախ մշտապես մնում այդ երկրում[47]։

Այդ շրջանում հայերի առկայությունը Չինաստանում հաստատվում է վերջերս գիտական շրջանառության մեջ դրված հետևյալ փաստով. Թան դինաստիայի տիրապետության ժամանակաշրջանից պահպանվել են բազմաթիվ հախճապակե գունազարդ արձանիկներ, որոնք պատկերել են Չինաստանում հայտնի տարբեր ազգությունների ներկայացուցիչների՝ ույգուրների, ալթայցիների, թոխարցիների, կաշգարցիների, քաշմիրցիների, խորեզմցիների, պարսիկների, սեմական ժողովուրդների (հավանաբար հրեայի)՝ իրենց բնորոշ ազգային դիմագծերով, տարազով, երբեմն էլ զբաղմունքը հատկանշող որևէ մանրամասնով։ Այդ արձանիկների շարքում հատուկ տեղ են գրավում հայի ազգային հատկանիշներով՝ արծվաքիթ, սև բեղ-մորուքով տղամարդկանց 3 արձանիկներ, պատկերված ծալապատիկ նստած դիրքով, յուրաքանչյուր մասով սրանք անցնում էին միանգամայն անմարդաբնակ, անապատային վայրերով։ Առաջին ճանապարհը, բարձված եղնուղտերով, կտրում էին 108 օրվա ընթացքում։ (Տե՛ս Сарат Чанбра Дас, նշված աշխ., էջ XV)։

[47] Տե՛ս Е. И. Кычанов, Сирийское несторианство в Китае и Центральной Азии („Палестинский сборник“, вып. 26(89), филология и история, Л., 1978, стр. 77—85).

Դեպի Կենտրոնական Ասիա և Չինաստան հայերի ձեռնարկած ուղևորությունների, նրանց գաղթավայրերի և հայ-չինական առնչությունների վերաբերյալ փաստական նյութերը հմտորեն ի մի են բերված Ժ. Դովիեի „Les Arméniens en Chine et en Asie Centrale au moyen age“ (Mélanges de sinologie offerts a M. Paul Demieville, II, Paris, 1974, էջ 1—17) հոդվածում, որի բովանդակությանը ծանոթացանք, երբ ներկա ներածականը մեծ մասամբ արդեն շարված էր։

բաքանչյուրի գոքին գինով լի մեկական տիկ[48]։ Այս արձանիկները ոչ միայն հաստատում են հայերի առկայությունը Չինաստանում վաղ ֆեոդալիզմի դարաշրջանում, այլև հնարավորություն են տալիս ենթադրելու, որ նրանք, ինչպես ուրիշ շատ երկրներում (Աֆղանստանում, Հյուսիսային Կովկասում, Ղրիմում, Կիևի մերձակայքում և այլն), այնպես էլ այստեղ՝ Չինաստանում, ունեցել են իրենց գաղթօջախները և զբաղվել նաև խաղողի մշակությամբ ու գինեգործությամբ։

VI—IX դարերի չինական արձանիկ (պատկերված է հայ գինեվաճառ)։

Արևելք-արևմուտք տնտեսական ու մշակութային առնչությունները ավելի մեծ ծավալ ստացան զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանում, մանավանդ խաչակրաց արշավանքներից հետո։ Հայաստանն այդ ժամանակ ևս տարանցիկ առևտրի կարևորագույն անցուղիներից մեկն էր հանդիսանում, իսկ Միջերկրականի ափին ստեղծված ու բարգավաճող Կիլիկյան հայկական թագավորությունը դարձել էր միջազգային առևտրի նշանավոր հանգուցակետերից մեկը։

Ֆրանցիսկյան միաբանության անդամ Անդրեաս Պերուջացի քարոզիչը 1326 թ. Չինաստանից դրած իր մի նամակում հայտնում է, որ Յյուանջոու (պարսիկների կողմից Զեյթուն կոչված) նավահանգստային քաղաքում, որ գտնվում է Թայվանի նեղուցի Յյուանջոու ծովածոցում, «մեծահարուստ մի հայ տիկին կառուցել է մեծ ու գեղեցիկ մի եկեղեցի, որը արքեպիսկոպոսի (այսինքն՝ Ջովաննի Մոնտեկորվինոյի) հրահանգով դարձվել է կաթողիկե տաճար»[49]։ Այդ վկայում է, որ XIV դարի սկզբներին հարավարևելյան Չինաստանի ծովափնյա վաճառաշահ քաղաքներում այնքան հաճախակի է եղել հայերի երթևեկը, որ եկեղեցի ունենալու անհրաժեշտություն է առաջացել։

Հետաքրքրական տեղեկություն է պահպանվել նույն այդ ժամանակաշրջանում Չինաստան այցելած նշանավոր մի հայ գործչի մասին. Անտոն Հայ է կոչվել նա և որպես նավապետ ծառայել է Վենետիկի հասարակապետությանը. պահպանվել է նրա կտակը՝ շարադրված ծերունազարդ ու վաստակած նավապետի կողմից XIV դարի վերջալույսին։ Նիկողայոս Սպաթարիոս-Միլեսկու վկայությամբ, որ 1675—1678 թթ. գլխավորել է Չինաստան առաքվող ռուսական դեսպանությունը, մետաքսի արտադրությունը, թնդանոթ ձուլելու գաղտնիքը, կողմնացույցի օգտագործումը նավագնացության մեջ և այլ նորույթներ, չինացիներից սովորելով տարածել են Եվրոպայում հայր Օդորիկոսը (Պորդինոնցին), Անտոն Հայը և Մարկո-Պոլոն[50]։

Յյուանջոու քաղաքում եկեղեցի կառուցած հայ տիկինը, Անտոն Հայ նավապետը և տասնյակ ու հարյուրավոր այլ հայեր Չինաստան էին հասել ծովային երթուղիներով։ Սակայն Չինաստանի հետ տնտեսական կապեր էին հաստատված նաև կարավանային այն ճանապարհներով, որոնք անցնում էին Միջին Ասիայով և Կաշգարից մտնում Չինաստան։ Գիտության մեջ վաղուց արդեն հայտնի է Բալխաշ լճի ավազանում, Սեմիրեչյե (Յոթնագետք) կոչվող երկրամասի Փիշպեկ գյուղի քրիստոնեական գերեզմանատանը հայտնաբերված այն տապանաքարը, որի վրա հայերեն և ասորերեն փորագրված է հետևյալ արձանագրությունը. «Տէր Յովան Հայոց եպիսկոպոս. ի թվ. Հայոց ԷՃԻԲ (1323) գրեցաւ յիշատակարան»։ Հայոց եպիսկոպոսի գերեզմանի առկայությունն այս հեռավոր երկրամասում և նույն կողմերում Սուրբ Մատթեոսի անունով հայկական ինչ-որ վանքի երբեմնի գոյությունը (վկայված եվրոպական միջնադարյան քարտեզներով) խոսուն փաստեր են Չինաստանի և մերձակա երկրների հետ կարավանային այս ճանապարհով հայ վաճառականների ունեցած տնտեսական կապերի մասին[51]։

Հաջորդ տեղեկությունը մեզ հաղորդում է XVI դարի երկրորդ հիսնամյակի մեծանուն հայ բանաստեղծ Գրիգորիս Աղթամարցին՝ իր «Տաղ Աստուածատուր Խաթայեցուն» ստեղծագործության մեջ[52]։ Նա պատմում է, որ բաղիշեցի մի հայ վաճառական՝ Մխիթար անունով, Ատրպատական—Ղում—Իրաղ—Խորասան ուղեգծով մեկնել է Բուխարա և Սամարղանդ, այնտեղից էլ՝ «Հնդուստան», «հռչակաւոր քաղաքն Խթայ», «մերձ սահմանացն Չինումաչինայ»։ Չի կարելի ասել, թե մեր բանաստեղծը ճշգրիտ պատկերացում ունի աշխարհագրական այս հեռավոր վայրերի մասին, սակայն նրան հասած լուրերը ոչ միայն հավաստի են, այլև ուշագրավ՝ զալմուխների (կալմիկ) ու չինացիների քաղաքական հակամարտությունների մասին տեղեկություններով։ Մխիթարի այս կողմերում եղած ժամանակ «Խըթայու զօրքըն» մեծ արշավանք է կազմակերպել զալմուխների դեմ՝ ծնկի բերել ու գերել նրանց. «ազգ մի բովանդակ ամէն գերեցին»,—գրում է Գր. Աղթամարցին։ Բաղիշեցի վաճառականն այդ գերիներից մի պատանի ծառա է դնել, բերել իր հետ Հայաստան ու դարձրել քրիստոնյա։ Հետագայում այդ պատանին խոշտանգվել է մահմեդա-

---

48 „The werterners among the figurines of the t'ang dynasty of China", by Jane Gaston Mahler, Roma, *1959, գունավոր ներդիրը՝ 94—95-րդ էջերի արանքում և սև-սպիտակ լուսանկարները պատկերների բաժնում,* III a, b, c, d։

49 *Ռիչարդ Հեննիգ, նշված աշխ., էջ 145։*

50 *Տե՛ս Н. Спафарий,* Описание первыя части вселенныя,именуемой Азии, в ней же состоит китайское государство с прочими его городы и провинции, Казань, 1910, стр. 24—25; Ղ. Ալիշան, *Հայ-Վենետ, Վենետիկ, 1896, էջ 71—173։*

51 *Տե՛ս Н. Я. Марр,* Надгробный камень из Семиречия с армянско-сирийской надписью 1323 г. ЗВОАО, том VIII, стр. 344—349; *В. В. Бартольд,* Очерк истории Семиречья, Фрунзе, 1949, стр. 45; Լ. Խաչիկյան, *Հայ պատմագրության անհայտ էջերից («Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 4, էջ 243—244)։*

52 *Տե՛ս* Գրիգորիս Աղթամարցի, *Ուսումնասիրություն, քննական բնագիրը և ծանոթագրությունները Մայիս Ավդալբեգյանի, Երևան, 1963, էջ 121—123։*

կանների կողմից, իսկ նրա վկայաբանական պատմությունը՝ նյութ դարձել գրական ստեղծագործության։ Մխիթարը, զալմուխ այդ ծառայի հետ միասին, անշուշտ արևելյան ապրանքներով բեռնավորված, տունդարձի այլ ճանապարհ է ընտրել, անցնելով Կասպից ծովի հյուսիսով, Ալանաց դռնով մտել է Անդրկովկաս, ապա ծանոթ ճանապարհներով հասել իր հայրենի քաղաքը։

Այժմ երկու խոսք պորթուգալացի ճիզվիտ Բենեդիկտ Գոեսի և նրա հայազգի սպասավոր Իսահակի մասին, որոնց ջանքերով պարզաբանվեց աշխարհագրական մի հին թյուրիմացություն։ Մինչև XVII դ. սկզբները եվրոպացիները չգիտեին, որ Խաթայը (Կիտայ), Խանբալիկ մայրաքաղաքով, նույն Չինա երկիրն է Պեկին մայրաքաղաքով։ Գոեսը, որ մի քանի տարի ապրել էր Հնդկաստանում, 1602 թ. դուրս գալով Լահոռ քաղաքից՝ ուղևորվեց դեպի Չինաստան։ Այդ դժվարին ու եվրոպացու համար անսովոր ճանապարհորդությունը հաջողությամբ ի կատար ածելու համար, անշուշտ հետևելով գիտակ մարդկանց խորհրդին, նա զգեստավորվեց հայկական տարազով։ Ուշադրության արժանի և կարևոր վկայություն է այս, հավաստիչ այն իրողության, որ հայերի երթևեկը կարավանային այս ուղեգծով այնքան սովորական է եղել տեղացի ժողովուրդների համար և նրանք այնպիսի բարի անուն են ունեցել այդ երկրամասերում, որ հայի տարազով ծպտվելը համարվել է հաջողակ երթևեկության երաշխիք[53]։

1604 թ. դուրս գալով Յարքենդից, Գոեսն ուղևորվեց Կաշգար, ապա անցնելով Աղսու, Քուչա, Կարաշահր (Զալիշ), Թուրֆան և Համի քաղաքներով, հասավ Սու-չժոու։ Կարաշահրում նա հանդիպեց Խանբալիկից ժամանող մի կարավանի և տեղեկացավ, որ այստեղ (Խանբալիկում) է գտնվում հայր Մատթեոս Ռուչին, իսկ նա ստույգ գիտեր, որ այդ քարոզիչը հաստատված է Չինայի մայրաքաղաք Պեկինում։ Եվ այսպես՝ պարզվեց, որ Խանբալիկն ու Պեկինը նույն քաղաքներն են, ուստի Խաթայն ու Չինան էլ՝ նույն երկրները։ Գոեսն իր մահկանացուն կնքեց 1607 թ. Սու-չժոու քաղաքում։ Գոեսի ուղեկից հայազգի Իսահակը խնամքով պահեց նրա օրագրությունները, հասցրեց Պեկին, և իրենց ճամփորդության հանգամանքների մասին լրացուցիչ տեղեկություններ հաղորդելով՝ նյութ մատակարարեց հայր Նիկողայոս Տրիգոտիուսին։ Այս կղերականը ամփոփեց արժեքավոր այդ տվյալները և 1618 թ. Քյոլնում հրապարակեց գիտական մեծ նորույթներ պարունակող „De christia-

53 Ուշագրավ է, որ XVI—XVII դդ. Եթովպիա այցելող կաթոլիկ կղերականները նույնպես հայի տարազ էին հագնում, անշուշտ տեղյակ լինելով, որ այդ երկրում հայերն ազատ ելք ու մուտք ունեն և բարյացակամ վերաբերմունքի են արժանանում։ Այս մասին տե՛ս Б. А. Тураев, Памятники эфиопской писменности. Из армяно-абисинских отношений СПб., 1912, նաև «Արարատ», 1912, էջ 542։

Տեղին է այստեղ մեջ բերել նաև Էմանուել Կանտի խոսքերը հայ վաճառականների աշխարհատարած կապերի և միջազգային ապրանքափոխանակության բնագավառում կատարած կարևոր դերի մասին։ Նա գրում է. «Մյուս քրիստոնյա ժողովրդի՝ հայերի մոտ,— գրում է նա,—տիրապետում է առանձնահատուկ գործարար ինչ-որ ոգի։ Նրանք զբաղվում են փոխանակությամբ՝ հետիոտն ճանապարհորդելով Չինաստանի սահմաններից մինչև Գվինեայի ափերին գտնվող Կորսո հրվանդանը։ Այդ հանգամանքը ցույց է տալիս յուրահատուկ ծագումը խելամիտ ու աշխատասեր այդ ժողովրդի, որը շարժվելով հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք, կտրում-անցնում է հին աշխարհի ողջ տարածքով և կարողանում է սիրալիր ընդունելություն գտնել բոլոր այն ժողովուրդների կողմից, որոնց մոտ լինում է այցելությամբ» (Э. Кант, Антропология с прагматической точки зрения. Сочинения в шести томах, т. 6, М.' 1966, стр. 527—573)։

na expeditione apud Sinas suscepta ab Sociatate Iesu" խորագրով մի աշխատություն[54]։

Վերոհիշյալ Իսահակից ավելի վաստակ է ունեցել թերևս հենց նույն ժամանակներում ապրած մեկ ուրիշ՝ անունն անհայտ հայ գործիչ, որը գրել է «Չինաց պատմություն» խորագրով մի աշխատություն։ Կենսագրական բառարանի հեղինակ Մորիերին տեղեկություն է ունեցել, որ Ս. Կրայթենակ անունով մեկը հայերենից թարգմանել է «Historiola de Sinis» գործը, որի ո՛չ բնագիրն է պահպանվել, ո՛չ էլ թարգմանությունը[55]։

Սակավաթիվ այս փաստերը, լրացնելով մեկը մյուսին, հնարավորություն են տալիս հանգելու այն եզրակացության, որ Չինաստանը վաղնջական ժամանակներից ծանոթ է եղել հայ վաճառականներին և այլ զբաղմունքի տեր մարդկանց՝ ինչպես հյուսիսից՝ կարավանային ճանապարհներով, այնպես էլ հարավից՝ ծովային ճանապարհներով[56]։

Հովհաննես Զուղայեցու Հաշվետումարից տեղեկանում ենք, որ բացի վերոհիշյալ երթուղիներից, Չինաստանի հետ տնտեսական կապեր հաստատելու համար հայերն օգտվել են նաև Հնդկաստանից՝ Նեպալի ու Տիբեթի վրայով դեպի Չինաստան ձգվող դժվարանց ճանապարհներից, որոնք նրանց հասցրել են Սինին քաղաքը։ Այդ մասին կան և ուրիշ տեղեկություններ, մանավանդ XVIII դ. սկզբներից, երբ այդ քաղաքն է այցելել կաթոլիկ քարոզիչ Հոիգիսը ու զրույց ունեցել այդտեղ հաստատված հայերից մեկի հետ[57]։ Նշանավոր արևելագետ Պոնիեի տվյալներով, որ անձամբ շրջագայել է Կենտրոնական Ասիայի երկրամասերում, նեստորական քարոզիչների հետ միասին Չինաստանի սահմանամերձ Սինինում և Տուպա-Չինգ պարսպապատ քաղաքում եղել են նաև հայեր։ Նա, հենվելով ամերիկացի մի ուղևորի տվյալների վրա, հայտնում է նաև, որ այդտեղ հաստատված հայերը բնաջնջվել են տեղացիների կողմից[58]։

Հայ-չինական միջնադարյան առնչությունների մասին համառոտ այս ակնարկն ավարտելով, կրկին դառնանք Տիբեթի Լհասա մայրաքաղաքը և հետևենք մեր վաճառականի գործունեությանը։

7

Հաստատվելով Լհասայում, Հովհաննեսն սկսում է վաճառել իր հետ բերած ապրանքները՝ նախ իր հայրենակիցներին՝ Ծատուրին, Մելիջանին, Աբրահամին և այլոց, հաճախ արժեքը մեկ տարի հետո ստանալու պայմանով։ Այսպես, օրինակ, գրանցումներից մեկում ասված է. «Ծախեցի Ծատուրին է (7) քարբարի լկօռ, որ էր վաղնն ԺԶ (16) թանկայքաշ, մին տարի վադայ, որ գնայ Սլնկէն գոյ՝ տայ», կամ «Պողոսի որդի Մելիջանին ծախեցի էս, որ

54 В. Бартольд, История изучения Востока в Европе и России, изд. второе, Л., 1925, стр. 89—92; Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 467։ Հ. Քյուրայան, Ասիոխորքերը հայ մը 1602-ին («Սիոն», 1931, էջ 181—184)։

55 Տե՛ս Ղ. Ալիշան, Հայապատում, Ա, Վենետիկ, 1901, էջ 23, ծան. 2։

56 Ըստ որոշ տվյալների, XVIII դ. սկզբներին Կանտոնում եղել են մեկ անգլիացի և մեկ դանիացի վաճառականներ, իսկ հայեր՝ «երեսունի մոտ» [Դերենիկ եպս. (Փոլադյան), Չինաստանի հայ վաճառականները և Հովհաննես Ղազարյան («Սիոն», 1959, էջ 276—277)]։

57 Տե՛ս Հ. Եփրեմ Զագրեյան, Պատմություն Հայոց, Վիեննա, 1872, էջ 413։

58 Տե՛ս Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ գաղթականության, Գ, Առաջին մաս, Գահիրե, 1961, էջ 284—285։

գրած այ... (թվարկում է նախօրոք համարակալված քահրբարները՝ 64 թանկայի քաշով), մին տարի վաղայ, որ Սլնկէն աղարկէ տեղս» և այլն։ Բացի թանկագին քարերից Հովհաննեսն իր հայրենակիցներին արծաթ է տալիս, 7-ին 1 հարաբերությամբ ոսկի ստանալու պայմանով։ Նույն Մելիջանը, օրինակ, ստանում է 504 (19 կգ) արծաթ՝ «մին տարի վաղայ, ոսկու վերայ ... է (7) թանկ արծաթին մին թանկաքաշ խամսէր ոսկի, որ գնայ Սլնկէն աղարկէ, կամ թէ գոյ՝ տայ»։

Սակայն, բնականաբար, գնորդների մեծամասնությունը տեղացի վաճառականներ ու ֆեոդալական վերնախավի ներկայացուցիչներ են. Հովհաննեսը հատկապես սերտ կապերի մեջ էր Մունը դեվ, Կանաչնքու և Ջեկալիան նիվարների (նեպալցի վաճառականների) հետ, որոնց քանիցս վաճառում է սաթ և այլ թանկագին քարեր, արժեքի դիմաց մուշկ ստանալու պայմանով։

Լհասայում Հովհաննեսը հիմնականում գնում է մուշկ[59], թեյ և ոսկի։ Վերադարձի նախօրյակին տարիների ընթացքում գնած մուշկը նա լցնում է 18 պարկերի մեջ և հատուկ «քաթայով» ի մի բերում մուշկի գնումների մասին Հաշվետումարում կատարած կարևոր բոլոր գրառումները։ Լհասայից իր հետ դուրս է բերում 757,5 սեր (483 կգ) մուշկ։ Նրա գնած ոսկու կշիռն է 5 կգ 130 գր։ Իր հետ Լհասայից դուրս է բերում նաև բազմաթիվ այլ ապրանքներ՝ դեղնապղնձե ամաններ, չինական հախճապակի, թանկարժեք գործվածքներ, համեմունք, թամբաքու և այլն։

1688 թվականի փետրվարի 8-ին Լհասայում մեռնում է Մելիջանենց Մաթոսը, Հովհաննեսին «վաքիլ» (լիազոր) է կարգում տնօրինելու իր գույքն ու ապրանքը։ Այս կապակցությամբ Հաշվետումարում բացվում է նոր բաժին, ուր մանրամասնորեն գրանցումներ են կատարվում բոլոր այն գործարքների մասին, որոնք վերաբերում են հանգուցյալ Մաթոսի թողած դրամին ու գույքին։

Մեր վաճառականը հրաժեշտ է տալիս Տիբեթի մայրաքաղաքին 1691 թ. հունիսի 19-ին և եկած ճանապարհով ուղևորվում Հնդկաստան։ Հուլիսի 1-ին հասնում է Զիկիչայ, հուլիսի 28-ին՝ Քութի, օգոստոսի 1-ին՝ Քասայ։ Այս երկու վայրերի միջև ընկած դժվարանցանելի ճանապարհը կտրելիս մեր լուսակայց վաճառականը գրանցում է այսպիսի տողեր. «ողջ ճանապխէրն ջուրն տարէլ այ. դժոխկին ճանապախն այ, որ մազէ կարմունճըն պիտի յանց կալ»։ Այնուհետև, անցնելով Լիստի ու Սանքո բնակավայրերով, օգոստոսի 18-ին հասնում է Քաթմանդու, այստեղ վաճառում է որոշ ապրանքներ և գնում մոմ, հիլ, թուղթ, «դեղնապղնձե ճրագ», ձկնորսական ցանց, զանազան գործվածքներ և այլն։

1691 թ. նոյեմբերի 26-ին Քաթմանդուից պետք է կարավան դուրս գար, որի հետ մեկնելու էր նաև Հովհաննեսը։ Սակայն քաղաքական անբարենպաստ պայմանների պատճառով նա ստիպված մի քանի ամիս ևս մնում է Նեպալում։ Այս առթիվ կատարել է հետևյալ գրանցումը. «Համիրայ Ա. (1)-ումն, որ Նէքպալէն կարաւանն դուս կելնուն ալհալ Մաքվանփուռ նիվար Սպանդիար խանն առէլ այ ըռաջիցն, կռիւ ունեն, ճանապախն բանդ այ։ Տեսնունք հոգին սուրբն ինչ կառաջնորդէ։ Տէր Յիսուս մեր շարմն պախես, մին ազատում տաս, խեղջանք»։

Հովհաննեսը մարդ է ուղարկում Դարբանգահ, որ «նավապէն դաստակ խանէ ճանապախի խմար»։ Քիչ հետո նա կրկին անդրադառնում է այս խնդրին ու գրում. «Բալդիէն, որ գնացել էր Դարբանկայ, նավապն յառաջմէ դաստակ չէր տվէլ, թէ թամամ երկիրն գաւառն բռնէլ այ, մին խաթար այ նընէ ջուղապն ո՞վ կը տայ։ Յետնէ, որ Փաթանու քշմրցիքն էլ եկել են Դարբանկայ, դաստակ էր տվել»։

Դարբանգահի նավապից ճանապարհվելու արտոնություն ստանալով, 1692 թ. մարտի 11-ին, Հովհաննեսը Քաթմադուից դուրս է գալիս, մեկ օրից հասնում է Բադգամ (Բհադգաոն), այնուհետև անցնելով Քամպու, Սանքու, Գոլխիբաս բնակավայրերով, մարտի 19-ին հասնում է Պատրինկայ՝ Հնդկաստանի սահմանագլխի առաջին քաղաքը։ Նրա անցած հաջորդ կայաններն են՝ Կոդրայհայ, Ըռաջվարայ, Դամամի, Բաթնայայ, Նարաինգաթ, Գագրիգաթ, Զանտեր։ Այս ճանապարհի մի հատվածը (Ըռաջվարայից Բաթնայա) անապահով է եղել. Հովհաննեսն ու նրա ուղեկից քաշմիրցի վաճառականները ճանապարհն անվտանգ անցնելու համար 12 հեծյալ պահապաններ են վարձել։

Մարտի 31-ին Հովհաննեսը հասնում է Մուզաֆարփուռ, այնուհետև Հաջիփուռ, իսկ ապրիլի 3-ին՝ Փաթնա։ Այստեղ մնում է (մի քանի օրով կրկին Հաջիփուռ այցելելով ու դառնալով) 7 ամիս։

Փաթնայում Հովհաննեսը բնակություն է հաստատում այն տանը, որ եկող-դարձող ջուղահայ վաճառականների համար վարձել էր ոմն վարպետ Պետրոս («Վարպետ Պետրոսն մին օղայ էր քրէ բռնէլ, որ ջումիաթ գալող գնացող վեր ին գալման») և սկսում է առևտուրը։ Ընուի դալալի միջնորդությամբ վաճառում է իր և հանգուցյալ Մաթոսի ոսկին, Նեպալից բերած մոմը և այլ ապրանքներ։ Գնում է 50,5 լիտր սուպոն, 68 լիտր ատրաք, 22,5 սեր հալիլա (հնդկանուշ), 14 դայլան, թանկագին քարեր (զմրուխտ, լալ), թանկարժեք գործվածքներ և այլն։ Հունիսի 30-ին մի քանի օրով գնում է Բիհար, ուր ևս գոյություն է ունեցել հայկական գաղութ՝ իր եկեղեցիով (այստեղ «ժամուց» է տվել)։

1692 թ. հոկտեմբերի 24-ին Լհասայից բերած իր բեռների մի մասը բարձելով նավի վրա, Գանգեսով նոյեմբերի 2-ին հասնում է Ըռաճմել (Ռաջմահալ). 7 օր այստեղ մնալուց հետո շարունակում է գետային ճամփորդությունը և նոյեմբերի 16-ին հասնում է Հուկլի. «Աստուծոյ ողորմութեամբն,—գրում է նա,—Դամայ ԻԱ. (21)-ումն ապրանքով սալամաթ Հուկլի բանդարին դախիլ ելանք»։ Հայ վաճառականներից այստեղ հիշատակվում են Ջուղայեցի Լուսիկենց նշանավոր գերդաստանի անդամներից Մարութն ու Իսային, Ջանումի որդի Հովհաննեսը, Հովհաննեսի որդի Փանոսը, ոմն Վարդանես ու Գրիգոր։ Հիշատակություն կա նաև Հուկլիի հայկական եկեղեցու մասին, որի քահանային պատարագի համար Հովհաննեսը դրամ է տվել։

Հովհաննեսի Տիբեթ մեկնելու տարում (1688 թ.) Արևելյան Հնդկաստանի անգլիական ընկերությունը պայմանագիր էր կնքել խոջա Փանոս Քալանթարի հետ, որով վերջինս, հնդկահայ վաճառականների անունից, պարտավորվել էր հրաժարվել ցամաքային ճանապարհներից, և Հնդկաստանից արտահանվող ապրանքները փոխադրել Եվրոպա անգլիական ընկերության

[59] Մուշկը (muscus) խիստ հոտավետ այն նյութն է, որ արտադրում են որոշ կաթնասուն վայրի կենդանիների, հատկապես մշկայծամի արուները։ Միջին դարերում օծանելիքի և բժշկության մեջ խոշոր չափերով օգտագործվող այս նյութը շատ բարձր էր գնահատվում միջադարյան շուկաներում։

3—815

նավերով՝ օվկիանոսային ճանապարհով[60]։ Հավանաբար հենց այս պայմանագրի թելադրանքով Հովհաննեսը, նոյեմբերի 31-ին, ինչպես ինքն է գրում՝ «սուպոնքս բառցի տանեմ Կալկաթայ՝ տամ ինկլիզին»։ Երկու օրից նավով հասնում է Կալկաթա և անգլիացիներին 213 ռուփիով վաճառում 42 լիտր 25 սեր (241 կգ) սուպոն։

1692 թ. դեկտեմբերի 4-ին Հովհաննեսը Կալկաթայից վերադառնում է Հուկլի, և այստեղ էլ ավարտվում է նրա մեծարժեք օրագիրը։

8

Հետևելով Հովհաննես Ջուղայեցու 1682—1692 թթ. թափառումներին, մենք միաժամանակ փորձեցինք ցույց տալ, թե նա և նրա հետ առնչվող մյուս հայ վաճառականները հիմնականում ի՞նչ էին ներմուծում Հնդկաստան, Նեպալ ու Տիբեթ և ի՞նչ արտածում այդ երկրներից։ Այդ հարցը, սակայն, արժանի է հատուկ ուշադրության, որովհետև, բացի այս կամ այն առիթով մեր կողմից հիշատակված առուծախի հիմնական ապրանքներից, Հաշվետումարի էջերում բազմաթիվ տվյալներ կան հարյուրավոր այլ ապրանքների, նրանց ձեռքբերման վայրերի ու շահավետ վաճառքի շուկաների մասին։

Հարցերի այս խմբի ուսումնասիրությունը, սակայն, կապված է մեծ դժվարությունների հետ, քանի որ Հովհաննեսը, ըստ մեծի մասին, թվարկում է առուծախի առարկա ապրանքները իր ժամանակ ջուղայեցի առևտրականների միջավայրում օգտագործվող ու հասկանալի, բայց մեզ համար այսօր անծանոթ անուններով։ Այսպես, օրինակ, նա գրում է՝ «խերապատի» կամ «լաքայուռի», այսինքն խեյրաբադ և լաքայուռ քաղաքներում արտադրված ապրանք. հաշվետումարից պարզվում է նաև, որ դրանք, անտարակույս, գործվածքներ են, բայց ի՞նչ նյութից (մետաքս, բուրդ, վուշ և այլն) և ի՞նչ ձևով ու որակով պատրաստված, այս հարցերը մեծ մասամբ առայժմ մնում են անպատասխան։

Հովհաննեսի գնած ու վաճառած ապրանքների մասին Հաշվետումարի շահեկան տվյալները, անտարակույս, գրավելու են Հնդկաստանի, Նեպալի ու Տիբեթի արհեստագործության և առևտրի պատմության հարցերն ուսումնասիրող մասնագետների ուշադրությունը։ Նրանց գործն է լինելու հանգամանալից ուսումնասիրություններ կատարելով՝ պարզել հիշատակված հարյուրավոր ապրանքներից յուրաքանչյուրի տեսականին։ Մեր նպատակից դուրս է եղել այդ դժվարին բնագավառի մեջ խորամուխ լինելը, սակայն հատորիս վերջում տրված բառարանում փորձել ենք ըստ հնարավորի բացահայտել ապրանքների անվանց ծագումը (նշելով, թե ինչ լեզվից է փոխառված այս կամ այն անվանումը), միաժամանակ պարզելով նրանց հիմնական հատկանիշները։ Քննախույզ ընթերցողն ուշագրավ շատ տվյալներ կարող է քաղել բառարանից։ Նկատի ունենալով այդ հանգամանքը և կրկնությունից խուսափելու մտահոգությամբ, ավելորդ ենք համարում համառոտ այս ներածության մեջ թվարկել Հաշվետումարի բոլոր ապրանքների անունները՝ համապատասխան բացատրություններով։ Սակայն կարծում ենք, որ օգտակար կլինի այստեղ ևս, առանձին-առանձին խմբերով, ներկայացնել տարբեր ապրանքատեսակների՝ գործվածքեղենի, հագուստ-կապուստի, հոտավետ նյութերի ու համեմունքի, թանկագին քարերի, տնային գործածության իրերի, սննդամթերքի տարբեր տեսակների անունների ընտրանին։

Տարբեր տեսակի գործվածքեղենից, օրինակ, հիշատակված են հետևյալները.— ալաջայ, ալիդադնի, ատլաս, գազայ, բարայ գազայ, բարդար, բաֆտայ, բիհարի խասայ, բուրէ, գազի, գաթէ, գուլբանդի, գունի դերգազի, դուրիայ, եափնճի, զուֆ, ըմբրթի, ըռումալ դաստայ, թալիս, թասար, թիրմայ, թիրպու, լաքայուռի, լօնդրինայ, լօնդրայ, խէրապատի, կուճին, կտաւ, ճօվիայ, մախմուռ զառօվ, մամուրխանի, մարհամայ, մարմար, մումջամ, շիլայ, չանթի, չափլայ, չիթ (բազմաթիվ տեսակներով), չօթար, չօլայ, ջաջիմ ջուլ, ջվալ, սամսայ, սուզանի, սուսի, սրնճի, սօլագազի, վառփուշ, փաթկայ (նաև՝ զառով), փաթու, փալանկփուշ, փէրի, քանտի, քէչայ, քուռայ, կտաւ, ֆութայ։

Սրանց մեջ կան մետաքսից, բրդից, բամբակից, վուշից և այլ նյութերից ամենատարբեր եղանակներով պատրաստված գործվածքներ, այնպիսիք, որոնք խիստ թանկարժեք լինելով՝ արտադրվում էին միայն ֆեոդալական վերնախավի պահանջները բավարարելու համար (դուրիայ, լաքայուռի, կուճին, մամուրխանի, մարմար, չափլայ, զառով փաթկայ, քանթի, ֆութայ և այլն), և ընդհակառակը՝ էժանագին ու կոպիտ կտորեղեն (չիթ, ջուլ, ջվալ, վառփուշ, փալանկփուշ և այլն), որոնց սպառողները հասարակության ստորին խավերին պատկանող անձինք էին։

Նույն պատկերն է ստացվում նաև հագուստ-կապուստի, տնային գործածության համար արտադրվող գործվածքեղենի ու կոշկեղենի տեսականու մասին պահպանված նյութերի քննությունից։ Ստորև տալիս ենք նաև այդ կարգի ապրանքների ցանկը.— ատրաք, արխալուխ, դասմայ, դաստախան, թաղիք, լաին, լահաֆ, կապայ, հակաբայ, մանդիլ, միզար, մուզայ, մուշտակ, յուղի, շալ, շաքմայ չիրայ ջըզմայ, սարփայ, սաղրի, սամպուր, սըֆրայ, փաղարի, փապուճ, փարդակ, քադաք, քէշ։

Համեմունքը, բուրումնավետ նյութերն ու դեղաբույսերը միշտ էլ կարևոր տեղ են գրավել հայ վաճառականների կողմից արևելյան երկրներից արտահանվող ապրանքների մեջ. այդ բացահայտվում է նաև Հաշվետումարի գրանցումներով։ Բազմաթիվ գրանցումներում հիշատակված են մասնավորապես հետևյալները.— աթարի, աթըր, բանկ, բէհդանայ, բիտմ մուշկ, բուզդունճ, թամբաքու, լաչիդանայ, հալիլայ, մուշկ, յիլ, թեյ, ռէվանտ, սրփառի, սմաշ, կոշվողները, որոնցից մուշկն ու թեյը Տիբեթից արտահանված հիմնական ապրանքներից են եղել։

Հովհաննես Տեր-Դավթյանի առևտրական գործունեության մեջ թանկագին քարերի ու զարդեղենի առուծախը նույնպես ուշագրավ տեղ է գրավում.— աղեղ, բլօր, բուրղու, գոդլու, դ, օռ զմրուխտ, թանձու, թասպի, թավիզ, թօլօղ, մարգարիտ, քարբար, քարաստալ, քաֆ, սրանք են, ահա, նրա հիշատակած այդ տեսակի ապրանքները, ըստ որում քարբարը (սաթ), ինչպես ասել ենք արդեն, նրա կողմից Տիբեթ տարած հիմնական ապրանքն է եղել։

Հաշվետումարի մեջ հետաքրքրական տեղեկություններ կան նաև տարբեր տեսակի ներկերի (լեղակ, լաջվարթ, բանովշայ և այլն), զենքի ու զինամթերքի (խանչալ, բիլմանի, բարութ, գլուլայ, թամբ, լղամ և այլն), տնային գործածության իրերի և սպասքեղենի (գավաթ, դանակ, թաբաղ,

[60] Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 450։

թաս չայխօրի, թըֆըլդան, լագան, խավան-դաստայ, կշեռք, դալիան, ճրագ, նալբաքի, ութու, սուրայի, քասայ և բաղմաթիվ այլ իրեր) մասին։

9

Հաշվետումարի գիտական արժեքն ավելի է բարձրանում այն ստույգ տվյալներով, որ գրանցված են բոլոր ապրանքների չափի ու կշռի և գնի մասին՝ անխտիր։ Բազմաթիվ են տվյալները նաև վաճառված ապրանքների գների վերաբերյալ. բացառություն են կազմում միայն այն ապրանքները, որոնք առաքվել են Սպահան, Բասրա կամ մի այլ վայր, կամ էլ վաճառվել են 1692 թվականից հետո։

Տնտեսագետ-պատմաբանների խնդիրն է Հովհաննեսի հաղորդած այդ տվյալների արժեքավորումն ու մանրակրկիտ վերլուծությունը։ Այդ ևս մեր նպատակից դուրս համարելով, փորձում ենք ուշադրություն հրավիրել մի քանի գրառումների վրա, որոնք վերաբերելով հիմնականում սննդամթերքի շուկայական մանրածախ գներին, նպաստելու են Հնդկաստանի և հարևան երկրների բնակչության կենսամակարդակի ուսումնասիրության գործին։

1692 թ. սեպտեմբերի 6-ին Հովհաննեսը Փաթնայում գնել է «ԺԳ (13) ղիտր ԺԱ (11) սէր բրինձ», վճարելով 17 ռուփի։ Հնդկաստանում գործածության մեջ եղած աքբարի լիտր կոչվող չափը կշռորդ է 25 կգ 509 գրամի. սերը, լինելով մեկ լիտրի քառասներորդ մասը, կշռորդ է 637 գրամի։ Ուստի մեր վաճառականը գնել է շուրջ 400 կգ բրինձ 17 ռուփիով, որ 194,4 գր. արծաթի կշիռ պետք է ունենար։ Այսպիսով, մեկ կիլոգրամ բրինձը գնել է 0,48 գրամ արծաթով։ Բրնձի գնման մասին կա մի այլ տվյալ ևս, ըստ որի մեկ կիլոգրամին վճարել է 0,58 գր արծաթ։ Նույն թվականին, նույն քաղաքում գնել է «ԺԴ (14) սէր ալյուր», վճարելով 0,55 ռուփի, այսինքն 6,23, գր արծաթ։ 14 սերը գրեթե հավասար է 9 կիլոգրամի, ուստի մեկ կիլոգրամ ալյուրը գնել է 0,69 գր արծաթով։ Տիբեթից Հնդկաստան դառնալու ճանապարհին գնել է 3 ոչխար, վճարելով 2,5 ռուփի, հետևաբար մեկ ոչխարին՝ 9,65 գր արծաթ։

Հետաքրքիր է մոտավոր հաշվով որոշել, թե ինչքան դրամ կամ արծաթ էր օրական ծախսում իր սննդի վրա մեր վաճառականը։ Այս մասին ևս կան ուշագրավ գրառումներ։ Հնդկաստան ժամանելուց գրեթե երկուսուկես տարի հետո նա հայտնում է, որ «ԻԸ (28) ամսէն խօրակի դրինք, ամսէն Զ լանկ (այսինքն՝ 6,5 լանկ), կառէ ջամէն ԱՃՁԲ (182) լանկ»։ Այսպիսով, նա օրական ծախսել է 8,18 գր արծաթ, կամ 0,72 ռուփի։

Խիստ արժեքավոր է Հաշվետումարի այն գրառումը, որ վերաբերում է Տիբեթի մայրաքաղաքում անցկացրած 5 տարիների ընթացքում սննդի վրա ծախսած գումարին. «թիվն ՀԶ, շբաթ ամսին ԻԱ-ումն (1691 թ. հունիսի 19), օրն երեքշաբաթ Լասուց դուս ելայ. ԾԷ (57) ամսէն խօրակին պիտի գրեմ արծաթի ջամէն, չուրի խարճըն ԱՃՀԱ (171) լանկ ԵII (5,5) մսխալ բաղի ունեմ. թէ խօրակ այ՝ էս այ, թէ մասրաֆ այ՝ էս այ, թէ բաղի կայ՝ էս այ, որ մին ղալամ գրեցի՝ գնայ ջամայ խարճըն դրստվէ»։ Ըստ այսմ՝ 57 ամիսների ընթացքում նա ծախսել է ընդամենը 171 լանկ 5,5 մսխալ, այսինքն՝ 6 կգ 482 գր արծաթ, ուստի մեկ օրում միջին հաշվով 3,79 գր արծաթ։ Այս տվյալներից կարելի է հետևցնել, որ Հնդկաստանի համեմատությամբ Տիբեթում կենսամակարդակը ավելի քան երկու անգամ բարձր է եղել։

Բազմաթիվ ու արժեքավոր են Հաշվետումարի մեջ ամբարված տեղեկությունները տարբեր ապրանքների վաճառքից դոյացած շահի մասին։ Գիտենք արդեն, որ մեր վաճառականը 1684 թվականին Խուջա քաղաքում գնած իր 16 չարմ (շուրջ 368 կգ) լեղակն ուղարկել էր իր ընկեր Շիրազի Հովհաննին՝ Բասրայում վաճառելու համար։ Ըստ մի գրանցման «ԺԶ (16) չարմ լեղակի գինն ելաւ մինչև նավին գլուխն խալիս ԳՌԸՃԽ. ΙΞΙ(այսինքն՝ 3842,33 ռուփի)», կամ՝ 139 թուման 3200 դիան[61]։ Շիրազի Հովհանը կատարել է այդ հանձնարարությունը, և իր մի նամակով (որից քաղվածքներ են կատարված Հաշվետումարի մեջ) հայտնում է, թե «ԺԶ (16) չարմ լեղակն Պասրայ ծախէլ ամ, ձեռն այ եկէլ, որ է ջամէն ԲՃ.Ը (208) թուման ԷՌԳՃՁԵ (7385) դիան»։

Ըստ այդմ լեղակի վաճառքից Հովհաննեսը 69 թուման 4185 դիան զուտ շահ է ունեցել, որը գրեթե կազմում է իր վճարածի 50%-ը։

1686 թ. հունվարի 13-ին Ագրայում նա գնում է 23 թան փալանկփուշ, վճարելով 29,78 ռուփի։ Նույն ապրանքը վաճառում է Քաթմանդու քաղաքում 50,5 ռուփիով։ Զուտ շահն է 20,72 ռուփի, կամ շուրջ 71%։

Նույն Ագրայում գնած 60 թան Ունուգուրի չթին վճարում է 56,275 ռուփի։ Այդ չթից 7 թանը տալիս է տարբեր անձանց նվեր, 53 թանը վաճառում է Նեպալում 92,28 ռուփիով (մեկ թանը՝ 1,73 ռուփի)։ Եթե նույն գումարով վաճառեր նաև նվեր տվածը, ապա լրացուցիչ կվաստակեր ևս 13,12 ռուփի։ Այսպիսով, զուտ շահն է 49,2 ռուփի, կամ մոտ 88%։

Նույն թվականի փետրվարի 23-ին Շահզադփուռ քաղաքում գնում է 20 թան փալանկփուշ և 2 թան սուզանի, վճարելով 14,55 ռուփի։ Այս ապրանքները Լհասայում վաճառում է 29,27 ռուփիով։ Զուտ շահն է 14,72 ռուփի, կամ ավելի քան 100%։

Փաթնայում գնում է մանր-մունր ապրանքներ 7,3 ռուփիով, որոնք Լհասայում վաճառում է 17 ռուփիով։ Զուտ շահն է 9,7 ռուփի, կամ 132%։ Նույն քաղաքում գնում է կես լիտր չինի շաքար 8,75 ռուփիով։ Դրա կեսը, ինչպես ինքն է ասում, «խարճ ան գնացէլ» (այսինքն՝ գործածել է ինքը), մյուս կեսը վաճառել է Նեպալում 8 ռուփիով։ Ամբողջը, ուրեմն, կարող էր վաճառել 16 ռուփիով, որով և շահված կլիներ 9,25 ռուփի, կամ 137%։

Նման և ավելի հետաքրքրական տվյալներ կարելի է մեջ բերել տասնյակներով։ Բայց ցավալի է, որ Հաշվետումարից բացակայում են հենց այն տվյալները, որոնցով կարելի էր պարզել Հովհաննեսի առուծախի հիմնական ապրանքներից՝ թանկագին քարերից, մուշկից, թեյից և համեմունքից ստացած շահույթի չափը։ Իր հետ Տիբեթ տարած թանկագին քարերը (սաթ, մարգարիտ, սարդիոն և այլն) նա հիմնականում փոխանակել է մուշկի ու թեյի հետ, իսկ Տիբեթից բերած այս ապրանքների վաճառքի մասին տվյալները, ըստ երևույթին, գրանցվել են հետագայում, Հաշվետումարի չպահպանված շարունակության մեջ։

Չնայած այդ հանգամանքին, եղած տվյալներն էլ բավական են եզրակացնելու, որ հայ վաճառականները, թափանցելով Հնդկաստանի հեռավոր անկյունները, մանավանդ մուտք գործելով Նեպալ, Տիբեթ ու Չինաստան, իրենց առևտրական գործարքներից մեծ շահ էին ստանում։

---

[61] Հովհաննեսը ինքը քանիցս հայտնում է, որ 1 թումանը համարժեք է 27 շահիջահանի ռուփիի։

Տեր Դավթի որդի Հովհաննեսի Հաշվետումարը անգնահատելի սկզբնաղբյուր է Իրանում, Հնդկաստանում, Նեպալում ու Տիբեթում առևտրի ապրանքներից գանձվող մաքսերի և այլ հարկերի տեսակներն ու չափերը որոշելու, ապրանքի և դրամը մի վայրից մեկ ուրիշը փոխադրելու եղանակները, դրամական փոխադրությունների ու վարկերի պայմանները պարզելու և հարակից այլ երևույթներ լուսաբանելու համար։

Համառոտակի անդրադառնանք նաև հարցերի այս խմբին։

Նոր Ջուղայից դուրս գալով Հովհաննեսն իր հետ Հնդկաստան էր տանում միայն 18 ճոթ (թոփ) մահուդ։ Իրանի հողում, մինչև Բանդար-Աբաս հասնելը, նա 4 տեղ «ըռախտարանայ», այսինքն՝ ճանապարհը պահողների օգտին գանձվող տուրք է վճարել. Մահեարում՝ 250 դիան, Եզդիասում՝ 50 դիան. Շիրազում բեռները «զափան անելու» (կշռելու) համար՝ 1 թուման 2100 դիան, «զաղաթ» 1000 դիան, «ըռախտարանայ»՝ 1 թուման 2480 դիան (ընդամենը 2 թուման 5580 դիան), Լառում «ըռախտարանայ»՝ 180 դիան։

Իրանից ապրանք դուրս բերելիս Բանդար-Աբասում պետական պաշտոնյաների կողմից գանձվող մաքսատուրքերի չափի մասին մանրամասն տվյալներ է հաղորդել Կոստանդ Ջուղայեցին. «Բանդար Աբասումն կամ Բանդարի քունկումն, որ նաւէն դուս գոյս, ապրանքն դուս բերես, ինչ ապրանք որ լինի, շահբանդարին դալալն գին կառի, ֆի թումանին ԱՌ (1000) դիան ուշուրն այ, ԳՃԾ. (350) դիան խուրուճն այ, ԱՃԻԲ (122) դիան ըռուսումն այ, Ծ. (50) դիան նվիսանդի այ, որ քուլի խալչն ֆի թումանին ԱՌԵՃԻԲ (1522) դիան այ»[62]։

Մեր վաճառականի հաղորդած տվյալները որոշ կետերում չեն համընկնում «Աշխարհաժողովի» տվյալներին, վկայելով այն մասին, որ հարկային պաշտոնյաները հօգուտ իրենց հաճախ խախտում էին սահմանված հարկային սակագները։ Հաշվետումարի տվյալներով Բանդար-Աբասում դալալը չափել ու գնահատել է 18 ճոթ մահուդը. ամեն մի ճոթի մեջ հաշվելով 36 դալ ու ամեն մի դալը գնահատելով 2500 դիան, դալալը Հովհաննեսի ապրանքի արժեքը գնահատել է 148 թուման 5000 դիանով. ըստ այդմ էլ գանձել են հետևյալ մաքսատուրքերը.

1. Ուշուր (տասնորդ). գանձել են 1 թումանից 1077,5 դիան, կամ ամբողջի 10,775%-ի չափով (ըստ «Աշխարհաժողովի» գանձելու էին 10%)։ Հովհաննեսը վճարել է 16 թուման ուշուր։

2. Խուրուճ («ելք», երկրից արտածելու իրավունք ստանալու համար գանձվող տուրք). գանձել են 1 թումանից 360 դիան, այսինքն՝ 3,6%-ը (ըստ «Աշխարհաժողովի» գանձվելու էր 3,5%)։ Վճարել է 8 թուման 3420 դիան խուրուճ։

3. Ըռըսում («տուրքեր») գանձել են ուշուրի և խուրուճի միացյալ գումարի յուրաքանչյուր թումանի դիմաց՝ 1220 դիան։ Ըռըսում է վճարել 2 թուման 5620 դիան։

4. Դավզ դառուղակի (դառուղայից ստացական ստանալու համար վճարվելիք տուրք). գանձել են ապրանքի ամեն մի հակի դիմաց 100 դիան, ընդամենը՝ 600 դիան (այս տուրքն «Աշխարհաժողովի» մեջ չի նշված)։

[62] Մատենադարան, ձեռ. № 10704, էջ 17բ։

5. Հովհաննեսը 600 դիան էլ տվել է շահբանդարին (նավահանգստի պետին) և նվիսանդին, այսինքն՝ գրագրին (ըստ «Աշխարհաժողովի» միայն նվիսանդին պետք է տրվեր 50 դիան)։

Այսպիսով, 148,5 թուման գնահատված ապրանքի դիմաց ըստ Կոստանդ Ջուղայեցու Բանդար-Աբասում գանձելու էին զանազան մաքսատուրքեր՝ 22 թուման 6017 դիան ընդհանուր գումարով, մինչդեռ իրականում գանձել են 24 թուման 240 դիան, այսինքն արտահանվող ապրանքի արժեքի 16%-ը։

Հնդկաստանում գնած ապրանքների մասին տեղեկություններ գրանցելիս Հովհաննեսը, շատ հաճախ, արժեքի վրա բարդում է նաև վճարած տուրքերի գումարը, որով և դժվարացնում է այդ երկրում առևտրական գործարքներից գանձվող տուրքերի ու նրանց չափերի որոշման աշխատանքը։ Այս առումով, սակայն, կան և բացառություններ, որոնք հնարավորություն են ընձեռում որոշ պատկերացում կազմելու նաև վաճառվող ապրանքներից Հընդկաստանում գանձվող տուրքերի տեսակների ու չափերի մասին։

«Աշխարհաժողովում» թանկագին քարերից Սուրաթում գանձվող ուշուրի մասին ասված է. «Եւ մոջամին, քարբարին, մարգարթին, և գոդլվին, և այլ ինչ որ նման է սոցունց, որ ջուայիրի դախիլ լինի՝ գին կառեն, Ռ (1000)-ին ԼԸ II (38,5) ուշուր յինք կառուն»[63]։

Հաշվետումարը ճշգրտում է մտցնում նաև այս հարցում։

Հովհաննեսը 1686 թ. նոյեմբերի 26-ին, երբ նախապատրաստվում էր Տիբեթ մեկնելու, գնում է մեծ քանակությամբ սաթ։ Այդ առիթով նա գրում է. «Համիրայ Ա (1)-ումն, էկրայ, առի պարոն Ավետիքէն, ջումիաթի յուզուրումն սարքարի ամանաթ քարբարն... ելաւ փոդին ջամէն ԵՌԷՃԿ (1760) [ռուփի]. էստուր Ճ (100)-ին Դ (4,8) էկրայ ջուահրի չափութրումն զաղաթ (իմա՝ ուշուր) այ գնացէլ, որ է ջամէն ԳՃԼԳ (333)»։

Ինչպես տեսնում ենք, քահրբարի ընդհանուր արժեքի ոչ թե 3,85 (1000-ից 38,5-ը, ինչպես հաղորդում էր Կ. Ջուղայեցին), այլ 4,8%-ի չափով են ուշուր (զաղաթ) գանձել։

Հովհաննեսը Ագրայից Փաթնա տանող կարավանային ճանապարհի վրա եղած ռախտարխանաները չի թվարկում, հայտնում է միայն իր ապրանքների դիմաց գանձված մաքսատուրքերի ընդհանուր գումարը։ «Էկրոյ, մինչև Փաթնայ,—գրում է նա,—քշմրցոց խետ միջովի, թէ մանսապդարին (պետական պաշտոնյա) խարճ և թէ Բնարիսէն մինչև Փաթնայ զաղաթ ամ տվէլ ջամէն ԽԲ (42) [ռուփի]»։ Սակայն, Փաթնայից սկսած, նա թվարկում է մաքսատներում իրենից գանձած տուրքերը, այսպես. «Քարբարին, մոջամին և աղեղին ըռավանէն մին էր, ջամէն ԸՌ (8000) [ռուփի]։ Փաթնայ՝ ջուահրի չափութրումն (գոհարեղենի մաքսատանը) Ճ (100)-ին I= (0,3) խարճ տվի [ջամէն] Լ (30) [ռուփի]»։ Բացի սրանից դառուղային տվել է 1 ռուփի և «մութայսադէքոնց (իմա՝ վերակացուներին) խարճ»՝ 3 ռուփի։

Դանտիի մաքսատանը Հովհաննեսը, ըստ երևույթին, իր գոհարեղենը թաքցրել է (այդպես է արել նաև Հաջիփուռում, խոստովանելով, որ «քարբարին ըռավանէն նշանց չեմ տվէլ»). նրանցից գանձել են մաքսատուրքեր մյուս ապրանքների դիմաց. «Դանտու չափութրումն,—գրում է նա,—լեղակին, չթին և փաթանու առած քըսուրին ջանպէ հասիլ, մութասադու, փիադ-

[63] Մատենադարան, ձեռ. № 10704, էջ 31ա—31բ, ձեռ. № 5994, էջ 14ա։

կան գնաց է (7) [ռուփի]»։ Գնկինփուռ կոչվող բնակավայրում «հասիլ, նվիսանդի և նաֆարանայ» և զաղաթ է տվել ընդամենը 4,05 ռուփի և այլն։

Սրանք, անտարակույս, մանր ռահդարխանաներ են եղել։ Հաջիփուռ քաղաքում, ըստ երևույթին, գտնվում էր Հնդկաստանի և Նեպալի սահմանագլխի գլխավոր մաքսատունը։ Այստեղ Հովհաննեսը տարվող ապրանքների դիմաց (չհաշված թանկագին քարերը) վճարել է 16, 25 ռուփի մաքսատուրք, Հաշվետումարում արձանագրելով. «Հաջիփուռու չափութրումն ԺԲ (12) բաքու լեղակին, էկրայ առած չթին և Փաթանու քրսուրին դասդակին ջանպէ խարճ գնաց, որ քարբարին ըռավանէն նրանց չեմ տվէլ, որ է ջամէն ԺԶ (16,25) [ռուփի]»։

Ավելի ամբողջական տվյալներ՝ Հնդկաստանում գանձվող մաքսատուրքերի տեսակների ու չափերի վերաբերյալ գրանցված են Տիբեթից վերադառնալու և Փաթնա հասնելու կապակցությամբ։ Փաթնայում, «սուլթանգանճի չափութրում» (այսինքն՝ սուլթանական կամ կենտրոնական մաքսատանը) Հովհաննեսի Լհասայից բերած ապրանքը գնահատում են 22198 ռուփի (ավելի քան 250 կգ արծաթ) ու գանձում բոլոր մաքսատուրքերը, որ Հաշվետումարի մեջ մեկ առ մեկ թվարկված են այսպես.

1. Հասիլ. ա) բերած «խոտի» դիմաց՝ 100-ին 3,5 հաշվով, ընդամենը 745,3 ռուփի. բ) «սաղատբարի» դիմաց՝ 100-ին 1,25 հաշվով, ընդամենը 31,5 ռուփի.

2. Մութասադու խարճ—12 ռուփի

3. Թաֆիլդարի—3,35 ռուփի

4. Մուշրուֆի—15,5 ռուփի

5. Էմինանայ—15,5 ռուփի

6. Դառուղի—11 ռուփի

7. Դախիլ խազանայ (մուտքի տո՞ւրք)—100-ին 0,55 հաշվով, ընդամենը 4,56 ռուփի

8. Նվիսանդի—6,75 ռուփի

9. Դալալի—44 ռուփի։

Այսպիսով, Հովհաննեսի կողմից Հնդկաստան ներմուծած 22198 ռուփի (250 կգ արծաթ) արժողության ապրանքի դիմաց նրանից գանձել են ընդամենը 889,46 ռուփի (10 կգ արծաթ) զանազան մաքսատուրքեր, այսինքն՝ ապրանքի արժեքի 4%-ը։

Հետաքրքրական են նաև Նեպալում և Տիբեթում գանձված մաքսատուրքերի մասին Հաշվետումարում գրանցված տեղեկությունները։

Քաթմանդուի ռաջայի կողմից գանձված տուրքերը ընդամենը 167,3 ռուփի գումար են կազմում. դրանց մեջ մտնում է հիմնական տուրքը՝ բէնթի ըոօք կոչված, որ վճարել է կանխիկ դրամով՝ 200 մանտրմելի, այսինքն՝ 100 ռուփի։

Բացի տուրքերից, Քաթմանդուի ռաջային, երեք բանսարիներին և ըռանիին, Բադգամի ռաջային, փարդանին և երկու բանսարիներին իր ապրանքներից տվել է «փիշքաշներ»՝ տարբեր տեսակի (մեծ մասամբ էժանագին) կտորեղեն, քաղցրավենիք և այլն։ Մեկ թան չիթ է նվիրել ռաջդվարի «չափայ առօղին», ինչպես և որոշ գումար՝ բեռները ռաջդվար տանելու և կնքելու համար։ Մինչև Լհասա հասնելը ընդամենը 2 ռուփու արժողությամբ նվեր է տվել Լիստիի փարդանին և 2 ռուփի դրամ՝ Քութիի դեվին։

Լհասա հասնելու երրորդ օրը (1686 թ. հոկտեմբերի 1-ին) Հովհաննեսի բեռները պետական պաշտոնյաների կողմից բացվում են լուրան կոչվող հաստատության մեջ և հաշվի առնվում։ Ըստ երևույթին շատ ուրիշ երկրների նման՝ այստեղ ևս առաջին հերթին գնումներ կատարելու իրավունքը պատկանելիս է եղել տեղի իշխողին։ Ապրանքներից դալայ-լաման կամ նրա լիազոր-պաշտոնյան (այդ մասին պարզ տվյալ չի գրանցվել) ընտրել է 930 լանկ (34 կգ 144 գր) արծաթի արժողությամբ թանկագին քարեր և այլ ապրանքներ, հայտնելով, որ այդ գումարի մի մասը՝ 182 լանկ (6 կգ 877 գր) արծաթը չի վճարվելու, այսինքն գանձվելու է որպես մաքսատուրք, իսկ մյուս մասը՝ 748 լանկը, վճարվելու է առաջիկայում (վճարումը երաշխավորվում է Հովհաննեսին տրված պարտավորագրով)։ Նույն թվականի դեկտեմբերի 17-ին Հովհաննեսն իրոք ստանում է այդ 748 լանկ (27 կգ 266 գր) արծաթը։ Պարզվում է, սակայն, որ իրեն տվել են շատ ցածրորակ մետաղ. հալելուց ու զտելուց հետո պակասում է 121 լանկ, ուստի նա նույնքան կորուստ է ունենում։ Այսպիսով, մեր վաճառականի ապրանքի դիմաց Լհասայի պետական պաշտոնեությունը փաստորեն գանձում է 303 (182—121) լանկ, կամ որ նույնն է՝ 11 կգ 450 գր արծաթ։

Լհասայում գանձվող հարկերի վերաբերյալ մեր ասելիքն ամբողջացնելու համար մեջ բերենք նաև սոխունի կոչվող տուրքի մասին առկա տվյալը։ Տարբեր առիթներով Հովհաննեսը հայտնում է, որ ամեն մի լիտր մուշկի առուծախի գործարքը կատարելիս գնորդը պարտավոր է եղել 1 լանկ 37,79 գր արծաթ վճարել պետական գանձատուն, որը և կոչվել է սոխունի։

Բացի ներմուծվող ու արտածվող ապրանքների դիմաց վաճառականներից գանձվող մաքսատուրքերից, Հաշվետումարում, այլևայլ առիթներով, հիշատակված են բազմապիսի այլ հարկեր ու տուրքեր։

Հնդկաստանի տիրակալ Ավրանգզեպը (1659—1707), որի թագավորության տարիներին էր մեր վաճառականը կատարում իր շրջագայությունները Հնդկաստանում, 1679 թ. վերականգնել էր ոչ մահմեդական ժողովուրդներից գանձվող գլխահարկը՝ ջիզիան։ Ջիզիայի վճարման երկու գրառումների համաձայն այդ հարկի չափը 3,5 ռուփի է եղել, սակայն 1688 թ. Փաթնայում Հովհաննեսը նոքար Պողոսի և իր համար վճարել է գլխահարկ արդեն 9 ռուփի՝ յուրաքանչյուրին 4,5 ռուփի։

Հնարավոր չէ մեկ առ մեկ անդրադառնալ Հաշվետումարում հիշատակված բոլոր հարկային տերմիններին։ Ստորև բերում ենք հարկերի ու տուրքերի այբբենական ցանկը։ Անհրաժեշտ ենք համարում նշել, որ դրանցից մի մասի ճշգրիտ նշանակությունը դեռևս պարզված չէ։

Բաթայ—դրամի փոխանակման կամ փոխադրության համար տրվող գումար

Բարայի—ապրանք բարձելու վարձ

Բարբանտի կամ բարբաստի—բեռները բարձելու վարձ

Բէնթի—ծառայադրամ

Դալալի—միջնորդին տրվող աշխատավարձ

Դախիլի խարճ—որևէ երկիր ժամանելիս գանձվող մուտքի տուրք

Դառուղակի—դարուղայի օգտին գանձվող տուրք

Դար—որևէ ապրանքի մենաշնորհի համար գանձվող տուրք

Դարվանի—դռնապանի վարձ

Զաղաթ—*մաքս*

Էմինանայ—*կշեռքի վարձ*

Ըռախտարանայ—*ճանապարհները նորոգող ու հսկող պաշտոնյաներին տրվող տուրք*

Ըռանդարի—*նույնն է նախորդի հետ*

Ըռըսում—*ըստ սովորույթի գանձվող տուրքեր*

Թանձիլէ—*զեղջի համար տրված գումար*

Թաֆիլդարի—*պահեստապետին տրվող տուրք*

Ինամ—*նվեր, պարգև*

Խուրուն—*ապրանքի արտահանման համար գանձվող հարկ*

Հասըլ—*ապրանքներից գանձվող հարկ կամ եկամտահարկ*

Հարանանայ—*աճուրդի համար վճարվող տոկոս*

Ղուլումանայ—*ծառայադրամ*

Մանսապադարին խարճ—*բարձրաստիճան պաշտոնյային տրվող տուրք*

Մուքասադու խարճ *կամ* մուքասադանայ—*հարկային վերակացուին տրվող տուրք*

Մուղրմի—*միջնորդշեք*

Մօրհանայ—*ապրանքի բեռները կնքելու վարձ*

Նամալումի—*չնախատեսված ծախսեր*

Նվիսանդի—*գրագրին տրվող վարձ, տուրք*

Նօվլ—*ապրանքը նավով փոխադրելու վարձ*

Շահբանդարի—*նավահանգստի պետին և քաղաքի առևտրական գործերի հսկիչին տրվող տուրք*

Ուշուր—*տասանորդ, մի ուրիշ երկիր տարվող ապրանքից գանձվող հիմնական մաքսատուրքը*

Զափուբրի խարճ—*նավահանգստի պահեստի համար գանձվող տուրք*

Զոֆիդարի—*մաքսատան պետին տրվող տուրք*

Զզիայ—*մուսուլմանական երկրներում այլակրոնների գլխահարկ*

Սարհանայ—*նավով ճամփորդելու համար յուրաքանչյուրից գանձվող վարձ*

Սարֆարէ—*Նեպալում գանձվող տուրքի տեսակ*

Սլամաթի—*նվեր, ողորմություն*

Սմբուֆի—*նավակի վարձ*

Սօխունի—*բեռները կապելու կամ ապրանքը գնելու համար տրվող տուրք*

Տալի—*դալալին տրվող միջնորդշեք*

Փարվանրկի—*արտոնագիր ստանալու համար տրվող տուրք*

11

Պետական ենթակայության որևէ խոշոր վարչական կենտրոնից կամ ֆեոդալական որևէ տիրույթից ապրանք փոխադրելու կամ վաճառքի նպատակով բերված ապրանքների բեռները բացելու համար անհրաժեշտ է եղել պետական իշխանության կողմից լիազորված պաշտոնյայի կամ տեղի ֆեոդալի թույլտվությունը, որ տրվում էր համապատասխան տուրքերի գանձումից հետո, և օրինական ձև ստանում՝ ներմուծված բեռների վրա հատուկ կնիք դրոշմելով։

Տիբեթ մեկնելու ճանապարհին Հովհաննեսն ստիպված է եղել 10 օր սպասել Քութիի լեռնանցքում, որպեսզի տեղի իշխողը վերադառնա իր նստավայրն ու կնքի ապրանքների հարկերը։ Այս կապակցությամբ նա գրում է. «Քութիի Ժ (10) օր նրստանք էս ջահտան, որ դէվէն տան չէր թէ բեռներն մրհին. յետոյ արեկ, որ բեռներն մրհեց»։

Տիբեթից վերադառնալուց հետո, Փաթնա քաղաքում «բեռներս դրին օդումն,—գրում է Հովհաննեսը,—դուռն մրհեցին, զրայ դառուղէն գնացել էր Մասի. չուր գայ ոչ՝ հրաման չէ բանալն»։

Որոշ ապրանքների վաճառքի մենաշնորհը պետական մարմինների կողմից կապալով տրվել է անհատ վաճառականների։ Փաթնայում, օրինակ, մոմի վաճառքի մենաշնորհը գտնվել է մի «դուքանդարի» ձեռքում, որն իր ցանկացած գինն է պարտադրել այդ ապրանքը ներմուծող առևտրականներին։ Հաշվետումարում գրված է. «Տեղս մոմն իջարայ այ, մին դուքանդար այ, դոր կուզէ՝ էնպէս կառոյ»։

Բազմամյա իր առևտրական գործունեության ընթացքում Ջուղայեցին գործ է ունեցել տարբեր երկրների ֆեոդալական վերնախավի իշխողների և բազմաթիվ բարձրաստիճան ու ստորին դիրքի պետական պաշտոնյաների հետ։ Շատ դեպքերում նա չի շեշտում այդ անձանց անունները, այլ հիշատակում է նրանց իրենց գրված պաշտոնի, զբաղմունքի անունով կամ տիտղոսով։ Այդ կարգի գրանցումները հնարավորություն են ընձեռել կազմելու ստորև բերվող ցանկը, որի մեջ տեղ գտած տերմինների ավելի հանգամանալից բացատրությունը տրված է վերջում՝ բառարանի մեջ։

Բանսարի—*կարավաններին ուղեկցող պատասխանատու անձ.*

Գումաշտայ—*գործավար, գործակատար.*

Դալալ—*միջնորդ.*

Դանտի *կամ* դանտիվալե—*բեռնակիր*

Դառուղայ—*ոստիկանապետ.*

Դէվ, դէվայ—*իշխան.*

Զաղաթվալ—*զաղաթ կոչվող մաքսատուրք գանձող պաշտոնյա.*

Ըռաջայ *(ռաջայ)*—*հնդիկ խոշոր ֆեոդալ, իշխան.*

Ըռնի—*իշխանուհի.*

Թաֆիլդար—*պահեստապետ.*

Ժուն—*նեպալյան պաշտոնյա (դատավոր).*

Լամայ—*բուդդայական բարձրաստիճան հոգևորական.*

Լիֆան—*դատական ատյանի անդամ.*

Խան—*զինվորական նահանգապետ.*

Ճօտր—*օրենսգետ, իրավագետ.*

Մանսպդար—*հնդիկ պաշտոնյա, աստիճանավոր.*

Մուքասադի—*հարկային վերակացու.*

Մուշրուֆ—*ֆինանսական վերստուգիչ պաշտոնյա.*

Նազր—*վերստուգող պաշտոնյա, հսկիչ*

Նավապ—*հնդիկ իշխան, զինվորական նահանգապետ.*

Նիվար և նսեփ—*հնդիկ կամ այլազգի առևտրականները Լհասայում.*

Նվիսանդա—*քարտուղար, գրագիր.*

Շաբանդար—*նավահանգստի առևտրական կառավարիչ ավագ վաճառական.*

Զօֆիդար—*մաքսատան պետ.*
Սարդար—*պետ, արհեստավորների գլխավոր.*
Սարհադար—*իջևանատեր.*
Փարդան—*գործերի կառավարիչ.*
Քօթվալ—*քաղաքային վարչության պետ։*

12

Հնդկաստանի պատմության մասնագետները նշում են, որ այդ երկրի միջնադարյան պատմության, մանավանդ Աքբարի (1556—1605) տիրակալության ժամանակաշրջանի համար բնորոշ է մուրհակների սիստեմի և առևտրական վարկի լայն տարածումը։ Մուրհակների միջոցով դրամական խոշոր գումարների փոխանցումը մեկ վայրից մի ուրիշը և այլ բնույթի վաշխառուական ու փոխանակային գործարքները կատարվում էին այնպիսի հմտությամբ, որ զարմանք էին պատճառում Հնդկաստան այցելող եվրոպացիներին[64]։

Տակավին XIII դարում Հնդկաստանում ստեղծվել էին ֆեոդալական հասարակարգին հատուկ «բանկային» տներ, որ կոչվում էին քութհի[65] *կամ քօթ (ըստ մեր հաշվետումարի)։ Ջուղայեցի հայ վաճառականները լայնորեն օգտվում էին միջնադարյան Հնդկաստանի այդ «բանկերից»։ Հովհաննես Ջուղայեցին բազմաթիվ գրառումներ է կատարել դրամական փոխադրումների, առևտրական վարկերի, տոկոսով դրամ տալու և այլ գործարքների մասին, որը հնարավորություն է տալիս շատ ավելի հստակ պատկերացում կազմել այդ գործարքների տարատեսակների ու պայմանների մասին։*

Հաշվետումարի մեջ առկա այդ կարգի բազմաթիվ գրանցումներից մի քանիսի հետ արժե ծանոթանալ.

1. «Նադար ամսին Ը-ումն (1684 թ. սեպտեմբերի 8), որ էկրայ պարոն Ավետիքն իմ ԱՌ (1000 ռուփին) յընդվի [էր] արարել (այսինքն՝ փոխադրել էր) խէրապատ, ուր ջանպէ տվէլ այ Ճ-ին Ա (100-ին 1) յընդիավան, ջամէն Ժ (10)»։

2. Տիբեթ մեկնելու նախօրյակին Ագրայից Փաթնա, ոմն լումայափոխի անվամբ 1000 ռուփի է փոխանցվել. այդ առթիվ գրված է. «ԱՌ-ի (1000) ռուփի յընդվի արարինք Փաթանայ, որ էս պարոն Ավետկին խըսէպումն էլ այ գրած, յընդիավան տվի Ճ-ին Ա]— (100-ին 1,275), որ է ջամէն ԺԳ II (13,5)»[66]։

3. «Ղամար ԺԴ-ումն (1685 թ. օգոստոսի 11) (Շիրազի Հովհանը Սուրաթից) իմ կոնթէ յընդվի [այ] արարէլ էկրայ, որ խասէլ այ պարոն Ավետիկն՝ ԱՌ (1000 ռուփի), ԽԱ (41) օր վադայ. իմ թալապն այ պարոն Ավետկէն նադար Իէ-ումն (սեպտեմբերի 23), որ է ջամէն ԱՌ (1000)։ Էստուր յընդիավան այ տվէլ Ճ-ին Դ II (100-ին 4,5), որ տվի ջամէն ԽԵ (45)»։

4. «Այրամ Դ-ումն (1683 թ. դեկտեմբերի 29-ին), էկրայ բիրջու դալալին ձեռնօվն Ա (1) յընդվի գրեցի Սուրաթն՝ նազարէթին վերայ՝ Վալապդասին քօթումն, ջամէն էր ԳՌԲՃԾ (3250). Էստուր Ճ-ին Ը (100-ին 8) յընդիավան տվի, որ ելաչ յընդիավանին ջամէն ԲՃԿ. (260)»։

Մեջ բերված և ուրիշ գրառումներից պարզվում է, որ դրամական փոխադրումներ կատարողները իրենց ներկայացուցիչներն ունեին տարբեր քաղաքներում. այսպես, օրինակ, Փաթնա փոխադրած դրամի հաշվից, այդ գործարքը իրականացնողների Բենարեսում գտնվող գրասենյակից, Հովհաննեսը ըստ պահանջի ստացել է 50 ռուփի։ Փոխադրումների համար «յընդիավանի», այսինքն փոխադրավարձի չափը որոշվում էր, հաշվի առնելով հիմնականում փոխադրման վերջնական վայրի հեռավորությունը, գուցե և ճանապարհի ապահովությունը, փոխանցվող գումարի չափն ու այլ հանգամանքներ։ Վերը մեջբերված գրառումներից առաջինում փոխադրավարձ է գանձվել փոխանցվող գումարի 1%-ի չափով, գրառումներից երկրորդում 1,275%, երրորդում 4,5%, իսկ չորրորդում՝ նույնիսկ 8%։

Փոխադրական մուրհակով դրամական գործարքներին սովորաբար մասնակցում են երեք անձ՝ մուրհակատուն (տրասսանտ), մուրհակ ստացողը (ռեմիտենտ) և վճարողը (տրասսատ)։ Հաշվետումարի մեջ առկա մեծաքանակ տվյալներով Հնդկաստանում կատարվում էին դրամական փոխադրության շատ ավելի բարդ գործարքներ, որոնց մասնակցում էին ավելի թվով մարդիկ։ Այդպիսի մի փոխադրություն է, օրինակ, վերը մեջբերված 4-րդ գրառումը՝ Հովհաննեսի Ագրայից Սուրաթ փոխանցած 3250 ռուփի գումարը նախ տրվում է Բիրջու դալալին. սա մի «յընդվի» է գրում Սուրաթ՝ Նազարեթի անվամբ, որով վերջինս իրավասու է դառնում Սուրաթում գտնվող «Վալապդասի քօթից» այդ գումարն ստանալու։

Առավել հետաքրքրական է մի այլ գրանցում, որ բերում ենք ստորև.

«Փիշաղին թարեղս (իմա՛ 1683 թ. օգոստոսի 30-ից առաջ) ես գրեցի էկրայ պարոն Ավետկին, թէ իմ ջանպէ ԱՌ (1000 ռուփի) յընդվի առես խէրապատ, որ ինձ խմար դերգաղի առուն... գրես, որ ես տեղս (իմա՛ Սրինճում) տամ։ Էս մասկուրիս ջանպէ գրել էր, թէ ԱՌ (1000 ռուփի) աղարկեցի խէրապատ, դու տեղդ տաս Աղաղարին, որ իմ ջանպէ խրիտ առես»։

Ըստ այսմ Հովհաննեսը Սրինճում գտնվող Աղաղարին տալիս է 1000 ռուփի. Ագրայում գտնվող պր. Ավետիքը, Հովհաննեսի անունից, նույնքան գումար ուղարկում է Խէրաբադ (պարզ չէ՝ ո՞ւմ միջոցով), որպեսզի այնտեղ մեկ ուրիշը ստանա և Հովհաննեսի համար գնի դերգաղի կոչվող գործվածքը։ Այսպիսով, դրամական փոխադրության այս գործարքին մասնակցում են առնվազն 5 անձ՝ Հովհաննեսը, Աղաղարը, պր. Ավետիքը, դրամը Ագրայից Խայրաբադ փոխադրողը և Խայրաբադում այդ դրամն ստացողը։

Բազմաթիվ են նաև պարզ մուրհակի կիրառության մասին տվյալները։ Հենց միայն Հնդկաստանում գտնված տարիներին (1683—1686 թթ.) Հովհաննեսը տարբեր անձնավորություններից 12 անգամ շահով դրամ է վերցրել և 3 անգամ ինքն է դրամ փոխ տվել։ Այդ առթիվ կատարված գրառումների ուսումնասիրությունից պարզվում է, որ պարզ մուրհակով դրամագլուխ

---

[64] *Տե՛ս Կ. Ա. Антонова,* Очерки общественных отношений и политического строя могольской Индии, времен Акбара (1556—1605), М., 1962, стр. 121; *И. К. Сиха, А. Ч. Бенербжи,* История Индии, М., 1954, стр. 250.

[65] *Տե՛ս А. И. Чичеров,* Экономическое развитие Индии перед английским завоеванием, М., 1965, стр. 149; *К. З. Ашрафян,* Феодализм в Индии, М., 1977, стр. 128.

[66] *Դրամական այդ փոխանցման հետ են առնչվում նաև ստորև մեջ բերվող երկու գրանցումները. «Փաթանու սառաֆին վերայ, որ ԱՌ (1000)-ու յընդվի ունի, էս ջամէս Բնարիսումն էլ սանցան քօթէն Ե.-ի (50 ռուփի) ամ յինք առէլ. փոշտթամասուկ արարի, որ գում Փաթանայ մունջրայ տայ, էս ջանպէ Բնարիսէն մինչև Փաթանայ յընդիավան ամ տվէլ Ճ-ին Ա (100-ին 1)»։ «Փաթանայ մեր յընդվի փողէն, որ էր ջամէն ԱՌ (1000 ռուփի), ԵՃ (500 ռուփի) նարմ շուիջան յինք առի...»։*

տրվում էր տարեկան 9%, կամ ամսական 0,75% շահ ստանալու պայմանով. «Ճ-ին ամսէն III-օվն լինի»—մուդաթի (այսինքն շահի) մասին գրում է մեր վաճառականը։

Տեղին է նշել, որ ջուղայեցի հայ վաճառականները միմյանց ու տեղացի վաճառականների, դալալների և սառաֆների նկատմամբ մեծ վստահություն են ունեցել և, ըստ կարելվույն, օժանդակել մեկը մյուսին։ Այս առումով հատկանշական է հետևյալ փաստը. 1684 թ. հոկտեմբերի 11-ին, Ամդանագար քաղաքում մեր վաճառականը տվել է Փանոսի որդի Բաբային 1800 ռուփի գումար՝ ամիսը 0,75% շահով, 41 օրից հետո Ագրայում ստանալու պայմանով։ Այս գործարքը կատարելիս Բաբան մուրհակ չի տվել Հովհաննեսին. «Դու գնայ,—ասել է նա,—ես թամասուկն կաղարկեմ Օվրանկապատ»։ Եվ իրոք, ինչպես գրում է Հովհաննեսը. «Եկի Օվրանկապատ. թամասուկն աղարկէլ էր»։ Ուշագրավ է նաև հետևյալը. 1692 թ. նոյեմբերի 25-ին Հովհաննեսը անտրտունջ վճարել է Մանվելից վերցրած 20 ռուփի պարտքը, չնայած վերջինս կորցրել էր մուրհակը։ Հաշվի պետք է առնել, սակայն, և այն հանգամանքը, որ այդ գործարքները գրեթե միշտ կատարվում էին ուրիշ վաճառականների ներկայությամբ, ուստի իրողությունն ի վերջո բացահայտվելու էր։

Դրամի փոխատվության պայմանները մեծապես փոխվում էին և շահի տոկոսը խիստ բարձրանում էր, երբ դրամ էր տրվում այնպիսի մեկին, որը դուրս էր գալու տվյալ երկրի սահմաններից և կարող էր լինել «պատահական կորստի վտանգ» կոչվող կացություն։ Դրամագլխի այդ կարգի փոխատվությունները Հաշվետումարում և ժամանակակից այլ աղբյուրներում կոչվում են «ավաք» կամ «զմեի ավաք», «զմեի բիջուքամ ավաք» և այլն։

1684 թ. ապրիլի 23-ին Սուրաթ քաղաքում Հովհաննեսը դալալ Թրիքամից 50 ռուփի պարտք էր վերցրել՝ ամիսը 0,75% շահ տալու սովորական պայմանով։ Պարզվում է, սակայն, որ այդ փոխառությունը Հովհաննեսը կատարել է ոչ իր անձնական պետքերի համար, այլ Սուրաթից Սպահան մեկնող Շամբեցի Գասպարին, 100-ին 27% շահով, «ավաք» տալու նպատակով։ Այս մասին Հաշվետումարում գրված է. «Շամս ամսի ԻԴ-ումն տվի Շամբեցի Գասպարին Ծ (50 ռուփի), Ճ (100)-ին ԻԷ (27)-օվն, որ ելաւ աւաքին ջամէն ԺԳ II (13,5 ռուփի). ասլին և շախին ջամէն ԿԳ II (63,5 ռուփի)։ ԻԷ (27 ռուփի)-էն Ա (1) թումանին վերայ՝ ելաւ ջամէն Բ (2) թուման ԳՌԵՃ (3500) դիան։ Թամասուկն դրի իմ գրած պարոնաց բարօվայգրումն, աղարկեցի Ըսպահան, որ աղենին յինք առուն. գիրն տվէլ ամ թօփչէնց Մարկոսն այ տարէլ»։ Այս դեպքում դրամ տվողը Հովհաննեսն է, իսկ ստացողները՝ նրա Սպահանում գտնվող աղաները։ Բայց ուշագրավն այն է, որ ինքը Հովհաննեսն էլ ստիպված է եղել Սուրաթում բարձր տոկոսով «ավաք» վերցնել՝ հենց նույն Թոփչենց Մարկոսից, որը մեկնում էր Սպահան և վանեցի Ատոմի որդի Թումաջանից, որը մեկնում էր Բասրա։ Արժե մեջ բերել այդ մասին կատարված գրառումներից գեթ մեկը. «Փոքր թիվն ԿԹ, շամս ամսին ԻԱ-ումն (1684 թ. ապրիլի 20) Բանդար-ի Սուրաթումն ավաք վեռի թօփչէնց Պողոսի որդի Մարկոսէն մին Ռ (1000 ռուփի), Ըսպահան, Ճ-ին ԻԶ-օվն (100-ին 26%-ով), որ ելաւ ավաքին ջամէն ԲՃԿ (260 ռուփի), ասլին և շախին ջամէն ԱՌԲՃԿ (1260 ռուփի)։ ԻԷ (27 ռուփի)-ին Ա (1) թուման գիր տվի, որ ջուքամն նավ-ի Սլէմանուն վերայ գնայ, Բանդարումն լանկար ձգէ, ջուքամն վեր կայ, էն թարեղէն Աճ.Ե (105) օր վադայ, որ Ըսպահան իմ սահիպ պարոնացէն յինք առուն։ Ելաւ ջամէն ԽԶ (46) թուման ՁՌՁՃԿ (6660 դիան)»։

Այս անգամ դրամ ստացողն է Հովհաննեսը, իսկ վճարողները՝ Սպահանում գտնվող նրա պարոնները։

Մեջ բերենք այս կարգի բազմաթիվ գրառումներից ևս մեկը, որն ունի իր առանձնահատկությունները. «Փոքր թիվն ԿԹ, շամս ամսին ԻԵ-ումն Սուրաթումն ավաք վեռի վանեցի Ատումի որդի Թումաջանէն մին Ռ. (1000 ռուփի), Պասրայ, Ճ (100)-ին Ի (20)-օվն, որ ելաւ ավաքին ջամէն ԲՃ.., ասլին և շախին ջամէն ԱՌԲՃ — [ռուփի], ԲՃԾԸ III (258,75 ռուփի) մին Ճ (100) մառչիլ կէսն լաքրի և կէսն ֆըլօրի. ջուքամն նավ-ի Ըստամբոլ մարչանտին վերայ. ելաւ մառչին ջամէն ԵՃԽԸ II (548,5 մառչիլ)։ Թամասուկն Պողոսի որդի Շիրազի Յովանին վերայ գրեցի, որ Պասրայ տայ»։ Բովանդակությունը վերապատմենք պարզաբանումներով։ Հովհաննեսը 1684 թ. ապրիլի 13-ին Սուրաթից Բասրա մեկնող վանեցի Թումաջանից 1000 ռուփի դրամ է վերցնում, 100-ին 20% շահ տալու, այսինքն՝ 1200 ռուփի տալու պայմանով։ Թումաջանը Ըստամբոլ անունով առևտրական նավով մեկնում է Բասրա, ուր գտնվում էր Հովհաննեսի ընկերակից Շիրազցի Հովհանը. այս վերջինս պարտավորվում է Հովհաննեսի վերցրած գումարի և փոխադրավարձի դիմաց Բասրայում Թումաջանին վճարել 548,5 մառչիլ (1200 ռուփիի փոխարժեքը՝ մառչիլի հաշվով)։

Այս կարգի բազմաթիվ գրառումները առատ նյութ են մատակարարում փոխատվական ու բանկային գործարքների տեսակների որոշման և պայմանների բացահայտման համար։

13

Նոր Ջուղայի հայ վաճառականների տարաձայնություններն ու վեճերը քննարկվում ու լուծվում էին Ջուղայի քալանթարի և «վաճառականաց ժողով» կոչվող ատյանի կողմից. «Առարկայն վիճի,—գրում է այդ մասին Հ. Տեր-Հովհաննյանը,—ըստ ամենայն պատշաճաւոր հանգամանացն՝ գրաւոր յայտարարութեամբ մատուցեալ լինէր ի քննութիւն վաճառականաց ժողովոյ, ուրանօր յետ հարկաւոր քննութեանց և վերահասութեանց գրէին զվճիռ ի վերայ նոյն յայտարարական թղթոյ, ըստ այսմ ձևոյ «Սօվդագարի դաստուրն այս է...», և թէ «մեք ավան այսր գործոյ՝ այսպէս գիտեմք»[67]։

Ջուղայեցի հայ վաճառականները, սակայն, իրենց կյանքի մեծ մասն անց էին կացնում հայրենի օջախից հեռու, շահի հետևից թափառելով Եվրոպայի ու Ասիայի ամենահեռավոր անկյուններում.

«Յարևել, յարևմուտ և քօլն ծէրվըծէր այ
Բանի այ չորս կողմն սովդգարն Ջուղու».

—գրել է այդ մասին ջուղայեցիների կողմից սիրված աշուղ Բաղեր-Օղլին[68]։

Արդ, ինչպե՞ս էին լուծվում ջուղայեցի վաճառականների միջև առաջացած վեճերը, կամ ինչպե՞ս էին կարգավորվում նրանց հարաբերությունները

---

[67] «Պատմութիւն Նոր Ջուղայի որ յԱսպահան», հ. I, էջ 183։ Հեղինակը հայտնում է նաև, որ Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի դիվանում պահվում են վաճառականների բազմաթիվ աղերսագրեր՝ վաճառականաց ժողովի անունից գրված վճռագրերով։

[68] Տե՛ս նույն տեղում, էջ 160, նաև Հ. Սահակյան, Հայ աշուղներ, Երևան, 1961, էջ 117։

օտար երկնակամարների տակ։ Այս հարցերի մասին ևս մեր վաճառականի Հաշվետումարի մեջ կան որոշ նյութեր, որոնց համադրումով հանդում ենք հետևյալ եզրակացության. հայ վաճառականները, բոլոր դեպքերում, գերադասում էին պարզել իրենց հարաբերությունները կամ հարթել վեճերը տվյալ վայրի հայ համայնքի՝ «ջումիաթի» միջոցով։ Երբ այս կամ այն վայրում հայ վաճառականների թիվը մեծ չէր լինում, նրանք մասնակից էին դարձ-



Նոր Ջուղայի Ս. Ամենափրկչի վանքն ու մերձակա։ Թաղամասը։

նում քննարկվող հարցին նաև այլազգի վաճառականների (Լհասայում, օրինակ, քաշմիրցիներին)։ Բացառիկ դեպքերում միայն, երբ սպառվում էին վերոհիշյալ ճանապարհներով վեճը հարթելու հնարավորությունները, դիմում էին տեղական դատական ատյաններին։

Ծանոթանանք Հաշվետումարի այն գրանցումներին, որոնք լույս են սփռում հարցերի այս խմբի վրա։

Տիբեթ մեկնելու նախօրեին Հովհաննեսը մեծ քանակությամբ՝ 7760 ռուփի ընդհանուր արժողությամբ սաթ է գնում. այդ գործողությունները կատարվում է «ջումիաթի յուղուրում», այսինքն Ագրայի հայ վաճառականների ներկայությամբ ու վկայությամբ։

Հովհաննեսն Ագրայից իր հետ Տիբեթ տանելու համար վարձել էր երկու նոքար. սրանցից մեկը՝ Ղալմազ Պետրոսը, 8 ամիս իր պարտականությունները կատարելուց հետո, Լհասայում դուրս է գալիս մեր վաճառականի մոտ ծառայելուց։ Ըստ պայմանի այդ նոքարը տարին ստանալու էր 40 ռուփի (շահիջահանի) աշխատավարձ, ուստի 8 ամսվա աշխատանքի դիմաց՝ 25,5 ռուփի։ Այդ գումարը վճարելուց մի քանի օր հետո Հովհաննեսը Հաշվետումարի մեջ կատարում է այսպիսի գրանցում. «Ղալմազ Պետրոսն, որ դուս ելաւ՝ տօնլուղն թամամ տվէլ ամ. ջումիաթ և քշմրցիք էսպէս բաստէ (հարմար) տեսին, որ Քութու մինչև Զիգիչայ մին ձիան քրէն յետ յինք առում. յինք առի, որ է ժ (10) շահ»։

Պետք չէ տարակուսել, որ Պետրոսի աշխատավարձի հարցը Հովհաննեսի նախաձեռնությամբ է քննության նյութ դարձել «ջումիաթի և քշմրցոց» ժողովում, որոշումն էլ կայացվել է ի վնաս նոքարի, և նա ստիպված է եղել վերադարձնել 8-ամսյա տառապանքներով վաստակած իր աշխատավարձի 40%-ը, 25 ռուփուց՝ 10-ը[69]։

1690 թ. ապրիլի վերջերին Լհասայում բուռն վեճեր են բորբոքվում մահդասի Ղուկասի որդի Ծատուրի և Հովհաննես Ջուղայեցու միջև՝ երկու տարբեր հարցերի կապակցությամբ։ Այդ վեճերի մասին կատարված գրառումներում կան որոշ մութ կետեր, բայց շարադրանքի բուն բովանդակությունը պարզ է։

Բախման առիթներից մեկը հետևյալն է. 1690 թ. ապրիլի 21-ին 3 «կատայ» (վճռագիր) է տրվում պետական ինչ-որ հաստատության կողմից՝ մեկը Ծատուրի, երկրորդը Նիկողոսի, երրորդը Հովհաննեսի անունով, որոնցում, ըստ երևույթին, վավերացված էին այս երեք վաճառականների գնած ապրանքների և նրանց գների մասին տվյալները։ Նիկողոսի «կատայի» մեջ նրան պատկանող թեյի գինը 128 լանկ 8 մսխալի փոխարեն գրված է լինում 228 լանկ 8 մսխալ, այսինքն 100 լանկով ավելի։ Ծատուրը բողոք է բարձրացնում, այդ սխալի մեջ մեղադրելով Հովհաննեսին։

Բախման մյուս առիթն ավելի պարզ է. դեռևս 1686 թ. դեկտեմբերի 20-ին Հովհաննեսը արծաթ էր տվել Մելիջանին, որպեսզի վերջինս մեկ տարվա ընթացքում Չինաստանի Սլինկ (Սինին) քաղաքից մի քանի նվագով դրանց համարժեք ոսկի ուղարկի։ 1688 թ. ապրիլի 15-ին Մելիջանից ստացված 11 լանկ (415,69 գր) ոսկու կապակցությամբ վեճ է ծագում Ծատուրի և Հովհաննեսի միջև. Ծատուրը հայտարարում է, որ այդ 11 լանկ ոսկուց 9-ը իրեն է պատկանում։ Վիճող կողմերը դիմում են ժունին[70], որը կարգադրում է զառ

[69] Հաշվետումարի հեղինակը արդար չի վարվել նաև, իր մյուս նոքարի՝ Պողոսի նկատմամբ։ 21 ամիս հետո սա ևս հրաժարվել է Հովհաննեսի մոտ ծառայել ու ստացել է իրեն հասանելիք վարձը։ Բայց Պողոսը Հովհաննեսին պահ էր տվել նաև իր ունեցած դրամը՝ 12 ռուփի, որով Փաթնայում Հովհաննեսը նրա անունով ապրանք էր գնել։ Արդ, Հովհաննեսն իր նախկին նոքարին ոչ թե վերադարձնում է նրա դրամով գնած ապրանքը, որ Լհասայում կարելի էր վաճառել ոչ պակաս քան 100% շահով, այլ միայն այն գումարը (12 ռուփի), որ ստացել էր նրանից Ագրայում։ Հաշվետումարում այդ կապակցությամբ գրված է. «Ունէր (նոքար Պողոսը) իմ մօտ ԺԲ (12) շահ, որ Յընդուստան էր տվէլ. Փաթանու առած շիշին կէսն ուր անման ամ գրէլ. տվի ոչ, ուր թալպ ԺԲ (12) [ռուփ]ին տվի»։

[70] Լհասայում մեկ անգամ ևս Հովհաննեսը վեճի է բռնվել այս անգամ Պողոսի որդի Մելիջանի հետ։ Մեր վաճառականը համաձայն է եղել Մելիջանին տված պարտքի մի մասի դիմաց ապրանք ստանալ, մյուս մասի դիմաց՝ կանխիկ դրամ։ Մելիջանը, սակայն, ցանկանալով միայն ապրանք տալ, դիմել է դատարան։ Այս անգամ դատարան դիմելու փաստն արձանագրված է այսպես. «Յինքն (Մելիջանը) ըռազի չէկաց, գնաց դէվին արզ առէլ» և այնուհետև. «Դէվին յուքմն էսպէս ելաւ, թէ կէսն նաղտ և կէսն ջինս տայ»։ Այսպիսով, Ծատուրի հետ վեճի ժամանակ դատավորի դերում հանդես է գալիս ժուն կոչվող ինչ-որ մեկը, իսկ այս դեպքում՝ դեվը։ Կարելի է ենթադրել, որ այս երկու անունների տակ էլ հանդես է գալիս ոչ այլ ոք, քան Տիբեթի հոգևոր ու աշխարհիկ իշխանությունները մարմնավորող Դալայ-Լաման։ Պետք է հաշվի առնել և այն հանգամանքը, որ Ի. Գրյուբերի տվյալներով Տիբեթի թագավորը կոչվել է Դևայ, իսկ մեծ քուրմը, որ միաժամանակ գլխավոր դատավորն էր՝ Lamascongiu։ Տիբեթի ժողովրդական խոսվածքում Deva Jong էր կոչվում մեծ լամայի գերագույն իշխանությունը և հավանաբար այդ կոչման բաղկացուցիչ Deva և Jong մասերն են հենց, որ տեղ են գտել Հաշվետումարի մեջ դեվ և ժուն տառադարձությամբ։ Deva Jong-ի և Տիբեթի հոգևոր ու աշխարհիկ պաշտոնեության մասին տե՛ս B. A. Graham Sandberg, Hand-book of colloquial Tibetan. A practical guide to the language of central Tibet, Calcutta, 1894, p. 188—192.

նետելու միջոցով պարզել ճշմարտությունը, «ժունէն յուրմ ելաւ, թէ զառ գրձեն»։ Ծատուրի բախտը բերում է և, հաջողակ զառ նետելով, նա իր օգտին է լուծում վեճը։

14

Հրապարակվող Հաշվետումարն զգալի չափով կարժեզրկվեր, եթե նրա մեջ հիշատակված դրամական միավորների և չափ ու կշռին վերաբերող տերմինների արդիական համարժեքները մնային անորոշ։

Բարեբախտաբար, հաշվետումարում, ինչպես և Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողովի» ու նույն այդ ձեռնարկի հիման վրա Ղուկաս Վանանդեցու կազմած «Գանձ չափոյ, կշռոյ, թուոյ և դրամից» կոչվող աշխատության մեջ (Ամստերդամ, 1699) կան արժանահավատ տվյալներ, որոնց օգնությամբ պարզվում են հայ խոջայական կապիտալի ներկայացուցիչների այցելած երկրամասերում XVII դ. վերջերին կիրառվող դրամական ու չափական մի քանի տասնյակ միավորների մետրական համարժեքները։ Այդպիսով, մեր սկզբնաղբյուրը հարուստ մի շտեմարան է նաև դրամագիտական ու չափագիտական ստուգապատում նյութերի։

Հովհաննեսի գործունեության ժամանակաշրջանում Իրանի դրամական համակարգի միավորը աբասին էր, որ Շահ Աբաս Ա-ի ժամանակ բաց էր թողնվում շուրջ 8,5 գր քաշով։ XVII դ. վերջերին Ղ. Վանանդեցու վերը հիշատակված աշխատության վկայությամբ, աբասին արժեզրկվել էր ու պարունակում էր ընդամենը 9,5 դանկ, այսինքն՝ 7,48 գր արծաթ։ Ըստ այդմ սեֆյան Իրանի դրամական սիստեմի ամենափոքր միավորը՝ դիանը, լինելով աբասու $\frac{1}{200}$-րդ մասը՝ կշռորդ էր 0,037 գր արծաթի, իսկ թումանը (1 թուման=50 աբասի=10000 դիան)՝ 373,9 գր արծաթի[71]։ Իրանի դրամի արժեգինը, սակայն, շարունակ նվազում էր և շրջանառության մեջ էին դրվում մեծ քանակությամբ ոչ լիարժեք մետաղի պարունակությամբ կոփված դրամներ։ Բազմավաստակ դրամագետ Ե. Պախոմովի տվյալներով այդ ժամանակ աբասու կշիռը տատանվում էր 7,30—7,40 գրամի միջև[72], բայց, հավանաբար, կային ավելի ցածր կշիռ ունեցող աբասիներ, մահմուդիներ ու այլ դրամներ։ Այս մասին ուշադրության արժանի տվյալ է հաղորդում մեր վաճառականը. նա հայտնում է, որ Հնդկաստան մեկնելու ճանապարհին, Բանդար Աբասի նավահանգստի պետը չէր կամենում իրենից ընդունել 5 թուման 5000 դիան ընդհանուր գումարով դրամը, որ գոյացած էր աբասիներից ու մահմուդիներից (2 մահմուդի=1 աբասի). «Իմ Շիրազայ բերած փողէն,— գրում է նա, Ե (5) թուման ԵՌ (5000) դիան թոֆեզի աբասի և մահմուդի ունի, շաբանդարն վե առման չէր, սաղացուցի. թումանին ՉԾ (600) դիան նրա ունեցած աբասիները 7 գրամից ավելի կշիռ չեն ունեցել։

[71] Հովհաննես Ջուղայեցին հայտնում է, որ «Մին լանկն ըսպահանայ Ռ (1000) դրանին քաշ ունի». ըստ այդմ մեկ թումանը կշռորդ է 377,9 գր արծաթի։

[72] *Е. А. Похомов*, Монетные клады Азербайджана (Труды общества обследования и изучения Азербайджана, вып. 3), Баку, 1926, стр. 32, 34։ Եղել են նաև ավելի ծանր կշռով աբասիներ։ Զաքարիա Ագուլեցու վկայությամբ 1662 թ. Շահ Աբաս Բ-ն հրահանգում է կտրել 5 շահիանոց աբասիներ, 2 մսխալ (9,448 գր) կշռով (տե՛ս Զաքարիա Ագուլեցու օրագրությունը, Երևան, 1938, էջ 59—60)։

Իրանական դրամի արժեզրկման մասին են վկայում նաև շահիջահանի-ռուփիի (պարունակել է 11,33 գր արծաթ) և թումանի կամ դիանի փոխհարաբերության մասին Հաշվետումարում առկա տվյալները։ Ըստ այդմ 27 շահիջահանը համարժեք է 1 թումանի, կամ 1 շահիջահանը՝ 370 դիանի։

Հնդկաստանի սահմաններում կատարած տուրևառի գործարքների մասին գրառումների մեջ իր գնած ու վաճառած ապրանքների գները Հովհաննեսը նշանակում է շահիջահանի կոչվող դրամական միավորով, որ, անշուշտ, Շահ-Ջահանի (1627—1658) կտրած ռուփին է (մի քանի անգամ շահիջահանիի փոխարեն գրված է ուղղակի ռուփի)։ Թե ի՞նչ կշիռ է ունեցել ռուփին, այդ մասին տվյալ կա «Աշխարհաժողովում»։ Կոստանդ Ջուղայեցին գրում է. «Ա (1) ռուփին Բ (2) մսխալ կիսէն II մասայ պակաս արծաթ այ. որ կէս մասէն Բ II (2,5) զիրեթ այ, որ է Ժ (10) գրան»[73]։

Մսխալը կշռորդ է 4,724 գրամի, իսկ զիրեթը՝ 0,196 գրամի. ըստ այդմ մեկ ռուփին=(2,5×4,724)—(2,5×0,196)=11,81—0,49=11,32 գրամ արծաթի։

Հաշվետումարում կան մի քանի տասնյակ զանազան հաշիվներ, որոնք հաստատում են մեկ ռուփի պարունակած արծաթի կշռի մասին «Աշխարհաժողովի» այս տվյալը՝ աննշան (0,01 գր) հավելումով։ Այսպիսով, տարակույս չի կարող լինել, որ Հովհաննեսի գործունեության տարիներին Հնդկաստանի դրամական միավորը՝ ռուփի-շահիջահանին, կշռորդ էր 11,33 գր արծաթի։

Բացի շահիջահանի կոչվող ռուփիից, շրջանառության մեջ կային նաև այլ ռուփիներ՝ բազարի շահի, օվրանկշահի, չալնի և իլայի։ Հաշվետումարի տվյալներով հնարավոր է որոշել նաև տարբեր այդ ռուփիների պարունակած արծաթի կշիռը։

Նեպալում շրջանառության մեջ գտնվող հիմնական դրամական միավորը կոչվում էր մանտրմելի (mandermali). Հովհաննեսը գրում է. «Տեղիս (իմա՛ Քաթմանդուի) ըռաջին սքէն այ մանտրմէլի, որ II (0,5 ռուփի) կառէ»։ Հաշվետումարում կան բազմաթիվ վկայություններ, որոնք հաստատում են մանտրմելու և ռուփու այս (2:1) հարաբերությունը։

Նեպալում շրջանառության մեջ է եղել նաև պղնձե մանր դրամ՝ դամ. «ՃԺԹ (119) դամն՝ Ա (1) մանտրմէլի այ»։ Միջին դարերում (ներառյալ նաև Հովհաննեսի գործունեության տարիները) Տիբեթը չի ունեցել սեփական դրամ. առևտուրը կատարվել է կա՛մ ապրանքափոխանակությամբ, կա՛մ էլ՝ ձույլ արծաթով ու ոսկով[74]։

Ապրանքափոխանակության մասին տվյալները, որ զգալի տեղ են գրավում Հաշվետումարի մեջ, բնորոշ են զարգացման ցածր մակարդակի վրա գտնվող Տիբեթի տնտեսական կյանքի համար։ Հովհաննեսի կողմից փոխանակության առաջարկված ապրանքները գերազանցապես թանկագին քարեր էին (սաթ, մարջան և այլն), որոնց դիմաց նա հիմնականում ստանում էր մուշկ։

Արծաթի և այլ ապրանքների քաշի հիմնական միավորն այստեղ լանկն էր, որի կշիռը մետրական սիստեմով դարձյալ հնարավոր է լինում ճշգրիտ

[73] Մատենադարան, ձեռ. № 5994, էջ 12բ, ձեռ. № 10734, էջ 28ա։

[74] Նեպալի իշխաններից մեկը՝ Բհատգաոնի ռաջա Բհուպատրինդրան (1696—1722) ու նրա հաջորդները սկսում են Տիբեթի համար հատել հատուկ դրամ (անշուշտ մեծ օգուտ ստանալով այդ գործարքից). իսկ զուտ տիբեթյան դրամներ երևան են գալիս միայն XVIII դ. 30-ական թվականներին («Непал», նշվ. աշխ., էջ 18, 47)։

որոշել վերոհիշյալ սկզբնաղբյուրների մեջ առկա, իրար կրկնող ու լրացնող տվյալների համադրությամբ։ Ըստ այդմ, լանկը կամ թանկը 37,79 գրամի կշռաչափ է[75]։

Քանի որ առուծախը Տիբեթում կատարվում էր հիմնականում ձույլ արծաթով, մեծ նշանակություն էր ստանում մետաղի հարգը («այար», проба) և հաճախ շրջանառության մեջ էր մուծվում ոչ լիարժեք հարգի արծաթ։ Վաճառականի մտահոգություններն այստեղ բազմապատկվում էին. չտուժելու համար նա պետք է կարողանար ճանաչել ձույլ արծաթի հարգը և խուսափեր ցածրորակ արծաթ վերցնելուց։ Միշտ չէր այդ բանը հաջողվում. մեր փորձված վաճառականը վնասվում էր հատկապես այն դեպքում, երբ գործ էր ունենում պետական մարմինների հետ։ Այլ առիթով հիշատակել ենք արդեն, որ Լհասայի մաքսատնից Հովհաննեսին տրված 430 լանկ ցածրորակ արծաթը հալելուց ու զտելուց հետո պակասել էր (քամբուտ էր ունեցել) 62 լանկ։ Պետական մարմինները պարտադրում էին ստանալ ցածրորակ արծաթ, բայց երբ իրենք էին ստանալիք ունենում, պահանջում էին ամենաբարձր հարգի մետաղ։ Հովհաննեսի ընկեր Նիկողոսը, որպես 4 ձիու վարձ պետք է վճարեր «սարքար» կոչվող պետական վարչությանը 7 լանկ 2 մսխալ արծաթ։ Այդ պարտքը մարում է Հովհաննեսը. «Լէվ արծաթ տարայ. Գ (3) խետ դաղեցին, Բ (2) խետ խալեցին, քամպուտ գնաց (իմա՛ պակասեց) Զ (6) մսխալ»։ Նա ստիպված է լինում վճարել նաև այդ «քամպուտ» գնացածը։ Ուշագրավ է նաև Հովհաննեսի մի այլ գրանցումը, ըստ որի Լհասայի նույն հաստատության պաշտոնյաները «արծաթ կը տան պակաս, յինք կառուն ավէլի»։ Այդ մասին առավել որոշակի նա արտահայտվում է Հաշվետումարի մի այլ հատվածում. «Զրայ սարքարումն Բ (2) քաշ կայ, յինք առման մեծն այ և տալման պըզտիկն այ»[76]։

Ցածրորակ արծաթի պատճառով վնաս չկրելու մտահոգությամբ, վաճառականները հաճախ դրան բարձր հարգի արծաթ էին խառնում, կամ էլ հալելու ու զտելու միջոցով բարձրացնում հարգը։ Մի առիթով Հովհաննեսը գրում է. «Խամնու արծաթն [Նիկողոսն] խալում էր, լէվ արծաթ տվի՝ խառնէց». մի այլ կապակցությամբ հայտնում է, որ իր ունեցած 20 լանկ արծաթը «յետնէ սէվացաւ, խալեցի՝ Ա (1) լանկ պակասեցաւ, մնաց ԺԹ (19) լանկ»։

Ոսկու առուծախը Տիբեթում և հարևան երկրներում կատարվում էր սուկամ ու սէվայ, թոլայ ու մասայ, ինչպես և գուրմու կոչվող կշռաչափերով։ Հաշվետումարի խիստ ուշագրավ տվյալների և հայկական այլ սկզբնաղբյուրների մեջ ամբարված համապատասխան նյութերի համադրությամբ պարզվում են նաև վերոհիշյալ չափերի մետրական համարժեքները[77]։

Ոսկու ձույլերը Լհասա էին բերում հիմնականում Չինաստանի Սինին քաղաքից. հարգի առումով ձույլերը երեք տեսակի էին լինում՝ պանայ կամ վարաղ, խամսեր և ջունսեր։ Գրանցումներում միշտ ցույց է տրված ոսկու հարգը։

[75] Հմմտ. Մատենադարան, ձեռ. № 5994, էջ 15ա։ Դ. Վանանդեցի, Գանձ չափոյ, կշռոյ, թուոյ և դրամից, Ամստերդամ, 1699, էջ 17։

[76] Նույնպիսի կեղծիք կատարում էին նաև Արևելյան հնդկական ընկերության կալկաթայում հաստատված անգլիացի պաշտոնյաները։ Իր վերջին դրանցումներից մեկում Հովհաննեսը հայտնում է, որ «Քուլիայ սուպոնս ծախեցի ինկլիզի քօթոմն՝ բաղարի քարօվ, որ ասմունքն ԽԲ (42) սէր այ, յամայ ավէլի զընէջ»։

[77] Տե՛ս ստորև բերվող դրամական միավորների և կշռաչափերի ցանկը։

«Մաթոսին քուլիայ ոսկին, որ ինձ այ խասէլ՝ պանայ, խամսէր, ջունսէր՝ ողջ մին-մին ղալամ գրած այ, ջամէն ՐՃՀԴ (874) սուկամ II (0,5) սէվայ,

Պանին ջամէն ԱՃԿԷ (167) սուկամ ԺԴ (14) սէվայ,

Խամսէրին ջամէն այ ԵՃԻ (520) սուկամ ԺԶ II (16,5) սէվայ,

Ջունսէրին ջամէն ԱՃՁԵ (185) սուկամ Ժ (10) [սէվայ]»։

Ամենաբարձր հարգի ոսկին այստեղ պանայ կոչվածն է, ամենացածրը՝ ջունսերը. խամսերը, որ միջին տեղն է գրավում, շրջանառության մեջ եղել է ավելի շատ։

Ոսկու այդ ձույլերի մեջ զուտ ոսկու պարունակության տոկոսը որոշել անկարող ենք, բայց կան տվյալներ, որոնք հնարավորություն են ընձեռում մոտավոր հաշվով պարզելու դրանց գների փոխհարաբերությունը։ Այս առումով հետաքրքրական մի շարք գրառումների մեջ իր պարզությամբ ուրույն տեղ է գրավում հատկապես մեկը, որի մեջ հանգուցյալ Մաթոսից մնացած տարբեր տեսակի ոսկու ձույլերի կշռին առընթեր տրված է նաև նրանցից յուրաքանչյուրի մեկ միավորի (տվյալ դեպքում թոլայի) արժեքը՝ ռուփիի հաշվով. պանայ ոսկու մեկ թոլան արժեր 12,75 ռուփի, խամսէր ոսկու մեկ թոլան՝ 12,05 ռուփի, ջունսէր ոսկու մեկ թոլան՝ 11,55 ռուփի։

Արդ, եթե բարձր հարգի՝ պանայ ոսկու մեկ միավորի արժեքը պայմանականորեն համարենք 100, ապա վերոհիշյալ տվյալներով խամսերի արժեքը կհարաբերի նրան 94,5, իսկ ջունսերինը՝ 90,5-ով։

Հաշվեմատյանի մեջ տարբեր ապրանքների առուծախի մասին եղած տասնյակ ու հարյուրավոր գրառումները պատմատնտեսագիտական հետազոտությունների համար օգտագործելի դարձնելու նպատակով անհրաժեշտ է պարզել Հովհաննեսի կողմից կիրառված չափական մյուս միավորների մետրական համարժեքները ևս։

Այս գործին մեծ նպաստ է բերում դարձյալ Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողովը», ուր ասված է. «Խուռջայ և Հնդվան և կամ այլ ինչ տեղ, որ լեղակ առուս՝ ողջ աքպարի ղիտր կու խոսեն, որ մին սէրն Լ (30) փէսաբար այ, որ մին փէսէն Դ մսխալ կէս այ (4,5), որ մին աքպարի ղիտրն ԵՌԴՃ (5400) մսխալ այ»[78]։

Ուշագրավ այս տվյալների հիման վրա դյուրությամբ որոշվում են Հաշվետումարում գործածված ևս մի քանի չափերի մետրական համարժեքները, այսպես.

Մսխալ (աջամստանայ)—4,724 գր (բութանտայ)—3,779 գր

Փէսաբար—21,258 գր

Սէր—637,74 գր

Ամպարի ղիտր—25 կգ 509 գր

Շատ տարածված կշռաչափ է եղել նաև Սեֆյան Իրանի (Աջամստանայ կամ շահի կոչված) լիտրը, որ 5 կգ 888 գրամի կշիռ է ունեցել (կոչվել է նաև ման)[79]։ Թանկագին քարերի համար կիրառվել են կշռի այլ միավորներ ևս (դարնի, դօլնայ, ըռաթի, թան, մանճա, տանկ և այլն), որոնց մեծ մասի քաշը նույնպես հնարավոր է լինում պարզել մեր Հաշվետումարի և այլ աղբյուրների համադրական ուսումնասիրությամբ։

[78] Մատենադարան, ձեռ. № 10704, էջ 30ա, ձեռ. № 5994, էջ 13ա. հմմտ. «Գանձ չափոյ...», էջ 16։

[79] Տե՛ս Ф. И. Гутер, Сравнительные таблицы, Рига-Лейпциг, 1911, стр. 82.

որոշել վերոհիշյալ սկզբնաղբյուրների մեջ առկա, իրար կրկնող ու լրացնող տվյալների համադրությամբ։ Ըստ այդմ, լանկը կամ թանկը 37,79 գրամի կշռաչափ է[75]։

Քանի որ առուծախը Տիբեթում կատարվում էր հիմնականում ձույլ արծաթով, մեծ նշանակություն էր ստանում մետաղի հարգը («այար», проба) և հաճախ շրջանառության մեջ էր մուծվում ոչ լիարժեք հարգի արծաթ։ Վաճառականի մտահոգություններն այստեղ բազմապատկվում էին. չտուժելու համար նա պետք է կարողանար ճանաչել ձույլ արծաթի հարգը և խուսափեր ցածրորակ արծաթ վերցնելուց։ Միշտ չէր այդ բանը հաջողվում. մեր փորձված վաճառականը վնասվում էր հատկապես այն դեպքում, երբ գործ էր ունենում պետական մարմինների հետ։ Այլ առիթով հիշատակել ենք արդեն, որ Լհասայի մաքսատնից Հովհաննեսին տրված 430 լանկ ցածրորակ արծաթը հալելուց ու զտելուց հետո պակասել էր (քամբուտ էր ունեցել) 62 լանկ։ Պետական մարմինները պարտադրում էին ստանալ ցածրորակ արծաթ, բայց երբ իրենք էին ստանալիք ունենում, պահանջում էին ամենաբարձր հարգի մետաղ։ Հովհաննեսի ընկեր Նիկողոսը, որպես 4 ձիու վարձ պետք է վճարեր «սարքար» կոչվող պետական վարչությանը 7 լանկ 2 մսխալ արծաթ։ Այդ պարտքը մարում է Հովհաննեսը. «Լէվ արծաթ տարայ. Գ (3) խետ դաղեցին, Բ (2) խետ խալեցին, քամպուտ գնաց (իմա՛ պակասեց) Զ (6) մսխալ»։ Նա ստիպված է լինում վճարել նաև այդ «քամպուտ» գնացածը։ Ուշագրավ է նաև Հովհաննեսի մի այլ գրանցումը, ըստ որի Լհասայի նույն հաստատության պաշտոնյաները «արծաթ կը տան պակաս, յինք կառուն ավէլի»։ Այդ մասին առավել որոշակի նա արտահայտվում է Հաշվետումարի մի այլ հատվածում. «Զրայ սարքարումն Բ (2) քաշ կայ, յինք առման մեծն այ և տալման պրզտիկն այ»[76]։

Ցածրորակ արծաթի պատճառով վնաս չկրելու մտահոգությամբ, վաճառականները հաճախ դրան բարձր հարգի արծաթ էին խառնում, կամ էլ հալելու ու զտելու միջոցով բարձրացնում հարգը։ Մի առիթով Հովհաննեսը գրում է. «Խամնու արծաթն [Նեկղոսն] խալում էր, լէվ արծաթ տվի՝ խառնէց». մի այլ կապակցությամբ հայտնում է, որ իր ունեցած 20 լանկ արծաթը «յետնէ սէվացաւ, խալեցի՝ Ա (1) լանկ պակասեցաւ, մնաց ԺԹ (19) լանկ»։

Ոսկու առուծախը Տիբեթում և հարևան երկրներում կատարվում էր սուկամ ու սէվայ, թոլայ ու մասայ, ինչպես և գուրմու կոչվող կշռաչափերով։ Հաշվետումարի խիստ ուշագրավ տվյալների և հայկական այլ սկզբնաղբյուրների մեջ ամբարված համապատասխան նյութերի համադրությամբ պարզվում են նաև վերոհիշյալ չափերի մետրական համարժեքները[77]։

Ոսկու ձույլերը Լհասա էին բերում հիմնականում Չինաստանի Սինին քաղաքից. հարգի առումով ձույլերը երեք տեսակի էին լինում՝ պանայ կամ վարաղ, խամսեր և ջունսեր։ Գրանցումներում միշտ ցույց է տրված ոսկու հարգը։

[75] Հմմտ. Մատենադարան, ձեռ. № 5994, էջ 15ա։ Ղ. Վանանդեցի, Գանձ չափոյ, կշռոյ, թուոյ և դրամից, Ամստերդամ, 1699, էջ 17։

[76] Նույնպիսի կեղծիք կատարում էին նաև Արևելյան հնդկական ընկերության Կալկաթայում հաստատված անգլիացի պաշտոնյաները։ Իր վերջին դրանցումներից մեկում Հովհաննեսը հայտնում է, որ «Քուլիայ սուպոնս ծախեցի ինկլիզի քօթումն՝ բաղարի քարօվ, որ ասմունքն ԽԲ (42) սէր այ, յամայ ավելի զընէ»։

[77] Տե՛ս ստորև բերվող դրամական միավորների և կշռաչափերի ցանկը։

«Մաթոսին քուլիայ ոսկին, որ ինձ այ խասէլ՝ պանայ, խամսէր, ջունսէր՝ ողջ մին-մին զալամ գրած այ, ջամէն ՐՃՀԴ (874) սուկամ II (0,5) սէվայ,

Պանին ջամէն ԱՃԿԷ (167) սուկամ ԺԴ (14) սէվայ,

Խամսէրին ջամէն այ ԵՃԻ (520) սուկամ ԺԶ II (16,5) սէվայ,

Ջունսէրին ջամէն ԱՃՁԵ (185) սուկամ Ժ (10) [սէվայ]»։

Ամենաբարձր հարգի ոսկին այստեղ պանայ կոչվածն է, ամենացածրը՝ ջունսերը. խամսերը, որ միջին տեղն է գրավում, շրջանառության մեջ եղել է ավելի շատ։

Ոսկու այդ ձույլերի մեջ զուտ ոսկու պարունակության տոկոսը որոշել անկարող ենք, բայց կան տվյալներ, որոնք հնարավորություն են ընձեռում մոտավոր հաշվով պարզելու դրանց գների փոխհարաբերությունը։ Այս առումով հետաքրքրական մի շարք գրառումների մեջ իր պարզությամբ ուրույն տեղ է գրավում հատկապես մեկը, որի մեջ հանգուցյալ Մաթոսից մնացած տարբեր տեսակի ոսկու ձույլերի կշռին առընթեր տրված է նաև նրանցից յուրաքանչյուրի մեկ միավորի (տվյալ դեպքում թոլայի) արժեքը՝ ռուփիի հաշվով. պանայ ոսկու մեկ թոլան արժեր 12,75 ռուփի, խամսէր ոսկու մեկ թոլան՝ 12,05 ռուփի, ջունսէր ոսկու մեկ թոլան՝ 11,55 ռուփի։

Արդ, եթե բարձր հարգի՝ պանայ ոսկու մեկ միավորի արժեքը պայմանականորեն համարենք 100, ապա վերոհիշյալ տվյալներով խամսերի արժեքը կհարաբերի նրան 94,5, իսկ ջունսերինը՝ 90,5-ով։

Հաշվեմատյանի մեջ տարբեր ապրանքների առուծախի մասին եղած տասնյակ ու հարյուրավոր գրառումները պատմատնտեսագիտական հետազոտությունների համար օգտագործելի դարձնելու նպատակով անհրաժեշտ է պարզել Հովհաննեսի կողմից կիրառված չափական մյուս միավորների մետրական համարժեքները ևս։

Այս գործին մեծ նպաստ է բերում դարձյալ Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողովը», ուր ասված է. «Խուռջայ և Հնդվան և կամ այլ ինչ տեղ, որ լեղակ առուս՝ ողջ աքպարի ղիտր կու խոսեն, որ մին ղիտրն Խ (40) սէր այ, որ մին սէրն Լ (30) փէսաբար այ, որ մին փէսէն Դ մսխալ կէս այ (4,5), որ մին աքպարի ղիտրն ԵՌԴՃ (5400) մսխալ այ»[78]։

Ուշագրավ այս տվյալների հիման վրա դյուրությամբ որոշվում են Հաշվետումարում գործածված ևս մի քանի չափերի մետրական համարժեքները, այսպես.

Մսխալ (աջամստանայ)—4,724 գր (բութանտայ)—3,779 գր

Փէսաբար—21,258 գր

Սէր—637,74 գր

Աքպարի ղիտր—25 կգ 509 գր

Շատ տարածված կշռաչափ է եղել նաև Սեֆյան Իրանի (Աջամստանայ կամ շահի կոչված) լիտրը, որ 5 կգ 888 գրամի կշիռ է ունեցել (կոչվել է նաև ման)[79]։ Թանկագին քարերի համար կիրառվել են կշռի այլ միավորներ ևս (դարնի, զօլնայ, ըռաթի, թան, մանճա, տանկ և այլն), որոնց մեծ մասի քաշը նույնպես հնարավոր է լինում պարզել մեր Հաշվետումարի և այլ աղբյուրների համադրական ուսումնասիրությամբ։

[78] Մատենադարան, ձեռ. № 10704, էջ 30ա, ձեռ. № 5994, էջ 13ա. հմմտ. «Գանձ չափոյ...», էջ 16։

[79] Տե՛ս Ф. И. Гутер, Сравнительные таблицы, Рига-Лейпциг, 1911, стр. 82.

Մանրամասնությունների մեջ չմտնելով, ստորև տալիս ենք Հաշվետումարի մեջ գործածված դրամական միավորների ու կշռաչափերի այբբենական ցանկը, յուրաքանչյուր անվան դիմաց նշանակելով բազմաթիվ խաչաձևվող տվյալներով ստուգված նրա մետրական համարժեքը.

Աբասի—թումանի $^{1}/_{50}$-րդ մասը, 7,30—7,40 գր արծաթ

Ասլանլու—թուրքական ոսկեդրամ. 16 ասլանլուն համարժեք է մեկ թումանի

Բազարի շաhի—ոչ լիարժեք ռուփի, 10,54 գր արծաթ

Գուրմու—6,07 գր

Դամ—նեպալյան մանր պղնձե դրամ (119 դամը՝ 1 մանտրմելի)

Դարնի—շաքուի $^{1}/_{24}$-րդ մասը, կշիռն անորոշ

Դիան—իրանական դրամական սիստեմի փոքր միավորը. մեկ թումանի 10.000-րդ մասը

Ըռաթի—թոլայի $^{1}/_{96}$-րդ, մասայի $^{1}/_{8}$-րդ մասը, 0,10 գրամի կշռաչափ

Ըռաթի—Փաթնայում՝ 0,15 գրամի կշռաչափ

Թանկ—37,38 գրամի կշռաչափ, կոչվել է նաև լանկ

Թուման—իրանական դրամական սիստեմի մեծ միավորը, պարունակում է 50 աբասի. 10.000 դիան

Թոլայ—12,15 գրամի կշռաչափ

Թոլայ Նեպալի—14,56 գրամի կշռաչափ

Իլաի—ոչ լիարժեք ռուփի, 10,902—10,85 գր արծաթ

Լիտր—տե՛ս ղիտր

Կանուայ—փաքասէրի $^{1}/_{16}$-րդ մասը, 53,14 գրամի կշռաչափ

Ղիտր աջամստանայ—5 կգ 888 գրամի կշռաչափ

Ղիտր ամպարի—25 կգ 509 գրամի կշռաչափ (ըստ «Աշխարհաժողովի» 5400 մսխալ, այսինքն՝ 25 կգ 488 գր.)

Ղիտր շաhի կամ Թավրիզի—3000 գր

Մաhմուդի—կես աբասի, 100 դիան

Մանտրմելի—Նեպալի արծաթ դրամը, հնդկական ռուփիի կես արժեքով (5,66 գր արծաթ)

Մառշիլ լամոի—եվրոպական ոսկեդրամ (կշռորդ է համարվել 24,93 գր արծաթի)

Մառշիլ ֆլորի—եվրոպական ոսկեդրամ (կշռորդ է համարվել 24,60 գր. արծաթի)

Մասայ—թոլայի $^{1}/_{12}$-րդ մասը, 1,01 գրամի կշռաչափ

Մասայ Նեպալի—1,21 գրամի կշռաչափ

Մսխալ աջամստանայ—4,72 գրամի կշռաչափ

Մսխալ գաթուրի—3,78 գրամի կշռաչափ

Նեղայ—կշռաչափ, որ տատանվել է 2,5—4 գր միջև

Շաhիջաhանի—նույնն է ռուփի (տե՛ս).

Զալնի—ոչ լիարժեք ռուփի, 10—16 գր արծաթ

Զաfու—կշիռն անորոշ

Ռուփի—Հնդկաստանի արծաթ դրամը, 11,33 գր արծաթ (Նեպալում՝ 10,1 գր. արծաթ)

Սէր—ղիտրի $^{1}/_{40}$-րդ մասը

Սէվայ—սուկամի $^{1}/_{20}$-րդ մասը, 0,25 գրամի կշռաչափ

Սուկամ—5,06 գրամի կշռաչափ

Տանկ—16,21 գրամի կշռաչափ

Փեսաբար—21,26 գրամի կշռաչափ

Քակամ—1,26 գրամի կշռաչափ

Քիսայ—քսակ, արծաթ դրամի չափ

Օվրանկշաhի—ոչ լիարժեք ռուփի, 11 գր արծաթ

Ֆուն—գաթուրի մսխալի $^{1}/_{10}$-րդ մասը, 0,37 գրամի կշռաչափ

Այժմ անդրադառնանք երկարության չափերին.

Հովհաննես Ջուղայեցու հենց առաջին գրանցումը հասկանալու և ըստ արժանվույն գնահատելու համար անհրաժեշտ է որոշել գազ կոչվող չափի մետրական համարժեքը։ Այդ գրանցման մեջ մեր վաճառականն ասում է, որ իր խոջա պարոններից «յինք ամ առէլ ԺԸ (18) ճոթ նեղայքնար լօնտրինայ՝ ալ և կանանչ, ջամէն էճԻԶ (726) գազ և Զ (6) գրէ»։

Առ այսօր Իրանի տարբեր շրջաններում գործածության մեջ են գտնվում գազ կոչվող տարբեր երկարության (63,5-ից մինչև 112 սանտիմետր)[80] չափեր։ Պետք չէ տարակուսել, որ շատ ավելի մեծ թվով ու իրարից տարբեր գազեր կային միջնադարյան Իրանում։ Բարեբախտաբար, Հաշվետումարի մի այլ գրանցումից տեղեկանում ենք, որ Հովհաննեսի կողմից Հնդկաստան տարվելիք մահուդը չափված է եղել շաhի գազ կոչվող չափով։ Այդ գազը, որ կիրառվում էր Իրանում նաև մի կես դար առաջ՝ որպես բրդյա կտորեղենի չափման միավոր, 101,6 սմ երկարության չափ էր[81]։ Նորագույն աղբյուրներից քաղված այս տվյալը ստուգվում է Կոստանդ Ջուղայեցու և Ղուկաս Վանանդեցու կարևոր վկայություններով. առաջինը հայտնում է, որ «Ճ (100) գազ շահին ՃՇ (150) հալապի է», իսկ երկրորդը նույն տեղեկությունը գրանցում է մի փոքր այլ ձևով. «Շահի գազն 1 հալապի կէս է»։

Հալեպի գազի երկարությունն ըստ Ֆ. Գուտերի 67,733 սանտիմետր է[82], ուստի և մեկուկես հալեպի գազը, ճիշտ ու ճիշտ լինում է 101,6 սմ (1,5× 67,733=101,6 սմ)։

Սպահանից Հնդկաստան տարած անգլիական մահուդը Հովհաննեսը վաճառել է շահիջահանի կամ լաշկարի կոչվող գազով, որը տարբերվում էր շահի կամ աջամստանի գազից։ Երկարության այդ չափերի փոխհարաբերությունը, ուստի և շահիջահանի գազի երկարությունը պարզվում է Հաշվետումարի արժեքավոր մի գրառումից, որ բերում ենք ստորև. «Ելաւ (Սպահանից բերած մահուդի) ջամէն ճէԻԶ (726) գազ Զ (6) գրէ։ Բ (2) զալամ ծախսին (մահուդը Հնդկաստանում վաճառել է երկու նվագով, խոսքն այդ մասին է) գազին ջամէն այ... էճՀԴ (774,25) գազ։ Ջամիցն ավէլի այ եկէլ լաշկարի գազումն, որ է շայիջահանի՝ խէ (47) գազ և ԺԴ (14) գրէ, որ ելաւ Ճ-ին Զ (100-ին 6)»։

Արդ, եթե 100 շահի գազը հավասար է 106 շահիջահանի կամ լաշկարի գազի, ապա 1 շահիջահանի գազը 95,85 սմ երկարություն է ունեցել։ Այսպիսով, շահի գազի երկարությունն է 101,6 սմ, Շահիջահանի կամ լաշկարի գազի երկարությունը՝ 95,85 սմ, Հալապի գազի երկարությունը՝ 67,73 սմ։ Ամեն մի գազ պարունակում էր 16 գրեհ, ամեն մի գրեհ՝ 2 փայ։

[80] Տե՛ս „Справочник мер", Научно-исследовательский институт министерства торговли Союза ССР, М., 1956.

[81] Տե՛ս Ф. И. Гутер, նշված աշխ., էջ 27։

[82] Տե՛ս նույն տեղում, էջ 28։

Միջնադարում չափ ու կշռի ստույգ միավորներից բացի առևտրի ու տընտեսության այլ բնագավառներում կիրառվում էին նաև երկարության ու տարողության այնպիսի չափեր, որոնք որոշակի կայուն մեծություն չէին արտահայտում։ Գործածության մեջ էին նաև մի շարք տերմիններ, որոնք այս կամ այն ապրանքի զույգով կամ մի այլ թվաքանակով վաճառվելն էին մատնացույց անում։ Այդ կարգի բազմաթիվ տերմիններ է գործածել նաև Հովհաննես Ջուղայեցին։

Կտորեղենի առուծախին վերաբերող գործարքների գրառումներում ամենից շատ հիշատակված է թան բառը։ Հաշվետումարի մի շարք ակնարկներից պարզվում է, որ թանը երկարության չափ չէ, այլ նշանակում է սոսկ մեկ զգեստացու (отрез) կտոր։ Այդպես է, օրինակ, ստորև բերվող հատվածներում. «Ա (1) թան ճարմակ շալն գրել էր, թէ կապայ շինես, ես եմ վեռէլ փուշակի (իմա՝ հագուստի) խարճէլ», կամ «Ա (1) թան ջաւղի [ջամաւոր շալն]՝ Յովհաննիսին կապայի տվէց»։ Բայց գործվածքեղենի մոտավորապես ի՞նչ երկարության կտորն էր համարվում մեկ զգեստացու։ Մի քանի իրար հաջորդող ուշագրավ գրանցումների մեջ Հովհաննեսը տվյալներ է հաղորդել իր կողմից գնված մեկական թան կուճին և մախմուր կոչվող գործվածքների մասին. ըստ որում մի դեպքում մեկ թանը 15 քաղամ (երկարության չափ) է եղել, իսկ մյուս դեպքում՝ 17, 18, 19 և, նույնիսկ, 20,5 քաղամ։ Պարզ է, ուրեմն, որ թանի երկարությունը կապված է եղել կտորի գործածության նպատակի, գույնի և լայնքի ու տեսակի հետ։ Կարծում ենք, այնուամենայնիվ, որ միջին հաշվով թան է կոչվել շուրջ 4,5—5 մետր երկարություն ունեցող կտորը. այդ ենթադրության համար հիմք է ծառայում հետևյալ գրանցումը. «Փոքր թիվն Հ (70), դամայ ԺԸ (18)-էն մինչև Ի (20)-ըն առի լվացած ճարմակ գազի, ջամէն ՉՃ (600) գազ։ Էս ջամէս Դ (4) գազ ԺԴ (14) գրէն՝ Ա (1) թան՝ լաին շինէլ տվի»։

Այս գործարքը կատարված է Հնդկաստանում, ուստի հիշատակված գազը շահիջահանի կոչված գազն է (95, 85 սմ). ըստ այդմ լաին կոչվող հագուստի ինչ-որ տեսակի համար գործ է ածվել 4,6 մետրից քիչ ավելի կտոր։ Կա տվյալ նաև 5 մետրանոց թանի մասին։

Հովհաննեսի առևտրական գործունեության մեջ կարևոր տեղ է գրավում լեղակի, մուշկի ու թեյի վաճառքը։

Լեղակի առուծախը կատարվել է շարմ կոչվող չափով։ Արդ, ի՞նչ տարողություն ուներ այդ չափը։ Մեր վաճառականն ինքը հայտնում է, որ «մեր լեղականին, որ խուռջայ՝ Դ (4) զիտր ենք բռնէլ Ա (1) շարմն». եթե այստեղ հիշատակված լիտրն աքպարի լիտրը համարենք, ապա Հովհաննեսի գնած 92 շարմ լեղակը պետք է կազմեր շուրջ 10 տոննա, որ անհավատալի է։ Ուստի համոզված ենք, որ այս դեպքում ևս նա աջամստանա կոչվող լիտրով է իր հաշիվը կատարել, որ, ինչպես գիտենք, կշռորդ է 5,888 կիլոգրամի։ Ըստ այդմ նա գնել է ընդամենը 2166 կգ (5,888×4×92) լեղակ, որից իրեն է պատկանել 376 կիլոգրամը (16 շարմ)։

Թեյի, նաև թամբաքուի առուծախի հաշիվները Հաշվետումարի մեջ գրանցված են բաղչայ (կապ, փոքրիկ կապոց) չափական միավորով։ Բաղչայի մոտավոր կշիռը պարզվում է հետևյալ գրանցումից. «Յինք ամ առէլ ԻԲ (22) բաղչայ պուճայ [չայ], ֆի (այսինքն՝ յուրաքանչյուրը)՝ ԺԲ II (12,5) մըսխալօվն. Ժ (10) բաղչայ տածան [չայ] ես ԺԲ (12) մըսխալօվն եմ ծա-

խէլ»։ Ուրեմն, մեկ բաղչան կարող էր պարունակել 12—12,5 մսխալ, այսինքն՝ 45—47 գրամ թեյ։ Թեյի առուծախին վերաբերող ուրիշ տվյալներ գալիս են հաստատելու այս եզրակացությունը։

Լհասայից, ինչպես գիտենք, Հովհաննեսը դուրս է բերել 42,155 կգ մուշկ։ Մուշկի գնումները կատարվում էին նաֆայով (նաֆայ էր կոչվում մշկայծյամի բուրավետ պորտը). Հաշվետումարի բազմաթիվ վկայություններից պարզվում է, որ մեկ նաֆայ մուշկը կշռել է շուրջ 50—60 գր։

Գործածության մեջ են եղել նաև այլ տարողությամբ պարկեր և. հատով վաճառվող ապրանքների համար քանակը ցույց տվող միավորներ։ Անկարող լինելով դրանց բոլորին մեկ առ մեկ անդրադառնալ՝ ստորև տալիս ենք Հաշվետումարում օգտագործված երկարության չափերի և այս կարգի չափ ու կշռի միավորների այբբենական ցանկը.

Բաղչայ—փոքրիկ կապոց՝ 25—50 գր թեյի տարողությամբ
Գազ շահի—101,5 սմ
Գազ շահիջահանի կամ լաշկարի—95,85 սմ
Գազ հալապի—67,73 սմ
Դօլնայ—շա՞ր
Թան—մեկ զգեստացու կտոր, շուրջ 4,5—5 մետր երկարությամբ
Թօփ—գործվածքեղենի փաթեթ, մոտավոր հաշիվներով շուրջ 40 գազ
Խակ—հակ (մեկ հակի մեջ տեղադրում էին 124—162 թան կտորեղեն)
Խամ—պարկ, շուրջ 27,5 կգ ապրանք տարողությամբ
Կանայ—երկարության չափ, 88—93 սմ
Զեռն—երկարության չափ
Նաֆայ—մշկայծյամի պորտը, օգտագործված որպես 50—60 գր մուշկի կշռաչափ
Զարմ—պարկ, շուրջ 23 կգ լեղակի տարողությամբ
Ջօռ—զույգ կամ փունջ
Սանդուղ—արկղիկ, սնդուկ
Քալ—պարկ, 20—24 քալը՝ մեկ բեռ
Քաղամ—երկարության չափ
Քիսակ—քսակ
Քուռի—քսան հատ իր։

15

Հաշվետումարն արժեքավոր աղբյուր է նաև հաշվապահության և տնտեսագիտության պատմության համար։

Մեր նպատակից դուրս և կարողությունից վեր ենք համարում Հովհաննես Ջուղայեցու կիրառած հաշվապահական սիստեմի գիտական բնութագրումը։ Նկատի ունենալով այն հանգամանքը, որ նրա կիրառած հաշվապահության ձևը, արմատավորված լինելով ջուղահայ վաճառականների միջավայրում, լայն տարածում է գտել հայկական բազմաթիվ գաղթավայրերում, կարծում ենք, որ մեր տնտեսագետներն առաջիկայում մասնագիտական ուսումնասիրության կենթարկեն և կտան այդ սիստեմի գիտական համապարփակ բնութագիրը։ Ստորև կփորձենք միայն ընդհանուր գծերով ծանոթանալ Հաշվետումարում եղած փաստական նյութին և մեր ուժերի սահմաններում տալ Հովհաննես Տեր-Դավթյանի հաշվապահական սկզբունքների համառոտ նկարագիրը։

Առավել դյուրին կլիներ պարզել Հովհաննես Ջուղայեցու և առհասարակ XVII—XIX դդ. հայ վաճառականության կիրառած հաշվապահական սիստեմի էությունը, եթե մեր ձեռքի տակ լիներին նույն ժամանակներին վերաբերող պարսիկ, արաբ, հնդիկ և արևելյան այլ աղգությունների վաճառականների նման հաշվապահական մատյաններ։ Յավոք, սակայն, ցարդ այդ կարգի մատյաններ կամ դեռևս չեն հայտնաբերված և կամ գիտական հետաքրքրության առարկա չեն հանդիսացել. հրապարակի վրա չկան բնագրերի հրատարակություններ կամ դրանց վերաբերյալ թեկուզև համառոտ ուսումնասիրություններ։ Գիտական շրջանակներին որոշ չափով ծանոթ են միայն պետական հարկային-ֆինանսական դրասենյակներում գրառված, պետական բյուջեի, բնակչությունից գանձվող հարկերի և դրանց գումարների առանձին հարկատու համայնքների միջև բաշխման կամ զինվորականությանն ու պետական պաշտոնեությանը տրվող ռոճիկների նշանակմանն ու վճարմանը վերաբերող հաշվապահական մատյաններ և դրանցից կատարված ընդարձակ կամ համառոտ քաղվածքներ[83], որոնք իրենց բնույթով արմատապես տարբերվում են առևտրական հաշվապահությունից։ Նկատվում է միայն պարսկերեն և արաբերեն տերմինների նմանություն։

Առևտրահաշվապահական տերմինոլոգիան Հովհաննես Ջուղայեցու մոտ ընդհանրապես արաբապարսկական է, սակայն հաշվապահական սիստեմի հիմքում՝ հիմնական և օժանդակ, զուգահեռ մատյաններում գրանցվող և «իտալական» կոչվող «կրկնակի» (double) հաշվապահության սկզբունքներն են։ Ներկա Հաշվետումարը նա անվանում է Ռուզնամայ (պրսկ. ruznāma), որ համապատասխանում է կրկնակի հաշվապահության «օրհաշվի մատյանին» (journal), և որտեղ օրվա ընթացքում կատարված առևտրական բոլոր գործառնությունները գրանցված են զուգահեռ մուտքի և ելքի (պրսկ. ամատ, բռաֆտ) սյունակներում, որպես պարտք և պահանջ (debet, credit)։

«Ռուզնամայում» Հովհաննես Ջուղայեցին հաճախ վկայակոչում է նաև իր «մայր հաշվի» մատյանը, որը նա անվանում է «կարմիր շիլաւոր» (կարմիր կտորով կազմած) «դբֆտար» կամ «քաթա»։ «Քաթա» (արբ. Katt—հաշվետումար) են անվանված նաև առանձին անհատների կամ ապրանքների հաշիվներն ընդգրկող մեծ ու փոքր մատյաններն ու հաշվեթերթիկները։ Օրհաշվում Հովհաննես Ջուղայեցին հաճախ հաշվապահական առանձին հոդվածների (դաֆա, բաթ, զալամ) վերջում կամ մեկնաբանության մեջ նշում է. «հաղեղաթն (իրողությունը) կարմիր շիլաւոր դբֆտարումն գրած այ» կամ «իմ կարմիր շիլաւոր քաթումն այ»։ Խոսքն այստեղ անշուշտ վերաբերում է «մայր հաշվին»։ Մյուս օժանդակ մատյանները նա անվանում է իր հետ առևտրական գործարքի մեջ գտնվող անձնավորությունների, իսկ ապրանքներինը՝ նույն ապրանքի անունով։ Այսպես, օրինակ, Մելիշանի հաշիվը գրանցելիս նշում է. «Ամատբռաֆտն ուր քաթումն կգրեմ» և անմիջապես ավելացնում է, որ այն արձանագրում է նաև «կարմիր շիլաւոր դբֆտարում»։

Առանձին ապրանքների «քաթաներն» արդեն մեր ձեռքի տակ են և լիովին համընկնում են Ռուզնամայում կատարված գրանցումներին։ Դրանք մեծ

[83] *Walter Hinz*, Die Resalä-ye Falakiyya des Abdallah ibn-Mohammad ibn-Kiy al-Māzandarāni, Wiesbaden, 1952; „Tadhkirat al-Mulūk", A manuel of Safarid administration, by V. Minorsky, London, 1943; *А. Д. Папазян*, Аграрные отношения в Восточной Армении в XVI—XVII веках, Ереван, 1972, стр. 215—225.

մասամբ անվանվում են «քաթա» կամ պարզապես «խրսէպ» (հաշիվ), իսկ եթե տեղից տեղ ուղարկված ապրանքների հաշիվներ են, կոչվում են նաև «բարնամայ» (պրսկ. bārnāma—բեռնագիր)։

Այս զուգահեռ կամ օժանդակ հաշիվները մեծ մասամբ համանման վերնագրեր ունեն։ Այսպես, լեղակի հաշիվը վերնագրված է. «Տէր Աստուած խէրրն և բարին առաջնորդեսցէ, ամէն։ Ներքոյ գրեալս իմ ԺԶ (16) չարմ լեղակին քաթէն այ» կամ «Ներքոյ գրեալս Բանարիսին առած Զ (6) թան չիրին խրսէպն այ» և կամ «Ներքոյ գրեալս մին բանդրուն բարնամէն այ, որ Ծ (50) խակ խէրապատուն խետ բռավանայ արարի (ուղարկեցի) Սուրաթն» և այլն։

Վերոհիշյալ մատյաններից բացի, Հովհաննեսն իր մոտ միշտ ունեցել է նաև նշումների տետր կամ հուշատետր, որը նա անվանում է «եայդաշտ» (պրսկ. yāddāst—հուշատետր), որտեղ օրվա ընթացքում կատարված նշումները օրվա վերջում հաշվապահական հաշվումներով ձևակերպում և գրանցում էր օրհաշվի ելք ու մուտքի սյունակներում և համապատասխանաբար նաև մայր հաշվում ու օժանդակ հաշիվներում կամ մատյաններում։

Մեր ձեռքի տակ եղած մատյաններն ու հաշվարկները թույլ են տալիս ասելու, որ Հովհաննես Ջուղայեցին հնարավորություն է ունեցել ցանկացած ժամանակ հաշվեկշիռ հանել և որոշել իր գործի, զրամագլխի (սարմիա) և շահի կամ վնասի պատկերը, որն էլ հենց առևտրաարդյունաբերական հաստատություններում տարվող հաշվապահության հիմնական խնդիրն է եղել։ Ելք ու մուտքի սյունակների հաշվեկշիռները (թարայդզի) կատարված են կոտորակային ճշգրտությամբ, մնացորդը (բազի—saldo) կամ ավելի ճիշտ շահը (բարաքաթ) հաշվեկշռից բերելով և վերստին գումարելով, կամ «ջամա բռնելով» մուտքի սյունակում։ Հաշվեկշիռը ընդհանրապես նա անվանում է «թարայզզի» (պրսկ. tarāzū—կշիռ, կշեռք), մեկ տեղ միայն գործ է ածված «բալնես» (իտ. balanse) տերմինը։

Առանձին ուշադրության են արժանի, բնագրում հանդիպող բազմաթիվ ֆինանսահաշվապահական տերմինները, ինչպես «տալիք և թալապ» (պարտք և պահանջ), «իֆտըզայ և թիք» կամ «սարանջամ» (սկիզբ և ավարտ կամ սկզբնահաշիվ ու վերջնահաշիվ), «զարար և թլաֆի» (վնաս և հատուցում), «նաղտ և նըսիայ» (կանխիկ և ապառիկ), «քասր և ֆազիլ» (պակասորդ և ավելցուկ), «թանձիլ և թահթիմա» (զեղչ և հավելում), «զալատ և սէհի» (սխալ և ճիշտ) «ասլ և մուզաթ» (մայր գումար և տոկոս) և այլն, որոնց ուսումնասիրությունը մեծ չափով կարող է նպաստել հաշվապահական սիստեմի հիմնական հարցերի լուսաբանմանը։

Ամենօրյա գրառումները և նրանց հիման վրա հետագայում ստեղծվող ռուզնամաներն ու քաթաները ի վերջո կարգի բերվելով և մաքրագրվելով, ներկայացվում էին այն խոջաների դատին, որոնց զրամագլխով առևտրի ասպարեզ էր մտել տվյալ վաճառականը։ Դրանցից մեկն էր, օրինակ, Ստեփաննոս Հայրապետյանը, որ Սպահանում 1719 թ. Շաֆրազ, Էմնիազ և Գրիգոր աղաներից ստացել էր 600 թուման և 10 տարի թափառելով երկրից երկիր (Կարին, Լիվոռնո, Իզմիր, Բաղդադ և այլն), վերադարձել էր Սուրաթ և հանձնել իր աղաներին շահված ողջ գումարը՝ 36804 թուման. ու, փակելով իր հաշիվը, ստացել էր իրեն հասանելիք շահի բաժինը՝ նախապես պայմանավորված 21%-ի չափով[84]։ Ասում ենք փակել էր իր հաշիվը, նկատի ունենալով,

[84] *Տե՛ս* Հ. Տեր-Հովհաննիսյանց, նշված աշխ., Ա, էջ 161։

որ նա, անտարակույս, ներկայացրել էր իր աղաներին Հովհաննեսի հաշվեմատյանների սկզբունքով կազմված մատյանները, որոնց մեջ արտացոլված են եղել տասնամյա իր դեգերումների ընթացքում կատարած առևտրական ու վարկային բոլոր գործարքները։

Բիլմանի, պրսկ. bilmānī—Բիլման քաղաքում պատրաստվող սուր։ Ըստ որոշ ապբյուրների այդ անունով քաղաք եղել է Եմենում, իսկ Բելազորին այն հիշատակում է Հնդկաստանի կողմերում։ «բ խաստ ճօվիսայ առի ... բիլմանի ղլաֆտի խմար=երկու հատ, ամուր կտոր գնեցի բիլմանի (սրի) պատյանի համար» (265)։

Բիխ բանավշայ, պրսկ. bikh-banafsha—մանուշակի արմատ։ Բիխ—արմատ և բանաֆշա—մանուշակ բառերից։

Բիհասիլ—տե՛ս Հասիլ։

Բիհարի—Հնդկաստանի Բիհար նահանգում արտադրվող բամբակե գործվածք։ Բիհարի խասայ—ընտիր բիհարի։

Բիչանայ, հնդ. bičāna—անկողին։ «Փաթու արեկ, որ բիչանի բան գըգայ=հատ կտոր բերեց, որ կարելի է անկողնի համար օգտագործել» (155)։

Բիջուքամ—տե՛ս Ջուքամ։

Բիտմուշկ, պրսկ. bid-mūshk—հոտավետ ուռենու կամ եղիպտական ուռենու ծաղիկ, որից օծանելիք էին պատրաստում։

Բլօջ—բելուշ։ «Լեղակին քրէին ջահտան տվել ամ բլօջանուն=լեղակի վարձի դիմաց տվել եմ բելուշներին» (99)։ Խոսքը բելուշ առևտրականների համայնքի մասին է։ Այսպես նա հիշատակում է նաև այլ համայնքներ. «քըշմըրցիք», «ջըհտանին» և այլն։

Բլօր, պրսկ. bilūr—բյուրեղ։ «ժբ ճոթ քանի բլօր առի=18 կտոր հանքային բյուրեղ գնեցի» (238)։

Բուդնայդար, պրսկ. būdānehdār—կաքավավոր։ «Բուդանե—չիլ կաքավ և դար—ունեցող բառերից։ «Մին թան բուդնայդար, ճարմակ չիթ առի փուշակի խմար=մեկ թան կաքավներով զարդարված սպիտակ չիթ գնեցի հագուստի համար» (260)։

Բուզղունճ, պրսկ. būzghūndj—կաշի դարաղելու նյութ, որ գոյանում է պիստակի ծառից։

Բուր, պրսկ. būt—կուռք, կամ որևէ հմայական իր։ «Բութն դրեց ծոցումն, արեկ ջադվօվ պկլամուին շիժտայ արար=կուռքը (կամ հմայական իրը) դրեց իր ծոցը, եկավ պելամուին հմայելով՝ խաղում տարավ» (232)։

Բուրիայ—«բութ» կամ «բնուր» կոչվում են Տիբեթի բնակիչները։ Հովհաննեսի մոտ, ինչպես նաև կաթոլիկ քարոզիչների ուղեգրություններում Բութանտ (Bhoutanta) է կոչվում ներկայիս Տիբեթը, տեղի լեզուն ևս Հովհաննեսն անվանում է բուրևար։ Հաշվետումարում Բութիայ անվանվում ինչ-որ տեղացի մարդիկ, որոնք վարձվում էին որոշակի գործի համար։ «Սլինկեն ուր խետ եկած բութիուն տօլուղի խըմար ա լանկ զ=Սլինկից իր հետ եկած բութիայի ոռճիկի համար 1 լանկ և 6 մսխալ արծաթ» (206)։

Բուրևար—տե՛ս Բութիայ։

Բուղաղար, թրք. buḳagh—կապ բառից, որ նշանակում է կապավոր, կապերով կամ հանգույցով։ «Մին բուղայդար ջօռս տվի մին բաղչայ չայ յինք առի=կապերով մարջանի փունջս տվի, մի բողչայ թեյ վերցրի» (323)։

Բուչաղ, թրք. burčāḳ—վէգ, ճան։ Բնագրում մեկ տեղ է հանդիպում։ «Բուռչաղի խմար արծաթ տվի դ» (207)։

Բուրէ, ծագումն անհայտ բառ—բնագրից կարելի է ենթադրել, որ թաղիքանման ինչ որ կտոր է։ «զ բուրէ առի, որ է քէհի (թաղիքի) ֆութայ» (195, 198)։ Այլ առիթով ասված է,

=3 հատ քար գնեցի, որ է բուրդի» (340)։ Հավանաբար չեչոտ քար, որ հին ժամանակ բաղնիքում օգտագործում էին կրունկները մաքրելու համար։

Բրաքար—տե՛ս Բարաքար։

Բոլավայ, հնդ. balavān—ծանր աշխատանք կատարող, ծանր բեռներ փոխադրող։ «Էկրոյ բ բոլավայ ի վեռել, մինչև Շքուրապատ կարաւանին խասայ, էստոնց մղուրի (վարձ) տվի» (138), «բ բոլավայ և մին դաւսատ բռնեցի» (144)։

Բողչայ, թրք. boḳča—կապոց։

Բողչայբանտ, թրք.-պրսկ. boḳča-band—կապոցը կապելու պարան։

Բոնիա, հնդ. bohnī—նվեր, առաջին վաճառքից ստացված գումար։ «Լիֆանանուն բոնիա» (231)։

Բորայ, տիր. bor-ra—պարկ, ջվալ, բնագրում ևս այդպես է բացատրված։ «ի բորայ առի, որ է ջվալ» (271), «լզ թան գունի առի, իբ բորայ կարել տվի=36 թան վուշն կտոր գնեցի, 32 պարկ կարել տվի» (261)։

Գադի, հնդկ. gādī—սայլ։ «Գադինուն խետ ըռավանայ արարինք Սուրաթն=սայլերով ուղարկեցինք Սուրաթ» (306)։

Գադիվան, հնդ. gadibān—սայլապան։ «Ճանապխի խմար աղբաթի խարճի էր աղարկել թէ՛ գադիվանի խմար թէ՛ դաղաթի=ճանապարհի համար ծախսի փող էր ուղարկել, թե՛ սայլապանի և թե՛ մաքսի համար» (90)։

Գազ, պրսկ. gaz—երկարության չափ։ Ղ. Վանանդեցու և Կ. Ջուղայեցու տվյալներով շահի կամ Աջամստանա գաղը 1,016 մետր է եղել, Շաիջահանի, Լաշկարի կամ Հնդկաստանի գաղը՝ 0,958 մետր, Հալապի գաղը՝ 0,677 մետր։ Ամեն մի գաղը պարունակում էր 16 գրեհ, ամեն մի գրեհը՝ 2 փայ։

Գազայ, հվնբր. պրսկ. gaz կամ հնդ. gazī—շապիկացու կտոր։ «Մին թան բարայ գազայ առի, լաին շինելէ խմար=մեկ թան գազա (կտոր) գնեցի շապիկ պատրաստելու համար» (260)։

Գազգաթ, հնդկ. ghās-ghaṭ—նավահանգստային մաքսատներում գանձվող տուրք կամ մաքս։ «Զափուբրումն գազգաթեն ավելնորթի ֆարդ ին ուղում—մաքսատանը գազգաթի հաշվից ավելորդ ապրանքի համար տարբերություն էին պահանջում» (76)։

Գազի, պրսկ. gazī—շղարշանման բարակ կտոր։

Գաթէ, հնդ. hātī—հասարակ սպիտակ կտոր, որ օգտագործվել է որպես երեսի ծածկոց և որպես ձեռնակապ կամ ներքնաշոր։ «զ թան ճարմակ գաթէ» (159)։

Գաթուայ—ըստ Հաշվետոմարի՝ դրամի տեսակ։ «ճեծ շահ առի, գաթուայ էր» (245)։ «Խերապատ Մուրատխանին ձեռն գաթուայ ըռուփի այ շինել=Խերաբադում Մուրադխանի միջոցով դրամը վերածել է գաթուայ ռուփիի» (84)։

Գաթուրի մսխալ—տե՛ս Մսխալ։

Գաթր, հվնբր. թրք. ḳäter—ջորի, գրաստ։ «զ գաթրին և զտեր տեղ քրէ տվի=երեք գրաստին հինգ լիտրի համար փոխադրավարձ վճարեցի» (101)։

Գամպլ, տիր. gam-dre—փոխադարձ պարտավորագիր։ «Մեր մին զմինու գամպլ այ, որ է մուչալկայ գիր տալէն=մենք իրար հետ պայմանավորված ենք, այսինքն իրար պարտավորագիր ենք տվել» (233)։

Գանորա, հնդ. gahorā—ձի, գրաստ։ «Մինչև Պատրինկայ դ գահորի մղուրի և խօրակի տվի=մինչև Պատրինկա 4 գրաստի վարձ և ուտելիք տվի» (144)։

Գայի բազարի—տե՛ս Թիապ։

Գանջ—տե՛ս Գանճ։

Գանճ, հնդ.-պրսկ. gandj—ապրանքներ փոխադրող առևտրական տուն, գրասենյակ։ «Ղալիլ ապրանք ին աղարկել գանճով=մի քիչ ապրանք էին ուղարկել առևտրական տան միջոցով» (172)։

Գառ, հվնբր. արաբ. karra—մեկ անգամ, առաջին։ «Գառ, գօումն, սէումն, չահարումն—առաջին անգամին, երկրորդին, երրորդին, չորրորդին» (317—318)։

Գարդ, պրսկ. gard—շահ, գարդ անել=շահը հաշվել, պարզել շահի տոկոսը։ [Մուդաթի] գամէն գ I Ξ, իէ խակին վերայ գառթ արարի ֆի=ընկավ=շահի տոկոսի գումարը 3,4375, ջամէն գ I Ξ, իէ խակին վերայ գառթ արարի ֆի=ընկավ=շահի տոկոսի գումարը 0,1250 ընկավ» (301)։ 27-ի վրա հաշվարկեցի (այս դեպքում՝ բաժանեցի), յուրաքանչյուրին 0,1250 ընկավ» (301)։

Գարդան, պրսկ. gardan—վիզ։ «Նխրուն գարդանն կոտրվի=հարկի կամ մաքսի քանակը (տոկոսը) որոշողի վիզը կոտրվի» (301)։

Գեադա, պրսկ. gadā—աղքատ, մուրացկան։ «Գեադէքանց սլամաթի գնաց=մուրացկաններին, կամ չքավորներին ողջադրամ է գնացել» (73)։

Գերմակ, հայ. բրբռ.—մանր, փոքր։ «Գերմականին ամ տվել, մէձ-մէձն ծախել ամ=մանրերն եմ տվել (նվիրել), խոշորները՝ վաճառել եմ» (147)։

Գէլբու, տիր. gelbu (rgval-bu)—արքայական, իշխանական, գործ է ածված որպես քաղաքի տեսակ։ Տե՛ս Քաղաք։

Գէրու, թրք. gerī—յետև, յետ, գերու գալ=ետ դալ, վերադառնալ։ «Մայ բաղի բ թանկն մնաց ոտնումն, որ գէրու գոյ՝ տայ=մնացյալ երկու թանկը մնաց իր մոտ, որ վերադառնայ՝ տայ» (160)։

Գրդոլու, պրսկ. gerd—«կլոր» բառից, որ նշանակում է հղկված, կլորացված. հվնբր. կլոր մակերեսով հղկված քարի մասին է խոսքը։ «ա պզտիկ սանդուղ ըռիղայ գոդլու կեր ինձ խետ ամանաթ=մի փոքրիկ արկղ մանր գրոդլու կար ինձ մոտ պահ տրված» (106)։

Գլուլա, պրսկ. glūla—գնդակ։ «Բարբթի, գլուլի=վառոդի և գնդակի» (138)։

Գոլնար, պրսկ. golnār—նռան ծաղիկ, նռան ծաղկի գույն։

Գուլ, պրսկ. gol—վարդ, ծաղիկ։ «Գուլ քարբար=ծաղկավոր (զարդարուն) սաթ» (316)։

Գուլաղ, պրսկ. golāb—վարդաջուր։ «Գուլաղի շիշայ=վարդաջրի սրվակ» (264)։

Գուլբանդի, պրսկ. golbandī—ծաղկազարդ, գույնզգույն հագուստ, որ Հնդկաստանում կոչվել է բանդհնու։ «Լասու բերած խ դումպայ ճարմակ թիրմեն, որ տեղը գուլբանդի ամ առել տվել=Լհասայից բերած 40 դումպա սպիտակ թիրման (շալը), որ այստեղ գուլբանդի եմ անել տվել» (240)։

Գումաշտայ, պրսկ. gomāshta—գործավոր, գործակատար։ «Մադոին գումաշտայ Նանտին խետ սօվդայ առում տվի դII սուկամ=Մադոի գործակատար՝ Նանտի հետ առևտրում՝ տվի 4,5 սուկամ [ոսկի]» (209)։

Գունախկարի, պրսկ. gonāhkārī—հանցանքի կամ խախտումի համար գանձվող տուգանք, պրսկ. «գոնահքար»—հանցագործ բառից։ «գ զաթ գունախկարի ունեն, էս միանէն այ=3 ատիճանի տուգանք ունեն, սա միջին չափն է» (233)։

Գունայ, պրսկ. gūna—տեսակ։ «էն գունայ ապրանքս տանէն ոչ չափուբրէն=Այն տեսակ ապրանքս չտանեն մաքսատուն» (283)։

Գունի, պրսկ. gūnī—վուշյա կտոր, որից պարկեր են պատրաստում։ «լզ թան գունի առի, իբ բորայ կարել տվի= 36 թան գունի գնեցի, 22 պարկ կարել տվի» (261)։ Տե՛ս նաև Գոնի։

Գուշի բազարի—ընթերցումը կասկածելի է, հանդիպում է մեկ անգամ։ «Թիապումն խարճ գնաց՝ խանին, շաբանդարին, գուշի քազարի (՞)»։ Այս նախադասության մեջ թվում է, թե պաշտոնյայի իմաստ ունի (73)։

Գուռու, հնդ. gurū—ուսուցիչ, դաստիարակ, խորհրդատու։ Դեզիդերիի վկայությամբ յուրաքանչյուր ռաջա ուներ իր օրենսգետ խորհրդատուն (Դեզ. 314)։ «Ըռաջին ու պայդիոն, որ նորայ գուռուն այ» (240)։ Կոչվել են նաև՝ ըռաջ գուռու (241)։

Գուրմու—ոսկու քաշի միավոր, թոլայի կեսը։ Հաշվետոմարի տվյալներով 6,07 գր.։

Գոդլու—տե՛ս Գրոդլու։

Գրէ, պրսկ. greh—երկարության չափի՝ գաղի $^1/_{16}$ մասը։

Գրոփիչ, պրսկ. gerd-pič—ոլորված, խճճված, կամ (gerd)—շուրջը, եզրերը (pič)-ոլորված։ «գ թան բարդար կայ, գրոփիչ քուռայ=3 թան բարակ կտավ կա, ոլորված, անորակ (կամ եզրերը անորակ)» (305)։

Գրօփ, ոսկու տեսակ, հվնբր.՝ ձույլ։ «Պարնաց տված գրօփ սարբըմօր ոսկին= գործատիրոջ տված կնքված գրոփ ոսկին» (74)։ «Յովհաննէսն բերած գրօփ ոսկին սարբըմօր յիս խասավ=Հովհաննեսի բերած գրոփ ոսկին կնքված ինձ հասավ» (74)։ «Ըսպահան, սահապ պարնիքն ամանաթ տվին ինձ՝ Յովանիսիս է գրօփ սարբըմօր ոսկի, թէ տանես Սուրաթումն տաս Բաղդասարի որդի Նազարէթին» (69)։

Գոլանծան—տե՛ս Գոլանծան։

Գոլնար—տե՛ս Գոլնար։

Գոլանծան, ծագումն անհայտ բառ, ըստ բնագրի, համրիչի տեսակ։ «Գոլանծան թասպի (համրիչ) էր ծախել» (206)։ «դ գոլանծան թասպու գին» (207)։

Գոն, հնդ. gon—պարկ, տոպրակ, կամ կտոր, որից պարկեր էին կարում։ «Սրայ խըմար դ ջվալի գոնու գին տվի=այս բանի համար 4 պարկի գոնու գին եմ վճարել» (271)։ «Գոնի կարողի մղուրի=պարկ կարողի վարձ» (136)։ «Գոնու և չվանի բարբանտու=պարկի, չվանի և բեռները կապելու համար» (292)։ Տե՛ս նաև Գունի։

Գորայ, թրք. göra—համաձայն, համեմատ, ըստ։ «էն գորայ բաթայ ամ գրում=ըստ այնմ տոկոս եմ գրում» (257)։ «Գրածին գորայ ամատ ելաւ=ըստ գրածի (գրածի չափով) մուտք եղավ» (265)։

Գօքտայ, թեյի տեսակ, հվնբր. թրք. «գոգչայ»— gōg-čay—«կապույտ» կամ «կանաչ» բառից։ «Նեկղոսին գոքտայ չայ կայ=Նիկողոսի հաշվում կանաչ (՞) թեյ կա» (189)։

Դաբ—տե՛ս Դապ։

Դաբայ, պրսկ. dabba—կաշվե պարկ։ «Ե դաբայ աղբաթի խըմար առի, դառտակ վեռի=5 կաշվե պարկ հետագայի համար գնեցի և դատարկ վերցրի [հետս]» (176)։

Դաբայ աՆել, թրք. dabba etmak—խոստումից հրաժարվել, նախապես կայացած համաձայնությունից ետ կանգնել։ «Դաբայ արարին, թէ թանկ անք առել=խոստումից ետ կանգնեցին, թե թանկ ենք գնել» (168)։

Դադնի, պրսկ. dādanī—տալիք, տրվելիք, օգտագործված է դույն տալու, ներկելու իմաստով։ Տե՛ս նաև Ալիդադնի, Ջարդուդադնի։ Կա տիր. dokni (nıdog-ni) բառը, որ նշանակում է ներկված, գունավոր, որը բնագրում նույնիմաստ է։

Դաթայ, հվնբր. պրսկ. dah-tā—տաս ծալք. երբ կտորը լվանում և ծալում էին։ «Դաթայ արարած խաստ և բարակ մամուրխանի=տաս տակ ծալած հաստ և բարակ մամուրխանի գործվածք» (310)։

Դալալ, արաբ. dallāl—միջնորդ։

Դալալի, արաբ.-պրսկ. dallālī—միջնորդության վարձ, միջնորդագին։ «Նավին դալալի ամ տվել=նավ նստելու համար միջնորդագին եմ տվել» (72)։

Դալալշագերդ, արաբ.-պրսկ. dallālshāgerd—միջնորդի աշակերտ։ Դալալշագերդի և Նազարէթին նաֆարին գնաց=միջնորդի աշակերտին և Նազարեթի ծառային [նվեր] տրվեց» (75)։ «Ասաց իմ կոնթես դալալշագերտանուն տաս=ասաց իմ հաշվից միջնորդի աշակերտներին տաս» (97)։

Դալաք, թրք. dallak—սափրիչ, վարսավիր։ «Դօբու և դալաքի գնացել այ=լվացարարի և վարսավիրի ծախս է եղել» (243)։

Դախի, թրք. daḥī—այլևս, ապա, հետո։ «Դախի էնպես մնաց=հետո էդպես էլ մնաց» (187)։

Դախիլ, արաբ. dākhil—մուտք, մեջը լինել, վերաբերել։ «Օվդան ժա-ումն, օրն ե-շաբթի, Բանդարաբասուն դախիլ ելանք=օվդան ամսի 11-ին հինգշաբթի օրը մտանք Բանդարաբաս» (71)։ «... որ էս սարմաի դախիլ չունի= ... որ սա դրամագլխի մեջ չէ, դրամագլխին չի վերաբերում» (134)։ «Էստոնք ուրն դախիլ չունէ=սրանք նրան չեն վերաբերում» (84)։

Դախիլի խարճ—մուտքի ծախս։

Դախիլի խարճ—տե՛ս Դախիլ։

Դախիլայ, արաբ.-պրսկ. dākhila—մուտքի իրավունք, արտոնագիր։ «Ացի, որ դախիլայ խանէ, աղարկէ=ասացի, որ մուտքի արտոնություն ստանա, ուղարկի» (75)։ «Դախիլայ այ թայեար ելէլ=մուտքի արտոնություն է ձեռք բերված» (292)։

Դախիլ խազանայ, պրսկ. dākhil-khazāna—դրամարկղ, գանձատուն մուտք արված ապրանք կամ գումար։ «Դախիլխազանու թֆիլդարի զաւզ յինք առի=գանձատան մուտքի վերաբերյալ ստացական վերցրի» (262)։

Դահգազի, պրսկ. dahgazi—տասգազանոց, պրսկ. «դահ» (տաս) և «գազ» բառերից։ «Ե թան բարակ չանթի էլ մին ամ առել՝ դահգազի=5 թան բարակ կտոր էլ մեկ եմ առել՝ տասգազանոց» (290)։

Դաղել, թրք dāgh (այրոց) բառից։ Նշանակում է տաքացնել, այրել, եռացնել. երբ աղնիվ մետաղը շիկացնում են և ապա ծծմբաթթվի լուծույթի մեջ եռացնում, որ սպիտակի։ «Լէվ արծաթ տարայ, զ խետ դաղեցին=լավ արծաթ տարա 3 անգամ եռացրին» (213)։

Դահած—տպած։ Խոսքը դաջելու միջոցով նկարազարդված կտորների մասին է։ «Ե թան դահած փերի առի=5 թան նկարազարդված մետաքսե կտոր առի» (241)։

Դամ—դրամական միավոր Նեպալում։ «Դամն Նէքպալի սքէն այ=դամը Նեպալի դրամն է» (198)։ «Ճոթ դամն մին մանտրմէլի [այ]=119 դամը մեկ մանտրմելի է» (246)։

Դամնի—անծանոթ բառ, թերևս մոմակալ, կամ մոմ վառելու տեղ։ «Սարկաւաքին տվի ը, որ մոմի դամնի շինէ» (105)։

Դան, պրսկ. dan—հատիկ, կուտ, թուչունի կամ գրաստի կեր։ «Ջիան դանի, խոտի գնացել այ=ձիան կերի և խոտի վրա ծախսվել է» (197)։

Դանայ, պրսկ. dāna—հատ։ «Ժը դանայ մինաքար նմայ շիշա= 18 հատ արծնապատ (էմալապատ) կես շշանոց» (344))։ Գործածված է նաև վղնոցի կամ համրիչի հատիկի իմաստով (128—131 և այլն)։

Դանտի, հնդ. dangī—զամբյուղ, հատուկ բեռնակիրների համար, որոնք կոչվում էին դանտիվալե (հնդ. dangī-vālā)։ Հովհաննեսը սովորաբար զամբյուղավոր բեռնակիրներին էլ «դանտի» է ասում։ «Բադդամ մին դանտի բոնեցի մինչև Պատրինկայ» (245)։ Եղել է նաև հատուկ շուկա կամ դրասենյակ, որտեղից բեռնակիրներ են վարձել, որը կոչվել է «դանտու շափութրա» (250)։

Դանտիվալե—տե՛ս Դանտի։

ԴանՆն, անծանոթ բառ, օգտագործված է դապին (պայուսակ) զուգահեռ։ Թերևս ինչ-որ տեսակի տարա, որի մեջ ուտելիք և այլ բեռներ են դրել։ Տե՛ս Դապ և Դապգար։

Դապ, հնդ. dab—կաշե աման կամ պայուսակ։

Դապգար, հնդ. dabgar—կաշվե պայուսակ պատրաստող։ Բնագրից երևում է, որ շաքար, քաղցրեղեն և այլ բաներ է գնել և դրանք կրելու համար պայուսակ է պատրաստել տվել։ «Էստոնց դապի և դանքնի դապգարի մզուրի տվի=սրանց համար պայուսակի ինչ-որ այլ տարայի (՞) և պայուսակ պատրաստողի վարձ տվի» (141)։

Դառ, Ջուղայի բարբառում—դեռ։ «... որ դառ նաղդինեն ծախել չէ=որ դեռ կանխիկ եղածը չի վաճառել» (109)։ «Ես գնամանի խուրջայ, դառ էս խրիտս եկել չէր=ես գնում էի խուրջա, դեռ այս գնումներս տեղ չէր հասել» (81)։

Դառուղա, մնղլ. gārūgha—կարգ պահպանող պաշտոնյա, ոստիկանապետ։

Դառուղակի, մնղլ.-պրսկ. dārūghagī—ոստիկանապետին տրվող տուրք։ «Թէ խանին և թէ դառուղակի խակին ճն դիան=թե խանին և թե դարուղային տրվող տուրք յուրաքանչյուր հակի համար 75 դինար» (71)։

Դասգիրի, պրսկ. dastgirī—ձեռք բռնել, օգնել, օժանդակել։ «Նուրիջանն Մէլիջանին դասգիրի այ առում» (224)։

Դասխաբ—տե՛ս Դաստխաթ։

Դասմա, թրք.-պրսկ. tasma—երիզ, ժապավեն։

Դաստայ, պրսկ. dasta—խուրձ, կապ։ «Զ դաստայ պզտիկ վարաղէն քաղաթ առի=6 կապ փոքր թերթերով թուղթ գնեցի» (274)։

Դաստախաբ—տե՛ս Դաստխաթ։

Դաստախան, պրսկ. dast-khān—սփռոց։

Դաստակ, պրսկ. dastak—երթևեկության արտոնություն։

Դաստաքի, պրսկ. dastakī—երթևեկության արտոնագիր, անցագիր։ «Նավապէն ճանապխի խմար դաստակ խանէ=ճանապարհի համար նավաբից իրավունք ստանա» (237)։ «Ճանապխի խմար, որ դաստաքի ին խանել, խարճ էր գնացել=ճանապարհի համար, որ արտոնագիր էին ձեռք բերել, ծախս էր եղել» (251)։

Դաստէ, պրսկ. dasteh—բռնիչ, կոթ։ «Մին արկաթէ խազան, որ դաստէն Նեկղոսին այ=մի երկաթե ճաշի աման, որի կոթը կամ բռնիչը Նիկողոսինն է» (219)։

Դաստի, պրսկ. dastī—ձեռնավարձ, առձեռն տրվող վարձ։ «... մզուրի և թէ դաստին տվի=վարձը, ինչպես և ձեռնավարձը տվի» (264)։

Դաստխաթ, պրսկ. dast-khatt—ձեռագիր, ձեռաց գիր, ինքնագիր։ «Էսպէս էլ թամասուկումն գրած այ, Նեկղոսին դաստխաթովն, ուր մրհովն մրհած այ=այսպես էլ պարտավորագրում (կամ անդորրագրում) գրված է, Նիկողոսի ձեռագրով, և իր կնիքով էլ կնքված է» (194)։

Դավէ—տե՛ս Դավի։

Դավի, արաբ. da'vī—վեճ, պահանջ, հայց։ «Ծատուրին դավին վերայ աՆիր լանկ ը մըսխալ արծաթ ուրինէ ինձ այ խասել=Ծատուրի վեճի վրա 128 լանկ և 8 մսխալ արծաթ նրանից ինձ է հասել» (187)։

Դարայ, պրսկ. dārā—որևէ ապրանքի աման, արկղ, պարկ, տարա։ «Վազնում վեր արեկ գնկ սէրն ժզ-օվն, ելաւ փոդին ջամէն եռէնկ գնկ սէր, և սէրն դարայ դուս գձեցին, մնացեալ գնկ սէրն ժզ-օվն, ելաւ փոդին ջամէն եռէնկ գնկ սէր, և սէրն դարայ դուս գձեցին, մնացյալ 360 սերը 16-ով հաշվելով, =քաշը եղավ 365 սեր, 5 սերը որպես տարա ղեղչեցին, մնացյալ 360 սերը 16-ով հաշվելով, փոդի գումարը եղավ 5760» (134)։

Դարհասապ, պրսկ. darhesāb—ի հաշիվ, նույն հաշվից։

Դարմիան, պրսկ. darmiān—արանքում, ընթացքում, այդ միջոցին, երկուսի միջև։ «Ճզ սուկամ խամսեր բերի դարմիան ջոկեցին=76 սուկամ խամսեր [ոսկի] բերեցի, այդ միջոցին (այդ ընթացքում) ջոկեցին» (252)։ «Մեր տանտերն դարմիան էր=մեր տանտերը [այս գործի] մեջ էր (միջնորդ էր)» (168)։

Դարնի—քաշի միավոր, շաքուի $^1/_{24}$ մասը։ «Ը դարնի պղինձ առի դեկբարի խմար—8 դարնի

պղինձ գնեցի, կաթսա սարքելու համար» (100) «Մում ամ առել ȝզ չաքու, nr չաքուն իդ դարնի այ=16 չաքու մում եմ գնել, յուրաքանչյուր չաքուն 24 դարնի է» (240)։

Դարվան, պրսկ. darbān —դռնապան։

Դարօրալ, հվնբր. պրսկ. dār-o-bārd —դժվարությամբ, դժկամությամբ։ «Գաղկցի Աբրահամէն n դարօրալօվ քօթվալին նօքարն նե գձեցի—գաղկցի Աբրահամից հազար դժվարությամբ քոթվալի (բերդի պարետի) ծառային վերցրի» (227)։

Դաւսատ—անծանոթ բառ, հիշվում է բեռնակիրներին զուգահեռ։ «p բօլավայ և մին դաւսատ բռնեցի» (144)։ «մին դաւսատ բռնեցի մինչև Հաչիփուռ, p օրէն մին թանկայ խօրակ =մի բեռնակիր վարձեցի մինչև Հաչիփուր, երկու օրը մի թանկա ուտելիքով» (247)։

Դաֆայ, արաբ. daf'a —անգամ, նվագ։ «բնեդ սուկամ, II սէվայ ելաւ q դաֆին ջամէն= 874 սուկամ և կես սեվա եղավ 3 նվագով [ստացված ոսկու] գումարը» (191)։

Դաֆայաթ, արաբ dafa'āt—մի քանի անգամ։ Դաֆայաթօվ—մի քանի անգամով, մի քանի նվագով։ «Ռուփայ դալալիցն դաֆայաթօվ փող ամ առել=միջնորդ Սուփայից մի քանի նվագով փող եմ վերցրել» (78)։

Դաֆտար, արաբ. daftar—տետր, մատյան, հաշվեմատյան։ «Ես էլ իմ դաֆտարումն ինձ ամատ ջամայ բռնեցի—ես էլ իմ հաշվեմատյանում ինձ մուտք արեցի» (81)։

Դեղնայպղինձ—բրոնզ, լատուն։

Դերգազի—գործվածքի տեսակ, հավանաբար Դերգազ կոչվող վայրում գործված, ինչպես՝ փաթանի, լահուռի, բնարիսի, լաչկարի, խերապատի, մամուրխանի և այլն։

Դեկան—դրամական միավոր, Հաշվետումարի տվյալներով (էջ 69) մեկ դեկանը=110,09 դիանի (տե՛ս)։

Դէվ, հնդ. dev կամ deva—տեր, իշխան, կառավարիչ։

Դէվայ—տե՛ս Դէվ։

Դըմքու, տիր. ldem-əku—տիկին, աղնվական կին։ «Ուր դըմքուին խմար էր առել—իր տիկնոջ համար էր գնել» (168)։

Դընտի, պրսկ. dandeh—ատամնավոր, մատներով, ճյուղեր. «Մին պատիկ պոչ դընտի չուներ, մաղն նարմ էր—մի փոքրիկ պոչ, որ ատամներ (հաստ և ամուր ճյուղեր) չուներ, մաղը փափուկ էր» (264)։

Դրվալի, պրսկ. davālī —խորամանկություն, խարդախություն։ «Մուրատեն յինք առի դըվալի էր n հիլով մուշկ=Մուրադից խորամանկությամբ, հազար հնարով մուշկ գնեցի» (220)։

Դրֆտար—տե՛ս Դաֆտար։

Դիան, պրսկ. dinar—դրամական միավոր Իրանում։ XVII դարում կային 5—1000 դիանանոց կամ դինարանոց դրամներ. ամենից տարածվածը 200-դինարանոց արծաթ դրամն էր, որ կոչվում էր աբասի (տե՛ս)։ 10.000 դիանը մեկ թուման էր (տե՛ս)։

Դիկբար, պրսկ. digbār —պղնձե կաթսա։

Դիրակ, թրք. dirak—սյուն, ձող, հենաձող։ «Զաղրին խմար դիրաքի և ինչ որ լաղում էր, առի=վրանի համար հենաձող և ինչ որ պետք էր, գնեցի» (143)։

Դլանայ, արաբ dalna' —խաղաղ ելք, փոխադարձ զիջումներով հաշտեցում, համաձայնություն։ «Ընուփին դլանայ արար, թէ փողն տալման ամջայ գընենք գնայ—Ընուփը (միջնորդի անունն) հաշտեցրեց, ասելով, թե փողը տալիս դիտողություն կանենք, կվերջանա կգնա» (261)։

Դոր, բրբռ.—որտեղ, ուր, ինչ։ «Էստուր ախտիարն պարնին այ, դոր օր կուզէ Նեկղոսէն յինք առու=սրա իրավունքը պարոնինն է, որտեղ (կամ երբ որ) ցանկանա թող Նիկողոսից վերցնի» (194)։ «Տավարանին տեսնում դոր ան=տեսնեմ տավարները որտեղ են» (195)։

Դուբաշ—պարսկախոս հնդիկների լեզվում նշանակում է թարգմանիչ։ «Նավի դուբաշին ջանըպէ նօխուտին տվի=ի հաշիվ նավի թարգմանչի (կամ՝ կողմից) տվի նավապետին» (73)։

Դուբարայ, պրսկ. dobāra —երկու անգամ, կրկնակի, կրկին, նորից։ «Էս բէթլմալ դավիս վերայ Ծատուրն ճիր լանկ p մսխալն խօ դուբարայ արետ=այս անպիտան (հիմար) վեճի վերայ Ծատուրը ճիր լանկ 8 մսխալ էլ կրկին անգամ բերեց (կրկնակի վճարեց)» (235)։

Դումպայ, տիր. dumpa—երկարության չափ կամ որոշակի չափով կտրված գործվածք, որ օգտագործվում էր որպես գլխաշոր կամ շալ։ «Լա դումպայ փաթուն», «Ես դումպայ ճարմակ թիրմա»։ Մի առիթով նշված է, որ «ե դումպէն մին լինկի խսէպ այ» (237)։ Նույն տեղում գրում է՝ 12 դումպան=մեկ լամի (237)։

Դունկ, անծանոթ բառ, ըստ բնագրի ինչ-որ ապրանք կամ առարկա, որ, հավանաբար, զույգ է օգտագործվել. «մին ջուխտ դունկ մեր տանտրոշն» (213)։

Դունջան, տիր. dunjan—խխունջից պատրաստված կանացի զարդ։ «Ղարավաշի, թէ խիզանին դունջանի վաղերայ=աղախնին և կնոջը՝ զարդ և այլն» (186)։

Դուշ, պրսկ. dush—ուս։ «Դուշի շալ=ուսերը ծածկող շալ»։

Դուրբին, պրսկ. dūrbīn—հեռադիտակ։ «Իմ մին ինկլիզի դուրբին ունի=ես մի անգլիական հեռադիտակ ունեի» (136)։

Դուր-դրազ, պրսկ. dūr-derāz —հեռու-երկար, «երկար-բարակ»։ «թէ p տեղ ամատ-բռաֆտ շինեմ, դուր-դրազ գը քաշէ=եթե երկու տեղ մուտք ու ելք անեմ, շատ կերակրի» (81)։

Դուրիայ, ծագումն անհայտ—ըստ բնագրի որոշ տեսակի գործվածք, որ մեծ մասամբ վաճառվում էր որոշակի երկարությամբ կտրված կտորներով, որոնք կոչվում էին «թան» (տե՛ս)։ «Ջանայպատ, որ է Լաքայուն, դուրիայ դուս գըզայ=Ջհանաբադում, որ Լաքայուն է, դուրիայ է արտադրվում» (260)։ «Բաղչումն մին սաղ թան դուրիայ կէր=կապոցի մեջ մեկ լրիվ թան դուրիայ կար» (242)։ Կային տարբեր տեսակի կամ այլ տեղերում արտադրվող դուրիաներ. «սուսի դուրիայ», «դամնի դուրիայ» և այլն։

Դուքանդար, պրսկ. dokkān-dār—խանութպան։

Դվալի, հնդ. divālī —սնանկ։ «l սուկամ էլ նայ փոխ արետ, դվալի էր, քաշեց չուրի Նեկղոսին վեր կալն, արետ ոչ=30 սուկամ [ոսկի] էլ նա փոխ տվեց, սնանկ էր, ձգեց, մինչև Նիկողոսի վերադարձը և չտվեց» (189)։

Դրիստ, պրսկ. dorost—ճիշտը, ուղիղը։ «Թարեղն ȝ օր ֆարդ ունի, դրիստն էս այ, որ թիվն նզ շամս l=թվականում 10 օր տարբերություն կա, ճիշտն այս է—76 թ. շամս ամսի 30» (191)։

Դօ, պրսկ. do—երկու, դօ-ումն—երկրորդ։

Դօբ, հնդ. dob—լվացարար։ «Դօբու, դալաքի գնացել այ=լվացարարի և վարսավիրի ծախս է եղել» (243)։

Դօգազի, պրսկ. dogazī—երկու դաղանոց։ «p թան դօգազի չադիր=երկու թան երկու դաղանոց վրանի կտոր (բրեզենտ)» (266)։ «Դօգազի դաստխան=երկու դաղանոց սփռոց» (296)։

Դօրանկ, պրսկ. dorang—երկգույն։

Դօլ, պրսկ. dol—հվնբր. տիկ, կաշվե ջրաման։ «Գնալէ գալէ դօլու խարճ գնաց=գնալ-գալիս ջրամանի ծախս է եղել» (265)։

Դօլնայ, հվնբր. տիր. dolma (drol-ma)—բառացի նշանակում է մարգարիտ կամ մարգարտաշափ, գուցե՝ շար։ Հաշվետումարում օգտագործված է որպես քարբարի չափի կամ քանակի միավոր։ Տե՛ս էջ 120—127։

Դօշակ, պրսկ. dushak—ներքնակ։

Դոումն—տե՛ս Դօ։

Դոպ—տե՛ս Դոբ։

Դօջանպէ, պրսկ. dodjānebeh—երկու կողմից, փոխադարձ։

Դոռ, պրսկ. dorr—մարգարիտ։ «սութ, որ է կարմիր դոռ= սաթ, որ կարմիր մարգարիտն է» (84)։

Եալ, պրսկ. yāl —վիզ, բաշ, նաև ասում են ձիան կամ կենդանու բաշի մազերին։ «p եալի պոչ, որ մինն կապուտ այ և մինն ճարմակ—երկու բաշի պոչ (մազափունջ), որ մեկը կապույտ է, մյուսը սպիտակ» (202)։

Եաղջի, թրք. yāghdjī—յուղադործ, յուղավաճառ։

Եայդաշտ, պրսկ. yāddāsht—նշում, հուշագրում, նաև հաշվետետր, նշումների տետր։ Առևտրական գործողությունների մասին նախքան օրհաշվում (ռուզնամա) գրանցելը, նշում էին Եայդաշտում (յադդաշթում), որից հետո անց էին կացնում օրհաշիվ և մյուս մատառնեն հուշատետրում։ «Ռուզլամումս գրած չէ, եայդաշտում էր գրած=օրհաշվում գրած չէ, հուշատետրում էր գրած» (189)։

Եանղիշ, թրք. yānghlish—վրիպած, սխալ։ «Խրսէպումն եանղիշ ինք—հաշվի մեջ սխալվել էինք» (187)։ «Եանղիշ անք ընկել=սխալվել ենք» (254)։

Եաշմ, արաբ. yashm—հասպիս, օձաքար, աշմ։ «Եաշմայկոթ խանչալ» (142), «Եաշմայկոթ դանակ» (240)։

Եարայ զազի, թերևս թրք. yārī (կես) և պրսկ. գազ (երկարության չափ) բառերից—կեսգաղանոց, ինչպես՝ դօգազի—երկու գաղանոց, դանգազի—տաս գաղանոց (տե՛ս)։

Եափենի, թրք. yāpendjī —բրդյա հաստ և կոշտ գործվածք, որով թանկարժեք կտորեղենի և այլ ապրանքների հակեր էին կապում։ «Ե թան եափենի ամ առել, որ լօնտրինեն միջումն կապել ամ=5 թան եափենի եմ առել, որ մահուդները դրանց մեջ եմ կապել» (101)։

Եզիտ, *արաբ.* yazīd—*Շիա մահմեդականները չարության, դժոխության և անգթության չափանիշ են համարում Յազիդ իբն-Մուավիային, որ 680 թ. նահատակեց խալիֆայության ժառանգորդ Հուսեյն իբն-Ալիին և կոտորեց ողջ գերդաստանը։ Հովհաննեսը եզիտ է անվանում իր գործընկեր Ծատուրին, որը հաշիվների մեջ շիտակ չի եղել և անարդար է վարվել իր հետ (235)։*

Եղրար, *արաբ.* iḳrār—*խոստովանել, հաստատել, հանձն առնել։ «Ես իր գիրն ուղեցի, եղրար արար թէ Սլնկումն Մելիջանին խետ այ=ես իր գիրն ուղեցի, հանձն առավ (հայտարարեց), որ Սլինկում Մելիջանի մոտ է» (230)։*

Եմիշ, *թրք.* yemīsh—*պտուղ, միրգ։ «Քըսուր զարհուրիաթ և եմիշ առի, Սուրաթն տանելէ խմար=որոշ անհրաժեշտ բաներ ու միրգ գնեցի Սուրաթ տանելու համար» (70)։*

Եքբարայ, *պրսկ.* yekbāra—*մեկ անգամից, միանվագ։ «քուլիայ եք բարայ=ամբողջը մի անգամից (միանվագ)» (302)։*

Զաբիթ, *արաբ.* ḍābiṭ—*որևէ վայրի կամ շրջանի հարկահավաք կամ հարկերի կապալառու, հսկիչ, լիազոր։*

Զաբուն, *պրսկ.* zabūn—*թույլ, տկար, անպետք, անորակ։ «[Ոսկու] քաշն այ ժք սուկամ, ժզ սէվայ զաբուն էր, դուս գցեցին=ոսկու քաշը 12 սուկամ է, 16 սեվա անորակ էր, հանեցին» (239)։ «Ոսկերիճն ոսկին խալել էր, մին իքմինն զաբուն էր դուս եկէլ=ոսկերիչը ոսկին հալել էր, մի բան (մի մասը) անորակ էր դուրս եկել» (261)։ «Զաբուն լեղակ» (147)։*

Զադայ, *պրսկ.* zada—*խփված, վնասված, մաշված։ «Ոսկին որ խանեցին, փարայ զադայ էր=երբ ոսկին հանեցին, մասամբ վնասված էր (կամ մաշված էր)» (252)։*

Զաթ, *արաբ.* dhāt—*էություն, իրողություն։ «Զաթն տակումն կու զրեմ=իրողությունը ներքևում կգրեմ» (239)։*

Զահիր, *արաբ.* ẓāhir—*երևացող, պարզ, տեսանելի, արտաքին տեսք։ «ԺԽամի խարճ տվի, որ էս էր զահիրն=10 հակի ծախսը վճարեցի, որովհետև այդ է ցույց տրված» (250)։ «Մըռջամին թամամ խրիտն չափութրումն զահիր չարարինք=գնված մարջանի լրիվ քանակը մաքսատանը ցույց չտվինք» (326)։*

Զաղաթ, *հնդ.* jagat—*ենթադրվում է արաբ.* zakāt *-ի (հոգևոր տուրք) աղավաղված ձևն է, որ Հնդկաստանում նշանակել է որոշակի տուրք, մաքս։ «Օվրանկապատ... Ղօքիդարի զաղաթ այ գնացէլ=Օվրանկաբադում պահակատան տուրք է տրվել» (75)։ «Նարբդեհու գետին վըրայ ... ա պղտիկ սանդուղ ոիղայ գոդլուին զաղաթ յինք առին=Նարբդեհու գետի վրա մեկ փոքրիկ արկղ մանր հղկված քարից մաքս վերցրին» (106)։ «Տեղս ըռաջին զաղաթ տվի=այստեղ (Սանքոում) ռաջային տուրք (մաքս) վճարեցի» (200)։*

Զաղաթվալ, *հնդբ. զաղաթ (տե՛ս) վերցնող (մաքս գանձող, մաքսապետ)։ «վալ» ածանցը «պետ» կամ «տեր» է նշանակում, ինչպես «քօթվալ»—«բերդի պետ» (բերդապահ կայազորի հրամանատար)։ «Զաղաթվալին բենթի տվի=մաքսապետին ծառայության դրամ վճարեցի» (184)։*

Զանանայ, *պրսկ.* zanāna—*կանացի, իգական։ «Ք ջօռայ փասլում՝ մարդանայ, գ ջուխտ՝ զանանայ ըռաջինց տան ծախեցի=9 զույգ տղամարդու չուստ և 3 զույգ կանացի՝ ռաջային տանը վաճառեցի» (136)։*

Զապուն—*տե՛ս Զաբուն։*

Զառ, *պրսկ.* zar—*զար, խաղաքար։ «Ժունէն յուքմ ելաւ, թէ զառ զըձեն=դատավորը հրամայեց, որ զար նետեն» (222)։ Նաև՝ ոսկի, ոսկեկար, ոսկեքանվածք, ոսկեթել։ «զառօվ մախմուռ=ոսկեկար, ոսկե բանվածք թավիշ» (237)։*

Զարաջաբ, *պրսկ.* zarra—*մանր բառի հոդնակին—մանրուք, մանր-մունր բաներ։*

Զարար, *արաբ.* ḍarar—*վնաս։ «Էս ջանպէ զարարն այ ժք թանկ=այս կողմից (հաշվից) վնասն է 12 թանկ» (175)։ «Մարդին խետ զարըպութենում խաթրով գնալն զարար չէ առման—օտարության մեջ մարդկանց ցանկություններին ընդառաջելուց վնաս չկա» (259)։*

Զարբ, *արաբ.* ḍarb—*բազմապատկում, հաշվարկ։ «Էկրայ քարբարին գինըն Ջիկջվանն արար, յետոյ զարբումն Ծատուրի տղայ Յակոբջանն գինըն ավելցուց=էկրայում սաթի գինը արար, յետոյ զարբումն Ծատուրի տղա Հակոբջանը գինն ավելացրեց» (129)։ Ջիկջվանը հաշվեց, հետո հաշվարկում Ծատուրի տղա Հակոբջանը գինն ավելացրեց» (129)։*

Զարգարանայ, *պրսկ.* zargarāna—*ոսկերչի ձեռնավարձ։ «Դալալի և զարգարանայ—միջնորդներ և ոսկերչի ձեռնավարձ» (253)։*

Զարդար, *պրսկ.* zardār—*ոսկեկար, ոսկեթել։ «Մանդիլին զարդարն դրած այ յառաջմէ, ասդաին գինն գրեցի=ոսկեկար գլխաշորը նախապես գրված էր, պարզ (սովորական) [մանդիլի] գինը գրեցի» (270)։*

Զարդի, *պրսկ.* zardī—*դեղնագույն։ «Թէլի զարդում=թելը դեղին ներկելու համար» (78)։*

Զարդուդադանի, *պրսկ.* zard—dādanī—*դեղին ներկելու վարձ։ «Զաֆարխանու թելի և զարդուդադնի ես ամ տվէլ—Զաֆարխանի թելի և դեղին ներկելու համար վճարել եմ» (290)։*

Զարդուդադրնի—*տե՛ս Զարդուդադանի։*

Զարի, *պրսկ.* zarī—*ոսկեգույն ոսկեջրած։ «Ք զարի սուրաթ պղտիկ=երկու փոքրիկ ոսկեզօծ արձանիկ» (218)։*

Զարկար, *պրսկ.* zargar—*ոսկերիչ։*

Զարկարանայ—*տե՛ս Զարգարանայ։*

Զարհուր, *արաբ.* ḍarūr—*անհրաժեշտություն, կարիք։ «Թիվըն ճղ, ադամ դ-ումն, զարհուր ունի... ոսկին ծախեցի=74 թ. ադամ 4-ին կարիք ունի ... ոսկին ծախեցի» (181)։*

Զարհուրիաթ, *արաբ.* ḍarūriyyāt—*անհրաժեշտություններ, անհրաժեշտ բաներ։ «Թաթվին քամար, զարհուրիաթ առի=ձիան գոտի, անհրաժեշտ բաներ գնեցի» (76)։ «Քըսուր զարհուրիաթ և եմիշ առի=մի քիչ անհրաժեշտ բաներ և միրգ գնեցի» (70)։*

Զաֆրան, *հվներր, տիր.—բնագրում պաշտոնի իմաստ ունի, «Աղիզ զաֆրան» (210)։*

Զբանի, *պրսկ.* zabānī—*բերանացի, բանավոր։ «զբանի էս ացին=բերանացի այս ասացին» (153)։*

Զէն, *հվներր. պրսկ.* zin—*թամբ։ Կարող է նաև հայերեն «զենք»-ը լինի։ «Մին զէն առի գինն ժք մանտրմելի» (244)։ «Մին զէն [առի]նաֆարին (գործավորին)» (256)։*

Զիր, *պրսկ.* zir—*տակ, ներքև, որևէ ամանի տակը դնելու պնակ, ափսե։ «մին ջօռ պղտիկ զիր=մեկ զույգ փոքրիկ ափսե (213)։*

Զմրուր, *պրսկ.* zomorrod—*զմրուխտ։ «ասնձը դանայ ըռիզայ զմրութ=188 հատ մանր զմրուխտ» (275)։*

Զնջիլ, *պրսկ.* zandjīr—*շղթա։ «Մին շուն առի ճանապխի խմար, ուր զնջլօվն=ճանապարհի համար մի շուն գնեցի, իր շղթայով» (194)։*

Զուֆ, *արաբ.* ṣūf—*բուրդ։ «Լահուռի զուֆ= Լահորում գործվող բրդյա կտոր» (86)։*

Զոր, *պրսկ.* zūr—*ուժ, ստիպում, հարկադրանք։*

Զրայ, *պրսկ.* zirā—*որովհետև։ «Մնաց էսպէս, մինչև Յովանն տեսնամ, զրայ պարոն Ավետիկն ջուղայ չարար=մնաց այսպես մինչև Հովանին հանդիպեմ, որովհետև պարոն Ավետիքը պատասխան չտվեց» (109)։*

Էմինանայ, *արաբ.-պրսկ.* amināna—*էմին (amin) կոչվող պաշտոնյային տրվող տուրք։ Էմին արաբ. նաև նշանակում է մեծ կշեռք, ծանրակշեռք, թերևս եղել է կշեռքի վերակացու, որը նաև իր կողմից նշանակված հսկիչ (նաղբը) է ունեցել։ Համառոտ գրանցումից դժվար է որոշակի եզրակացության գալ։ «Էմինանայ ժն, սրայ նաղբին՝ ա» (258)։*

Էմշեղեն, *թրք.-հայ.—մրգեղեն, տե՛ս Եմիշ։*

Էստուր, *բրբռ.—սրա։*

Ըխտիար, *արաբ.* ekhtiār—*կամք, իրավունք։ «Ըխտիար ունի Սուրաթումն ծախի=իրավունք ունի Սուրաթում վաճառի» (132)։ «Ըխտիարն պարնին այ=իրավունքը պարոնինն է» (253)։*

Ըմբրթի, *ըստ բնագրի շապիկացու կտոր։ «գ թան ըմբրթի առի լաինի խմար—3 թան ըմբրթի առա շապիկի համար» (263)։*

Ընաթի—*ոսկու քաշի մանր միավոր, 0,10 գր.։ Տե՛ս նաև Ըռաթի։*

Ըռաբփէնի, *հվներր. տիր.—բնագրից երևում է, որ իջևանած տան տիրոջ հարազատների, մերձավորների կամ նրա հետ առնչվող անձնավորության մասին է խոսքը։ «ի թան չիճու (կտոր) տան տանտերոչ ք ըռաբփէնին» (206)։*

Ըռաղար, *հվներր. պեռք է լինի ըռահդար, պրսկ.* rāh dār—*ճանապարհի հսկիչ, ճանապարհապաշտպան պաշտոնյա։ «Նէքպալումն ք ըռա[հ]դարին» (357)։*

Ըռաղբաղալ, *պրսկ.-արաբ.* radd-badal—*տուրուառ, բանավեճ, լեղվակռիվ։ «էստուր վերայ ըռաղբաղալ շատ այ հանց կացէլ=այս բանի վրա շատ վեճեր են եղել» (181)։*

Ըռազայ—*տե՛ս Ըռիզայ։*

Ըռազի, *արաբ.* rāḍī—*համաձայն, գոհ։ «ըռազի չկացի=չհամաձայնվեցի» (182), «ըռազի արարի=համոզեցի, համաձայնեցրի» (278), «ըռազի չեկաց=չհամաձայնվեց» (182)։*

Ըռաթի—*ոսկու և քարեղենի քաշի մանր միավոր, 0,10 գր։ Հիշվում է նաև ընաթի ձևով,*

10 ընաթին=1 մասաի (տե՛ս)։ «անզ դանայ զմրութն ծախել էր, լէվն՝ ըռաթին ա l ... բաղի վատն յետ առի, որ էր ձր դանայ, քաշն նզ ըռաթի=106 հատ զմրուխտը վաճառել էր, լավը՝ մեկ ռաթին 1,25-ով ...մնացած վատը, ետ վերցրի՝ 82 հատ, քաշը 73 ռաթի» (275)։

Ըռախտարանայ, պրսկ. rāhdārāna—ճանապարհապաշտպան պաշտոնյաներին՝ ռահդարներին վճարվող տուրք։ «Եզտրխաս ըռախտարանայ գնաց—Եզդիխաստում ռահդարի տուրք տրվեց» (70)։ Տե՛ս նաև Ըռահդարի։

Ըռահդարի, պրսկ. rāhdārī—ռահդարներին վճարվող տուրք։ «Տեղս ի՝ բեռան ըռահդարի տվի» (245)։ «Բաղդամ ձիան ըռահդարի տվի» (246)։ Տե՛ս նաև Ըռախտարանայ։

Ըռաղամ, արաբ. raḳam—թիվ, թվանշան։ «Ֆըռանկկար ըռաղամն մսխալի խըսէպ=եվրոպական թվանշաններով՝ մսխալի հաշիվ» (155)։

Ըռանա—տե՛ս Ըռաջա։

Ըռանի, հնդ. rāni—իշխանուհի, տիկին, ռաջայի կինը։ «Քաթմանտուին ըռաջին և ըռանուն բէնթի գնաց=Քաթմանտուի ռաջային և կնոջը նվեր (ծառայագրամ) տրվեց» (338)։

Ըռանկ, պրսկ. rang—գույն։ «Ըռանկն էր սուրմայի, չիմանի, ալ և դեղին=գույնը մուգ կապույտ էր, կանաչավուն, կարմիր և դեղին» (331)։

Ըռանկայի, պրսկ. rangāī—ներկարարի վարձ, տե՛ս նաև Ըռանկ տալէ։

Ըռանկամիզ, պրսկ. rangāmiz—ներկված, գունավորված։

Ըռանկ-ըռանկ, պրսկ. rang-rang—գույնզգույն, տարբեր գույներով։ «ը թան լաին, ըռանկ-ըռանկ» (266)։

Ըռանկըռիզ, պրսկ. rangrīz—ներկարար։ Գրական լեզվում ընդունված է՝ ռանգռազ—rangraz։

Ըռանկին, պրսկ. rangīn—գունավոր, ներկված, բնագրում գործածված է հատուկ տեսակի գունավոր կտորի իմաստով։ «Ծախեցի մին թան էկրայի ըռանկին» (154)։

Ըռանկ տալէ—ներկելու համար տրվող վարձ։

Ըռաջա, հնդ. rādjā—հնդիկ ֆեոդալ, իշխանավոր—ռաջա։

Ըռաջգուռու, հնդ. rādj—gure—տե՛ս Գուռու։

Ըռաջդվար, հնդ. rādjādvārā—ռաջայի նահանգապետարանը կամ տվյալ երկրամասի իշխանավորի գլխավոր վարչությունը, որտեղ առևտրական ապրանքները ստուգվում էին և կնքվում։ «Բեռներն ըռաջդվարն տանելէ, մրհելէ խմար մզուրի այ տվէլ—բեռները ռաջդվար տանելու կնքելու համար վարձ է տվել» (149)։

Ըռասիտ, պրսկ. rasīd—ստացական, ստացագիր, նաև՝ հասած, ստացված։ «Ներքոյ գրեալս Յովանէն ըռասիտն այ=ներքո գրյալը Հովանից հասածն է» (109)։

Ըռաստ, պրսկ. rāst—ուղիղ։ «Նէքպալն ըռաստ չըգնայ= ուղիղ չգնա Նեպալ» (245)։

Ըռաստի, պրսկ. rāstī—ուղիղ, ձիգ, գործածված է որպես պոչի (տե՛ս) տեսակ, ծուռի հակառակը։ «ը պոչն ըռաստի այ=8 պոչը ուղիղ է (կամ՝ ուղիղ տեսակից է)» (263)։

Ըռավանայ [անել], պրսկ. ravāna [kardan]—ուղարկել։ «Իմ խրիտս սարանջամն տայ, ըռավանայ առէ Սուրաթն, մինչև ես գամ, մեր խըսէպն տեսնանք—իմ գնումներս կատարի, ուղարկի Սուրաթ, մինչև ես գամ և մեր հաշիվը տեսնենք» (80)։

Ըռավանի, պրսկ. ravānī—ապրանքն ուղարկելու վերաբերյալ փաստաթուղթ։ «Ըռավանումն դ դիտր էր գած» (96)։

Ըռաֆ, պրսկ. rak—վայրի ոչխար, կամ քարայծ։ Հվնբր. այս կենդանու պոչը ևս օգտագործվել է որոշ նպատակով և որպես ապրանք վաճառվել։ Թերևս յակ կոչվող կենդանու մասին է, որի պոչը ևս օգտագործվել է գլխարկների ու դրոշակների ծայրերը զարդարելու նպատակով։ «Քաթանու աղարկած ըռաթ պոչին ծախսն Խաթցն յինք առի» (282)։

Ըռաֆտ, պրսկ. raft—նավ։ Հաշվապահական տերմին է և օգտագործվում է «ամատ»—մուտք տերմինի հետ (տե՛ս Ամատ և Ամատըռաֆտ)։

Ըռէվանտ, պրսկ. rivand—խավարծիլի արմատ, դարձյալ տակ rhabarbarum, rheum, օգտագործվում էր որպես լուծողական, կոչվում էր նաև խաշնդեղ։ Ընտիր տեսակը բերվում էր Չինաստանի Հվանգհու գետից դեպի հարավ տարածվող շրջաններից, որ այն ժամանակ կոչվում էր Խաթայ։ Հովհաննեսը վկայում է, որ «խաթային լէվն այ» (256)։ «ա բաթու ըռէվանտ առի, որ տանեմ Ցնդատան նմունի խմար=մեկ բաթու (պարկ) ռևանտ գնեցի, որ տանեմ Հընդկաստան, որպես նմուշ» (218)։

Ըռըշու, արաբ. redjū—դիմել, առաջարկել։ «Ադիզ Զաֆրանուն ջանպէ ըռըշու ելաւ, որ ես տամ—Ադիզ Զաֆրանու կողմից առաջարկություն եղավ, որ ես տամ» (215)։

Ըռըշվաթ, արաբ. reshvat—կաշառք։ «ը տեղ թլաշուն ըռըշվաթ տվի=երկու տեղ քննիչին (խուզարկողին) կաշառք տվի» (279)։

Ըռըսում, արաբ. rasm—կարգ, սովորություն, սահմանված տուրք. հոգնակին է rusūm—տուրքեր։ «Թոնմանին առքի գիան ըռըսում տվի=թոմանին 1220 դինար տուրք վճարեցի» (72)։ Կոստանդ Ջուղայեցու վկայությամբ նավահանգիստներում մեկ թոման (10.000 դինար) արժողությամբ ապրանքից շահբանդարի օգտին գանձվում էր 122 դինար ըռըսում (Աշխ. 104 բ)։

Ըռքաբի, արաբ. rikābī—փոս պնակ, լայն բերանով գավաթ։ «ղ դանայ չինի ըռքաբի առի=չորս հատ չինական (հախճապակի) գավաթ գնեցի» (344)։

Ըռիզայ, պրսկ. riza—մանր։ «անձր դանայ ըռիզայ զմրութ, ը տանկ, ֆի տանկըն իդ ըռաթի=118 հատ մանր զմրուխտ, քաշը 8 տանկ, մի տանկը 24 ըռաթի» (275)։

Ըռիխտայ, պրսկ. rikhta—թափած, ձուլած, կաղապարված, գործ է ածված որպես մուշկի տեսակ. «ըռիխտայ մշկի գին» (179)։

Ըռիմի, պրսկ. rūmī—կարմիր, կարմրավուն։

Ըռիմիդար, պրսկ. rumīdār—կարմիր ունեցող, կարմիր երանգով։ «Մին թան բանաւշ, ըռիմիդար կուճին=մեկ թան մանիշակագույն կարմրերանգ կուճին» (232)։

Ըռուբրռու, պրսկ. rū-be-rū—երես առ երես։ «... որ Մելիջանն և Ծատուրն աղարկել ան, կամ թէ ըռու-բըռու Ծատուրէն յինք ամ առել=որ Մելիջանն ու Ծատուրը ուղարկել են, կամ երես առ երես (անձամբ) Ծատուրից վերցրել եմ» (178)։

Ըռուզլամա—տե՛ս Ըռուզնամա։

Ըռուզնամա, պրսկ. ruznāma—օրագիր, օրհաշվի մատյան. ավելի հաճախ հանդիպում է ըռուզլամա բրբռ. ձևով—«ըռուզլամումս ամատ-ըռաֆտ չարարի=օրհաշվի մատյանում մուտք ու ելք չարեցի» (94)։

Ըռումալ դաստայ, պրսկ. rūmāl-dastār—երեսսրբիչի կտոր, թաշկինակ, դաստառակ։ «ա թօփ ըռումալ դաստայ առի» (140)։

Ըռուսիա, պրսկ.. rūsīāh—սևերես։ «ըռուսիա մնալ= սևերես, ամոթով մնալ» (196)։

Ըռուսխաթ, արաբ. rūkhsat—թույլտվություն, ազատում, արձակում։ «Ըռուսխաթ ելայ=թույլտվություն ստացա, ազատվեցի» (243), «ըռուսխաթ տվի=ազատեցի, արձակեցի» (286)։

Ըռուսի—տե՛ս Ռուսի։

Ըռուֆու, պրսկ. rūfū—կարկատան։ «ըռուֆու ունէր=կարկատված էր, նորոգված էր» (156)։

Ըռուֆուգար, պրսկ. rūfūgar—կարկատող, նորոգող։

Ըռուֆուդար, պրսկ. rūfūdār—կարկատված, վերանորոգված, կարկատան ունեցող։

Ըռոլ, ծագումն անհայտ բառ, ըստ բնագրի, թերևս՝ սխալ, տարբերություն, անհամապատասխանություն։ «մուդաթումն ըռոլ ունէր=ժամկետում սխալ կար» (111)։ «Արծաթին ջամին խետ ըռոլ կընկանէր= արծաթի գումարի հետ տարբերություն ուներ» (178)։

Ըռոֆ, հնդ. rok—կանխիկ դրամ։ «Ըռաջի բէնթին ըռոք տվի= ռաջայի ծառային կանխիկ տվի» (147)։ «զl թանկ ըռոք արծաթ յինք առի=6,25 թանկ կանխիկ արծաթ վերցրի» (162)։

Թաբաղ, արաբ. ṭabaḳ—մատուցարան, սկուտեղ։ «ը փէտէ թաբաղ առի=երկու փայտե սկուտեղ գնեցի» (280)։ Կա նաև նիմ թաբաղ, որ նշանակում է կես սկուտեղ, այսինքն փոքր չափի։

Թազայ—տե՛ս Թաքայ։

Թազայդայ, թրք. tāzada—նորից, վերստին։ «Թազայդայ գիրի տվի=նորից գրելու տվի» (271)։

Թազի, պրսկ. tāzī—արաբ, արաբական, այսպես անվանում են որսի շանը։ «Լասու տանտրոջ խմար մին թազի առի» (146)։

Թաթու, պրսկ. tātū—արագավազ ձի։ «Ինձ և թաթվիս խօրակի ... էր գընացել=ինձ և ձիուս ուտելիքի ... ծախս էր եղել» (91)։

Թալապ, արաբ. ṭalab—պահանջ։ «Բարղամէն յինք առի իմ թալապիս ջահտան= իմ պահանջիս դիմաց Բարղամից ստացա» (75)։

Թալեխ, արաբ. ta'llūḳ—կախում ունենալ, վերաբերել, պատկանել։ «Կանայ-Ջնբուին մոտ 30 սուկամ [ոսկի] ունեի, ինչ որ դուս գա, իրեն է վերաբերում (պատկանում)» (218)։

Թալթ, արաբ. thalth—մեկ երրորդ։ «Մին թալթն նաղտ տուր, ը թալթն չինս=մեկ երրորդը կանխիկ դրամով վճարիր, երկու երրորդը՝ ապրանքով» (222)։ Տե՛ս նաև Թուլթ։

Թալիս, թրք. talis—ծղոտե կամ վուշյա կտոր, պարկեր կարելու համար։ «դ թան թալիս առի քիսակի խմար=չորս թան թալիս գնեցի, պարկի համար» (146)։

Թանիմայ, արաբ. tatimma—լրացում, ավելցուկ, հավելված։ «Յընդուստանայ աղարկած ապրանքի թահիմայ ունիմ պարոնաց մոտ=պարոնների (գործատերերի) մոտ Հնդկաստանից ուղարկված ապրանքի ավելցուկ ունեմ» (132)։ «Թահիմայ թալապ ունեմ=լրացուցիչ պահանջ ունեմ»» (160)։

Թաղայ, գործվածքի չափի միավոր։ «գնլը թաղայ դերգազի=338 թաղայ գործվածք» (83)։ «Քանի թաղայ ճոթին քաթէն այ=քանի թաղա կտորի հաշվվն է» (311)։

Թամամ, արաբ. tamām—լրիվ, ամբողջը, բոլորը։ «Իմ տալիքն թամամ գրեցի=իմ տալիքը լրիվ գրեցի» (112)։

Թամամայարզ, արաբ.-պրսկ. tamām-arz—լիարժեք։ «Գինն թամամայարզ=լիարժեք գինը» (252)։

Թամամվել—վերջանալ, լրանալ, ավարտվել։ «Վադեն թամամվել=ժամկետը լրանալ» (287)։

Թամասուկ, արաբ. tamassuk—մուրհակ, անդորրագիր, հանձնարարագիր, պարտավորագիր, չեկ։ «Բերամփուռումն յինք առի յարևանցի բաղումէն, առանց թամասուկ, ... որ Սրնճումն տամ=Բերամփուռում վերցրի երևանցի Բաղումից առանց պարտավորագրի, որ Սրինճում վերադարձնեմ» (77)։

Թամբաքու, պրսկ. tanbākū—ծխախոտի տեսակ, որ օգտագործում են նարգիլե կամ զալյան ծխելիս։

Թամպաքու—տե՛ս Թամբաքու։

Թամպու, հվնբր. տիր. բառ է, որ ըստ բնագրի պետք է նշանակի հովանոց կամ ամպհովանի. «Բալդիուն թամպվին քրէ տվի, որ բեռան վրայ բանայ, մեք էլ նստենք տակումն» (248)։

Թայեար, արաբ. tayār—պատրաստել, պատրաստություն տեսնել, մեկնելու կամ որևէ բան ուղարկելու համար պատրաստություն տեսնել։ «իմ խրիտս թայեար էր արարել, է խակ էր կապել, ըռավանայ արարել Սուրաթն=իմ գնումները պատրաստել էր, 7 հակ էր կապել, ուղարկել էր Սուրաթ» (87)։

Թան—գործվածքի երկարության չափ։ Հաշվետումարի տվյալներով որոշակի երկարության կտրված, հավանաբար մեկ հագուստացու կտոր՝ 4,46 կամ 4,90 մետր։

Թանխա, պրսկ. tankhāh—որևէ իրի կամ ապրանքի համարժեքը։ «... էն ջանպէ Նեկղոսն արծաթ կուզե, որ էնտուր թանխէն այ, ջամէն աճ.ն լանկ=...այդ հաշվից Նիկողոսը արծաթի պահանջ ունի, որի համարժեքն է 105 լանկ» (215)։

Թանձէլ—տե՛ս Թանձիլ։

Թանձու—տե՛ս Թանձու։

Թանկ, պրսկ. tang—ոսկու և արծաթի քաշի միավոր, ըստ բնագրի՝ 37, 39, գր.։ «զ թան ճարմակ փաթկայ ծախել ամ ա թանկ արծաթի» (340)։ Տե՛ս նաև Լանկ։

Թանկ, պրսկ. tang—նեղ, անձուկ, դժվար, անհարմար։ «Մօսումն թանկ էր=եղանակն (ժամանակը) անհարմար (աննպաստ) էր» (297)։

Թանկայ, պրսկ. tanga—տե՛ս Թանկ։

Թանկաքաշ, հնդ. tankakasa նշանակել է ոսկեդրամ, սակայն Հաշվետումարում հասկացվում է մեկ թանկի (տե՛ս) քաշի իմաստով։ «իդ թանկաքաշ ոսկի տվին=24 թանկի քաշով ոսկի տվին» (175)։

Թանկի—տե՛ս Թանկ։

Թանձիլ, արաբ tanzil—զեղչ։

Թանձիլե, արաբ. tanzileh—զեղչի համար տրված գումար։ «Նադար ա-ումն թանձիլե էր տվել, տվի շամս իա=Նադար ամսի 1-ին զեղչի գումար էր տվել, վճարեցի շամս ամսի 21-ին» (93)։

Թանձու, արաբ. tansūk—թանկարժեք, հաղվագյուտ նվերացու. բնագրում որոշակի ապրանքի իմաստ ունի, որ հավանաբար պատրաստված է եղել թանկարժեք մետաղից։ «դ դանայ թանձու առի քաշն այ բ թանկ» (174)։

Թանքաշ—տե՛ս Թանկաքաշ։

Թասար, արաբ. tasar—նուրբ գործվածք։

Թասպի, արաբ. tasbīḥ—տերողորմյա, համրիչ։ «Ձեռի թասպու քարբար=ձեռքի համրիչի սաթ» (137)։ «զ մսխալ թասպի մըռջամ= 6 մսխալ համրիչի մարջան» (266)։

Թասվիլ, արաբ. tafṣil—մեկնություն, բացատրություն։ «Թասվիլումն գրել էր, թէ տաս Դիլաքի որդի Ըստեփանին=բացատրության մեջ գրել էր, թե հանձնիր Դիլաքի որդի Ստեփանին» (98)։

Թավիզ, հվնբր. արաբ. tūvaydj-ից, պսակ։ Ագաթից պատրաստված պսակաձև զարդ։ «Ձդ դանայ աղեղէ թավիզ=54 հատ ագաթե պսակ» (114)։

Թարայզի, պրսկ. tarāzū—կշեռք բառից։ Հաշվապահության մեջ՝ «Թարայզի առել=հաշվեկշիռ (բալանս) հանել» (132)։

Թարեղ, արաբ. tārīkh—թվական։ «Թարեղումս=սույն թվականին» (69)։ «Փիշազին Թարեղս=սույն թվականից առաջ» (74)։

Թարվիզի ղիտր—տե՛ս Ղիտր։

Թարքաշ, պրսկ. tarkash—կապարճ։

Թաւարթաշ, հվնբր. պրսկ.—թուրք. tavar-tāsh—«Թարար» (թավար) և «Թաշ» (դաշ) բառերից—կացին, կամ կացնի պատյան։

Թաքայ, ծագումն անհայտ բառ—բնագրում օգտագործվում է գործվածքը (կամ այլ ապրանք) մշակելու, մաքրելու իմաստով։ «լը քուռի փաքայ քուռուն ա թաքայու այ գնացել, որ է լվանալ, արև գձելէ» (87)։

Թաքիա, արաբ. takieh—հենարարձ (մութաքա)։ «Մին բանդարի թաքիի յիրես առի—բանդարի [կտորից] մի բարձի երես գնեցի» (273)։

Թաքուր, արաբ. takṭār—կրկին, նորից, մի անգամ ևս։ «Վերոյ մասկուր բ մաուշիլն, Բուրսայ թաքրար Ոսկանէն յինք էր առէլ, գնացել Ըստամբոլ—վերոհիշյալ 2 մաուշիլը Բուրսայում կրկին Ոսկանից վերցրել էր, գնացել Ստամբուլ» (74)։

Թաֆիլդար, արաբ.-պրսկ. taḥvildār—ստացող, ընդունող, վերակացու։

Թեղայ—տե՛ս Թէղայ։

Թէղայ, պրսկ. tigha—շեղբ։ «Ավետիկն զ եաշմակոթ խանչալ արետ, մնին թէղայ չունի=Ավետիքը 3 հատ կոթը յաշմից դաշույն բերեց, մեկը շեղբ չունի» (142)։ Նույն դաշույնների մասին մի այլ տեղ գրում է. «բ եաշմայկոթ խանչալ և մին կոթ՝ եաշմաէ, առանց թէղայ=2 յաշմե կոթով դաշույն և մի յաշմից պատրաստած կոթ առանց շեղբի» (335)։ Տե՛ս նաև Թիրայ։

Թըրաշդար—տե՛ս Թրաշդար։

Թքֆըլդան, արաբ.-պրսկ. tafldān—թքաման։ «Մին դեղնայպըղնձէ թըֆըլդան առի» (274)։

Թրֆիլդար—տե՛ս Թաֆիլդար։

Թիապ, պրսկ. tiab—Բանդարբասի մոտ գտնվող ծովախորշի ափին փոքրիկ նավահանգիստ։ «Թիապի գայիթգառի տվի, խակին ծ դիան» (71) գրանցումը անհասկանալի է։ Բնագրից երևում է, որ դա բեռները նավը փոխադրելու համար կատարված ծախս է (դրան նախորդում է նավակների (սմբուկ) համար վճարված վարձի գրանցումը)։ Այս դեպքում էլ կարելի է ենթադրել, որ մոտակա Թիապի նավահանգստում աշխատող բեռնակիրների մասին է խոսքը։

Թիմաճ, պրսկ. timādj—լավ դարաղված, հոտավետ, գունավոր, ոչխարի կամ այծի ընտիր կաշի, կամ արտաքինից դրան նմանող կտոր։

Թիմտա—անծանոթ բառ, թերևս արաբ. tamdaḥ բառից, որ նշանակում է գովելի, ընտիր։ «Ժունին թիմտէն մին քաղաք=ժունին մի ընտիր (՞) քաղաք (տե՛ս)» (231)։

Թիմփայի, հնդ. տիբ. timpi—բրդից կամ այծի մազից պատրաստված կապույտ և կանաչ շերտերով կտոր։

Թիրայ, պրսկ. tira—շեղբ։ «Էկրայ առած դանակին բաղի մին կոթն, առանց թիրայ Զաքուռ Յակոբջանին տվի=էկրայում գնած դանակի մնացյալ մի կոթը առանց շեղբի տվի Զաքուռ Հակոբջանին» (260)։ Տե՛ս նաև Թէղայ։

Թիրմայ, թրք. tirma—բրդյա նուրբ գործվածք, շալ։

Թիրպու, անծանոթ բառ—բնագրում գործվածքի իմաստ ունի։ «բ ճարմակ թիրպու առի, լէնն, որ մինն բ ձեռնաթիգոն» (240)։

Թիֆ, պրսկ. tak—որևէ բանի վերջը, հատակը, ավարտը։ Հաշվապահության մեջ օգտագործվում է վերջնահաշվի իմաստով։ «իզ օր վատայ, որ մինչև թիրայ մինն կառէ թիֆն=26 օր ժամկետով, որ մինչև թիրա ամսի մեկը [ժամանակը] վերջանում է» (78)։ «Ընուփ դալալին խետ խըսէպ տեսի, թիֆն գրինք էս թարեղըս=միջնորդ Ընուփի հետ հաշիվ տեսա և սույն թվականին վերջացրինք» (267)։

Թիֆի, հվնբր. թրք. tiki—կարած բառից, օգտագործվում է տարբեր տեսակի վերամշակված կտորեղենի իմաստով, մեծ մասամբ «թիրմա» կոչվող բրդյա գործվածքների։ «Թիրմէն տվի թիֆի կապել» (236), ինչպես նաև՝ «առի լէII ձեռ թիֆի թիրմայ լիսէպանուն խմար» կամ «ժդ ձեռն թիֆի փաթու էլ մին առի, գոշակ շինել տվի» (240)։

Թլայի, արաբ. ṭalāi—ոսկեզօծ, ոսկեջրած։

Թլայքարի, արաբ.-պրսկ. ṭalākārī —ոսկեզօծած, ոսկեջրած։ «գուլապի շիշայ ամ առէլ, թլայքարի և նօղրայի=վարդաջրի շիշ եմ գնել, ոսկեզօծ և արծաթե» (264)։

Թլաշի, արաբ. talāshī —խուզարկող, քննիչ։ «Բ տեղ թլաշուն ըղըշվաթ տվի=երկու տեղ քննիչին կաշառք տվի» (279)։

Թլաֆի, արաբ. talāfī —փոխարժեք, փոխհատուցում։ «Աստուծով, գնաման, պիտի թլաֆին տալ և գնալ=աստուծով, գնալիս, պետք է փոխարժեքը հատուցել, հետո գնալ» (259)։

Թնդպան, տիբ. rten-dpon—մաքսատան պետ։ «մին ձի թնդպանի խմար վեր ելնելէ =մեկ ձի՝ պետի հեծնելու համար» (195)։

Թու, պրսկ. tu—հվնբբ. ծալք, շարք, շերտ, օգտագործված է որպես ոչ ընտիր մուշկի տեսակ։ «և նաֆայ[մուշկ] թիրայ ամսին ժ-ումն ամ առել, թու, որ էր քաշն է փէսաբար» (353)։ «չալիշ արարին, թէ թու այ, զորումն մին սէր գլուխ գըձեցին=պնդեցին (՞), թե թու է և յուրաքանչյուր լիտրում մեկ սեր զեղջեցին» (282)։

Թուբիա, արաբ. tutiā —սպիտակ արջասպ, զինկ։

Թուլթ, արաբ. thūlth —մեկ երրորդ մասը։ «Ճանապխի զաղաթին մին թուլթն ես տամ= ճանապարհածախսի $^1/_3$-ը ես տամ» (279)։ «Բ թլթին ջինս, մին թլթին նաղտ=$^2/_3$-ը ապրանք,$^1/_3$-ը կանխիկ դրամ» (182)։ Տե՛ս նաև Թալթ։

Թուման, մնղլ. tumān—10.000 դինար (տե՛ս Դիան)։

Թումաֆարմին, հնդ. tumarfur նշանակում է ոչ մեծ քանակությամբ մթերք, ուտելիք, որ գյուղի բնակիչները տալիս էին պետական պաշտոնյաներին հյուրասիրելու համար։ «գ սէր թումաֆարմին առի= 3 սեր ուտելիք (՞) գնեցի» (238)։

Թումպ նստող, անծանոթ տերմին է։ Բնագրից կարելի է ենթադրել, որ խոսքը վերաբերում է առևտրականների որոշ դասի. թերևս ինչ-որ հատուկ տեղերում նստող մանր առևտրականներ։ «և ջոռ գերմակ թումպ նըստողանու ի ծախէլ=հինգ փունջ մանր [մարջան] թումպ նըստողների էի վաճառել» (324)։

Թուջարաբ, արաբ. tedjārat —առևտուր, վաճառականություն։

Թուքլի, հվնբբ. թուրք. tūklī —մազոտ, հավանաբար ինչ-որ մազոտ կտոր։

Թուքմա, գուցե պրսկ. dogma—կոճակ։

Թրայ—տե՛ս Թիրայ։

Թրաշգար, պրսկ. ճիշարը՝ terāshgār—սափրող, խուզող։ «ի ջվալին... թրաշգարի և կարողի, վաղէրայ խարճ գնաց=20 տոպրակին, խուզողի, կարողի և այլ ծախս եղավ» (271)։ Հվնբբ. պարկերը այնպիսի նյութից են եղել, որ հարկավոր է եղել մաքրել, կարգի բերել։

Թо, հվնբբ. պրսկ. toh կամ teh բառն է, որ նշանակում է դատարկ, փուչ (գրական լեզվում՝ tohī)։ «Լուլիմեն» կոչվող ոսկու մասին ասված է, որ հալելիս «թо դուս արեկ կրակումն=կրակում դատարկ (՞) դուրս եկավ» (252)։

Թолայ, հնդ. tola—ոսկու, արծաթի և քարեղենի քաշի միավոր, 12,15 գր։ Նեպալում այն կշռել է 14,56 գր։ Թолայի կեսը կոչվում է դուրմու (տե՛ս)։ Ըստ «Աշխարհաժողովի» «Մին թолէն կա ղիրէթ գ ցորէն այ, որ ա թолէն բ մսխալ կէս է գրան այ» (Աշխ. 31 ա)։

Թолող, արաբ. ṭolok —մարջանի տարատեսակներից։ «Մին ջոռ թолող և մին պզտիկ դանայ՝ գ դանայ մըռջամն ծախեցի=մեկ զույգ թолող և մի փոքրիկ հատիկ, [ընդամենը] 3 հատ մարջան ծախեցի» (167)։

Թոսի, պրսկ. ṭusī —մուգ ծիրանագույն, կամ բաց կարմիր գույն։ «Թոս» կամ «Թուս» քաղաքի անունից։ «Մին թոսի և մին արղավանի շալ=մեկ բաց կարմիր և մեկ ծիրանագույն շալ» (201)։

Թոփ, արաբ. thob—մեծաքանակ կտորի չափ, փաթեթ, թոփ. մոտավոր հաշիվներով շուրջ 40 դաղ։

Թոփալ, թրք. topāl—կաղ։

Թոփխանայ, պրսկ. tupkhāna —թնդանոթների կայան, թնդանոթաձիգ զորամասերի կայազոր. հվնբբ. տեղանուն։

Թոք, հնդ. tok—ընդհանուր գումար։ «էն էլ ուր տալին մին թոք այ գրած նաղտ—այն էլ իր միջնորդչիքը միանվագ է գրված՝ կանխիկ» (228)։

Թոֆիզի, արաբ. ta'vīqī —փոխանակում, դրամափոխություն։ «և թուման եռ դիան թոֆիզի աբասի և մահմուդի ունի, շաբանդարն վե առման չէր, սաղացուցի, թումանին զն դիան սարֆ գնաց=հինգ թուման 5000 դիան փոխանակելու աբասի և մահմուդի (արծաթ դրամ, 200 և 100 դինարանոց) ունեի, նավահանգստի պետը չէր վերցնում, իրացրի, թումանին 600 դինար փոխանակման վարձ գնաց» (73)։

Թֆիլղար—տե՛ս Թաֆիլղար։

Ժիկու—տիբ. jiku (rjesku), պարոն, տեր, բարձրաստիճան պաշտոնյա։

Ժուն—Տիբեթի ժողովրդական խոսվածքում Deva-Jong էր կոչվում Դալայ-Լամայի գերագույն իշխանությունը։ Ուստի կարելի է ենթադրել, որ ժուն կոչվող գերագույն պաշտոնյան եղել է հենց ինքը՝ Տիբեթի հոգևոր ու աշխարհիկ իշխանությունները մարմնավորող Դալայ-Լաման (Hand book, 188—192)։

Իլաի—ոչ լիարժեք օվրանկշահի (տե՛ս), շուրջ 10,90 գր. քաշով։ Հովհ. Տեր-Դավթյանի տվյալներով 100 օվրանկշահին=101,75 իլաիի։ «Մնացեալ բարաքաթն, որ զարշվումն գրած այ, կէ իլայի, բաղին օվրանկշահի=դիմացում (զուգահեռ սյունակում) գրված մնացյալ օգուտից 67-ը իլայի է, մնացյալը՝ օվրանկշահի» (269)։

Իլատայ, արաբ. 'alāhadda —առանձին, անջատ։ «Առաջին ջամէն պանին իլատայ ֆարտումն ջոկած այ=առաջին գոմարից պանեն (ոսկու տեսակ) առանձին հոգվածում առանձնացված է» (185)։ Տե՛ս նաև Ալահիդայ։

Իման, արաբ. a'mām կամ a'mmāma բառն է, որ նշանակում է գլխաշոր, ապարոշ, փաթթոց։

Իման, արաբ. imān—հավատք, խիղճ։ «... յետնէ ուր իմանըն ծախեց= հետո իր հավատքը (խիղճը) ծախեց» (205)։

Ինամ, արաբ. in'ām —նվեր, պարգև։ «Նաֆարանուն... խօրակ և ինամ ան տվել, բալդիի ինամ ան տվել=գործակատարներին ուտելիք և նվեր են տվել, ծառայի նվեր են տվել» (145)։

Ինկլիզի—անգլիական։ «ինկլիզի դուրբին=անգլիական հեռադիտակ»։

Իպրուղ. արաբ. ebrik—ջրի աման կամ սափոր, որով մահմեդականները աղոթքի և լվացման արարողության ժամանակ ջուր են վերցնում։ «իպրուղ լագան=լվացվելու պարագաներ»։ Տե՛ս նաև Ավթաֆա։

Իջարայ, արաբ. edjāra—վարձակալում, մենաշնորհ։ (Տեղս մոմն իջարայ այ մին դուքանդարայ=այստեղ մոմը մի խանութպանի մենաշնորհն է» (261)։

Իքան, թրք. ikan—ժամանակ, ընթացքում։ «գնաման իքան=գնալու ժամանակ, գնալիս»։

Իմին, բրբռ.—իր, առարկա, որևէ բան, մի բան։ «Յընդիավանումս մին իքմին ավելի այ գնացել=իմ փոխանցագրում, մի բան ավել է գնացել» (91)։ «Ոսկին ոսկերիճըն խալել էր, մին իքմին զաբուն էր դուս եկել—ոսկերիչը ոսկին հալել էր, մի բան (մի մասը, մի քիչ) անպետք (անորակ) էր դուրս եկել» (261)։

Իֆտրդայ, արաբ. ebtedā —առաջինը, նախ։ «Իֆտրդայ, ավելէն ինչպես որ գրած այ, կուզեմ=նախապես, սկզբից ինչպես որ գրված է, պահանջ ունեմ» (261)։

Լագան, պրսկ. lagan—կոնք, լագան, գործ է ածվում «իպրուղի» կամ «ավթաֆա» հետ, որպես լվացվելու պարագա։ Տե՛ս նաև Իպրուղ։

Լազում, արաբ. lāzem —պետք, անհրաժեշտ։ «ճանապխի խմար լազում այ=ճանապարհի համար անհրաժեշտ է» (141)։

Լազումաթ—տե՛ս Լազումիաթ։

Լազումիաթ, արաբ. lazemiyyāt —անհրաժեշտություններ, անհրաժեշտ բաներ։ «Փարայի լազումիաթ խրիտ առէ—որոշ անհրաժեշտ բաներ գնի» (136)։

Լաթայ, անծանոթ բառ, հվնբբ. պրսկ. lāta —զանազան գործվածքի մանր կտորներ. հիշված է մեկ անգամ։ «ա թան լաթայ» (231)։

Լաթուր, տիբ. latur (bla—thor)—փաթեթ, ծրար, պարկ։ «գ լաթուր առի մշկի խմար=երեք պարկ գնեցի մուշկի համար» (147)։

Լաին, պրսկ. lāyen—նեղ վզով շապիկ կամ վերնաշապիկ։ «Մին թան բարայզազայ առի, լաին շինելէ խմար=մեկ թան կտոր գնեցի, շապիկ պատրաստելու համար» (260)։

Լալ, արաբ. la'l—կարմիր հակինթ, սուտակ։

Լանաֆ, արաբ. lehāf —վերմակ, ծածկոց։ Տե՛ս նաև Լըխէպ։

Լամ, տիբ. lam—չափի միավոր, որ հավասար է եղել 12 դումպայի (տե՛ս)։ «ծբ դումպէն մին լամ այ» (237)։

Լամայ, տիբ. lama—բարձր։ Տիբեթում և Մոնղոլիայում այսպես են կոչվել բուդդայական բարձրաստիճան հոգևորականները։ Հաշվետումարից երևում է, որ այսպես են կոչվել նաև հոգևոր առաջնորդների կամ սրբերի արձանիկները կամ կուռքերը։ «մին ջոռ պզտիկ լամի սուրաթ=մեկ զույգ փոքրիկ լամայի արձանիկ» (213)։

Լայդավէ, թերևս արաբ. lā-da'vā —առանց վնեմի, առանց պահանջի, դատական պատասխանատվությունից ազատված։ «Կատէն չառի նընէ, որ է լաղավէ=դատաստանագիր չվերցնի, քանի որ վնեը հարթված է» (234)։

Լայեղ, արաբ. lāyeḳ —պատշաճ, արժանի, վայել։ «Ծախու լայեղ չէր=վաճառքի արժանի չէր» (202)։

Լանգար, պրսկ. langar—խարիսխ։ «Նավ-ի Սլեմանուն վերայ գնայ, բանդարումն լանգար գձէ=«Նավ-ի Սլեյման» նավով գնա, նավահանգստում խարիսխ գցի» (92)։

Լանգարգահ, պրսկ. langargāh —խարիսխ գցելու տեղ, նավամատույց։ «Աստուծով, Բանդարիս լանկարգահէն լանկար վեռու, գնայ Բանդարի Սուրաթին լանկարգահումն լանկար գըձէ =Աստուծով, Բանդարաբասի նավամատույցից խարիսխը քաշի և գնա Բանդար-ի Սուրաթի նավամատույցում խարիսխ գցի» (70)։

Լանկ, հվնբր. չին. lan—արծաթի քաշի միավոր, որ ըստ Հաշվետումարի հավասար էր 37,39 գր.։ «Մին լանկն Ըսպահանայ ռ դիանին բաշն ունի=մեկ լանկը հավասար է Սպահանի 1000 դինարի քաշին» (153)։

Լանկայ, թրք. lankar—կերակուր եփելու մեծ կաթսա։ «Մին արկաթէ լանկայ առի, որ ճանապխի լազում այ=մի երկաթե կաթսա գնեցի, ճանապարհին պետք է» (241)։ Տե՛ս նաև Լանկարի։

Լանկարի, թրք. langarī —պղնձե կաթսա։ «Նէքպալին առած պղնձէն մին լանկարին= Նեպալում գնած մեկ պղնձե կաթսան» (184)։

Լաշկարի, հվնբր. Լաշկար քաղաքում արտադրվող գործվածք կամ այլ ապրանք. «Էկրայ յինք առի իմ լաշկարին տված Մուսի Մարգարթին=Էկրայում վերցրի իմ լաշկարին, որ տվել էի պրն. Մարգարթին» (105—106)։

Լաշկարի զազ—տե՛ս Գազ։

Լաչիկ, պրսկ. lačak —գլխաշոր։ «Ժն լաչիկ առի, սատայ= 17 հատ գլխաշոր գնեցի, պարզ (առանց զարդի)» (273)։

Լաջվարդ, պրսկ. lādjvard —երկնագույն ներկ, լաջուր (lapis lazuli)։

Լարի, հվնբր. Լաս կղզու անունից, սաթի կամ մարջանի տեսակ, որ թերևս այդ կղզուց էր բերվում։

Լակ, հնդ. lāk—բուսական կարմիր ներկ է, որ պատրաստվում է Հնդկաստանում, ծառի ցողից։

Լաֆայուռի—գործվածքի տեսակ, որ, հավանաբար, արտադրվում էր Լաքայուռ կոչվող քաղաքում, ըստ Կոստանդի՝ ճերմակեղեն (Աշխ. 55 ա)։

Լաֆռի—մառչիլի (տե՛ս) մի տեսակը։ Ըստ Կոստանդի՝ լաքռի մառչիլի և դիանի կայուն համարժեք գոյություն չի ունեցել։ «Բարըշելէ գ՝ոլայ է, որ Էնն (750) դիան չուրի ԹՆ (900) դիան տեսալ ամ» (Աշխ. 49 ա)։

Լաֆայֆա—արաբ. lafāfa —ծածկոց, ապրանքը ծածկելու կամ փաթաթելու կտոր։ «Լաֆաֆի, մոմջամի և լըխէպի խմար ժը թան բարդար ան առել=ծածկոցի, մոմլաթի և վերմակի համար 18 թան կտոր են գնել» (84)։

Լրխէպ—տե՛ս Լահաֆ։

Լինծիմա—կուճինի (տե՛ս) տեսակ։

Լինկ, պրսկ. leng կամ long—քառանկյունի կտոր, որ բաղնիքում կապում են մեջքին։ «Լինկ-ի զանանայ=կանացի լինկ», «լինկի ղաթ=լինկի շերտ» (225)։ Հանդիպում է նաև որպես արծաթի քաշի միավոր։ «և դումպէն մին լինկի խըսէպ, ժը դումպէն մին լամ այ, զերայ ը շահին ը լինկ դ մսխալայքաշ այ=5 դումպան (տե՛ս) մեկ լինկի հաշվով, 12 դումպան մեկ լամ է, որովհետև 8 շահին 2 լինկ 4 մսխալ քաշ ունի» (237)։ Տե՛ս նաև Լանկ։

Լիսու, ըստ բնագրի կապերտանման գործվածք, հավանաբար արտադրվել է Լիսիում։ «Գ լիսու առի, որ է ջաջիմ» (239)։

Լիֆան, չին. li-fān —Չինաստանում այսպես է կոչվել նվաճված երկրամասերի կառավարման վարչությունը, որն իր ներկայացուցիչներն է ունեցել Տիբեթում, Արևելյան Թուրքեստանում և այլուր։ Հաշվետումարից կարելի է եզրակացնել, որ այդ ներկայացուցիչները օժտված են եղել դատավարական գերագույն իրավունքներով։ «Լիֆանանուն մոտ, որ մին ջուխտ զգդի ան=Լիֆանների մոտ, որ զույգ դատավորներ են» (182)։ «Ես սարքարումն արզ ի արարել, գձել էր լիֆանանին=ես դիմել էի սարքարին, նա ուղարկել էր լիֆաններին» (189)։

Լխէպ—տե՛ս Լահաֆ։

Լկոռ, տիր. lekor (le'u-skor) —գնդաձև կտորներ։ Խոսքը վերաբերում է քարբարի գնդաձև հատիկներին։ «Ծախեցի Ծատուրին է քարբարի լկոռ» (157)։

Լղամ, պրսկ. legām —սանձ։ «Ձիան սազի խմար դիաթու և մին քալայգիր լղամօվն առի= ձիու սարքի համար ծածկոց և մի գլխակալ գնեցի իր սանձով» (192)։

Լմբէր—տե՛ս Լմպէթ։

Լմպէթ, արաբ. lambat կամ lanbat—կոր, կլոր, կլորացված։ Գործ է ածված թանկարժեք քարերի ձևի, որակի իմաստով։ «լարի լմպէթ, լմպէթ աղեղ, լմպէթ մոչամ» (131, 325)։

Լու—կուճինի (տե՛ս) տեսակ։

Լուզամ, հվնբր. արաբ.-պրսկ. louzak—շեղանկյունի, նշաձև։ Օգտագործված է թանկարժեք քարի ձևի իմաստով։ «Մին դանայ լուզաք լալ=մեկ հատ շեղանկյուն հակինթ (սուղակ)» (273)։

Լուլիմ(այ) —անծանոթ բառ, ըստ բնագրի ոսկու անորակ տեսակ։ «Ք լուլիմէն որ քաշն այ ժը սուկամ ժզ սէվայ, զաբուն էր՝ դուս գձեցին=2 լուլիմայ [ոսկին], որի քաշը 12 սուկամ, 16 սեվա էր, անորակ էր, դուրս նետեցին» (239)։ «Ք լուլիմէն, որ Ղահմին տված էր, Ամ դուրս արեկ կրակումն=2 լուլիման, որ Ղահմի տված էր, կրակում (հալելիս) փուչ դուրս եկավ» (252)։

Լուլինի, հվնբր. պրսկ. luleh—խողովակ բառից, խողովակաձև, գլանաձև։ «Ժը ճոթ քանի բլօր առի, լուլինի էր=18 կտոր հանքային բյուրեղ գնեցի, գլանաձև էր» (248)։

Լոբայ, տիր. loba (slog-ba)—մորթուց պատրաստված հագուստ, մուշտակ, գործ է ածված քարբարը փոխանակելիս կամ վաճառելիս որպես համարժեք ապրանք։ «Ք մսխալ[քարբարին] գին գրինք, Ք լանկ, էս մին լոբայ առեց=9 մսխալ քարբարի գինը որոշեցինք 2 լանկ, որը եղավ մի մորթե հագուստ(՞)» (155)։

Լոբան, անծանոթ բառ։ Ըստ բնագրի կուճինի (տե՛ս) տեսակ։ «Մին թան սիայ (սև) լոթան կուճին» (225)։

Լոբռան—հվնբր. լութերական։ «Մուսի Դարվան ֆրանկսիսն, որ է լոթռան=ֆրանսիացի պրն. Դարվանը, որ լութերական է» (264)։

Լոնտրինայ—անգլիական մահուդ (կարմրավուն), պրսկ. նաև՝ londra, londrina-ն թուրքական ձևն է.

Լովրան, տիր. lovrān (blabrang) —Դալայ-լամայի ռեզիդենցիան։ Բնագրում հիշված է որպես Լհասայի պետական գլխավոր վարչության կենտրոն։ «Թիրայ ե-ումն ապրանքն բացին լովրանումն» «ժը բաքու լեղակին, Լասա լովրանումն սարքարի վերին=12 բաքու լեղակի համար Լհասայի լովրանումն սարքարի (տուրք) վերցրին» (328)։

Խաբար, արաբ. khabar—լուր, տեղեկություն։ «Ոչ խամբարքն, ոչ տեղին քաշն խաբար չի=տեղի հաշիվն ու քաշը չգիտեի» (230)։ «Հաղեղաթիս խաբար էր—իրողությանը տեղյակ էր» (280)։

Խազան, թրք. ḳāzān —կաթսա։ Տե՛ս նաև Ղազան։

Խազանայ, արաբ. khazāna—գանձ, գանձատուն, գանձարան։ «Դախիլ խազանայ նընե= մուտք անի գանձատուն» (257)։

Խաթայի, պրսկ. khatāyī —չինական։ Խաթայ կոչվել է ներկայիս Չինաստանի հյուսիսային մասը, իսկ հարավը կոչվել է «Չին»։ «ըռևանտն, չինին ացին վատն այ, Խաթային լէվն այ—ռևանտի չինականը ասացին վատն է, խաթային է լավը» (256)։

Խաթար, արաբ. khaṭar—վտանգ։ «Մին խաթար այ նընէ, ջուղապն ռվ կտայ=մի վտանգ որ պատահի, ով պիտի պատասխան տա» (245)։

Խաթի, հվնբր. արաբ. khaṭṭī —գծավոր։ «Որ լանկաքաշ ապրիշում, խաթի և ջլայ արնտ, որ գդակի զուրայ կուշինեն=78 լանկաքաշ մետաքս բերեց գծավոր և փայլեցրած, որով գլխարկի գագաթ են պատրաստում» (225)։

Խաթունանայ, մնղլ.—պրսկ. khātunāna —կանացի, աղնիվ տիկնանց՝ խաթունների համար։ «Ք լինկ եII քաղամ մախմատ, զառօվ, էնտից, որ խաթունանայ=2 լինկ 5,5 քաղամ թավիշ, ոսկեթանվածք, նրանից որ տիկնանց համար է» (183)։

Խաթր, արաբ. khāṭer —պատիվ, արժանիք, հարգանք։ «Մարդին խետ խաթրօվ գնալն զարար չէ առման=մարդկանց հետ հարգանքով վարվելը (սիրաշահելը) վնասակար չէ» (259)։

Խաշխաշ, հվնբր. արաբ. khashkhāsh —խաշխաշ։

Խալիս, արաբ. khāleṣ—զուտ, մաքուր, անխառն։ «Խալիս արծաթ ձեռն արեկ=ստացվեց մաքուր արծաթ» (174)։

Խալն—տե՛ս Խարտ։

Խակ—հարկ, որոշակի քանակությամբ կամ ծավալով կապոցներ, որ պարունակում էին 124—162 թան գործվածք։

Խամ, պրսկ. khām—կաշվե պարկ։ Հաշվետումարի տվյալներով շուրջ 27,5 կգ կշռով։ «Բ խամ գառ լաքայուռի=երկու պարկ ոսկեթանված լաքայուռի կտոր» (278)։ «Մին խամ Սլընկէն չոր մուշկ ունէր» (157)։ Խամ քաշել—կաշեպատել։

Խամ, պրսկ. khām—հում, անմշակ, հասարակ։ «խամ քէշ, խամ բոզչայ, խամ ալաչայ» և այլն (140, 339)։

Խամլայ, արաբ. khāmel կամ khāmen—աննշան, հասարակ, ցածրորակ։ «խամլայ աբծաթ=հարգը ցածր (ցածրորակ) արծաթ» (220)։

Խամնա—տե՛ս Խամլայ։

Խամշու, պրսկ. khāmshū(b)—կիսալվացած, մի թեթև լվացած։ «Լվացած, խամշու, դաթայ արարած խաստ և բարակ մամուրխանի= կիսալվացած և տաս տակ ծալած, հաստ և բարակ մամուրխանի գործվածք» (310)։

Խամպարմ—համբելը, հաշվելը։ «Ոչ խամբարքն, ոչ տեղին քաշն, խաբար չի=ոչ տեղի հաշիվը, ոչ էլ քաշը չգիտեի» (230)։

Խամսէր—տե՛ս Սողսէր։

Խամ քաշել—տե՛ս Խամ։

Խան, մնղլ. khān—զինվորական բարձր տիտղոս, որ տրվում էր նահանգապետներին՝ բեկլարբեկիներին։

Խաննալ—տե՛ս Խանչալ։

Խանչալ, արաբ. khandjar—դաշույն։

Խանման, պրսկ. khānomān—ընտանիք, տուն ու տեղ։ Բնագրում թերևս ընտանյաց խնամակալի, վերակացուի իմաստ ունի. «Մուսի Դարվանի խանման Մանվէլէն յինք առի (277), «Մուսի Դարվանին խանմանին խետ մին նաւն ի բռնել=պարոն Դարվանի ընտանիքի հետ մի նավ էի վարձել» (279)։

Խառայ, հվնբր. պրսկ. khārā—մետաքսյա, ալիքավոր թանկարժեք գործվածք։

Խառամայ, հվնբր. պրսկ. kharaka, kharak—իշուկ բառից։ Բնագրում գործածված է շորքոտանիներ, դրաստ բարձողի իմաստով։ «Հռահաթն Ժունիցն կաշու ին խանէլ, թէ տավար փոխեն խարաքէքն, էս ճանպէ դ խարճ գնաց, որ ձեռ վեռին, մեր տավարանին բաոցին= ժողովուրդը Ժունից թույլտվություն էր ստացել, որ բարձողները դրաստը փոխեն, այս հաշվից 4 [սուկամ] ծախսվեց, որ վերցրեցին ու մեր դրաստը բարձեցին» (197)։

Խասայ, արաբ. khāṣṣa—հատուկ, ընտիր, աղնիվ։ «Բիարի խասայ=ընտիր բիհարի [կտոր]» (140)։

Խավան դաստայ, պրսկ. hāvan-dasta—փոքրիկ սանդ իր հարվածիչով, հավանդ։

Խարճ, արաբ. khardj—ծախս, նաև՝ ելք, հոդ. խարջիսք։ Տե՛ս նաև Մասրաֆ։

Խարճիաբ—տե՛ս Խարճ։

Խարճրդ—տե՛ս Խարճուղ։

Խարճի, արաբ. khardjī—ծախսելու համար, ծախսի փող։ «Դինդուն Դամէն յետ արեկ, խարճի տվի=Դինտուն Դամից վերադարձավ, ծախսի փող տվի» (211)։ Տե՛ս նաև Խարճուղ։

Խարճուղ, թրք. khardjlik—ծախսի դրամ։ «Դինտուն գնաման, ձիան և խարճուղ տվի դ լանկ զ մսխալ=Դինտուն գնալիս 4 լանկ, 6 մսխալ ձիան համար և ծախսի դրամ տվի» (211)։ Տե՛ս նաև Խարճի։

Խաքայ, պրսկ. khāka—հող, փոշի։ «Էկրայ լեղակի խաքայ ծախեցի—Էկրատում լեղակի փոշի ծախեցի» (301)։ «Խուռջու լեղակի խաքայ ինք բերէլ—Խուռջայից լեղակի փոշի էինք բերել» (85)։

Խէր, արաբ. khayr—բարի, լավ, օգտակար։ «Տէր Աստուած խէրն և բարին առաջնորդեսցէ» (69)։

Խէրապատի—Խեյրաբադ քաղաքում արտադրվող կերպաս։

Խբսէպ, արաբ. ḥesāb—հաշիվ, խբսէպել—հաշվել։

Խբսէպել—տե՛ս Խբսէպ։

Խրտուրն, բրբռ.—իր հետ։

Խրիտ—տե՛ս Խրիտ։

Խիզան, բրբռ.—կին, ընտանիքի մայր։ «Մուքիին խիզանին տվի ա, ֆաղրնու և թէ տանտրոչ խիզանին, վաղերայ ողորմութիւն գնաց=Մուքիի (պաշտոնյա) կնոջը տվի 1,5 [սուկամ], աղքատների, ինչպես նաև տանտիրոջ կնոջը և այլ ողորմության ծախս եղավ» (243)։

Խոջայ, պրսկ. khādja—մեծահարուստ վաճառականին տրվող տիտղոս։

Խորակ—տե՛ս Խօրակ։

Խուռջին, թրք. khurdjin—որոշակի տարողությամբ կաշվե մախաղ կամ իրար միացրած զույգ պարկեր, ուսին կրելու կամ շորքոտանու մեջքին գցելու համար։ «Բ խուռջին ավարքեճառի» (182)։ «Մին խուռջին կարելէ մըղուրի տվի=մի խուրջին կարելու վարձ տվի» (273)։

Խուրդայ, պրսկ. khorda—մանր։ «Է զալամ խուրդայ խարճին ջանպէ= 7 նվագով կատարված մանր ծախսերի հաշվից» (313)։

Խուրդայվար, պրսկ. khordavār—մանր-մունր բաներ։ «Զարշվին խուրդայվարքն Լասայ ծախել ամ=դիմացի սյունակում նշված մանր-մունր բաները Լհասայում ծախել եմ» (340)։

Խուրուն, արաբ. khurūdj—դուրս հանելը, ելքը։ Բնագրում օգտագործված է ապրանքի արտահանման համար նավահանգստում շահանդարին (տե՛ս) վճարվող հարկի կամ մաքսի իմաստով։ «Թումանին գնկ դիան խուրուռ ամ տվել, որ է ջամէն և թուման զդնկ դիան=[Բանդար-Աբասում] թումանին 360 դինար ելքի հարկ եմ տվել, գումարն է 5 թուման 3460 դինար» (72)։ Կոստանդի մոտ թումանին 350 դինար է նշված (Աշխ. 104բ)։

Խուֆու—անծանոթ բառ։ Հիշված է իր գործընկեր Դավութի իր մոտ թողած իրերի շարքում, ինչ-որ առօրյա օգտագործվող առարկա պիտի լինի։ «Մին խուֆու վեր եղիր, մազլայ (՞) ծախեցի» (218)։

Խրիտ, պրսկ. kharīd—գնում, առք։ «Սուփայ գալալիցն գաֆայաթօվ փող ամ առել, խրիտ արարել=միջնորդ Սուփայից մի քանի նվագով փող եմ վերցրել և գնումներ եմ արել» (78)։

Խօ, բրբռ.—հո։ «Գընաման, խօ պիտի թլաֆին տալ=գնալիս հո պետք է փոխարժեքը տալ (կամ վնասը հատուցել)» (259)։

Խօրակ—պրսկ. khurāk—ուտելիք, սնունդ։ «Տէր Պետրոսի որդի Պողոսն էկրայ նօքար բռնեցինք, ...տարէն ծ տօլուքն այ, խօրակ-փուշակն մեզնէ=Տեր Պետրոսի որդի Պողոսին էկրայում ծառա վերցրինք 50 [ռուփի] ռոճիկով, ուտելիքն ու հագնելիքը մեզանից» (134)։

Կալայպրտոն, թրք. ḳelābdān—ոսկեզօծ կամ արծաթազօծ թել, կամ այդ թելով գործված երիզ և զարդարված հագուստ։

Կանայ—Եվրոպայում ընդունված երկարության չափ։ Ըստ Կոստանդի «Թարվէզ նզ կանէն ն գազ շայի դուս կգայ» (Աշխ. 72 ա)։ Այս հաշվով 1 կանան=91,3 սմ.։ Նույն աղբյուրի վկայությամբ Սպահանում 107 կանան է մեկ գազ (93,4 սմ.)։ Իսկ երբ համեմատում է Հալեպի գազի հետ, լոնդոնյան 3633 կանան=4844 հալեպի գազի։ Ըստ այդմ կանան=88,4 սմ. (Աշխ. 72բ)։

Կանուայ—քաշի միավոր։ Բնագրի տվյալներով՝ 53,14 գր.։ «Սէրն ծզ կանուայ այ, մին կանուէն բ փեսայբար կառէ=մեկ սերը 16 կանուա է, մեկ կանուան լինում է 2,5 փեսաբար» (256)։

Կանունգար, արաբ.-պրսկ. ḳānūngar—օրենսգետ, օրենքները բացատրող, ճշտող։

Կանունկու, արաբ.-պրսկ. ḳānūngū—իրավագետ պաշտոնյա, իրավախորհրդատու։

Կաշու, տիբ. kashū (bka'-s'us—հրաման, արտոնություն, թույլտվություն, արտոնագիր։ «Դէվվիցն կաշու այ խանել, որ բեռն բանան ոչ=դևից թույլտվություն էր ստացել, որ բեռները չբացեն» (164)։ «Ճանապխի խմար կաշուի խարճ, յառաջմէ բ-քն ունի, մանզուր չէր, նոր էլ մին խանեցի=մեկնելու համար արտոնագրի ծախս եղավ. նախապես երկուսն ունեի, որոնք ընդունելի չէին, նորից մեկն էլ հանեցի» (192)։

Կապայ, պրսկ. ḳabā—երկար զգեստ, պարեզոտ։ «Փաթու տվի յինքն, կապա շինեց= հաստ կտոր տվի իրեն, կապա պատրաստեց» (237)։

Կատայ, հվնբր. արաբ. ḳaḍā—դատ, արդարադատություն։ Բնագրում բացատրված է որպես դատաստանագիր։ «Կատինին, որ է դատաստանայգիր» (231)։ «Կատէն, որ է դատաստանայգիրն» (232)։ Մի այլ տեղ. «Կատէն չառի նընե, որ է լայ դավէ=դատաստանագիրը չվերցնի, քանի որ վեճը հարթված է» (234)։

Կարմաբ—բնագրում գործ է ածված մարջանի որոշ տեսակի իմաստով։ «Կարմաքավոր, առանց կարմաք» (127)։ Մի այլ տեղ գրում է՝ «կարմաք, որ է խմամ (փաթոթ)» (312)։ Պարզ է, որ մի տեղ որոշակի իր է, իսկ մյուս դեպքում մարջանի երանգը կամ վիճակը բնորոշող բան։

Կարտ, լատ. guarta—երկարության չափ՝ կանայի 1/4 մասը։ «Ժը ճոթին կանին ջամէն էր՝ առժզ, 3 կարտ=18 կտորի երկարության չափն էր 1016 կանայ, 3 քառորդ» (288)։

Կերտի, պրսկ. gerdı—կորություն, գնդաձևություն։

Կրղեզ, բրբռ.—կորիզ, նաև ընկույզի կեղև, որից ևս ներկ են պատրաստել։ Բնագրում «ամբրավի կղեզէ թասպի» կապակցության մեջ պետք է ենթադրել, որ խոսքը հավանաբար արմավի կորիզից կամ արմավենու կեղևից պատրաստված համրիչների մասին է։

Կինայ, թրք. gena—վերատին, նորից, կրկին։ «Կինայ ճանապէ յետ եկին=նորից ճանապարհից ետ եկան» (145)։

Կղեզ—տե՛ս Կրղեզ։

Կոնթ, ֆր. compte—հաշիվ։ «Իմ կոնթէս դալալշագերդանուն տաս=միջնորդի աշակերտներին իմ հաշվից վճարեա» (97)։ «Պասրու ծախսին կոնթն գրել էր=Բասրայի ծախսի հաշիվը գրել էր» (108)։ «Յինք առի Փանոսին կոնթէ փոխ՝ Իսայից=Փանոսի հաշվից փոխ վերցրի Իսայից» (281)։

Կուճին, տիր. kujin (sku'dzin)—հագուստի կտոր. հիշված են տարբեր տեսակներ. «ըռանկամիզ (գունավոր) կուճին», «գեղին լիծիմա կուճին», «սիայ(սև)կուճին», «շու կուճին» և այլն։ «Տանտիրոջ մեծ տղին մին կուճին կապացու տարա» (227)։

Կուճրին, հնդ. khojarī—խուզարկություն, ստուգում։ «Տեղիս բարբաստն այ, որ շուրի կուճրին առնել, նրա այ տալման=այստեղի կարգն է, որ մինչև ստուգելը տոկոս է վճարվում։ (262)։

Կոռ, թրք. ḳevr—ժապավենանման գոտի, գործվածքի եզրի ամուր մասը, որ օգտագործվել է կապոցներ կապելու համար։ «բIII սէր կոռ առի, որ բընար այ, բոզչայրանդ=2,75 սեր կոռ գնեցի, որ եզր է, կապոց կապելու համար» (270)։ «Է փեսաբար կոռ առի, գ շալէ լիսէպին քնար դրի=7 փեսաբար կոռ գնեցի, 3 բրդյա վերմակին եզր դրի» (274)։ Կա նաև ծագումն անհայտ մի այլ կոռ, որ բնագրում սակագնի իմաստ ունի։ «մին թասպի քարբար ծախեցի, վազնն էր դ մսխալ և թանկ, կոռ կիսօվն, արծաթ արեկ, ջամէն ը=մեկ թասպի քարբար ծախեցի, քաշն էր 4 մսխալ 5 թանկ, կոռ ու կեսով հաշված, եղավ 8 լանկ արծաթ» (157)։ Կան նաև երկու կոռով կամ 2,75 կոռով կատարված հաշվարկներ (155, 317)։

Հալ, արաբ. ḥāl—վիճակ։ Հալ-ի սիմայ—կտրված, դրոշմված, դրամահատված ոսկու կամ արծաթի մասին է ասված. գործածված է նաև հակառակ՝ «սբայ հալի» ձևով։ «Յինք առի Ընուփ դալալէն, հալ-ի սբայ [արծաթ]=միջնորդ Ընուփից ստացա արծաթ՝ դրամահատված վիճակում» (257)։ Տե՛ս նաև Սբայ։

Հալի մանալի, հվնբր. արաբ.-պրսկ. ḥāli-be-ḥālī—իրավիճակի արագ փոփոխություն, անմիջապես կատարվող որևէ բան, արագ, շտապ։ «Զափութրիցն ա ֆօճ ին եկել հալի մահալի, որ բեռներս գրին օդումն, դուն մրչեցին=մաքսատնից շտապով մի գունդ (շատ) մարդ էր եկել, բեռներս գրեցին սենյակում և դուրը կնքեցին» (251)։

Հալիլայ, պրսկ. halila—հնդկանուշ, terminalia chebula.

Հալ-ի սմայ—տե՛ս Հալ և Սբայ։

Հախ, արաբ. ḥakk—իրավունք, հասանելիք, վարձ, գործավարձ։ «Ամէն մարթ ուր հախին տէրն այ, ուր խսէպովն=յուրաքանչյուրը իր հասանելիքի տերն է իր հաշվին համապատասխան» (132)։ «Նաֆարին ըռուսխաթ տվի, բ ամիս բ օրէն, կառէր հախն եII= ծառային խան» (132)։ «Նաֆարին ըռուսխաթ տվի, բ ամիս բ օրէն, կառէր հախն եII= ծառային աղատեցի, երկու ամիս, 8 օրվա վարձը լինում էր 5,625» (280)։

Հախդար, արաբ.-պրսկ. ḥakk-dār—իրավատեր։ «Ումպրն պարոնին այ, պիտի որ հախդարը հախդար խաբացանե=հրամանը պարոնինն է, նա պետք է իրավունքը (հասանելիքը) իրավատիրոջը տա» (234)։

Հախ-թալապ, արաբ. ḥakk—ṭalab—պահանջի իրավունք, պահանջ, ստանալիք։ «Պարոն Ավետիին էլ լեղակին և գերդազուն ջահտան ոնչինչ մեր հախ թալապ չըմնաց=լեղակի գերդազու հաշվից, պարոն Ավետիքին այլևս մեզանից ոչ մի պահանջ չմնաց» (85—86)։

Հակաբայ, հվնբր. արաբ. ḥakāb-ից՝ կանացի գոտի, զարդագոտի։ Բնագրում կա նաև հոմանիշ տիր. «ճակու» բառը. «առի մին ճակու, որ է հակաբայ» (192)։

Հաղեղաթ, արաբ. ḥakīkat—իրողություն, ճշմարտություն, իրականություն։ «էն յիրեսումն հաղեղաթն գրած այ=մյուս էջում իրողությունը գրված է» (154—155)։

Հաղը սաի, արաբ. ḥakk-e sa'y—որևէ գործի վարձատրություն, աշխատավարձ։ «ուրն հաղը սաի լինի=իր աշխատանքի վարձը լինի» (191)։

Համալանայ, արաբ.-պրսկ. ḥammālāna—բեռնակրի, համալի վարձ։

Հաջաթ, արաբ. ḥādjat—պետք, անհրաժեշտություն։

Հասապ, արաբ. ḥasab—ըստ, համաձայն, հաշվով։ «Վերոյ հասապօվն ամատ արարի=վերի հաշվով (կամ ըստ վերոգրյալի) մուտք արեցի» (270)։

Հասէ, արաբ. ḥiṣṣa, պրսկ. ḥeṣṣeh—մաս, բաժին։ «Մաթոսին հասէն ամատ արարի=Մաթոսի բաժինը մուտք արեցի» (283)։

Հասել, արաբ. ḥāṣel—արդյունք, եկամուտ։ Բնագրում ապրանքներից գանձվող հարկի կամ եկամտահարկի իմաստ ունի։ «Ատրաք-ի մուրաբին հասիլ տվի» (276)։ «Շաբաթ ժէ-ումն հասիլն տվի... ն-ին՝ qII, սբայ հալի հասիլ այ գնացել=շաբաթ 17-ին հասիլը վճարեցի ... 100-ին 3,5 կանխիկ դրամով (հատված արծաթով) հասիլ է գնացել» (262)։

Հասիլ—տե՛ս հասել։

Հավալայ, արաբ. ḥavāla—հանձնարարություն, փոխանցում։ «Ոսկին ֆուրզումն Նազարէթին հավալայ արարի, որ շաբանդարին քշտին բացաւ=նավահանգստում ոսկին փոխանցեցի Նազարեթին, որը նավահանգստի պետի մոտ բացեց» (74)։ «Ավալէն ամ ուրն յավալայ արարել, ըռուզլամումս ամատ-ըռաֆտ չարարի—սկզբից եմ իրեն փոխանցել, դրա համար էլ օրհաշվի մեջ մուտք ու ելք չարեցի» (94)։

Հավալայ-ֆաֆալայ, արաբ. ḥavāla-kafāla—լիազորված փոխանցում կամ հանձնարարություն։ «Ընուփին տվի Պետրոսին ծախսած մոմայ զընիցն իլայի զնձ, ինչպես որ հաղեղաթն գրած այ ամատումն, հավալայ-քաֆալայ այ=Պետրոսին ծախսած մոմի գնից 350 իլայի տվի Ընուփին, ինչպես որ մուտքում գրված է՝ դա լիազորված փոխանցում էր (այսինքն իրեն լիազորել էին մոմի վաճառքից գոյացած գումարից 350 իլայի տալ Ընուփին)» (263)։

Հավայ, արաբ. havā—օդ, եղանակ, կլիմա։ «Օվլայ գարմսի, որ բաղի սամպուրի հավայ ունի=վերին արևագարձային, որ այրող քամու եղանակ ունի» (236)։

Հարի, հնդ. khara—ավանակ կամ այլ գրաստ։ «Հարու քրէ տվի շուրի Ֆաթուռայ, որ նաւին խասաւ=մինչև Ֆաթուռա գրաստի վարձ տվի, որ նավին հասավ» (272)։

Հարսանայ, պրսկ.-արաբ. harsana—ամեն տարի, ամենամյա, տարին մեկ վճարվող տոկոս կամ վարձ։ «Յինք առի Իսայից, էլ Փանոսին կոնթէ այ, ջամէն աճ օվրանկշահ, որ է հարսանայ=ստացա Իսայից, կրկին Փանոսի հաշվից, 100 օվրանկշահի, որը ամենամյա [վճար է]» (281)։

Հաքիմ, արաբ. ḥakim—բժիշկ։ «Տղէքն օլի ազար ունին, հաքմի գնալէ գալէ տվի=տղաները (գործակատարները) տարափոխիկ հիվանդությամբ հիվանդ էին, բժշկի գնալ-գալու համար վճարեցի» (149)։

Հաֆալ—արաբ. aḥvāl—որպիսություն, վիճակ։ «Ոսկուն ծախսին հաֆալն գրած այ=ոսկու ծախսի որպիսությունը (ինչպես լինելը) գրած է» (219)։

Հընդէզ, թերևս՝ հնդիկ, հնդկացի։ «Էկրայ պարոն Աւետկին տվէլ ամ փիշքաշի իր հընդէզ խանի=էկրայում պարոն Ավետիքին իր հնդիկ խանի համար նվերացու եմ տվել» (308)։

Հիլա, արաբ. ḥila—խարդախություն, մեքենայություն, կեղծիք, կեղծ հնարանքներ։ «Մուրատէն յինք առի, դըվալի եա, ռ հիլօվ մուշկ=Մուրադից, խորամանկությամբ, հաղար հնարանքով մուշկ գնեցի» (220)։

Հռաթաբ, արաբ. ra'yyat—ռայաթ, ժողովուրդ, մարդիկ։ «Զիկիչու հռահաթն ժունիցն կաշու ին խանել—Զիկիչայի ժողովուրդը (մարդիկ) ժունից արտոնագիր էին վերցրել» (197)։

Հռասաթ—տե՛ս Յըռասաթ։

Հօռբար—տե՛ս Յօռբար։

Հօռթի—անծանոթ բառ, հվնբր. վայր Տիբեթում, որտեղ գործվող երփներանգ կտորները այդպես են կոչվել։ «Աղարկել էր մանճայ հօռթի բն թան=200 թան հոռթի երփներանգ մետաքսյա կտոր էր ուղարկել» (221)։ Տե՛ս նաև Յօռբար։

Զեռն—երկարության չափ։ «ը փէրի առի, մինն է ձեռն, բաղին մին իքմին ավել այ ձքսումն=7 փերի (մետաքսյա կտոր) առի, յուրաքանչյուրը 7 ձեռն, մնացյալը չափի մեջ մի բան ավել է» (241)։ Տե՛ս նաև Զեռնայձիքս։

Զեռնայձիքս—երկարության չափ, բառացի՝ ձեռնաչափ։ «բ ճարմակ թիրպու առի, լենն, մինն բ ձեռնայձիքսն—երկու սպիտակ թիրպու (կտոր) գնեցի, լայնը՝ յուրաքանչյուրը 9 ձեռնաձիքս» (240)։

Զիքս—չափ, երկարություն չափելը։ «Բաղին, մին իքմին ավէլի այ ձքսումն—մնացյալը չափի մեջ մի բան ավել է» (241)։

Ղազան—թրք. ḳāzān—կաթսա, տե՛ս նաև Խազան։

Ղազի, արաբ. ḳāḍī—դատավոր, կրոնական դատական ատյանի պետ։

Ղար, թրք. ḳār—կարդ, աստիճան, շերտ, ծալք, անգամ, տակ։ «Փալանկփուշ կայ, մին ղաթ, ֆի խակումն անկը թան=մեկ տակ ծածկոց կայ, ամեն հակում 162 թան» (297)։ «Գ ղաթ գունախկարի ունեն, էս միանէն այ=երեք աստիճանի տուգանք ունեն, սա միջինն է» (233)։

Ղալ—*արաբ.* ḳāl—*վեճ, կռիվ, աղմուկ։ «էն ղալի ջահաթն էս էր, որ ...=այդ աղմուկի (կռվի) պատճառն այն էր, որ...» (230)։*

Ղալաբլուղ, *արաբ.-թրք.* ḳalblūḳ—*կեղծիք, սխալանք, շփոթություն։ «Ասլին ջամէն տեղըս գրում չեմ, չուն որ ղալաբլուղ գնէ=մայր գումարն այստեղ չեմ գրում, որովհետև կարող է շփոթմունք առաջացնել» (85)։*

Ղալաիգար, *արաբ.-պրսկ.* ḳal'igar—*պղնձե ամանեղենը անագապատող, կլայեկող։ «ղալաիգարի մղուրի=կլայեկողի վարձ» (146)։*

Ղալամ, *արաբ.* ḳalam—*գրիչ, բնագրում ղալամ է կոչվում ամեն մի հաշվապահական հոդվածը, որն արձանագրում է մեկ գործողություն։ «Վերոյ դ ղալամին ջամէն այ բեռ թուման=վերի չորս հոդվածների գումարն է 250 թուման» (70)։* Ղալամ տալ—*հաշվապահական հոդվածով մատյանում գրանցել։ «Ցինքն գրել չէր, ես ղալամ տվի, մինչև մին զմին տեսնանք վարայ սիդայ նընենք=ինքը չէր գրել (գրանցել), ես գրանցեցի, մինչև որ իրար հանդիպենք՝ ստուգենք» (108)։* Ղալամ-ղալամ *կամ* ղալամ-բը-ղալամ գրել—*հոդված առ հոդված բոլոր հաշիվները ճշգրիտ գրանցել։ «Քուլիիս ջամէն տեղըս մին ղալամ գրեցի, քաթումն ղալամ բը ղալամ գը գրեմ=այստեղ բոլորը մեկ հոդվածով գրանցեցի, օժանդակ մատյանում հոդված առ հոդված կգրեմ» (84)։ «Ոսկին վեր բերի, ղալամ-ղալամ գրեցի=ոսկին բերեցի և հոդված առ հոդված գրանցեցի» (252)։*

Ղալամ-բը-ղալամ—*տե՛ս Ղալամ։*

Ղալամ-ղալամ—*տե՛ս Ղալամ։*

Ղալամ տալ—*տե՛ս Ղալամ։*

Ղալամի, *արաբ.-պրսկ.* ḳalamī—*դաճած, նախշած կտոր։*

Ղալայ, *արաբ.* ḳal'—*անագ, կլայեկ։*

Ղալայի նշադիր, *պրսկ.* nashādor—*անուշադր (նշադիր) ամոնյակի քլորատ, որ օգտագործվում է պղնձեղենը անագազօծելիս (կլայեկելիս)։*

Ղալայբալուղ, *թրք.* ḳālābālıḳ—*աղմուկ, աղաղակ, աղմկարար բազմություն։ «Գրում վախտն ջումիաթ շատ կին ղալայբալուղ էր=գրելու ժամանակ շատ ժողովուրդ կար, աղմուկ էր» (261)։*

Ղալատ, *արաբ.* ghalaṭ—*սխալ։ «Վերոյ խըսէպումն էկրայի չիթ այ գրած զ թան, ղալատ այ, ե թան էկրայի այ և մին թանն Փաթանու=վերի հաշվի մեջ 6 թան էկրայի չիթ է գրած, սխալ է,—5 թանը էկրայի է, մեկը Փաթանի» (349)։ Նույն բառից է բարբառային* ղալատել—*սխալվել։ «Բ ղալամիս գինն վերոյ դերգազուն ջամէն այ, որ ղալատեցայ, էստուր ջամէն դերգազունն այ և դերգազուն ջամէն էստուրն այ=երկու հոդվածի գինը վերոհիշյալ դերգազու գումարն է, որ սխալվեցի,—սրա գումարը դերգազունն է, իսկ դերգազունը սրանն է» (307)։*

Ղալատել—*տե՛ս Ղալատ։*

Ղալիան, *արաբ.* ḳaliyān—*ղայլան, նարգիլե, կլկլակ։ «Ժդ շիշայ ղալիան առի=14 հատ նարգիլեի սրվակ գնեցի» (270)—ղայլանի ներքևի մասը, որտեղ ջուրն է լցվում։*

Ղալիլ, *արաբ.* ḳalīl—*քիչ, մի քիչ, պակաս, քիչ մասը։ «Ղալիլ էլ դալալի այ գնացել=մի քիչ էլ միջնորդի վարձ է գնացել» (177)։ «Լասա թամամ փող չունի, որ տվել ի, ղալիլ տվի=Լհասայում լրիվ փողը չունեի, որ տայի, քիչ (պակաս) տվի» (137)։*

Ղանուն, *արաբ.* ḳānūn—*օրենք, կանոն։ «Յիրենց ղանունն էս այ» (180)։*

Ղանտ, *պրսկ.* ḳand—*շաքար։*

Ղասապ, *արաբ.* ḳassāb—*մսագործ, մսավաճառ։*

Ղասիտ, *արաբ.* ḳāṣid—*սուրհանդակ, նամակատար։ «Լառայ ջումիաթով մին ղասիտ ին աղարկել=Լառից բոլորը միասին մի սուրհանդակ էին ուղարկել» (71)։ «Էկրոյ մին քէսգի ղասիտ աղարկեցինք Սուրաթն=Էկրայից մի շտապ նամակատար ուղարկեցինք Սուրաթ» (136)։*

Ղավզ, *արաբ.* ḳabḍ—*ստացական, անդորրագիր։ «Ըսպահան սահապ պարնիքն ամանաթ տվին ինձ Յովանիսիս ի գրօվ սարբըմօր ոսկի, թէ տանես Սուրաթումն տաս Բաղդասարի որդի Նազարէթին, ինձնէ պարնիքն ղավզ չինք առին, ացին Սուրաթումն դու էլ Նազարէթիցն ղավզ չինք առ» (69)։*

Ղարաղաթ, *թրք.* ḳaraḳāt—*հաղարջ։*

Ղարար, *արաբ.* ḳarār—*որոշում, ընդունված կարգ։ «Գնալէ-գալէ ղարարն է էր, դ փիշաքի ինք տվել, չուն որ սարվատին արեկ ոչ՝ բաղին տվինք ոչ=գնալ-գալու համար 7 էր որոշված, 4 կանխավճար էինք տվել, քանի որ իր ժամկետին չեկավ, մնացյալը չտվինք» (136)։ «Ղարարն էս այ, որ Մաթոսին ոսկին Փաթանայ ինչ գնով որ ծախվէ, ինչ ավաքով որ գնայ Ըսպահան, նոր էլ էն խըսէպովն տայ պարնիքն=այսպես է որոշված, որ Մաթոսի ոսկին Փաթանում ինչ գնով որ վաճառվի և ինչպիսի փոխադրավարձով որ ուղարկվի Սպահան, այդ նույն հաշվով տա պարոններին» (194)։*

Ղարաւաշ, *թրք.* ḳārāvāsh—*աղախին։ «Թէ ղուլի և թէ ղարաւաշի, վաղերայ ... ե լանկ ե=թե՛ ծառայի, թե՛ աղախնի, և այլ (ծախսեր) ... 5 լանկ, 5 (մսխալ)» (186)։*

Ղարբպուրեն, *արաբ.* gharīb—*օտարական բառից՝ օտարություն, պանդխտություն։ «մարդին խետ ղարբպուրենում խաթրով գնալն ղարար չէ առման—օտարության մեջ մարդկանց հետ հարգանքով վարվելը (սիրաշահելը) վնասակար չէ» (259)։*

Ղարշու, *թրք.* ḳārshū—*դիմաց։ Բնագրում խոսքը վերաբերում է ելքի և մուտքի զուգահեռ սյունակներին, երբ մուտքի սյունակում ասում է «ղարշվի» կամ «ղարշվում գրած այ» «ղարշվու ջամէն» և այլն, ի նկատի ունի ելքի սյունակը, իսկ երբ ելքի սյունակում է հիշվում, ուրեմն խոսքը մուտքի սյունակի մասին է։*

Ղարշու-բը-ղարշու, *թրք.* ḳārshū-be-ḳārshū—*դեմ դիմաց, իրար համապատասխան, իրար հավասար։ «Թէ բերեմ էստից պակասցնեմ, ջամայ խարճն ղարշու-բը-ղորշու չէ գումն=եթե բերեմ այստեղից պակասեցնեմ, ընդհանուր ծախսը դեմ դիմաց հավասար չի ստացվի» (119)։*

Ղազ—*տե՛ս Ղավզ։*

Ղափան, *թրք.* ḳapān—*ծանրակշեռք, մեծ կշեռք։ «Շիրազ գ բեռ լոնտրինէն ղափան տվինք, ելաւ ջամէն անկ դիտր թարվիզի=Շիրազում 3 բեռ լոնտրինան կշռել տվինք, եղավ ամբողջը 160 թավրիզի լիդր» (71)։*

Ղափանելէ—*կշռելու վարձ։*

Ղէսպ, *հվնբր.* *արաբ.* ghaṣb—*բռնագրավում, սեփականում, յուրացում։ «Մին լանկարի, բ սէր, տանտրոջ տանըն ղէսպ ելաւ=մի կաթսա, 2 սեր [տարողությամբ կամ քաշով] տանտիրոջ տանը յուրացվեց» (184)։*

Ղըսմար, *արաբ.* ḳesmat—*մաս, բաժին, վիճակով բաժին ընկած որևէ բան։ «Գնանք Սուրաթումն ղըսմաթ ղըձենք, կիսենք=գնանք Սուրաթում վիճակ գցենք, բաժանենք» (82)։ «Թէ Յովանին ղըսմաթ ընկայնէ՝ Յովանն խատացանէ պարնացն=եթե Հովանին բաժին ընկնի՝ Հովանը հասցնի պարոններին» (351)։*

Դիտր—*քաշի միավոր, որ պարսկական աղբյուրներում կոչվում է «ման»* (man)։ *Իրանում պետական հաշիվներում օգտագործվում էր Թավրիզի մանը, որ հայտնի էր նաև որպես «Շահի դիտր» և կշռում էր 3000 գր., այն մեր բնագրում կոչված է Թարվիզի դիտր (71)։ «Աչամի դիտր» և կշռում էր 3000 գր., այն մեր բնագրում կոչված է Թարվիզի դիտր (71)։ «Աչամ-ստանայ» կոչվող դիտրը կշռում էր շուրջ 6 կգ։ Կոստանդը տալիս է Հնդկաստանում ընդունված տարբեր դիտրերի քաշը, ըստ որի՝ «մին Աքպարի դիտրն խ սէր այ, որ մին սէրն լ փենայբար այ, որ մին փէսէն դ մսխալ կէս այ, որ մին Աքպարի դիտրն եոդն մսխալ այ։ Փաքայ դիտրն էորն մսխալ այ, քաշայ դիտրն զորն մսխալ այ» և այլն (Աշխ. 30 ա)։*

Ղլաֆտ, *արաբ.* ghelāf—*կեղև, պատյան։ «Ճօվիսայ առի ... բիլմանի ղլաֆտի խմար=հատ և ամուր կտոր գնեցի սրի պատյանի համար» (265)։*

Ղորազ—*տե՛ս Ղօթազ։*

Ղորաղայ, *արաբ.* ḳorāḍa—*հին, մաշված, կոտրած, անպետք։ «Մին ղորաղայ ղազան, ուր կոտրած սարփշտօվն=մի հին (անպետք) կաթսա իր կոտրած կափարիչով» (219)։*

Ղուբայ, *արաբ.* ḳubba—*գմբեթ, գագաթ, որևէ բանի ծայրը, գագաթը։ «... որ գդակի ղուբայ կու շինին=... որ գլխարկի գագաթ են սարքում» (225)։*

Ղուրին, *թերևս թրք.* ḳūtī—*արկղ։ «Բարղամին ա ղութին ըռիղայ գոդլուն=Բարղամի մեկ արկղ մանր գոդլուն» (107)։*

Ղուլ, *թրք.* ḳūl—*ստրուկ, ծառայ։ «Թէ ղուլի և թէ ղարաւաշի, վաղէրայ ... ե լանկ ե=թե՛ ծառայի, թե՛ աղախնի և այլ [ծախսեր]... 5 լանկ, 5 [մսխալ]» (186)։*

Ղուլուղ, *թրք.* ḳūllūḳ—*ծառայություն։* Գնալ ղուլուղն—*ստորադասի ներկայանալը վերադասին՝ ներկայանալ ի ծառայություն։* Ղուլուղն հասնել, ղուլուղն ուղարկել—*որևէ վերադասի կամ բարձրաստիճան մեկին ներկայանալու կամ որևէ բան ուղարկելու մասին ասված հարգալից արտահայտություն։*

Ղուլումանայ—*անծանոթ բառ։ Բնագրից կարելի է ենթադրել, ինչ-որ վարձ կամ ի դիմաց որևէ ծառայության տրվող գումար։ «Ե թանկայ ղուլումանայ կտրեցի, տվի փողն չալնի=որևէ ծառայության տրվող գումար։ «Ե թանկայ ղուլումանայ կտրեցի, տվի փողն չալնի=5 թանկա ղուլումանա որոշեցի (հաստատեցի) և չալնի փողով վճարեցի» (327)։*

Ղումաշ, *արաբ.* ḳemāsh—*նյութ, մեծ մասամբ գործածվում է գործվածքեղենի իմաստով* (материал), *թանկարժեք կտոր։ Մեր բնագրում գործ է ածված իր նախնական իմաստով։ «Բ գաւաթ, ղումաշն խաստ=երկու գավաթ, հատ (թանձր) նյութից» (218)։*

Ղումղումայ, *արաբ.* ḳūmḳūma—*նեղ բերանով ջրաման, տափաշիշ։ «Բ չինի ղումղումայ ծախեցի=երկու հախճապակե տափաշիշ ծախեցի» (206)։*

Ղուֆլ, արաբ. ḳūfl —կողպեք, փականք։

Ղօբազ, արաբ. ḳotas —Դեհխոդայի բառարանում նույնացված է ֆր. cétacés—կետ ձկան հետ, սակայն ճշգրտելով ավելացնում է, որ այդպես է կոչվել նաև Տիրեթի կենդանիներից՝ եղնուղտը կամ յակը (պրսկ. ghozghav), որի պոչը կապում են ձիան վզին, ամրացնում են դրոշակի ծայրին և օգտագործում որպես զարդ։ Հաշվետումարում զրանցումներ կան ղօթազի պոչի առուծախի վերաբերյալ (174, 237, 256, 263 և այլն)։

Ճալնկին, հվնբր. տիբ.—ըստ բնագրի պաշտոն կամ կոչում։

Ճակու, տիբ. lcag-sku—հյուսված զոտի։ Տե՛ս նաև Հակաբայ։

Ճոր, բրբռ.—կտոր, հատ, ինչպես նաև գործվածք, չիթ։ «Ժր ճոթ լոնտրինէն, որ Բանդարումն ուշուր գրեցին=18 կտոր լոնտրինային, որ նավահանգստում (Բանդարաբաս) տասնորդ գրեցին» (72)։ «Ներքոյ գրեալս փաթանու առած ճոթեղէնի քաթէն այ=ներքևում գրվածը Փաթնայում գնած կտորեղենի հաշվին է» (335)։

Ճու—կուճինի (տե՛ս) տեսակ։

Ճունի, հնդ. dj'ūnhi—մի տեսակ եղեզ, որից ձեռնափայտ, մտրակի կոթ և այլ իրեր են պատրաստել։ Եղել է նաև սև գույնի, որ հիշված է «սիայ ըռանկ (սևագույն) ճունի» կամ պարզապես «սիայ ճունի» ձևով (187, 233)։

Ճուրայ, տիբ. čura (chu-ran)—կապույտ, երկնագույն-լեղակի տեսակ։ «ալլ դիտր լեղակ և ժ սէր ճուրայ» (327)։

Ճպ, հվնբր. տիբ. čap (chapa)—ապրանք, իրեղեն։ «ա լանկ տվի, որ ետ Հաֆզին ճպի գինն=մեկ լանկ տվի, որ տվեց Հաֆզի ապրանքի գինը» (208)։

Ճտրբազ, հվնբր. պրսկ.։ Ըստ կազմության (ճտր-բազ) զրաղմունք ցույց տվող բառ է. «Լզ դանայ ճտրբազի նիգին ատի=33 հատ ճտրբազի մատանի գնեցի» նախադասության մեջ, թվում է, թե խոսքը վերաբերում է ինչ-որ մարդկանց, որոնք որոշ գործ կատարելիս մատերին հատուկ մատանիներ կամ գուցե մատնոցներ էին հագնում» (273)։

Ճօվիսայ—անծանոթ բառ։ Բնագրում հաստ գործվածքի իմաստ ունի, որ, թերևս, օգտագործվել է որպես վերարկուի աստառ։ «տեղս բ խաստ ճօվիսայ ատի, որ լահաֆ ան ասում=այստեղ 2 հատ ճովիսա գնեցի, որին լահաֆ (վերմակ) են ասում» (265)։

Ճօվրի, հվնբր. արաբ. djevrī—կանոնավոր, ըստ կարգի, ըստ տեսակի։ «Պոչն, մաղն նարմ էր, տվի ճօվրի կապեցին=պոչի մազը փափուկ էր, տվի ըստ կարգի (ձևի) կապեցին» (264)։

Ճօտր, տիբ. chos-gter—օրենսգետ, իրավագետ։ Օգտագործված է պարսկերեն հոմանիշ՝ կանունկու և կանունգառ բառերի հետ (տե՛ս)։ «Ճօտրուն, կանունկուի և մուշրուֆի, (տե՛ս)» (250)։

Մազար էր, պրսկ. magar—միթե, գուցե, մի գուցե, ուր էր թե։ «Տաւարանին սատակէլ ին, մազար էր թէ ուրէնքն ին սատակել=գրասոները սատակել էին, ուր էր թե իրենք սատակեին» (230)։

Մադարի, հնդ. medārī—հատուկ խավի մարդիկ, որոնք բամբուկից պատգարակներ էին պատրաստում և դրանցով բեռներ փոխադրում։ Բնագրում խոսվում է այդ կարգի գործավորներ վարձելու և աղատելու մասին։ «Խիզանին թիրայ ժզ-ումն մադարի բռնեցի», «բ քսայ մադարի բաց թողի», «Մադարի նաֆարին ժ ամսէն տալուղն (վարձը) տվի» (188, 248, 255)։

Մաեայ—տե՛ս Մայա։

Մազլայ, անծանոթ բառ, արաբ. mazalla—հովանոց կամ հատուկ մազից պատրաստված վրան։ Հիշատակված է միայն մեկ անգամ, իր գործընկերներից Դավութի իրերի նկարագրության մեջ (218)։

Մաթլապ, արաբ. matlab—ինչպես որ պահանջվում է, ինչպես որ պետք է, մի խոսքով, վերջապես։ «Ինձ շոր էր շինել տվել, մաթլապ, որ բաղանօվս=ինձ համար շոր էր պատրաստել, ինչպես որ պետք էր (ճիշտ) իմ մարմնով» (259)։ «Մաթլապ, ինչ տվել ի Փաթանայ, ողջ ինձ խասաւ=մի խոսքով, ինչ որ Փաթանում տվել էի՝ ամբողջը ետ ստացա» (281)։

Մալում, արաբ. ma'lūm—հայտնի։ «մալում նընէ=հայտնի դառնա», «մալում չելավ, թէ թամասուկն որ թարեղում այ փոխած=հայտնի չեղավ (չպարզվեց), թե մուրհակը որ թվականին է փոխած» (112)։

Մախմար, արաբ. makhmar—թավիշ, թավշյա կտոր։

Մանդասի, արաբ. mukdesī բառի աղավաղված ձևն է։ Այսպես էին կոչվում այն մարդիկ, որոնք ուխտի էին գնում Երուսաղեմ։ Արաբները Երուսաղեմն անվանում են Կուդս (սրբաղան, սրբավայր), որից՝ մուկդուսի-սրբավայր այցելած։ Տե՛ս նաև Մուղդասի։

Մանմուդի, պրսկ. maḥmūdī—Սեֆևիների օրոք այսպես էր կոչվում 100 դինարանոց արծաթ դրամը։

Մամլայ, արաբ. mo'āmela—առևտուր, առևտրական գործարք, առևտրական հաշիվ։

Մամուրխանի—գործվածքի տեսակ։ «լէII թան խաստ և բարակ մամուրխանի ամ առել» (307)։

Մայա, պրսկ. māya—հիմնադրամ, մայր գումար, պարտք տրված գումարը առանց տոկոսների։ «Ադամ ժզ-ումն տվի թրիքամին մայէն=Ադամ ամսի 16-ին թրիքամից [վերցրած պարտքի] մայր գումարը վճարեցի» (97)։ Տե՛ս նաև Ասլ։

Մայբաղի, արաբ. mābakī—մնացորդ, մնացյալ։ «Մինչև թարեղս, դաֆայաթօվ յինք ի առել առրնն, մայբաղին բնն յիրես արարաք, որ տայ Աղազարին=մինչև սույն թվականը մի քանի նվագով ստացել էի 1950, մնացյալ 250-ը երես առ երես համաձայնվեցինք, որ տա Աղազարին» (79—80)։ Տե՛ս նաև Բաղի։

Մայշայ, պրսկ. māhča—դրոշակի գագաթին ամրացվող մետաքսե լուսնաձև զարդ, կամ խոշոր գնդասեղ, որ կանայք որպես զարդ ամրացնում են գլխին կամ վզին։

Մանդիլ, արաբ. mandīl—գլխաշոր։ «Մանդիլին զարդարն գրած այ յառաջմէ, սաղաին գինն գրեցի=ոսկեթել գլխաշորը նախապես գրված է, հասարակի (պարզի) գինը գրեցի» (270)։

Մանզուր, արաբ. manẓūr—նախատեսված, դիտված, դիտելի, ընդունելի։ «Յառաջմէ բ կաշու ունի, մանզուր չէր, նոր էլ մին խանեցի=նախապես 2 արտոնագիր ունեի, ընդունելի չէր, մեկ հատ էլ նորը հանեցի» (192)։

Մանձիլ—տե՛ս Մանձիլ։

Մանձիլ, արաբ. manzil—կայան, օթևան, մեկ կայանից մինչև մյուս կայանն ընկած ճանապարհի հեռավորությունը։ «Սրնճէն մին մանձիլ դէն, Քըշնարկի սարումն ի յինք առել=Սրնճից մեկ օթևան (կամ մեկ կանգառ) այն կողմը, Քշնարկի սարում էի վերցրել» (92)։

Մաննայ, տիբ. manča (man-tsi)—երիտասարդ մետաքսյա գործվածք։

Մանսապդար, արաբ.-պրսկ. mansabdār—աստիճանավոր, պաշտոնյա։ Խոսքը հավանաբար զինվորական աստիճան ունեցող հատուկ պաշտոնյայի մասին է։ «Էկրայ մինչև Փաթնայ մանսապդարին խարճ ամ տվել» (138)։

Մանտրմէլի, դրամական միավոր Նեպալում։ Ի. Դեզիդերին հիշում է mandermali ձևով (Դեզ. 130)։ Հովհաննեսը տալիս է մանտրմելու համարժեքը շահի ռուպիով՝ 1/2 ռուպի։ «Տեղիս (Քաթմանտու) խարճն ըռաջին սքէն այ մանտրմէլի, որ II կառէ։ Բերի մանտրմէլու խսէպ գրեցի, շուրի աստուծով խասանենք Պատրինկայ, էն շաղ Յընդուստանայ խըսէպ կու դրեմ» (236)։

Մապլաղ, արաբ. mablagh—որոշ չափով դրամ, գումար։ «Վերոյ մապլաղ զոէնղդ-ին էկրու պարոն Ավետիկն յնդվի առե=վերոհիշյալ գումարը՝ 6794, էկրայից պարոն Ավետիքը փոխանցի» (114)։

Մարշիլ, իտ. marsili—եվրոպական արծաթ դրամ։ Ըստ Կոստանդի և Ղ. Վանանդեցու, գործածության մեջ են եղել տարբեր երկրների և տեսակի մարշիլներ՝ ֆլորի, լաքրի, սվիլէ, գործածության մեջ են եղել տարբեր երկրների և տեսակի մարշիլներ՝ ֆլորի, լաքրի, սվիլէ, մշկէթի և այլն, որոնց քաշը միջին հաշվով եղել է 24,6—24,9 գր.։ Կոստանդը տարբեր մարշիլների համարժեքները տալիս հարկ է համարել նշել նաև, որ այդ գները փոփոխական են։ «վատի (ժամանակի) գորայ՝ գայ եվել, գայ պակաս, էնձ դիան՝ շուրի բն դիան տեսել ամ» (Աշխ. 47ա, 49ա)։

Մասալ, արաբ. maṣāleḥ—անհրաժեշտ նյութ։ «Զլայ տալէ խրմար մասալի=փայլեցնելու համար անհրաժեշտ նյութի [վճարվեց]» (319)։ «Մին չադիր կարել տվի, թէ կըտաւի, թէ մասալի և թէ գերդկի մզուրի տվի=մի վրան կարել, տվի, կտավի, անհրաժեշտ նյութի և գերձակի վարձ վճարեցի» (339)։

Մասայ—ոսկու և արծաթի քաշի միավոր։ Բնագրի տվյալներով շուրջ մեկ գրամ, 12 մասան մեկ թոլա է, որը կշռում էր 12,15 գր.։ Նեպալի մասան 1,21 գրամ էր կշռում։

Մասկուր, արաբ. madhkūr—հիշատակված, հիշյալ։ Վերոյ մասկուր—վերոհիշյալ մասկուրիս

Մասկուրիս ջահտան—հիշյալ պատճառով, նշված կողմից, այս կապակցությամբ։ «Մասկուրիս ջահտան յարևանցի թօփալ Փանոսին ախբեր Ավետիքն մեզ վաբիլ էր=այս կապակցությամբ, երևանցի թոփալ (կաղ) Փանոսի եղբայր Ավետիքը մեր լիազորն էր» (74)։

Մասրաֆ, արաբ. maṣraf—ծախս, ծախսվել։ «Դօպու և դալաքի մասրաֆ գնաց—լվացքի և վարսավիրի ծախս եղավ» (74—75)։ Տե՛ս նաև Խարճ։

Մարդանայ, պրսկ. mardāna—արական, տղամարդու համար։ «բ ջօռայ փապուճ մարդանայ

գ ջուխտ զանանայ, ըռաջինց տան ծախեցի=9 զույգ տղամարդու և 3 զույգ կանացի փափուշ (հողաթափ, չուստ) ռաջայի տանը վաճառեցի» (136)։

Մարիֆաթ, *արաբ.* ma'refat—*գիտելիք, իմացություն, շնորք, ներկայացում։ «Գասպարն* բ *շարմ լեղակ ուներ, Նաղարէթին մարիֆաթօվն, Սարքարին և Բաբէ ապրանքին խետ դրինք, որ տանէ Ըսպահան=Գասպարը 2 պարկ լեղակ ուներ, Նաղարեթի միջոցով (շնորհիվ կամ ներկայացմամբ) դրեցինք Սարքարի և Բաբայի ապրանքի հետ, որ տանի Սպահան» (94)։*

Մարհամաթ, *արաբ.* marammat—*նորոգում, կարկատում։ «Սուրայուս մարհամաթի մղուրի—ջրամանիս (սափորիս) նորոգության (կարկատելու) վարձ» (146)։*

Մարհամայ, *արաբ.* marḥama—*բամբակյա կտոր, որ օգտագործվել է վիրակապի, երեսսրբիչի և ցամքոցի համար։*

Մարմար—*հիշված է որպես բիհարում արտադրվող գործվածքի տեսակ, որ չափվում է երկարության չափով՝ թան-ով։ «Մին թան սաղ և* բ *նիմայ մարմար առի=մեկ թան լրիվ և 2 կիսատ մարմար գնեցի» (274)։*

Մարձան, *տիր.* martsan (dmar-mtshan)—*ալ կարմիր կտոր։ «Բրթօվ փաթու յինք առի, մարձան=բրդե հաստ կտոր վերցրի՝ ալ կարմիր» (155)։*

Մարշանտ, *ֆր.* marchand—*վաճառական բառից, հվնբր. այսպես են կոչվել վաճառականական բեռներ փոխադրող նավերը, որոնք պատկանել են այս կամ այն առևտրական տանը։ Բեռները նավում բարձելու մասին գրում է. «Նավ-ի Ըստամբոլ մարշանտումն բաոցի» կամ «մին խակն նավի Ըստամբոլ մարշանտումն ամ բաոցել... և մինն Յերմդ մարշանտումն ամ բաոցել» (95, 304)։*

Մարվան, *անծանոթ բառ։ Բնագրում՝ նվերացու ապրանք. «կ մարվան տարայ ըռաջին» (242)։*

Մաֆնայ—*մանդիլի (տե՛ս) տեսակ։*

Մաֆեզ, *արաբ.* mu'āveḏ—*փոխարեն, ի դիմաց, համապատասխան։ «Խըսեպն շինեցի թարէդիս ծախսին մաֆեզ=հաշվարկը կատարեցի սույն թվականի ծախսին համապատասխան» (253)։ «Ղարշու դրեալ խըսէպին մաֆեզ, ջամայ ամ տվել=ի դիմաց (համապատասխան) զուգահեռ այնուակի հաշվի եմ հաշվարկ կատարել» (202)։*

Մաֆուաշ—*տե՛ս Մաֆրաշ։*

Մաֆսուլ, *արաբ.* mafṣūl—*չհաշված, բաժանված, անջատված։ «Իմ* բ *լոնտրինէս քօթիդարշումն չափել ին, ըռավանին մաֆսուլ, գաղումն ավելի էր, խարճ կուզին—իմ 8 կտոր լոնդրինան մաքսատանը չափել էին, փոխադրավարձը չհաշված, գաղում (չափում) ավել էր, հարկ էին պահանջում» (104)։*

Մաֆրաշ, *արաբ.* mafrash—*ապրանքները փաթաթելու և հակեր կապելու համար կապերից, կաշուց կամ այլ նյութից պատրաստված կապոցներ։*

Մզուրի, *հվնբր. պրսկ.* mozdūr *(վարձու աշխատանք կատարող) բառից—վարձ, աշխատավարձ, ձեռնավարձ։ «Նավումն դալաքի մզուրի ամ տվել=նավի վրա վարսավիրի վարձ եմ տվել» (73)։ «Ապրանքն քարվանսարէն բերելէ մզուրի գնաց=ապրանքը կարավանատուն բերելու համար վարձ գնաց» (76)։*

Մել, *բնագրում՝ թեյի կշռի չափ։ «Մին մէլ տածան շայ վեռի» (206)։*

Մըռջամ, *արաբ.* mardjān—*բուստ, մարջան։*

Միանայ, *պրսկ.* miāna—*միջին, միջին չափի, միջին որակի։ «լ սուկամ միանայ ոսկի=30 սուկամ միջին որակի ոսկի» (232)։*

Միզար, *արաբ.* me'zār—*հատուկ ներքնահագուստ կամ երկար կտոր, որ կապում էին մեջքին։ «Փանոսին խըմար* բ *սիայքար (սև գործվածք) միզար առի» (276)։*

Միթայի, *հնդ.* mithāi—*քաղցրեղեն։ «Գոլման միթայի բերէց=գալիս քաղցրեղեն բերեց» (278)։*

Մինաքար, *պրսկ.* minākār—*արծնապատ, էմալապատ, արծնով զարդարված։ «մինաքար շիշայ=արծնով կամ էմալով զարդարված սրվակ» (141)։*

Միջօվի—*ընկերովի, կիսարբ։ «Որ խուրջու եկինք, ղբ թան միջօվի լեղակ ինք առել=երբ խուրջայից եկանք, ընկերովի 92 պարկ լեղակ էինք առել» (299)։*

Մկել—*մեկ էլ, մյուս։ «Մկէլ ֆարտումն գրած այ=մյուս հաշվեթղթում գրած է» (188)։*

Մուդաթ, *արաբ.* muddat—*ժամանակ, ժամանակամիջոց, ժամկետ, փոխ տրված կամ փոխանցված գումարի տվյալ ժամկետի ընթացքում գոյացած տոկոսը։ «Ելաւ արծաթին ջամէն ասլն և մուդաթօվըն ... խբ լանկ է մսխալ=մայր գումարի և տոկոսի ընդհանուր արծաթի գումարը եղավ 49 լանկ 7 մսխալ» (229)։*

Մուդաթի, *արաբ.* muddatī—*ժամկետով տրված, տոկոսաբեր գումար։ «էկրայ, մաբաղի*

փողս, պարոն Ավետիին մօտ բաց ամ թողել մուդաթի=մնացյալ փողս, էկրայում, տոկոսով եմ դրել պրն. Ավետիքի մոտ» (82)։

Մուդար, *անծանոթ բառ, թերևս պրսկ.* mū-dār—*մազոտ, խավոտ, անհարթ. բնագրում ապակյա կամ հախճապակյա սրվակի կամ թասի որակի իմաստով։ «Առած շիշիցն ծախեցի* բ *դանայ մուդար» (170)։ «Ե քաշտինման (նավանման) թաս,* բ*-քն մուդար» (218)։*

Մուզայ, *պրսկ.* muza—*երկարաճիթ կոշիկ։ «գ ջօռայ մուզայ=3 զույգ կոշիկ» (159)։ «բ մուզայ խաթայու=երկու խաթայի (չինական) կոշիկ» (225)։*

Մուբասաղի, *արաբ.* mutaṣaddī—*վերակացու (հարկային, ֆինանսական գործերի)։ «Մութասադու խարճ այ գնացել», «Մութայսադէքոնց խարճ գնաց» (84, 142)։ «Էստից յետնէ մութայսադու խարճ տվի» (257)։*

Մուբասաղանայ—*մութասադուն (տե՛ս) վճարվող տուրք։*

Մուխլիզ, *արաբ.* mokhles—*անկեղծ, անկաշառ, նվիրյալ (ծառա)։ «քամինայ մուխլիզ=նվաստագույն, խոնարհ ծառա» (254)։*

Մուղամի, *արաբ.* maḳāmī—*հվնբր. կանգառի, օթևանելու համար տրվող գումար։ «Բարիեքոնց մուղամի [տվի]=բեռնակիրներին օթևանի վարձ տվի» (145)։*

Մուղդասի, *արաբ.* moḳdesī—*Երուսաղեմ այցելած։ Արաբերեն* ḳuds *(Երուսաղեմ) անունից։ «Մուղդասի Ղուկաս» (357)։ Տե՛ս նաև Մահդասի։*

Մուղիմ, *արաբ.* moḳīm—*միջնորդ,* mokimī—*միջնորդչեք։ «Նաղդ խարճ գնաց մուղիմի վաղերայ=կանխիկ ծախս եղավ միջնորդի և այլն» (258)։*

Մում, *պրսկ.* mūm—*մոմ, մեղրամոմ։* Մումի (mūmī)—*մոմե, մոմած կամ մոմագույն։ «Մումի գերմակ մըռջամ=մոմագույն մանր մարջան» (160)։*

Մումի—*տե՛ս Մում։*

Մումջամ, *պրսկ.* mūm-djāma—*մոմած կտոր, մոմլաթ, որով ապրանքը փաթաթում էին անձրևից և խոնավությունից պահպանելու համար։ «Լաֆաֆի, մումջամի և լխեպի խմար=անձրևից և խոնավությունից պահպանելու համար» (302)։*

Մումրան—*անծանոթ ապրանքի անուն, որ վաճառվել է քաշով։ «իբ նեղայ մումրան», «ե սէր մումրան» (184, 256)։*

Մունեբայ—*տե՛ս Մունջարայ։*

Մունջարայ, *արաբ.* mūndjarā—*ընթացք, տևողություն, ձգել (ժամանակը), մունջրայ տալ կամ ստանալ—ապրանքը երկար պահելու կամ ուշացնելու համար հատուցում վճարել կամ ստանալ։ «Իմ թալաղ ջաֆարխանիցն* բ *թան մնացել էր Աղազարին մոտ, մունջրայ ամ յինք առել=իմ ստանալիք ջաֆարխանից (գործվածքի տեսակ) 8 թան մնացել էր Աղազարի մոտ, հատուցում ստացա» (296)։*

Մունջրայ—*տե՛ս Մունջարայ։*

Մուշկ, *պրսկ.* moshk—*սև գույնի հոտավետ յուղ, որ գոյանում է որոշ տեսակի այծյամների (մշկայծյամ) պորտի ներսի կողմում գտնվող պարկի մեջ։ Օգտագործվել է և՛ բուժական նպատակով, և՛ որպես օծանելիք, բարձր է գնահատվել հատկապես Տիբեթյան մուշկը (moshk-e tabbati)։*

Մուշրուֆ, *արաբ.* moshref—*ֆինանսական, հարկային պաշտոնյա, հաշիվները քննող, վերստուգող։*

Մուշալկայ, *մնղլ.* mūčūlgā—*փոխադարձ պայմանավորվածություն,* **մուշալկայգիր**—*փոխադարձ պայմանագիր։ «Մեզ մին զմինու գամպե այ որ է մուշալկայգիր տալէն=մենք մեկս մյուսի հետ գամպե (տե՛ս) ենք, որ նշանակում է թե իրար պարտավորագիր ենք տվել» (233)։*

Մուսի, *ֆր.* monsieur—*պարոն։ «մուսի Դարվան ֆրանկսիզ= ֆրանսիացի պարոն Դարվան» (264)։*

Մուտաբ—*տե՛ս Մուդաթ։*

Մուռաբայ, *արաբ.* morabba'—*քառակուսի, քառանկյունի, նաև ծալապատիկ նստել։ Կա նաև մուռաբբա'-նեշին—ծալապատիկ նստող, արտահայտություն։*

Մուխիայ, *հնդ.* mukhya—*բանվորներին կամ բեռնակիրներին հսկող վերակացու։ «ժէ բարիայ բանեցի ... և մին մուքիայ= 17 բեռնակիր վարձեցի և մեկ վերակացու» (198)։ «Քազակ մուքիէն և բարիայ վեռեց փախավ=վերակացու Քազակը 5 բեռնակիր վերցրեց, փախավ» (150)։*

Մուխիանայ—*մուքիին (տե՛ս) կամ վերակացուին տրվող վարձ։ «Մուքիանայ տվի, ջամէն ալI=մուքիայի վարձ տվի, գումարն է 1,50» (145)։*

Մոջամ—*տե՛ս Մըռջամ։*

Սսխալ, արաբ. mithkāl—ծանրության միավոր։ Հաշվետումարից, ինչպես նաև Ղ. Վանանդեցու և Կ. Ջուղայեցու գործերից երևում է, որ երկու տարբեր մսխալներ են օգտագործվել, մեկը կոչվել է «աջամստանայ», այսինքն Իրանում օգտագործվող մսխալ, որ կշռել է 4,724 գրամ, իսկ մյուսը՝ «Դաթուրի» կամ «Բութանտայ» մսխալ, որի քաշը հավասար է եղել 3, 779 գրամի (Գանձ. 18, Աշխ. 119)։

Մրեել—տե՛ս Մօրհ։

Մօլայ—արաբ. mollā—մահմեդական կրոնավոր։

Մօռէ—թերևս տիբ. mar-span—ընտիր սատին, գրանցված է երկարության չափով. «մին թան մօռէ» (231)։

Մօսում, արաբ. moūsem—եղանակ, տարվա որոշ ժամանակ, տարեշրջան։ Հնդկական օվկիանոսի շրջանում վեցամսյա հով ժամանակաշրջան։ «Ներքոյ գրեալս Նազարեթին տալիքս այ, անցեալ մօսումէն=ներքո գրյալը անցյալ տարեշրջանից իմ տալիքն է Նազարեթին» (92)։ «Նոր թամասուկ արետ, որ կէսն գալ մօսումին և կէսն բ տարում տայ=նոր մուրհակ տվեց, որ կեսը գալիք տարեշրջանում, իսկ մյուս կեսը երկու տարում տա» (182)։

Մօվի, հվնբր. թրք. māvi—երկնագույն։ «մօվի ալաջա» (335)։

Մօվջուբ, արաբ. moūdjūd—գոյություն ունեցող, առկա։ «... որ կայ մօվջութ [ոսկի] ջամէն ծգ սուկամ, ժեII սէվայ=...որ առկա ոսկու գումարն է 53 սուկամ 15,5 սեվա» (263)։ «Ծախած և թէ մօվջութ ոսկուն ջամէն ղը սուկամ ժաII սէվայ=ծախած և թե առկա ոսկու գումարն է 98 սուկամ, 11,5 սեվա» (265)։

Մոր, անծանոթ բառ—բնագրում հանդիպում է նաղտ (կանխիկ) բառին զուգահեռ, հավանաբար հականիշ՝ «ապառիկ» իմաստով։ «Սարմայայ յինք առի Յովանէն, խ նաղտ և բ մոր=գրամագլուխ վերցրի Հովանից 40 կանխիկ և երկու ապառիկ (՞)» (87)։

Մորհ, պրսկ. mohr—կնիք։ «Ուր մրհօվն մրհած այ=իր կնիքով կնքած է» (194)։

Մորհանայ, պրսկ. mohrāna—կնքելու վարձ, տուրք։ «Ղաղուն մօրհանի=դատավորին տրված կնիքի գրամ» (84, 281)։

Մորհիայ, պրսկ.-արաբ. mohriya—դաջված կտորի տեսակ։ Տիբեթում այսպես է (mo-gos-gra-kha) կոչվել ոչ թանկարժեք բծավոր գործվածքը, որից ոչ ունևոր կանայք հագուստ էին կարում։ «[Դերդազին] մօրհիայ այ շինել—դերդազին (տե՛ս) դարձրել է բծավոր կտոր» (304)։

Յաղամայ գլուխ, թուրք. ādam—մարդ բառից—մարդագլուխ, յուրաքանչյուրին։ «Բարքաստի ունին, որ յաղամայ գլուխ բ բաքու զապուն լեղակ կը տան=կարգն այն է, որ մարդագլուխ (յուրաքանչյուրին) 2 բաքու (պարկ) անորակ լեղակ են տալիս» (147)։

Յակ—հակ, տե՛ս նաև՝ Խակ։

Յաղը սաի—տե՛ս Հաղը սաի։

Յամ, պրսկ. ham—և, նաև։ «Յամ Մաթոսին անումն էր գրած, յամ՝ իմ= և՛ Մաթոսի անունն էր գրած, և՛ իմ» (242)։

Յամայ, արաբ. ammā—սակայն, բայց։ «... որ ասումնէն իր սէր այ, յամայ ավելի դընէ—որ ասում են 43 սեր է, սակայն ավելի է լինում» (282)։

Յամայ, պրսկ. hama—բոլորը, ընդհանուրը։

Յամայջամայ, պրսկ.-արաբ. hama-djam'—ընդհանուրի գումարը։ «Ջամէն այ դը, որ յամայջամայ ամ բռնել=գումարն է 98, որ ընդհանուր գումարն եմ հանել» (254)։

Յամալ, արաբ. hammāl—բեռնակիր, համբալ։

Յամամ, արաբ. hammām—բաղնիս։

Յամիշայ, պրսկ. hamisha—միշտ, շարունակ։ «Բութիէքն յամիշայ ուտում ան ելէլ—բեռնակիրները (կամ բանվորները) շարունակ ուտելիս են եղել» (152)։

Յանկ առնել, պրսկ. hang—ձև, եղանակ բառից—ձևել։ «Յանկ առելէ և փալանկփուշին կարելէ մղուրի ամ տվել= ձևելու և փալանկփուշի (ծածկոց) կարելու համար վարձ եմ տվել» (290)։

Յավալայ,—տե՛ս Հավալա։

Յէքսն, հայ.—էգուց, վաղը, վաղվա օրը։

Յըժդահադար, պրսկ. azhdahādār—վիշապավոր, վիշապի նկարներ ունեցող։ «Մին թան յըժդահադար սիայ կուճին=մեկ թան վիշապազարդ սև կուճին (կերպաս)» (124)։

Յընդիավան—տե՛ս Յընդվի։

Յընդվի, պրսկ. henduī—դրամի փոխադրում տոկոսով, երբ մի քաղաքում դրամը հանձնվում էր որևէ դրամափոխի և հանձնարարագիր էր վերցվում այլ քաղաքում ստանալու համար։ Փոխադրումը կոչվում էր «հընդվի անել», իսկ տոկոսը կամ վարձը՝ «հնդիավան»։ «առի յընդվի արարինք, յընդիավան տվի ն-ին ա=1000 [ռուփի] փոխադրեցի, փոխադրավարձ տվի 100-ին 1,25» (137)։

Յընդվևար—հնդկերեն։ «Տակումն յընդվևար գրած այ=ներքևում հնդկերեն գրած է» (278)։

Յրռասաբ, պրսկ. rasad—մաս, բաժին, հասանելիք։ «Շահին երեք յըռասաթն պարոնացն լինի—շահի երեք մասը (3/4-ը) պարոններինը լինի» (69)։ «Ես իմ յռասաթ մին թուլթն տվի=ես իմ բաժին 1/3-ը տվի» (280)։ «Էկրայ լեղակի խաքայ ծախեցինք էստից ինձ ժա յըռասաթ խասաւ=էկրայում լեղակի փոշի ծախեցինք, սրանից ինձ 11 [ռուփի] բաժին հասավ» (301)։

Յիլ, պրսկ. hel—շուշմիր, հել (amomum cardamon)։

Յիլաղայ, արաբ. a'lāka—կապ ունենալ, կախում ունենալ, առնչվել, վերաբերել։ «Էստոնց պարոն Ավետիքին յիլաղայ չունէ=սրանց հետ պարոն Ավետիքը չի առնչվում (նրան չի վերաբերում)» (84)։

Յուդի շիլա—ըստ բնագրի մի տեսակ ներկված կտոր։ «գ թան յուդի շիլին ըռանկայի այ գնացել՝ ա=3 թան յուդի շիլային 1 ռուփի ներկելու վարձ է գնացել» (291)։

Յուզուր, արաբ. hoūr—ներկայություն։ «Էկրայ առի պարոն Ավետիքն ջումիաթի յուզուրումն սարքարի ամանաթ քարքարն=էկրայում համայնքի անդամների ներկայությամբ ստացա սարքարի պահ տված սաթը» (134)։

Յուճայ, տիբ. huča (hub-ja)—թնջի տեսակ։ «գ բաղչայ չայ ամ առել, մինն յուճայ, մինն պուճայ և մինն տածան» (351)։

Յուտբար—տե՛ս Յօրբար։

Յուքմ, արաբ. hokm—հրաման, կարգադրություն, որոշում։

Յօբին—թամբաքուի (ծխախոտի) տեսակ։ «դնն. յօբին թամպաքու արետ» (232)։

Յօրբար—տիբ. hor-pa—այսպես է կոչվել Հյուսիսային Տիբեթը կամ Ջունգարը, այս անունով հայտնի են եղել նաև որոշ գործվածքներ, «յօրբար մանճայ», «չօթայ բարայ կանանչ յօրբար» և այլն (225, 234)։

Նաբաթ, արաբ. nabāt—բույս, խոտ, հվնբր. հակեր կապելու համար։ «Նաբաթ տեսնելու գնացի, խոտերին ամանելէ խմար» (265)։

Նաեմ, հնդ. nayaka, naek—կրտսեր հրամանատար, ոստիկանական պահակախմբի պետ։ Հիշատակվում է հատուկ անունների հետ։ «Նաեք Դուրբի», «Հարի նաեք» և այլն։

Նազիր, արաբ. nāzer—դիտող, ստուգող, վերստուգող պաշտոնյա, հսկիչ։ «Մին խամ մուշկն, որ քաշեցին, տարան... Նազիրինց տան դրին» (257)։

Նազլ, արաբ. nazl—իջնել, իջևանել, որևէ տեղ դադար առնել, կամ ապրանքը վար դնել։ Այստեղ, հվնբր., ուղարկվող ապրանքը ժամանակավոր որևէ տեղ պահելու, կամ վար դնելու համար տրվող վարձ։ «Ըռավանին նազլն զազով վեռել տվի=ուղարկվող ապրանքի նազլը դատարանով վերցնել տվի» (272)։

Նազր, արաբ. nadhr—խոստմունք, որևէ գործի հաջողության համար նախապես խոստացված զոհաբերություն կամ հոգևոր տուրք։ «Նիրհան ժե-ումն փարդանէն ըռուսխաթ ելայ, նազր գնաց=նիրհան ամսի 15-ին փարդանից թույլտվություն ստացա, նազր գնաց (նազր տվի)» (243)։

Նաէպ—տե՛ս Նաիպ։

Նաէր—տե՛ս Նաեք։

Նաիպ, արաբ. nā'ib—բառացի՝ փոխանորդ, տեղակալ։ Հնդկաստանում նաիպ կամ հոգնակի ձևով՝ նավաբ (navvāb)էին կոչում տեղական մահմեդական տիրակալներին, ավելի ուշ՝ նաև սիպահիների պետերին։

Նալբաքի, պրսկ. nalbakī—փոքրիկ պնակ, թեյի բաժակի տակ դրվող պնակ։

Նալեել, հայ.—պայտել, արաբ. na'l—պայտ բառից։ «Ձիան նալեելէ քըսուր զարհարիաթ ավ=ձին պայտելու համար անհրաժեշտ մանր բաներ գնեցի» (86)։

Նաղլ, արաբ. naḳl—պատմություն, որևէ դեպքի մանրամասն նկարագրություն։ «Էստոնց նաղլն իմ գրած կայ=սրանց պատմությունը ես գրած ունեմ» (210)։

Նաղտ, արաբ. naḳd—կանխիկ դրամ, օգտագործվում է նաև հոգնակի նաղտիաթ

Նաղտ, արաբ. naḳd—կանխիկ դրամ։ Նաղտայխըսէպ (naḳd-(naḳdiyāt) ձևով, կանխիկ դրամով կատարվող առևտուրը կոչվում էր նաղտայխըսէպ (naḳd-ḥesāb)—որ նշանակում է «կանխիկ հաշվով»։ Նաղտել—որևէ հաշիվ կանխիկ դրամով ստանալ և հաշիվը փակել, կամ առկախ մնացած պարտքը իրացնել։

Նաղտայխըսէպ—տե՛ս Նաղտ։

Նաղտել—տե՛ս Նաղտ։

Նաղտիաբ—տե՛ս Նաղտ։

Նամազ, արաբ. namāz—մահմեդականների աղոթքը։ «Նամազի թաղիք»— այն թաղիքի կտորն է, որի վրա շոքում էին աղոթք անելիս։

Նամալումի, արաբ.-պրսկ. nāma'lūmi —անհայտ, անորոշ, անհասկանալի, չնախատեսված ծախս։ «Բ չարմ լեղակին խարճին ջանպէ նայմալումի տվի=երկու պարկ լեղակի ծախսի հաշվից չնախատեսված ծախս կատարեցի» (94)։

Նայեֆ—տե՛ս Նաեք։

Նայմալումի—տե՛ս Նամալումի։

Նաշաղ, թրք. nāčagh—հիվանդ, վատառողջ։ Նաշաղություն—հիվանդություն։

Նաշարուբիւն, պրսկ. nāčār —անճար բառից—ստիպված, հարկադրված։ «Նաշարուբիւնէս մանճէն էս գինս վեռի=ստիպված, մանճան այս գնով վերցրի» (175)։

Նաշու, տիբ. nāču(gn)—պատգամախոս, գուշակ։

Նավալ, հվներբ. պրսկ. navāl —նվեր, ընծա։ «Բիհարի խաստ ճօվիսայ առի, նավալի և աստառի խմար բան կը դայ=Բիհարի հաստ ճօվիսա գնեցի, նվերի և աստառի համար պետք կգա» (270)։

Նավայ, տիբ. navai (sna'ī-ba) —պետ, պաշտոնյա։ «Նավայ Գեղան=Գեղան անունով պետը» (184)։

Նաւապ—տե՛ս Նախպ։

Նարմ, պրսկ. narm—փափուկ։ «մաղն նարմ էր=մաղը փափուկ էր» (264)։ Նշանակում է նաև հղկված, մաքուր, «են նարմ շաիջան յինք առի=500 մաքուր շահիջահանի դրամ վերցրի» (135)։

Նաւապ—տե՛ս Նախպ։

Նաֆայ, պրսկ. nāfa —մուշկի քսակ կամ պարկ, 50—60 գր. տարողությամբ։

Նաֆար, արաբ. nafar—անձ, շունչ, ոք, գործավոր, ծառա, սպասավոր։ «Էն թարեղումն, որ Գնալայ նաֆարն դուս այ եկել, մինչև թիրայ ժբ-ն նաֆար չեմ պախել=այն թվականից, որ Գնալայ անունով ծառան աղատվել է աշխատանքից, մինչև թիրա 12-ը ծառա չեմ պահել» (188)։

Նաֆարանայ, արաբ.-պրսկ. nafarāna—ծառային տրվող ռոճիկ, աշխատավարձ։

Նեղայ, տիբ. sne-ga—քաշի միավոր, որ առավել գործածական է եղել Թեյի առևտրում։ Թեյի մեկ բաղչան, որը տատանվել է 25—50 գր-ի միջև եղել է 12 նեղայ, ուստի դժվար է ճշգրիտ որոշել նեղայի քաշը։ «Մին բաղչայ խաստ չէ տածան չայ յինք առի ժբ նեղայ» (165)։ Եթե այստեղ «խաստ» հասկանանք որպես խոշոր կամ ավելի ծանր բաղչայ, այսինքն շուրջ 50 գր, ապա կարելի է ենթադրել, որ նեղան հավասար է եղել շուրջ 4 գրամի։

Նեղայ ſնար—օգտագործված է որպես լոնդրայի (տե՛ս) տեսակ. հավանաբար կազմված է հայ. «նեղ» և պրսկ. «քենար» (եզր) բառերից։ Նեղաքնար—նեղ երիզով։ Թերևս խոսքը գործվածքի եզրի անխավ շերտի մասին է։

Նեմո, հնդ. nemi—օրինապահ, ավանդապահ։ Ըստ երևույթին մեծարման խոսք կամ պաշտոն, որ ամեն տեղ նախորդում է հատուկ անունի. «Նեմո Աճի-Կծոծիօլայ», նէմո Անճօլ, «նէմո Դամուշա» (152, 161, 196)։

Նզուլ, արաբ. nūzūl—զեղջ, իջեցում, պակասեցում։ «Ի օր վադայ, նզուլ ամ տվել=20 օր ժամկետով, զեղջ եմ կատարել, կամ զեղջ եմ վճարել» (182)։ Տե՛ս նաև՝ Թանձիլ։

Նէապօ, տիբ. neapo (sna-po)—պաշտոնյա, պետ, օգտագործված է «Դուռջա» հատուկ անվան հետ։ «Զիս ծախեցի իմ տանտեր նէապօ Դուռջէ» (197)։

Նէմտ, պրսկ. namad—թաղիք, նէմտին namadin— թաղիքե, թաղիքից պատրաստված, թաղիքանման։ «Մին բուրէ՝ նէմտին, որ է քէճի» (199)։

Նէմօ—տե՛ս Նեմօ։

Նէչայ, պրսկ. neyča—եղեգնիկ, զայլանի այն խողովականման մասը, որից ծուխը ներշնչում են։

Նրկաց—տե՛ս Նկաց։

Նրսիայ, արաբ. nesya—ապառիկ։ «Բ պղտիկ դօլնայ ծախեցի, քաշն Ը մըսխալ, նըսիայ, տեղս ջամայ բռնեցի, որ խարճումն դրեմ=2 փոքրիկ դօլնայ (սաթի շարան) ծախեցի, քաշը 8 մսխալ, ապառիկ, այստեղ հաշվի առա, որ ծախսի մեջ դրեմ» (162)։

Նրվիսանդա—տե՛ս Նվիսանդա։

Նիգին, պրսկ. negin—մատանու վրա դրված թանկարժեք քար, ասում են նաև քարով մատանուն, որը ծառայում է նաև որպես կնիք։ Բնագրում օգտագործված է անհասկանալի

«ճտրբազ» (տե՛ս) բառի հետ՝ «ճտրբազի նիգին». թվում է, թե խոսքը ինչ-որ հատուկ մատանիների կամ մատնոցների մասին է, որ որոշ զբաղմունքի մարդիկ հագցրել են մատներին (273)։

Նիմ, պրսկ. nim—կես։ «Էս ջամէս նիմ սավայի ան ավելացուցել=այս գումարից կես էլ առանձին են ավելացրել» (89)։

Նիմայ, պրսկ. nima—կիսատ, կիսով չափ։ «Մին թան սաղ և Բ նիմայ մարմար առի=մեկ թան լրիվ և 2 թան կիսատ մարմար (գործվածք) գնեցի» (274)։

Նիմբաբաղ,—տե՛ս Թաբաղ։

Նիվար, հնդ. nivār —այսպես են կոչվել հնդկական ծագում ունեցող նեպալցիները, որոնք հատուկ պայմանագրով իրավունք ունեին Լհասայում իրենց առևտրական տներն ունենալ և զբաղվել առևտրով ու արհեստով։ Ըստ Դեղիդերիի «նրանք միջահասակ, թուխ և բարեկազմ մարդիկ էին, գործարար, խելոք և աշխատասեր, տիրապետում էին մետաղագործության և փորագրության արվեստին, սակայն կայուն բնավորություն չունեին և դժվար էր նրանց վստահել» (Դեղ. 314)։

Նիրբա կամ նիրբու—անծանոթ բառ, հվներբ. տիբ.։ Բնագրից պետք է եզրակացնել, որ Լհասայում Հովհաննեսի բնակած տանտիրոջ մոտ որոշ պարտականություններ կատարող անձնավորություն է եղել։ «Լասու տանտրոջ նիրբին տվել ամ» (338)։ «Բ մուզիցն (կոշիկ) մինն մեր տանտրոջ նիրբէն տարաւ» (225)։

Նիրին—անծանոթ բառ, հվներբ. տիբ., հիշվում է ծառաների՝ զուլի և զարավաշի (տե՛ս) հետ (186)։

Նիքանդազ, պրսկ. nikandāz—հարմար փովող, հարմար բացվող, հարմարավետ։ «Ջալալփուրի նիքանդազ չադր—Ջալալփուրի հարմարավետ վրան» (265)։

Նխր—տե՛ս Նրխ։

Նխրբոուզ—տե՛ս Նրխ։

Նխրի—տե՛ս Նրխ։

Նկաց, հնդ. nākās (արաբ. nakkāsh -ից)—գծող, դրող, գրագիր, օգտագործված է պրսկ. Նվիսանդա (տե՛ս) բառին զուգահեռ։ «Նվիսանդի և նրկացու [տվի]» (258)։

Նկաս—տե՛ս Նկաց։

Նմայ—տե՛ս Նիմայ։

Նմունայ, պրսկ. nemūna —օրինակ, ցուցադրելի բան, ցուցանմուշ։ «ա բաքու ըռէվանտ-[առի], որ տանեմ Ցնդստան նմունի խմար= մեկ բաքու ռևանտ գնեցի, որ տանեմ Հնդկաստան որպես ցուցանմուշ» (218)։

Նշաղիր—տե՛ս Ղալայի նշաղիր։

Նումրայ, ֆր. nūmero—թիվ, հերթական համար։

Նսեփ—անծանոթ բառ, հվներբ. Լհասայում ապրող այլազգի առևտրականներ, որոնք բնագրում հիշվում են նիվարների հետ միասին (տե՛ս)։

Նվիսանդա, պրսկ. nevisanda—քարտուղար, գրագիր։

Նրխ, պրսկ. nerkh—տոկոս, գին, սակագին։ Նրխրոուզ (nerkh-e ruz)—օրվա գինը, որևէ ապրանքի ընթացիկ սակագինը։ Նրխի (nerkhī)—գնահատող, տոկոսը որոշող կամ սակագինը որոշող պաշտոնյա։ «Նխրուն գարդանն կոտրվի, տեղիս բարբաստն այ, որ չուրի կուճրին առնելն՝ նրխ այ տալման, նրխ էր տվէլ՝ զիտրն բII=սակագինը (կամ տոկոսը) որոշողի վիզը կոտրվի, այստեղի կարգն այն է, որ մինչև կուճրին (՞) անելը, տոկոս են տալիս, լիտրին 2,5 տոկոս էր վճարել» (262)։

Նոխուդա, պրսկ. nākhodā—նավապետ։ «Ապրանքիս նօվլ տվի Սլեմանուն նօխուդին=ապրանքիս փոխադրության վարձ տվի՝ Սլեման նավի նավապետին» (72)։

Նոքրայի, արաբ. nokraī —արծաթե, արծաթապատ։ «Մին քուռի գուլապի շիշայ ամ առել, թլայքարի և նօքրայի=մեկ քուռի վարդաջրի սրվակ եմ գնել ոսկեջրած և արծաթե» (264)։

Նօվլ, պրսկ. novl—նավով երթևեկելու կամ ապրանքի փոխադրության համար տրվող վարձ։ Տե՛ս Նոխուդա։

Նօքար, պրսկ. noūkar—ծառա, սպասավոր։

Նաբանդար—տե՛ս Շահբանդար։

Նաի, պրսկ. shāhī —50 դինարանոց արծաթ դրամ, որ XVII դ. վերջում կշռում էր մոտ 2 գրամ (1,8896 գր.)։ Հովհաննեսի մոտ, սակայն, ավելի շատ հիշատակվում է Հնդկաստանի Շահ Ջահանի կոչված շաին կամ շահիջահանին, որը ռուփիի արժողություն է ունեցել և կշռել է 11,337 գր։ Կար նաև ոչ լիարժեք կամ բազարի կոչվող շաի, որ կշռում էր 10,54 գր.։

Շաիջանանի—տե՛ս Շահ։

Շաիջան—տե՛ս Շահ։

Շահբանդար, պրսկ. shāhbandar—նավահանգստի պետ, որը հսկում էր նավահանգստի կարգ ու կանոնին։ XVII—XVIII դդ. շահբանդար էր կոչվում նաև քաղաքի վաճառականների ավագը, որը հատուկ տուրք էր գանձում քաղաք եկ ու մուտ անող վաճառականներից։ Բանդարաբասում և Պարսից ծոցի մյուս նավահանգիստներում բարձվող և բեռնաթափվող ապրանքները գնահատվում էին և ապա շահբանդարը յուրաքանչյուր թուման (10000 դինար) արժողության ապրանքից գանձում էր 1000 դինար ուշուր (տե՛ս), 350 դինար խուրուճ (տե՛ս), 122 դինար ռուսում (տե՛ս ըորսում) և 50 դինար նվիրանդի (գրագրի) վարձ։ (Աշխ. 104բ)։

Շամու, տիր. žva dmar—բառն է, որ նշանակում է կարմիր վեղարով կամ գլխարկով կրոնավոր։ Այսպես են կոչվել Բուդայական որոշ աղանդի հոգևորականներ Տիբեթում, հիշվում է անձնանունների հետ. «շամու Ուրգէն, շամու Հակու» (162, 211 և այլն)։

Շայբանդար—տե՛ս Շահբանդար։

Շայնաֆայ, պրսկ. shāhnāfa—հվնբր. խոշոր քսակ մուշկի համար։ Տե՛ս Նաֆայ։

Շարմ, պրսկ. sharm—ամոթ, պատիվ, շարմանդայ sharmanda—ամոթով։ «Տէր Յիսուս մեր շարմն պահէս, մեր սահիպ պարոնացեն շարմանդայ=Տեր Հիսուս մեր պատիվը պահես, մեր գործատեր պարոնների մոտ ամոթով [չլինենք]» (153)։

Շեխ, անծանոթ բառ, հվնբր. տիր.։ Ըստ բնագրի Լհասայում Հովհաննեսի իջևանած տանը բնակվող անձնավորություն։ Արաբերեն «շեյխ» (sheykh) նշանակում է տարեց մարդ, ավագ։ Գուցե խոսքը տվյալ գերդաստանի մեծի, ավագի մասին է։

Շըբդեն, հվնբր. տիր. žabs-lde-leb—ից, որ նշանակում է թաղիքե կամ մորթե կոշիկ, հիշված է որպես արտոնագիր ձեռք բերելու համար կատարված ծախս։ «Նոր էլ մին կաշու խանեցի, թէ առաջին խարճն և թէ յետինն դէվին շըբդէնի խարճ այ գնացէլ՝ ղ լանկ=նորից մի արտոնագիր հանեցի, թե առաջին ծախսը և թե վերջինը դեվին կոշիկների (՞) ծախս է եղել» (192)։

Շրֆարիշ—տե՛ս Սֆարիշ։

Շիժդայ, հվնբր. պրսկ. shishdar—հմայել, շվարեցնել, անել վիճակի մեջ դնել։ Նարդիի խաղում այն վիճակն է, երբ կողմերից մեկը կարողանում է իր քարերով վեց դուռ (sheshdar) գրավել և հակառակորդին ստիպել անձնատուր լինել։ Հովհաննեսն իր գործընկեր Ծատուրի հետ ունեցած վեճի կապակցությամբ դիմում է Լհասայի դատավորին, որոշվում է, որ իրար հետ զառ դցեն, ով տանի նրա ասածը լինի և, ըստ մեր հեղինակի, Ծատուրը կարողանում է խարդախությամբ կամ հմայելով (ջադվով) «շիժդայ անել և երկու զառն էլ տանել» (122)։

Շիլ—տե՛ս Շիլայ։

Շիլայ, հնդ. shila—մի տեսակ ներկած կտոր։ «զ թան քանտի առի, տվի շիլայ շինեցին, ըռանկայի գնաց=3 թան դործվածք գնեցի, տվի շիլայ դարձրին, ներկելու վարձ գնաց» (240)։

Շիշայ, պրսկ. shisha—ապակուց կամ այլ նյութերից պատրաստված սրվակ։ «Մին շիշայ ծախեցի, Փաթանու առած, մինաքար=Փաթանից գնած մի սրվակ վաճառեցի, էմալով զարդարված» (156)։ «Յովանին քսուրումն ը շիշայ գուլապ կեր=Հովանի մնացորդ հաշվում 8 սրվակ վարդաջուր կար» (97)։

Շիրայ, պրսկ. shira—քաղցր հեղուկ, քաղցու կամ դոշաբ։

Շմար, պրսկ. shomār -նաև շմարայ (shomāra)—թիվ, հատաքանակ, շմարայ խրսէպ shomāra-hesāb—հատահաշիվ, այսինքն գինը հատով հաշված։ «զ մսխալ թասպի մրոջամ, որ էր շմարն ղդ դանայ=6 մսխալ համրիչի մարջան, որի թիվն էր 94 հատ» (266)։ «քնզզ մանտրմէլուն գինն շաի ըռուփին, որ անծ-ի, շմարայխրսէպ բ-ի ավելի այ—296 մանտրմելիի գինը շահի ռուփիով 150 է, հատով հաշված 2 հատ ավելի է» (247)։

Ոզբէքի, հվնբր. պրսկ. ozbakī—ուզբեկական գլխի հատուկ փաթոթ։ «Մին թան Բնարբիսի ոզբէքի չիրայ=մեկ թան Բնարեսում պատրաստված ուզբեկական (՞) գլխի փաթոթ» (140)։

Ուբլու, հվնբր. թրք. ūtū—արդուկ բառից «ութուելու» իմաստով։ «Էստուր ուբլու և կարողի մղուրի այ գնացել=սրան արդուկելու (՞) և կարողի վարձ է գնացել» (261)։

Ուբու, թրք. ūtū—արդուկ։

Ուղ—յուղ։

Ումպր, արաբ. o'mr—կյանք, երկարակեցություն, կամ amr—հրաման, իրավունք։ «Ումպրն պարնին այ, դոր օր կուզե խրսէպէ=կյանքը, պարոնինն է (երկար կյանք պարոնին) կամ իրավունքը պարոնինն է, ինչպես ցանկանում է թող այնպես հաշվի» (240)։

Ուն—անծանոթ բառ, ըստ բնագրի ինչ-որ բյուրեղանման քար, որից համրիչ են պատրաստել։ «Ունի թասպի (համրիչ), որ է քարաստալ» (202)։

Ուշուր, արաբ. ūshr—տասանորդ։ «Ժը ճոթ լոնտրինէն, որ բանդարումն ուշուր, գրեցին, «էսայ, մին ճոթըն լգ գազ, որ եկաւ ջամէն նեղդ գազ, ֆի գազն բռեն դիան, որ էկաւ ջամէն անխր թուման եռ=18 կտոր լոնտրինան, որ նավահանգստում տասնորդ գրեցին, յուրաքանչյուր կտորը 33 գազից, եղավ 594 գազ, գազը 2500 դինարով՝ գումարը եղավ 148 թուման 500 [դիան]» (72), Կոստանդի մոտ ուշուրը հաշվված է ապրանքի գնի 1/10-ի չափով (Աշխ. 104բ)։

Ուսիո(աճ), թերևս վրց. ūpro—ավելի, հավելյալ։ «Ուսիոան խարճ գնաց=հավելյալ ծախս եղավ (՞)» (249)։

Չադիր, թրք. čādir—վրան, կամ վրանի կտոր, հաստ, անջրաթափանց գործվածք։

Չալի, տիր. čhali—յակի բրդից հյուսված հաստ, կոպիտ գործվածք, որ օգտագործվել է ապրանք փաթաթելու և կապելու համար։ Հաշվետումարում անվանված է ջաչիմ (կապերտ)։ «ա չալի, որ է ջաչիմ, միջումն կապած» (266)։

Չալիշ անել, թերևս թրք. čālishmāk—աշխատել, պնդել բայից։ «Չալիշ արարին թէ թու այ=պնդեցին (՞) թե անորակ է (մուշկը)» (282)։ Բնագիրը պարզ չէ. կարելի է կարդալ նաև շազիշ, պրսկ. sāzesh—փոխադարձ համաձայնություն։

Չալմի, հվնբր. թրք. čālma—փաթոթ բառից։ Երկար գործվածք՝ ապրանք կապելու համար։ «Բ չալմի և ժ չվան առի բարբանտու խմար=9 չալմի և 10 պարան գնեցի բեռները կապելու համար» (182)։

Չալնի—ոչ լիարժեք ռուփի կամ շահջահանի։ Հաշվետումարի տվյալներով 101,5 կամ 102 չալնի ռուփին հավասար էր 100 լիարժեք շահջահանի ռուփիի (էջ 80, 134)։ Մոտավոր տվյալներով քաշը տատանվում էր 10—16 գր. միջև։

Չայս—տե՛ս Չաշ։

Չահարում, պրսկ. čahārom—չորրորդ։

Չաղ, թրք. čāgh—պահ, ժամանակ։ «Զիկիչայ ոսկին տամ, էն չաղն խարճն գրեմ=Զիկիչայում ոսկին տամ, այն ժամանակ ծախսը գրեմ» (195)։

Չայ, պրսկ. čāy—թեյ, որը հայցական հոլովում դարձել է «չէն»։ «Տեղս չաին գինն արծաթ ջամայ բըռնեցի, զարշըվումն չէն խրիտ կու գրեմ=այստեղ թեյի գինը արծաթով հաշվեցի, դիմացում թեյը գնում (առը) կգրեմ (ելք կգրեմ)» (155)։

Չայխորի, պրսկ. čāykhorī—թեյի գավաթ կամ թաս։

Չանախ, čanāk—հախճապակե, կավե կամ այլ նյութերից պատրաստված պնակ, թաս կամ կաթսայատիպ ամաս։

Չանք, հնդ. čhānt—բարակ, բամբակյա կտոր, որը մեծ մասամբ օգտագործվել է ապրանքը հակերի մեջ կապելու համար։ «Ժդ թան քուռայ չանթի և ժդ թան ճարմակ չանթի է խակին լաֆաֆայ էր գձել» (88—89, 292)։

Չանկառ—ծագումն անհայտ բառ։ Բնագրից պարզվում է, որ նշանակել է սնունդ, ուտելիք կամ սննդի համար տրվող գումար։ «իդ քարիայ ի աղարկէլ, մըղուրի տվի ֆի զ մանտրմէլի՝ չանկռօվն=24 բեռնակիր էի ուղարկել, վարձ տվի, յուրաքանչյուրին 3 մանտրմելի՝ ուտելիքով» (144—145)։ «Բութիէքն յամիշայ ուտում ան ելել, և սադ չանկռի [ծախս այ ելել]=ծառաները շարունակ կերել են, ամբողջը ուտելիքի ծախս է եղել» (152)։

Չանկռ—տե՛ս Չանկառ։

Չանտար, թրք. čandar—ոսկեծաղիկ, գորտնուկների ցեղին պատկանող բույս։ Ավելի հավանական է պրսկ. čavdār—վարսակ, տարեկան՝ հասկավոր բույս, գարու ցեղից, որ օգտագործվում է որպես անասնակեր։ «Տավարանուն խմար չանտարի և խոտի տվել ամ=անասունների վարսակի և խոտի համար վճարել եմ» (206)։

Չաշմ, պրսկ. čashm—աչք, թերևս փոխաբերական իմաստով ասված է յուրաքանչյուր գործարքի, նվազի, ակնարկի, հայացքի իմաստով։ «Ներքեն էլ գը ջոկեմ, ամենայն չաշմին գործարքի, նվազի, ակնարկի, հայացքի իմաստով։ «Ներքևն էլ գը ջոկեմ, ամենայն չաշմին ջամայ խարճն գրըստեմ=ներքևում նորից կջոկեմ, յուրաքանչյուր գործարքի (առևտրական գործողության) ընդհանուր ծախսը կարգի կբերեմ» (307)։

Չաշմայ, պրսկ. česhma—աղբյուր, որոշ բարբառներում նաև՝ քիչ, փոքրաքանակ։ «Կոպալդաշ սէն զավզով փող ի յինք առէլ, զ չաշմայ, սըքայ, շաիջահանի և չալնի քուլիայ ջամէն էր

բռանլը=Կոպալզասից ստացականով փող էի վերցրել 3 փորբաքանակ [նվագներով], հատված վիճակում, շաիշահանի և չալնի, ընդհանուր գումարն էր 2138» (134)։

Զարդանի, պրսկ. čärdānī—չորս հատիկանոց։

Զարխանայ, պրսկ. čärkhāna—չորս տնավոր, շերտավոր կտորի (ալաչա) տեսակ է, որը, հավանաբար, գործվածքում չորս տարբեր գույնի շերտեր է ունեցել։ «Ղ թան Բնարիսի չարխանայ ալաչա» (114)։

Զարմ, պրսկ. čarm—կաշի, որոշակի տարողությամբ (23 կգ) կաշվե տոպրակներ՝ յեղակի համար։

Զարվադար, պրսկ. čärvādār—ձիապան, ջորեպան, գրաստներ պահող, որ իր գրաստներով մարդիկ և ապրանք է տեղափոխում։

Զարփայի, պրսկ. čärpāī—քառատոտ պատվանդան, փոքրիկ սեղան կամ աթոռ։

Զափայ առել, հնդ. čāpeh,—ասում են այն փայտե նախշերին, որոնցով դաջում կամ կընքում են կտորները։ Հովհաննեսի մոտ կա նաև «չափայ առող», թերևս դա էլ կտոր դաջողն է։ Կարող է նաև հայերեն չափել կամ ձևել բայից լինել, ինչպես, օրինակ, «Լդ բաքուի չափայ առելէ տվի=34 պարկի չափելու կամ ձևելու (՞) վարձ տվի» (147, 348)։

Զափուրայ—հնդկ. čaputārā—ապրանքների բեռնաթափման և ստուգման տեղ նավահանգիստներում, որտեղ գտնվում էր նաև մաքսատունը։ «Փաթանայ ջուահրի չափուրումն ՆԻ՝ խարճ տվի=Փաթանի քարեղենի մաքսատունը 100-ին 0,375 ծախս վճարեցի» (142)։ «Գնկիփուռին չափուրումն II՝ զաղաթ տվի=Գնկիփուռի մաքսատունը 0,375 տուրք վճարեցի» (143)։

Զաքալենկի, տիր. čakalenkī—փոխադարձ խոստում, երկուստեք համաձայնություն։ «Զաքալենկին վադայ, մին սէր մուշկը դ սուկամ կէս=համաձայն փոխադարձ խոստման, մեկ սեր մուշկը 4,5 սուկամ» (175)։

Զաքլայ, հվնբր. հնդ. čaklā—լայն բառից՝ թերևս լայն կտոր, հատուկ գործվածք։ Բնագրում հիշված է երկարության չափով. «մին թան չաքլայ» (158)։

Զաքմայ, թրք. čakma—երկարահիտ կոշիկ։

Զաքո, հվնբր. թրք. čakar—բեռ փոխադրող՝ սայլակով կամ այլ միջոցներով, օգտագործված է «համալ» (բեռնակիր) բառի հետ զուգահեռ (74)։

Զաքու, հվնբր. թրք. čakī—քաշ բառից, կշռի միավոր։ «Ադայ ելաւ ծզ չաքու, որ չաքուն իդ դարնի այ=հատուցվեց 16 քաշ, որ յուրաքանչյուր քաշը 24 դարնի է» (240)։ «Ժր չաքու, մոմ, ե չաքու խոտ, ա չաքու փէրի» (247)։

Զաքր—տե՛ս Զաքու։

Զեֆիզար—բնագրում՝ չեթ պատրաստող վարպետ կամ արհեստավոր։ «Ժա դաղանոց չանթին, որ տվէլ ի Գանգռում չեքիզարին, թէ տանի խմար չեթ շինի» (87)։

Զիր, թրք. čīt—բամբակյա նուրբ գործվածք, բարակ կտոր։ Հիշված են տարբեր տեսակներ. «բիհարի չեթ, ունուգուրի չեթ, հաստ և բարակ, լաին, դուզաղի (երկու դաղանոց), վալանդղի (հոլանդական) և այլն» (78, 260, 330, 338)։

Զիրի, հվնբր. թրք. čīt—ցանկ, ցուցակ բառից։ Բնագրից պետք է ենթադրել, որ հաշվարկի ձև է, որ նաև որևէ ապրանքի վերջնական, ընդհանուր արժեքն է ճշգրտում։ Հիշվում է «չեթի գցել», «չեթի ելնել», «չեթի ընկնել» ձևերով (120, 319)։ Հաշվարկն անում էին հատուկ մարդիկ, որոշակի վայրերում, որի համար վարձատրություն էին ստանում, որ կոչվում էր չիրիավան (էջ 147, 251, 348)։

Զիրիավան—տե՛ս Զիրի։

Զիմու—սամսայի (տե՛ս) տեսակ։

Զիմանի, պրսկ. čamanī—մարգագետնագույն, կանաչավուն։

Զինի, պրսկ. činī—չինական, չինական հախճապակի, ճենապակի։ «չինի նալբաքի=հախճապակյա պնակ», «Զինին աչին, որ վատն այ, խաթային լէվն այ=ասացին, որ չինականը վատն է, խաթայինն լավն է» (136, 256)։ Տե՛ս նաև Խարայի։

Զիրայ, պրսկ. čīra—հատուկ տեսակի երկար կտոր, կամ փաթոթ, որ հնդիկները փաթաթում էին գլխին։ Հիշված են տարբեր տեսակներ. «բանդարի, բնարիսի, բաղլայ, ճարմակ» (136, 138, 163, 337, 339 և այլն)։

Զլեֆ, պրսկ. čehel-yek—քառասուն մեկ, օգտագործված է «չլէքսերի» բառակապակցության մեջ, որ նշանակում է «քառասունմեկ սերանոց», այսինքն 41 սերանոց զիտր։ «Իզ սէր փուխտայ լեղակ չլեքսէրին վերայ=23 սեր եփած լեղակ, 41 սերի հաշվով» (327)։

Զոհ առել տալ—հվնբր. բարձել։ Սուրաթի նավահանգստում մի բալ (սայլ) է վարձել ապրանքը փոխադրելու համար և նշել, թե նավամատույցի դռանը «բալին չոք առել տալէ տվի» (75)։ Թվում է թե խոսքը բարձելու վարձի մասին է։

Զուզայ[ի]—անծանոթ բառ, հվնբր. ներկաբարի վարձ։ «Զուզայու տվի, որ էլ ըռանկայի այ=զուզայու տվի (վճարեցի), որ ներկելու համար (գին) է» (291)։

Զուն որ, պրսկ. čun-keh—քանի որ, քանզի, որովհետև։ «Զուն որ Շիրազի Յովանըն իմ ապրանքիս Պասրու ծախսին կոնթն գրել էր, ես էլ ավալ էս գրեցի=քանի որ Շիրազի Հովհաննեսը իմ ապրանքի Բասրայի ծախքի հաշիվն էր գրել, ես էլ նախ այս գրեցի» (108)։

Զունտէն—անծանոթ բառ։ Ըստ բնագրի կուճինի (տե՛ս) տեսակ կամ գույն։ «Մին թան ջաւզի կուճին, ըռանկն, որ է չունտէն» (224)։

Զուփայե, պրսկ. čupaye—չորքոտանի, գրաստ։

Զուֆտ, հվնբր. պրսկ. djoft—զույգ, երկուսով բառից, նաև շտապ։ «Զուֆտ գնաման էր Նեկղոսին խետ—Նիկողոսի հետ (շտապ) գնում էր» (184)։

Զօրայի, հնդ. čauthāī—քառորդ, որևէ բանի չորրորդական մասը. «Շախին երեք յըռասաթն պարոնացն լինի, չօթային իմ՝ Յովանեսիս լինի—շահի երեք բաժինը պարոններին լինի, քառորդը ինձ՝ Հովհաննեսիս» (70)։

Զօրայ բարայ—տե՛ս Բարայ։

Զօրար—անծանոթ բառ, հվնբր. Նեպալում արտադրվող գործվածք։ Բնագրում հիշված է երկարության չափով։ «Ք թան Նեքպալի չօթար առի» (147)։

Զօլայ—բնագրից երևում է, որ գործվածք է. նշված է երկարության չափով։ Թերևս պրսկ. čulhā—ոստայնանկ բառից։ «Ղ թան չօլայ, որ է ջամէն զI» (113, 307)։

Զօպ—անծանոթ բառ։ Բնագրից կարելի է ենթադրել, թե խոսքը վերաբերում է էթնիկական կամ սոցիալական խավի ներկայացուցչի։ «Ծախեցի Ղ զօլնայ քարբար մին չօպի», «թալաղ (պահանջ) ունեմ չօպիցն» (160)։

Զօքի, հնդ. čaukī—պահապան, ժամապահ, պահակատուն, սահմանապահ կետ և մաքսատուն։

Զօքիդար, հնդ. čaukī-dar—դռնապան, պահակ, պահակատան պետ, մաքսատան պետ։

Զօքիդարի—մաքսապետին տրվող տուրք։ «Գնկին քընարումն չօքիդարի տվի=Գանգեսի ափին պահակատան պետին տվի», «գետին էս յիրեսումն չօքիդարի=գետի այս ափին պահակատան պետին [տվի]» (251)։

Պամրի, տիր. pamrī ('pham-ras)—չթե հասարակ կտորից վարագույր։ «Ղ թան գուլբանդի պամրին ծախել է=3 թան ծաղկազարդ վարագույրը ծախել էի» (238)։

Պայդի, հվնբր. տիր.—բնագրում ռաջայի խորհրդատուի իմաստ ունի (240)։

Պանայ—մաքուր ոսկի, որը կոչվել է նաև վարաղ (թերթ)։ «Պանայ որ է վարաղ [ոսկի]» (255)։

Պասմայ, թրք. bāṣma—տպված, կնքված, ասված է կնքված, այսինքն հարգը ճշտված արծաթի մասին։ «Ուր տված պասմայ նաղտ արծաթն որ յետնէ սևացաւ=իր տված կնքված կանխիկ արծաթը, որ հետո սևացավ (ուզում է ասել, որ թեև կնքված էր, սակայն հարգը ցածր էր)» (227)։

Պէլամու, տիր. pelamu (phur-myi)—գրբաց, հմայող, գուշակ։ «Ջադլօվ պէլամուին շիժդայ արար=գրբացի հմայությամբ խաղը տարավ» (232)։

Պլաի, հնդ. pilāī—խմեցնել, խմելու միջոց տալ։ Բնագրում ևս այդպես է բացատրված։ «Բարիէքոնց օրէն Ք դամ պլաի, որ է գինու գին» (246)։

Պոշ—տե՛ս Ղօթազ։

Պուանկո, հվնբր. լատ. banco բառից, բնագրում օգտագործված է bancorotto—սնանկ իմաստով։ «Զինքն պուանկո այ շինել, ասըմ այ ոնչիչ չունեմ=իրեն սնանկ է հայտարարել, ասում է ոչինչ չունեմ» (232)։

Պուժայ, տիր. pucha (spu-ja) թեյի տեսակ։ «Ղ բաղչայ չայ առի, ա յուճայ, մին պուժայ և մին տածան» (171)։ Տե՛ս նաև Պուճայ։

Պուճայ—տե՛ս Պուժայ։

Պուրի—ըստ բնագրի թեյի չափի կամ քաշի միավոր։ «Մին պուրի չայ» (198)։

Պրուրու, տիր. phrugru—վառ գույներով թանկարժեք բրդյա կտոր։ «Մին պրուրու փաթայ կապացու=մի վառ գույներով բրդյա կտորից կապացու» (227)։

Պօնի, անծանոթ բառ։ Բնագրից երևում է, որ մարշանի նախնական գնահատման իմաստ ունի։ Էկրայում նախ «պօնի» գնահատում է արվել, հետո «չիթի» (տե՛ս) է արվել և ապա տրվել է վերջնական քաշն ու գինը։ «Էկրայ պօնին որ ելաւ... Էկրայ չիթին որ ելաւ...» (319)։

Ջաղու, պրսկ. djādū—կախարդանք, կախարդ, կախարդող, հմայող. որևէ բան «ջադվով» անել, այսինքն կախարդելով կամ հմայելով տանել.

Ջահաբ, արաբ. djahat—կողմ, պատճառ։ «էս թալապիս ջահաթն էս այ=այս պահանջի պատճառն այս է» (118)։ «էն դալի ջահաթն էս էր—այն կովի (վեճի) պատճառն այս էր» (230)։

Ջաճիզ, արաբ. djāyiz —պատշաճ, օրինավոր, ընդունելի, թույլատրելի, արժանի. վայել։ «Ջուն որ պանայ ոսկուն գրելն ջահիզ չէր, գրեցի ոչ=քանի որ մաքուր ոսկու գրելը ընդունելի չէր, չգրեցի» (185)։

Ջանտան, արաբ.-թրք. djahatdān—կողմանե, պատճառով, աղագավ· «էս ջահտան ղավզ ուզեցի ինան, արեստ ոչ=այս պատճառով ուզեցի որ ստացական տան, չտվեց» (74)։

Ջամ, արաբ. djam'—գումար, ընդամենը, ընդհանուր գումարը։ «էս էլ վերոյ բոզնիուն ջամումն այ=այս էլ վերոհիշյալ 9370-ի գումարի մեջ է» (134)։ Օգտագործվում է նաև ջամէն կամ ջամայ ձևով. «Ջամն էնիզ գազ և զ գրէ, ֆի գազն իէ դէկնօվն, որ նլաւ ջամէն բնժէ թուման բռանծ դիան=ընդամենը 726 գազ և 6 գրէ, գազը 27 դեկանով (տե՛ս), որ եղավ գումարը 217 թուման 9150 դինար» (69)։

Ջամայ բռնել, պրսկ.-արաբ. (be djam'āvordan)—հանրագումարի բերել, հաշվի մեջ մտցնել, հաշվարկի ենթարկել, մուտք կամ ելք անել. «Ինձ ջամայ բռնեցի, որ ջամայ խարճն դրըստվի=իմ հաշվի մեջ մտցրի, որպեսզի ընդհանուր ծախսը հավասարվի (հաշվեկշիռը հավասարվի)» (223)։

Ջամավոր, պրսկ. djāma —հագուստ բառից, որ նշանակում է մեկ հագուստացու կտոր, այնքան կտոր, որից կարելի է մեկ հագուստ կարել։ «Փաթանայ առել ամ է թան չափլայ, ղ թանն բ, բ, ջամավոր, զ թանն մին-մին ջամավոր=Փաթանայում գնել եմ 7 թան չափլայ, 4 թանը 2-ական հագուստացու, 3 թանը մեկական հագուստացու» (139—140)։

Ջան տուն գոլէ, անհասկանալի է։ Բնագրում խոսքը վերաբերում է գնված պարկերի (չվալ) վերանորոգման վրա կատարված ծախսերին։ «Ի բօրայ առի, որ է չվալ, ջան տուն գոլէ, թրաշդարի (տե՛ս) կարողի, խարճ գնաց» (271)։

Ջանբպ, արաբ djāneb—կողմ։ «Իմ խըսեպին բաղի ոսկին ծախեցի, ... որ իմ ջանբպէ էլ ոսկի չմնաց=իմ հաշվի մնացորդ ոսկին ծախեցի, որ իմ կողմից այլևս ոսկի չմնաց» (242)։

Ջանի, պրսկ. djānī—մի տեսակ կոպիտ կտոր։

Ջանշին, պրսկ. djāneshin—տեղակալ, փոխանորդ։

Ջանջալ, պրսկ. djandjāl—քաշքշուկ, դժվարություն, անախորժություն։ «Թարեղումս ամատ ելաւ ռ ջանջալով=սույն թվին մուտք եղավ հազար (մեծ) դժվարությամբ» (268)։ «Էստուր վերայ մին ջանջալ ելաւ=սրա վրա մի անախորժություն եղավ» (205)։

Ջաջիմ, թրք. djadjīm—կապերտ, խիտ գործված կտոր վրանի համար. «ջաջիմ չադիր» (239)

Ջաստէ, հնդ. djast—անագ բառից—անագե, անագից պատրաստած։ «ջաստէ սուրայի=անագե ջրաման, սափոր» (74)։

Ջաւզի, արաբ. djavzī—ընկույզի գույն, գորտ է ածված որպես գործվածքի գույն։ «ջաւզի շալ, կուճին» և այլն։

Ջաֆարխանի, պրսկ. dja'farkhānī —չթի տեսակ, հվնբր. գործված Ջահֆարխանում։

Ջզիայ, արաբ. djizya—մահմեդական երկրներում այլակրոնների գլխահարկ։

Ջէսանկ, տիբ. djesank (rjesangs)—ավագ, գլխավոր։ «Քարիդարանուն սարդարն, որ է ջէսանկն=գործավորների պետը, որ ջէսանկն է» (313)։ Նշանակում է տեղում այդպես են կոչել։

Ջըզիայ—տե՛ս Ջզիայ։

Ջըզխիզիր, հվնբր. թրք.-պրսկ. djezek-gīr—շերեփանման գործիք, որով դմակ հալելիս այրված մանր կտորները կամ ջըզբխը (հայ. խախիզը) հավաքում են հալած դմակի երեսից։

Ջըզմայ, թրք. djizma—հողաթափ, չուստ, թեթև կոշիկ։

Ջըբռաց, տիբ. djetras (rgyan-spras)—զարդ։ «Մին դանայ կարմիր ջըթռացին և մին դանայ նարմ լալ քուռու=մեկ հատ կարմիր զարդի (՞) և մեկ հատ նուրբ հակինթ քուռայի» (182)։

Ջինս, արաբ. djins—նյութ, նյութեղեն, ապրանք։ «Ղարշըվումըն թանխէն դրեմ, ջինսն և նաղտն=դիմացում (զուգահեռ ելքի սյունակում) համարժեքը կգրեմ, ապրանք և կանխիկ դրամ» (69)։

Ջլայ, արաբ. djalā—փայլ։ ջլայ տալ—փայլեցնել, ջլայ տված=փայլեցրած (134), առանց ջլայ տալ=առանց փայլեցնելու, ջլայ տալէ մղուրի—փայլեցնելու վարձ (312)։

Ջլայ տալ—տե՛ս Ջլայ։

Ջուլ, արաբ. djūl —քուրձ, բրձէ գործվածք, որից պարկեր էին պատրաստում։

Ջուխտ, պրսկ. djoft—զույգ։ «ա ջուխտ ջղմայ առի=մեկ զույգ հողաթափ գնեցի» (86)։

Ջուկիսէր, նեպ. čokisir —ոստիկանական տեղամասի պետ Նեպալում։ «Նէքպալումն ջուկիսէրին սաղաւաթ=Նեպալում ոստիկանապետին նվեր» (338)։

Ջուղապ, արաբ. djavāb—պատասխան։ «Մին խաթար այ նընէ, ջուղապն ով կը տայ=մի դեպք (վտանգ) պատահի պատասխանը ով պիտի տա» (245)։ «Մնաց էսպէս, մինչև Յովանըն տեսնամ, ղրայ պարոն Ավետիկն ջուղապ չարար=այսպես մնաց, մինչև Հովանին հանդիպեմ, որովհետև պարոն Ավետիքը չպատասխանեց» (109)։

Ջումիաթ, արաբ. djamā'at—մարդիկ, ժողովուրդ, համայնք։ Հաշվետումարում մեծ մասամբ այս խոսքի տակ պետք է հասկանալ ջուղահայ վաճառականների համայնքը կամ միությունը, որ բոլոր քաղաքներում իր կենտրոնն է ունեցել և որը վերահսկում է եղել հայ վաճառականների գործերին, լսել նրանց միջև առաջացած վեճերն ու հաստատել գործարքները։ «Լառայ, ջումիաթով մին դասիդ ին աղարկել Բանդարն=Լառից, ամբողջ համայնքով (բոլորի կողմից), սուրհանդակ էին ուղարկել Բանդար (Բանդարաբաս)» (71)։ «Առի պարոն Ավետիքէն ջումիաթի յուզուրումն=գնեցի պարոն Ավետիքից՝ համայնքի մարդկանց ներկայությամբ» (134)։ «Ջումիաթ սօլ արարին=համայնքի [մարդիկ] հաշտեցրին» (189)։ «Գրում վախտն ջումիաթ շատ կին=գրելու ժամանակ շատ մարդիկ կային» (261)։

Ջումլայ, արաբ. djomla—ամբողջը, բոլորը։ «Ջումլէն ինձ ջամայ բռնեցի=բոլորը իմ հաշվի մեջ մտցրի» (163)։

Ջունի—տե՛ս Ճունի։

Ջունսէր—տե՛ս Սոզսէր։

Ջունտէն—կուճինի (տե՛ս) տեսակ։

Ջուպ, թերևս լատ. jupe բառից, որ նշանակում է կանացի զգեստի ներքևի մասը, կիսազգեստ (юбка)։ «Խիղանին խմար ջուպի փաթիլի=հաստ կտոր կնոջ կիսազգեստի (՞) համար» (208)։

Ջուխամ, հնդ. djokhām—գրավ գրված ապրանք կամ վտանգի ենթարկված հարստություն։ Մի վայրից մյուսը դրամական փոխադրումների (ավար, հնդվի և այլն) ժամանակ, երբ դումարը այդ ժամկետում վտանգի ենթակա էր համարվում, միաժամանակ համարժեք որևէ ապրանք ևս ուղարկվում էր նույն հասցեով, որպեսզի երբ ապրանքը տեղ հասներ, նոր միայն պայմանավորված գումարը հատուցվեր ըստ պատկանելության։ Այդ ապրանքը կոչվում էր «ջուքամ»։ Իսկ եթե դրամի փոխադրումը կատարվում էր առանց այդ պայմանի, այն կոչվում էր բիջուխամ—առանց ջուքամի։

Ջվալ, պրսկ. djovāl—հաստ կտորից կարած պարկ։

Ջօնկ, պրսկ. djong—մի տեսակ դրամով խաղ, թղթախաղ կամ խաղաքարերով։ «Յուրմ էր էստուր վերայ ջոնկ դրենք, թէ ես տանեմ բնիը լանկ ը մսխալ տայ, թէ յինքն տանէ սաղ չային պինն տայ=հրամայված էր, որ այս բանի վրա խաղանք (խաղաքար դցենք), թե ես տանեմ 228 լանկ 8 մսխալ արծաթ տա, իսկ եթե ինքը տանի ամբողջ թեյի գինը տա» (232)։

Ջօլայ—տե՛ս Ջօլայ։

Ջօռ—հնդ. djor—փունջ, կապ, խոսքը մարջանի փնջի կամ շարանի մասին է։ «Մին պզտիկ ջօռ մըռջամ ծախեցի=մի փոքրիկ փունջ մարջան ծախեցի» (161)։

Ջօռայ, հնդ. djora—զույգ, միատեսակ, ամեն ինչի զույգը, նաև որոշ տեսակի հողաթափ։ «Ջօռայ և մուղին քաթէնայ=հողաթափի և երկարաճիթ կոշիկի հաշիվն է» (332)։ «Բէնթի խըմար ջօռայ առի=Բենթի համար կոշիկ գնեցի» (136)։

Ռավանայ—տե՛ս Ըռավանայ։

Ռուփի—հնդ. rupī —արծաթ դրամ, որ կոչվել է նաև շահիջահանի, կամ շահ ռուփի. XVII դ. 80-ական թթ. կշռել է 11,33 գր. արծաթ։

Սաբաբ, արաբ. sabab—պատճառ։ «Խին խամերն բացի, սաբաբն՝ տեղի խմար, նոր կապեցի գ խամին խետ=հին հակերը բացեցի, պատճառը՝ տեղի համար (տեղի պատճառով), նորից կապեցի 3 հակի հետ» (181)։

Սաբուն, թերևս արաբ. şābūn —սապոն, օճառ։ «Ուրիշ տեղեն սաբուն տվի կաշուի խըմար» (230)։

Սաղայ, պրսկ. sāda—պարզ, հասարակ, գործ է ածված չդաջված, առանց զարդարանքի

կամ նախշի կտորների իմաստով։ «Ղ պղտիկ դաճած փերի առի... Ղ թան էլ մին առի՝ սադայ=4 փոքրիկ դաջած (նախշած) փերի (մետաքսյա կտոր) առի, 3 թան էլ մեկ առի պարզ, հասարակ (չդաջված)» (241)։

Սազ, պրսկ. sāz—հանդերձանք, սարք. օգտագործված է ձիան սարքի իմաստով։ «Ձիան սազի խմար փաթու և մին քալայիզր լղամօվն առի—ձիան սարքի համար մի հաստ կտոր (ծածկոց) և մի գլխակալ գնեցի՝ իր սանձով» (192)։

Սաթու, հնդ. sattū—հվնբր. բոված ալյուր, փոխինդ։ «Ուղ, բրինձ, սաթու ի առել Ճանապխի խմար=Ճանապարհի համար յուղ, բրինձ և փոխինդ էի գնել» (196)։

Սալակի, հվնբր. արաբ. selk կամ selak բառն է, որ նշանակում է դերձան, հատուկ թել, որի վրա մարգարիտ, ագաթ և այլ թանկարժեք քարեր էին շարում։ Խոսելով ագաթի գնումների մասին, ծախսերի մեջ գրանցել է նաև «սալակի և քսուր խարճ գնաց=դերձանի և այլ մանր ծախսեր եղավ» (135)։

Սալր, թրք. sālt—միակ, ուղիղ, շեշտակի, անշեղ, արագ, շտապ։ «Կարեցայ ոչ տանել, սալթ ինք գնաման=չկարողացա տանել, շտապ էինք գնում» (297)։

Սալվզ—տե՛ս սավզ։

Սալվզզարդի—տե՛ս Սավզ։

Սահալ—տե՛ս Սահլ։

Սահապ, արաբ. şāḥeb—տեր, գործատեր։ Հովհաննեսն այսպես կամ «սահապ պարնիք» է անվանում իր գործատերերին՝ խոջա Զաքարին և պարոն Ըմպրում-աղին։

Սահլ, արաբ. sahl—հեշտ, քիչ, թեթև, ոչ մեծ։ «Սուղաթն սահլ այ=տոկոսը մեծ չէ» (268)։ «Ֆարդն սահլ այ=տարբերությունը մեծ չէ» (300)։

Սաղ, թրք. sāgh—կենդանի, ողջ, լրիվ, միակտոր, ամբողջը։ «Մին թան սաղ և բ նիմայ մարմար առի=մեկ թան լրիվ և երկու թան կիսատ մարմար գնեցի» (274)։ «Սաղ չայի դիննտայ=ամբողջ թեյի դինը տա» (232)։ Սաղացնել—իրացնել, դժվար վաճառվող կամ անորակ ապրանքը վաճառել կամ կորած գումարը վերստին ձեռք բերել։ «Եռ դիան թոֆեղի աբասի և մահմուդի ունի, շաբանդարն վե առման չէր, սաղացուցի=500 դինար փոխանակման աբասի և մահմուդի դրամ ունեի, նավահանգստի պետը չէր վերցնում, իրացրի» (72)։

Սաղաբ, արաբ. saḳaḥ—պակասորդ, պակասավոր, թերի։ «Էս սաղաթն այ, վերինն ադվար այ=սա թերին է, վերինը երկու տակն է (լրիվն է)» (226)։ «Սուլթանդանճումն սաղատին 6-ին III խարճ այ գնացէլ՝ մութասադուն=Սուլթանդանճում պակասորդի համար 100-ին 0,75 մութասադու (վերակացուի) ծախս է եղել» (258)։ Սաղատբար (saḳaḥ-bār)—թերակշիռ, ոչ լրիվ քաշով՝ ոչ մեծ քաշով վաճառվող որոշ ապրանքներ։ Ներկայումս Իրանում այդպիսի ապրանքներ են համարվում թեյը, շաքարը, համեմունքները և այլն, որոնց համար առանձին քաշ գոյություն ուներ, որը կոչվում էր «սաղաթ ման», այդ ապրանքները վաճառող խանութպանները կոչվում էին «սաղաթֆրուշ»։ Հաշվետումարում (էջ 256) թվարկված ապրանքները Հովհաննեսի ժամանակ դիտվել են որպես «սաղաթբար» ապրանքներ։

Սաղավաթ—տե՛ս Սողվաթ։

Սաղատ—տե՛ս Սաղաթ։

Սաղատբար—տե՛ս Սաղաթ։

Սաղացնել—տե՛ս Սաղ։

Սաղսէր—տե՛ս Սողսէր։

Սաղրի, պրսկ. sāghrī—ընտիր, գունավոր կաշի, պատրաստված կենդանու մեջքի մասից, թիմաջի որակի (տե՛ս), կամ այդ կաշիով կարված ճտքավոր կոշիկներ։

Սամպուր, թերևս արաբ. sammur—սամույր։ «Մին դանայ նոր սամպուր ունի, վեռեց=մի հատ նոր սամույր (՞)ունեի՝ վերցրեց» (215)։

Սամսայ—հվնբր. արաբ. shamsa բառից՝ ինչ-որ մետաքսախառն կտոր։ Բնագրում ևս հիշվում է երկարության չափով։ «Են թան չիճու սամսայ» (175)։ Հիշատակված են տարբեր տեսակներ. «չիճու սամսայ», «տայ սամսայ», «սիայ (սև) սամսայ», «քաշտայ (ձգված) սամսայ»։

Սամսու, անծանոթ բառ—ըստ բնագրի, ինչ-որ կտավից պատրաստված կապեր, որ վաճառվել է փնջով կամ խրձով (ջոռ)։ «Մին ջոռ սամսու» (197)։ «Կապերն կապելէ խմար սամսուի կտաւ առի» (238)։

Սանադ, արաբ. sanad—վավերագիր, փաստաթուղթ, պարտավորագիր, մուրհակ, անդորրագիր։ «Քիմին նաղտօվ ամ ծախել, քիմին տվէլ ամ մշկի, քիմին սանադօվն=ոմանց կանխիկ դրամով եմ ծախել, ոմանց տվել եմ մուշկի դիմաց, ոմանց էլ՝ փաստաթղթով (անդորրագրով)» (183)։ «Ինմ դրած ունեմ ուր խետ սանատ, թէ յետնէ խըսէպս տեսնամ, տալու գնեմ՝ կը տամ, յինք առնելացու գնեմ՝ թալապ կու գրեմ=ես իր հետ դրած մի փաստաթուղթ ունեմ, որտեղ գրել եմ, թե երբ հաշիվս ստուգեմ, եթե պարզվի, որ տալիք եմ՝ կտամ, իսկ եթե առնելիք ունենամ՝ կգրեմ իմ պահանջում» (254)։

Սանատ—տե՛ս Սանադ։

Սանգ, պրսկ. sang—քար։ Բնագրում՝ բաղնիսի քար։ Տե՛ս Բուրղու։

Սանդուղ, արաբ. şandūḳ—արկղ, սնդուկ։

Սանկ, տե՛ս Սանգ։

Սանտայլուզ, պրսկ. (sandarūs)—սանդարակ (callitris quadrivalvis)—կենածառ, բույս, որի խեժից փայլեցնող յուղ կամ լաք են պատրաստում։ Բնագրից երևում է, որ օգտագործվել է սաթը (քարբար) փայլեցնելու համար։ «Էստուր (քարբարի) ջլայ տալէ։ քարիգարի մզուրի ... սանտայլուզի և մասալի վաղերայ գնացէլ այ=սրա (սաթի) փայլեցնելու համար աշխատողի օրավարձ սանտարակի, նյութի և այլ ծախս է եղել» (312)։

Սառաֆ, արաբ. ṣarrāf—դրամափոխ, սեղանավոր։ «Փաթանու սառաֆին վերայ, որ առ-ու յընդվի ունի=Փաթանու դրամափոխի վրա 1000 (ռուփի) փոխանցված գումար ունեի...» (139)։

Սառըշտա, պրսկ. sarreshta—սկզբնական իմաստ, նպատակ, հաշիվ։ «Էս խրըտին սառըշտէն ջոկ այ, ես ըռուղլամումս գրում չեմ= այս գնումներիս հաշիվն առանձին է (նպատակն ուրիշ է), ես օրհաշվի մեջ չեմ գրում» (107)։

Սավայի, savāyī—առանձին, մեկուսի, բացի, ի բացառյալ։ «Լեղակին և դերգազուն ջահտան ոնչինչ մեր հախթալապ չըմնաց, սավայի վերոյ զեկ-ին=լեղակի և դերգազու հաշվից ոչ մի պահանջ չի մնացել, բացի վերոհիշյալ 640 [ռուփին]» (85—86)։

Սավզ, պրսկ. sabz—կանաչ, Սավզզարդի (sabzzardī), կամ հաճախ սխալ՝ սալվզզարդի նշանակում է կանաչադեղնավուն. «Փալանկփուշին, քուռին II սալվզզարդի մզուրի կուզէր=ծածկոցների մեկ քուռին դեղնականաչ [ներկելու] համար 0,5 վարձ էր ուզում» (88)։

Սավզզարդի—տե՛ս Սավզ։

Սատայ—տե՛ս Սաղայ։

Սար, պրսկ. sar—գլուխ, ծայր։ «Ղ դուրբինին սարն այ արծաթ=3 հեռադիտակների գլուխն է արծաթ» (234)։

Սարանջամ, պրսկ. sarandjān—վերջ, վերջավորությունը, ավարտը, կատարումը։ Սարանջամ տալ—գլուխ բերել, որևէ բան անել վերջացնել։ «Որ իմ խրիտս սարանջամն տայ, ըռավանայ առե Սուրաթն—որ իմ գնումներն ավարտի և ուղարկի Սուրաթ» (80)։

Սարբըմօր պրսկ. sarbemohr—գլուխը կամ ծայրը կնքված։ «Թարեղումս, Ըսպահան սահապ պարնիքն ամանաթ տվին ինձ՝ Յովանիսիս է գրօվ սարբըմօր ոսկի=սույն թվականին, Սպահանում, իմ գործատեր պարոնները ինձ հանձնեցին 7 գրոի կնքված ոսկի» (69)։ «Յովանէսն բերած գրօվ ոսկին սրբըմօր յիս խասավ=Հովհաննեսի բերած գրոի ոսկին, կընքված, ինձ հասավ» (74)։

Սարդար, պրսկ. sardār—գլխավոր, պետ, ղեկավար։ Բնագրում սակայն, սաթը (քարբար) մշակող վարպետի կամ նրանց պետի իմաստով է օգտագործված։ «Քարբարին տաշողանուն սարդարի, աղվաէքանց, դարվանի և վաղերայ...=սաթը տաշողների (հղկողների) պետին (՞), բեռնակիրներին և այլն...» (138)։ «Քարբարիս քարիգարանուն սարդարն...=սաթիս մշակողների պետին (՞)» (313)։

Սարֆ—տե՛ս Սարֆ։

Սարհադար, պրսկ. sarāydār—իջևանատեր, պանդոկատեր։ «Դուս ելման սարհադարի սլամաթի գնաց—դուրս գալիս (մեկնելիս) պանդոկատիրոջը ողջագրամ տրվեց» (105)։

Սարհանայ, պրսկ. sarāna—մարդագլուխ տրվող գումար։ Բնագրում՝ նավով ճամփորդելու համար յուրաքանչյուր անձից (գլխից) գանձվող վարձ։ «Ինձ սարհանայ ամ տվել, նավն վեր ելնելէ» (72)։

Սարհանջամ—տե՛ս Սարանջամ։

Սարմաեայ, պրսկ. sarmāya—դրամագլուխ, հիմնադրամ։ «Սարմաեայ յինք առի Գերաքէ որդիքս խոջա Զաքարիցն և պարոն Ըմպրում-աղիցն=դրամագլուխ վերցրի Գերաքի որդիներ խոջա Զաքարից և պարոն Ըմպրում աղից» (69)։ «Սարմաէն բադայ, շախին երեք յըսառաթն պարոնայն լինի, չօթային՝ իմ Յովանէսիս լինի=դրամագլուխը չհաշված, շահի երեք մասը պարոններինը լինի, քառորդը ինձ՝ Հովհաննեսիս լինի» (69)։

Սարշտա—տե՛ս Սառըշտա։

Սարվադայ, պրսկ. sarva'da—ժամկետին, որոշված, պայմանավորված ժամկետին։ «Տայ սարվադին—ժամկետին վճարի» (76)։ «սարվադին արէկ ոչ—որոշված ժամանակին չեկավ»

(136)։ «ծախսի բաղի փողն, սարվադին յինք առի=ծախսի մնացորդ փողը որոշված ժամանակին ստացա» (288)։ Տե՛ս նաև Վադայ։

Սարփայ, պրսկ. sarpāy—մի տեսակ կոշիկ, շուստ, հողաթափ։ «Ղարար ունի [բալդիուն խետ], որ զիս Նէքպալէն բերեր Փաթանայ, մին սարփայ տի՝ տվի=պայմանավորված էի [գրաստապանի հետ], որ երբ ինձ Նեպալից բերեր Փաթանա, մի հողաթափ տայի հրան՝ տվի» (251)։

Սարփուշտ, պրսկ. sarpūsh—ծածկոց, կափարիչ։ «Մին ղազան ուր սարփշտօվն=մի կաթսա իր կափարիչով» (184)։ «Ը նիմթաբաղ, մին կոտրած սարփուշտ ձեռն արեկ=երկու փոքրիկ սկուտեղ և մեկ կոտրած կափարիչ ձեռք բերվեց» (219)։

Սարքար, պրսկ. sarkār—գործերի վարիչ, վերակացու. Հնդկաստանում՝ նահանգային վարչություն։ «Ես սարքարումն արզ ի արարել=ես վարչությունում դանգատվել էի» (189)։ «Սարքարի զարիթի տվի=տվի նահանգային վարչության պաշտոնյային կամ կապալառուին» (282)։ Հիշյալ պաշտոնյաների կողմից հօգուտ պետության գանձվող տուրքերը կոչվել են սարքարի։ Հովհաննեսը սարքար է անվանում նաև իր պարոններին և գործատերերին։ «Սարքարին և Բաբէ ապրանքին խետ գրինք, որ տանէ Ըսպահան» (94)։ «Սարքարի ամանաթ քարբարն» (134)։ «Սարքարի ընկեր Մանվէլն» (110)։

Սարքարի—տե՛ս Սարքար։

Սարֆ, արաբ. ṣarf—դրամի փոխանակման ժամանակ տրվող տոկոս կամ զեղչ, ինչպես նաև դրամահատման վարձ։ «Եւ դիան թօֆեղի արասի և մահմուդի ունի, շաբանդարն վն առման չէր, սաղացուցի, թումանին զն դիան սարֆ գնաց=5000 դինար փոխանակման արասի և մահմուտի արծաթ դրամ ունեի, նավահանգստի պետը չէր ընդունում, իրացրի, թումանին 600 դինար զեղչ եղավ» (73)։ «Սքայ չիներցի, սարֆ տվի=դրամ հատել տվի, վարձ տվի» (103)։

Սաֆտ, արաբ. thabt—դրանցել, արձանագրել, նոտարական հաստատում։ «Լաղում չէր տեղս գրէն, դուս գրեցի գնաց սաֆտ=այստեղ (օրհաշվում) գրելը անհրաժեշտ չէր, դուրս գրեցի գնաց արձանագրության (այսինքն հաշվի մեջ չմտավ, այլ մնաց սոսկ որպես արձանագրություն)» (210)։

Սեախմալ, հնդ. saiāḥmāl—նավահանգիստներում աշխատող բեռնակիր բանվոր։

Սեաղ, արաբ. sayāḳ—ձև, կարգ։ «Էտ ջահտան ամ էս սեաղովս գրել=այդ պատճառով եմ այս ձևով գրել» (86)։

Սէդանի, պրսկ. sedānei—երեք հատիկանոց։ «սէդանի քարբար» (154), «սէդանի մարջան» (129)։

Սէհի, արաբ. ṣaḥih—ստույգ, ճիշտ, իրավացի։ «Լոնտրինուն ջանպէ չափութրումն դաղգաթէն ավնլորթի ֆարդ ին աղում, սէհի չէր=լոնդրինայի (մահուդ) համար մաքսատանը դաղգաթից (՞) ավելորդի տարբերություն էին պահանջում, ճիշտ չէր» (76)։

Սէումն, պրսկ. sevom—երրորդ։ «ավալն, դօումն, սէումն=առաջին, երկրորդ, երրորդ» (78)։

Սէվայ—ոսկու քաշի միավոր, 0,25 գր, սուկամի 1/20 մասը։

Սէվայի—տե՛ս Սավայի։

Սէր, պրսկ. sīr—քաշի միավոր, 40 սէրը=1 դիտրի, ուստի սերի քաշը պայմանավորված էր տվյալ վայրի դիտրի քաշով։ Թավրիզի սաղաթ դիտրը կամ մանը կշռում էր 3 կգ, հետևաբար սէրը հավասար էր 75 դրամի, լրիվ դիտրը կամ «աջամստանա» մանը կշռում էր 5,668 կգ. այս դեպքում սերը հավասար է 141,7 գր-ի։ Աքբարի կամ Հայաստանի դիտրը 25,509 կգ է, այստեղ սերը=637,74 գր։ Ավելի հաճախ հիշվում է «փաքայ սէր», որ կշռում է 850 գր։

Սէփառ, պրսկ. separ—վերջ, ավարտ։ Բնագրում օրվա վերջը, երեկոյան։ «Շամս զ-ումն, սէփառին խասայ Հաջիփուռ=շամս 6-ին երեկոյան հասա Հաջիփուր» (249)։

Սէֆին, հվնբր. արաբ. sakan բառից, որ նշանակում է՝ մի տեղում լինել, կանգ առնել, որևէ տեղ օթևանել, մնալ։ Բնագրից պետք է ենթադրել, որ գրաստների օթևանի համար տրվող վարձի մասին է խոսքը։

Սէֆրլուբիուն, արաբ. safil բառից—թշվառություն, խեղճություն, դժբախտություն։ «Կորեմ գնամ իմ սէֆրլութէն յետնէ» (222)։

Սըխտիան, պրսկ. sākhteh բառից—որևէ բանի պատրաստումը, պատրաստի վիճակ, պատրաստում-ավարտումը, պատրաստի ապրանք։

Սբսրամ, տիբ. sesram (gse-srab)—սարքով և սանձով ձի կամ այլ գրաստ։ «Դալայ Մանիրամին թաթուն... սբսրամ տվի յինքն=միջնորդ Մանիրամի ձին սարքին վիճակում տվի իրենց» (139)։

Սրփառի, հնդ. sepāri—հնդկական պղպեղ կամ կաղին, որ ուտում են «փան» կոչվող տերևի հետ, որպեսզի շրթունքները կարմրի։ «Էստոնց խետ եմիշ, քաղցրեղեն և սրփառի գրնաց, որ զալամ չեմ տվել=սրանց հետ նաև միրգ, քաղցրեղեն և սրփառի ծախսվեց, որ չեմ գրանցել» (148)։

Սրֆայ—տե՛ս Սքայ։

Սրֆրայ, պրսկ. sofra—սփռոց։ «դօզաղի սրֆրայ=երկու գաղանոց սփռոց» (88—89)։

Սիայ, պրսկ. styāh—սև, սիայ բռանկ—սև գույնի, սիայֆար—սև գույնով աշխատած, սև զարդերով։ «Ը թան սիայքար չիթ առի» (269)։

Սիրամ, պրսկ. setam—բռնություն, անիրավություն, տառապանք, նեղություն։ «Էս հաղեղաթէրս պարոնն տեսնու, մեր սիթամին վարայսիդայ ելնէ=Այս իրողությունները պարոնը տեսնի և մեր նկատմամբ եղած անիրավությանը վերահասու լինի» (228)։

Սինշայխորի, պրսկ. sinča-khori—կաթսայի կամ թասի փռված տեսակը, սկզբի sinča-ն հվնբր. պրսկ. sinī—սկուտեղ, մատուցարան բառն է čo—փոքրացուցիչ մասնիկով, որին դումարված է khori—ուտելիք, կերակուր բառը։

Սիֆլիզար, հնդ. sikligar—դանակ կամ սառը զենքեր սրող և փայլեցնող վարպետ։ «Սիքլիզարի մզուրի տվի=դանակ սրողի վարձ տվի» (238)։

Սլամաթ, արաբ. salāmat—ողջ, ապահով։ «Ապրանքով սլամաթ Հուկլի բանդարին դախիլ եյանք=ապրանքով ապահով մտանք Հուկլիի նավահանգիստը» (280)։

Սլամաթի, արաբ. salāmatī—նվեր, ողորմություն, ողջադրամ։ «Թէ աղինց տան և թէ վայղէրայ սլամաթի գնաց=թե աղայենց տանը և թե այլուր ողջադրամ գնաց» (70)։ «Գեաղէքանց սլամաթի գնաց=մուրացիկներին ողորմություն գնաց» (73)։

Սլիֆչա, պրսկ. ṣalibča—հվնբր. պատվանդան, որի վրա դրվում էր պղնձե կոնքը, լագանը։ «Գ լագան ուր սլիֆչօվն, դեղնայ պղնձէ=3 լագան իր պատվանդանով (՞), դեղին պղնձից» (263)։

Սմաղ, արաբ. somāḳ—աղտոր, սումաղ։

Սմբուք, արաբ. sanbūḳ—նավակ, որով մոտենում էին ափից հեռու կանգնած նավին։ «Ապրանքն որ բառցի նավ-ի Սլեմանին, սմբուքի խարճ [գնաց]=ապրանքը, որ բարձեցի նավ-ի Սլեմանի վրա, նավակի ծախս եղավ» (71)։ «Նավն գնալէ սմբուքի խարճ=նավ բարձրանալու համար՝ նավակի վարձ» (73)։

Սողսեր, տիբ. ser (gser) նշանակում է ոսկի, իսկ sog Տիբեթում ասել են մոնղոլներին, հետևաբար սոդսեր նշանակում է մոնղոլական ոսկի, խամսեր (lham-gser)—փայլուն, բոցկլտացող ոսկի, ջունսեր (jun-gser)—փափուկ ոսկի։ Հաշվետումարում սրանք հիշվում են որպես ոսկու տեսակներ։

Սողվաթ, մնղլ. soughāt—այլ տեղից բերված կամ ուղարկված թանկարժեք նվեր։ «Էստուր բաղին ողջ խարճ և սողվաթ այ գնացել=սրա մնացորդն ամբողջովին ծախս և նվեր է գնացել» (266)։ Հանդիպում է նաև հոդնակի սաղվաթ ձևով։ «Քասու տանտրոջն սաղվաթ=Քասու տանտիրոջ՝ նվեր» (150)։

Սուզամ—տե՛ս Սուկամ։

Սուզանի, պրսկ. sūzanī—սսեղնագործ, մի տեսակ կապերտ, որի վրա կարված են լինում մետաքսե կամ այլ թելերով գործված ծաղիկներ։

Սուբ—ըստ բնագրի բացատրության՝ կարմրավուն մարգարիտ։ «Սուբ, որ է կարմիր դօռ» (84)։

Սուբլի, հնդ. sutārī—արհեստավոր, հիշված է որպես պարկեր կարող վարպետ։ «Գօնի սուբլի, գօնի կարօղի մզուրի=պարկի վարպետ, պարկ կարողի վարձ» (136)։

Սուկամ—քաշի միավոր։ Բնագրի տվյալներով կշռում էր 5,063 գր, մեկ սուկամը 20 սեվա էր, որը կշռում էր 0,25 գր։ «Լասու սուկամն ի սէվայ այ=Լհասայի սուկամը 20 սեվա է (0,25×20=5)» (236)։

Սուպոն—որոշակի տվյալներ չկան այս ապրանքի մասին. գրանցումները կատարված են կամ ծանրության չափով (դիտր) կամ պարկով (բաթու)։ Հավանաբար պետք է բորակը լինի (ազրորակ), որը Տիբեթից Հնդկաստան արտահանվող հիմնական ապրանքներից էր։

Սուսի, պրսկ. susī—քառանկյունի, վանդակավոր մանր նախշեր ունեցող մետաքսե կամ բամբակյա կտոր։

Սուրաթ, արաբ. ṣūrat—պատճեն, երես, դեմք, տեսք, կերպարանք։ Բնագրում օգտագործված է ինչպես պատճենի («խոստովանայգրին սուրաթովն» 191), այնպես էլ դեմքի, դիմանկարի կամ թերևս նաև արձանիկի իմաստով («սուրաթն պղտիկ», «չինի սուրաթ» 195, 198)։

Սուրաթի սմայ—տե՛ս Սքայ։

Սուրայի, արաբ. şorāḥī —ջրման, գինու կամ այլ խմիչքի սափոր։ «Սուրայուս մարհամաթի մզուրի=սափորիս նորոգման վարձ» (146), «ջաստե սուրայի=անագե սափոր» (74)։

Սուրմայի, պրսկ. sormāī —սուրմայի գույն, մուգ կապտագույն։ «Լային շինել տվի, ըռանկն էր սուրմայի, չիմանի, ալ և դեղին=շապիկներ պատրաստել տվի, գույներն էին՝ մուգ կապույտ, կանաչ, կարմիր և դեղին» (331)։

Սուփառի—տե՛ս Սըփառի։

Սուքսանտայ, հվնբր. տիբ.—բնագրում՝ յուղի լապտեր։ «Առի ը սուքսանտայ, տեղիս լիզուն այ, դեղնայպղնձէ ճրագ, ուր ընչլօվքն և ղըգալօվքն» (237)։

Սրնճի—Հնդկաստանի Սիրոնջ քաղաքում գործվող կտոր։ «Ըսպահան գնայ ը խակ սրնճի և մին խակ դերզգի» (96)։

Սքայ, արաբ. sekka—կնքված, դրոշմված դրամ, կտրված փող, հնչուն դրամ։ Սքայ շինել—մետաղը տալ դրամահատման՝ վերածել դրամի, սքի սարֆ տալ—մետաղը դրամի վերածելու համար կամ դրամահատման տոկոս վճարել։ Դրամի վերածված ոսկին կամ արծաթը անվանված է սուրաթի սքայ (դրամի ձևով), ճալի սքայ կամ սքայ ճալի (դրամի վիճակում)։ «դամն նէքպալին սքէն այ=դամը Նեպալի դրամն է» (198)։ «էս ջամէս ռ-ի, որ սքայ շինեցի՝ տվի Մուշեղենց Գրիգորին, սարֆ ամ տվէլ՝ էII=այս գումարից, որ 1000 ռուփի դրամ կտրել տվի ու հանձնեցի Մուշեղենց Գրիգորին, 7,5 տոկոս (դրամահատման ծախս) վճարեցի» (288)։ «Յինք առի Ընուփ դալալէն հալի սքայ... էնն, ինձ ամատ արարի=ստացա միջնորդ Ընուփից կտրված դրամ 750 ռուփի և մուտք արեցի» (257)։

Սքայ ճալի—տե՛ս Սքայ։

Սօլ, արաբ. şolḥ —խաղաղություն, հաշտություն։ «Ջումիաթ սօլ արարին=համայնքի մարդիկ հաշտեցրին» (189)։

Սօլաքգի—ըստ բնագրի՝ գործվածք։ Հիշված է երկարության չափով։ «Փաթանայ ծգ թան սօլայգգի առի» (340)։

Սօխունի—ծագումն անհայտ։ Բնագրից երևում է, որ բեռները կապելու կամ ապրանքը գնելու համար տրվող գումար կամ տոկոս է։ «Ես ուրենցն տալու ամ ըII թանկ արծաթ, գրայ բարբաստի ունին, սօվղումն մշկին դուէրն մին թանկ արծաթ յինք կառուն, սօխունի=ես իրենց տալու եմ 8,5 թանկ արծաթ, որովհետև առևտրում նրանք կարգ ունեն, մեկ լիտր մուշկին մեկ թանկ արծաթ են վերցնում որպես սոխունի» (163)։ «Բեռանքն կապումն սօխունի տվի=բեռները կապելու համար սոխունի տվի» (247)։

Սօխսէր—տե՛ս Սողսէր։

Սօղունի—տե՛ս Սօխունի։

Սօղսէր—տե՛ս Սողսէր։

Սօվդայ առել, պրսկ. soūdā kardan —առևտուր անել, առևտրական գործարք կատարել։ «Պարոն Ավետիքն քշմրցոց խետ շալի սօվդա էր առում=պարոն Ավետիքը քշմիրցիների հետ շալի առևտուր էր անում» (135)։

Սֆարիշ, պրսկ. sefāresh—ապսպրանք, հանձնարարություն, պատվեր։ «Մաթոսն գալման Բնարիսումն քաֆի սֆարիշ այ արարել՝ եկել Փաթանայ, Հաջիփուռ գընաման Ընուփին ացել այ, թէ քաֆ գայ՝ գինն տաս=Բնարես գնալիս Մաթոսը քաֆի (թանկարժեք քար) պատվեր է տվել, եկել Փաթանա, Հաջիփուռ գնալիս Ընուփին ասել է, թե երբ քաֆը գա, գինը վճարես» (277)։ Հանդիպում է նաև ըֆարիշ՝ աղավաղված ձևով։ «Ըֆարիշ էր արարէլ, թէ որ վեռու՝ ոսկին էլ տէք=հանձնարարել (ապսպրել) էր, եթե վերցնի՝ ոսկին էլ տվեք» (175)։

Սֆրայ—տե՛ս Սըֆրայ։

Վադայ, արաբ. va'da —պայմանաժամ, ժամկետ։ «Մեկ ամիս վադայ, որ Սուրաթումն տամ=մեկ ամիս պայմանաժամով, որպեսզի Սուրաթում վճարեմ» (70)։ «Վադէն թամամվէլ ու նե օրէն մուդաթ ամ տվէլ=ժամկետը լրացել է և 75 օրվա տոկոս եմ տվել» (287)։

Վազն, արաբ. vazn—չափ, կշիռ, քաշ։ «է խակն վազնում եկել այ իա զիտր լգ սէր—7 հակի քաշն է 21 լիտր 33 սեր» (89)։ «Քարբարն... վազնումն վեր արեկ զնկե սէր, ջումիաթն ե սէրն դարայ դուս գնեցին, մնաց զնկ սէր=սաթի քաշը եղավ 365 սեր, մարդիկ (գործին վերաբերող) հինգ սերը որպես տարա դեղեցին, մնաց 360 սեր» (134)։

Վալանդ, Holland—Հոլանդիա, իսկ հոլանդացիներին անվանել են վալանդիզ կամ վալանդուզ։

Վալանդիզ—տե՛ս Վալանդ։

Վալանդուզ—տե՛ս Վալանդ։

Վախտ, արաբ. vakt —ժամանակ, միջոց։ «Գրում վախտն ջումիաթ շատ էին=գրելու ժամանակ շատ մարդիկ կային» (261)։

Վաղիայ, արաբ. vāki'a դեպք, արկած, պատահար. «Ինչ վաղիայ, որ արեկ մեր գլխէրանիս էս այ, որ տակումն գրած այ=ինչ պատահար, որ եկավ մեր գլխին, սա է, ներքևում գրված է» (230)։

Վայդէրայ, արաբ. vagheyra—և այլն, այլ։ «Թէ աղինց տան և թէ վայդէրայ սլամաթի գնաց=թե աղայի տանը և թե այլ [տեղում] ողջադրամ գնաց» (70)։ «Ջատկին թէ եկեղեցուն և թէ վաղերայ ողորմութիւն այ գնացել» (74)։

Վառփուշ, պրսկ. varpūsheh—ծածկոց, ապրանքներ ծածկելու կամ փաթաթելու կտոր։ Նաև կանացի գլխի ծածկոց, գլխաշոր։ «մին խին վառփշում կապած տվի պոչ զօթազի=Մի հին ծածկոցի մեջ կապած եղնուղտի պոչ տվի» (266)։ «ը թան էկրայի վառփուշ և մին թան Թավրիզի՝ առի» (137)։

Վատայ—տե՛ս Վադայ։

Վարաղ, արաբ. varak —թերթ։ «Առի ըշմրցի Հաֆիզ Ընայհաթէն է սուկամ ժէII սեվայ վարաղ (թերթ) ոսկի, սուկամն ծգ մսխալ» (173)։ «զ դաստայ պզոնիկ վարաղէն քաղաթ առի=6 կապ փոքրիկ թերթերով թուղթ գնեցի» (274)։

Վարասիդայ, պրսկ. vārasida —վերանայել, վերահասու լինել։ «Զուն որ վռազ դուս ինք ելման յընդիվանումըս մին իբմին ավելի այ գնացել, որ Սուրաթումն վարասիդա ելայ, էսպէս գրեցի, մինչև գնամ Սրընճումն ավելին յինք կառում=Շտապ գնալու պատճառով փոխանցված գումարում որոշ բան ավել էր փոխանցվել, երբ Սուրաթում վերանայեցի, այսպես գրեցի, մինչև որ գնամ Սրինջում, ավելը ստանամ» (91)։ «էս հաղեղաթէրս պարոնն տեսնու, մեր սիթամին վարայսիդայ ելնէ=այս իրողությունները պարոնը տեսնի և մեր նկատմամբ եղած անիրավությանը վերահասու լինի» (228)։

Վարբարաֆ, պրսկ.-արաբ. barṭaraf—մի կողմ, մեկուսի։ Վարբարաֆ լինել—մի կողմ քաշվել, դուրս գալ, վերանալ։ «Բաթ էլ II մանտրմելու դամ ունեմ, որ վիրեն գրած այ, էն էլ սրայ խետ մին զալամ ամատ ելաւ, փաթայ ըռուփու խսէպ, մանտրմէլին վարթարաֆ ելավ=մի հաշվով էլ 0,50 մանտրմելու դամ (մանր փող) ունեմ, որ վերը գրված է, այն էլ սրա հետ, մեկ հոդվածով մուտք եղավ, որպես զուտ ռուփի, մանտրմէլին վերացավ» (247)։

Վաքիլ, արաբ. vakil—լիազոր։ «Մասկուրիս ջահտան յարևանցի Թոփալ Փանոսին ախբեր Ավետիքն մեզ վաքիլ էր=վերոհիշյալ պատճառով երևանցի Թոփալ Փանոսի եղբայր Ավետիքը մեր լիազորն էր» (74)։ «Մէլիջանէնց Մաթոսն նաչաղիեն, դիս տէր Դավթի որդի Յովանէսս ուրն վաքիլ էր արարէլ—Մելիջանենց Մաթոսը հիվանդության պատճառով, ինձ՝ Տեր Դավթի որդի Հովհաննեսիս իր լիազորն էր դարձրել» (191)։ Վաքլագիր—լիազորագիր։ «Սարգըսի որդի Յովանէսն վաքիլ արարի, վաքլագիրն էլ վեր դրի=Սարգսի որդի Հովհաննեսին լիազորեցի, լիազորագիրն էլ հանձնեցի» (191)։

Վաքլագիր—տե՛ս Վաքիլ։

Վսուլ, արաբ. vuṣūl—հասնելը, ստացվելը։ Վսուլ անել—ստանալ, գանձել։ «ուր մուշկն վսուլ արար=իր մուշկը ստացավ» (205), «ինչ վսուլ նընէ՝ գրէ—ինչ որ ստացվի՝ գրի» (187)։

Տալի—անծանոթ բառ։ Բնագրից երևում է, որ այսպես անվանվել է այն տոկոսը, որ տրվել է միջնորդներին։ «Դօջանըպէ տալի տվի=երկու կողմին էլ միջնորդչեք տվի» (168)։ «Առի ը սուկամ ջունսէր ոսկի, տալօվն, ելաւ արծաթ, ջամէն ը թանկ 5 մըսխալ=գնեցի 32 սուկամ ջունսեր ոսկի, միջնորդչեքով միասին եղավ 32 թանկ 5 մսխալ արծաթ» (171)։ «տալու տեղ որ է դալալի գինն=տալիի փոխարեն, որ միջնորդագինն է» (224)։ Արդի հնդկերենում tāli նշանակում է 0,50 ռուփի, թերևս միջնորդագինը այդ ժամանակ 0,5 %-ի չափով է վճարվել։

Տածան—թեյի տեսակ։

Տայ—Սամսուի (տե՛ս) տեսակ։

Տանկ—քաշի միավոր։ Հաշվետումարի տվյալներով շուրջ 16 գր, որով հիմնականում կշռել կամ չափել են սաթը մարջանը և զմրուխտը (131—132)։

Տարկէ, տիբ. dar-kyi—մետաքսյա։ «Մին տարկէ և ը տէլի քաղակ=մեկ մետաքսյա և 2 դաջած գլխաշոր» (197)։

Տերդ ու պալայ, պրսկ. dard-o-balā—հոգս, մտածմունք։ «Զաին խմար տերդ ու պալայ չպիտեն նընէլ=թեյի համար պետք չէ հոգս անել» (190—191)։

Տէլի, տիբ. thel—դաջած կտոր։ «Մին տէլի տարկեալ քաղակ=մեկ հատ մետաքսյա դաջած գլխաշոր» (189)։

Տուկրայ, հնդ. tukra—դրամական միավոր։ Ըստ Կոստանդ Զուղայեցու ռուփիի 1/100-ական մասը։

Տօլուղ, թրք. donlūk—ոռճիկ, աշխատավարձ։ «Տարէն ծ տօլուղն այ, խօրակ-փուշակն մեղնէ=տարեկան 50 ռուփի ոռճիկն է, ուտելիքն ու հագուստը մեզնից (մեր հաշվին)» (134)։

Տօնծի,—բնագրում՝ քարքարի աման, արկղ կամ քսակ։ «զ տօնծի առի, որ քարքարն միջումն ամենցի» (146)։

Ցամպայ-մացամպայ, տիր. tsampa-matsampa—մի քիչ, որոշ քանակության։ Բնագրում բացատրված է որպէս «ավել-պակաս»։ «Տեղին ասմունքն՝ իվելի-պակաս ասմունք այ» (233)։

Ցօմզօ—տե՛ս Ցօմփօ։

Ցօմփօ, տիր. tsompo (brtsompo)—գլխավոր, ավագ, տանուտեր։

Ցօմֆօ—տե՛ս Ցօմփօ։

Փազարի, պրսկ. pāzārī—փաթաթան, հատուկ շալ, որն օգտագործվում էր որպես նոր-ածնի բարուր։

Փաթայ, հնդ.—որոշ տեսակի գործվածք։ «Մի պրուրու փաթայ կապացու=վառ գույներով բրդյա գործվածքից մի կապացու» (227)։

Փաթակայ—տե՛ս Փաթիկայ։

Փաթարի—տե՛ս Փթարի։

Փաթի—բնագրի տվյալներով՝ համեմունքի կշռաչափ։ «ժզ փաթի սմաղ և մին փաթի զարաղաթ առի=16 փաթի աղտոր և մեկ փաթի հաղարջ դնեցի» (238)։

Փաթիդար, հնդ. pāṭṭidār—զարդակար, ձեռագործ։ «Գոլնար լոնտրայ փաթիդար և զառօվ=նռան գույնի լոնտրա (մահուդ) ոսկեթել զարդակարով» (148)։

Փաթկայ—ըստ բնագրի՝ բրդե գործվածքի տեսակ։ «Փաթկայ շալի խետ սօվդայ էր արարէլ=Փաթկա տեսակի բրդե գործվածքի վրա էր առևտուր արել» (118)։ Հիշվում են տարբեր տեսակի փաթկաներ՝ «Ընարիսի փաթկայ», «Ճարմակ փաթկայ», «զառօվ փաթկայ» և այլն։

Փաթու, պրսկ. patū—հատ բրդե գործվածք, որ օգտագործվում էր որպես ծածկոց, վերմակ և կամ գործածվում՝ ապրանքներ փաթաթելու համար։ «... էստուր թանխէն զ ճոթ բրդով փաթու յինք առի=... սրա համարժեքի դիմաց 3 կտոր բրդե փաթու վերցրի» (155)։ Օգտագործված է նաև ընդհանուր՝ փաթվեղէն ձևով (146)։

Փաթվեղէն—տե՛ս Փաթու։

Փալ, պրսկ. pāl—առագաստ։ «Աղաղարն իմ ջանպէ մին փալ էր աղարկել» (292)։ «ա փալն որ տվի Յովանն տարաւ Պասրայ» (298)։

Փալանկփուշ, պրսկ. palangpūsh—հատ կտորից ծածկոց, ապրանքները փաթաթելու համար։ «բ թան էլ խատ փալանկփուշ մին առի էկրայ» (135)։

Փալվալ, հվնբր. պրսկ. pālāpāl—առագաստ, կամ pālbar—առագաստը վարող նավավար։ «Նաւին քրէն խ և բ փալվարին քրէն այ ժզ=նավի վարձը 40, իսկ երկու նավավարների վարձը 16 ռուփի է»։ (279)։

Փայ, թրք. pay—մաս, բաժին, որևէ բանի կես մասը։ Բնագրում հանդիպում է որպես թեյի քաշի մանր միավոր։ «բII փայ չային զին դրի=2,5 փայ թեյի զին դրեցի» (259)։ «քաշն այ ժդ սէր II = մին փայ=քաշն է 14,2125 տեր և մեկ փայ» (237)։ Ճշգրիտ քաշը պարզ չէ, մանավանդ որ հանդիպում է նաև փայսէր ձևով, որն ըստ երևույթին ավելի խոշոր միավոր է։ «Բաթ էլ տվի մին փայսէր շայ» (259)։ «Մին փայսէր լաք առի» (273)։

Փայսէր—տե՛ս Փայ։

Փանն, պրսկ. pandj—հինդ։ փանդանի—հինդ հատանոց, փանդանակի—հինդ գույնի։ Բնագրում այլ իմաստներ ևս ունի։ Հիշատակվում է ձիան հետ, ինչ որ ենթադրել է տալիս, որ խոսքը փոխադրական միջոցի մասին է. «ձիան և փանճին դիննն» (281)։

Փաննայ, պրսկ. pandja—մարջանի ճյուղ կամ փունջ, որի վրա մի քանի հատիկ է լինում, այստեղից է նաև հայ. «փունջ» բառը։ Հանդիպում է նաև փաուիաննայ, որ պրսկ. par—թև, ցողուն, ճյուղ բառն է և հվնբր. նույն իմաստն է ունեցել։

Փաննտանի—տե՛ս Փանն։

Փանօվար, հվնբր. հնդ. pānasarā բառից է, որ նշանակում է լեռնանցքներում գտնվող ճանապարհապաշտպան կետ կամ մաքսատուն։ «Փանօվարումն բ տեղ թլաշուն ըռըշվաթ տվի=մաքսատանը (՞) երկու տեղ խուզարկուին կաշառք տվի» (279)։

Փաններանկի—տե՛ս Փանն։

Փանմէլ, հնդ. pandjmel—բառացի նշանակում է հինգ տարբից բաղկացած—տարբեր տեսակների խառնուրդ։ «փանճմէլ մրոչամ», «փանճմէլ պոշ», «փանճմէլ արծաթ» (159, 185, 237, 263, 358)։

Փաչայի, հնդ. pačai—ժամանակ շահել, ժամկետից շուտ, նախնական, նախապես։ «Ոսկու դնին ն-ին զII փաչայի հասիլն ելաւ=ոսկու գնին 100-ին 3,5 նախնական հասիլ (տուրք) տրվեց» (253)։ «Համալանայ այ տվէլ՝ փաչայի= բեռնակրի վարձ է տվել նախապես» (281)։

Փապուն, պրսկ. pāpūsh—տնային կոշիկ, հողաթափ, շուտ։ «փապուճ մարդանայ=տղամարդու շուտ» (136)։

Փառ, հնդ. pār—գետանցի համար օգտագործվող լաստանավ։ «Գնկումն բ տեղ փառ ելնելու քրէ=Գանգեսի վրա երկու տեղ լաստանավ նստելու վարձ» (138)։

Փառփաննայ—տե՛ս Փանճայ։

Փարայ, պրսկ. pāra—մաս, կտոր, մի քիչ, մասամբ։ «Դալալանունց խմար փարայի բանկ առի=միջնորդների համար մի քիչ ծխելիք գնեցի» (238)։ «[Ոսկին] որ խանեցին փարայ զաղայ էր=երբ ոսկին հանեցին, մասամբ վնասված էր (կամ մաշված էր)» (252)։

Փարայի—տե՛ս Փարայ։

Փարդակ, պրսկ. parda—վարագույր։ «Աղամալն... ինձ ի [գերդազի] արետ, թէ տանէս Սրնճումն տաս Աղազարին՝ ինձ խմար փարդակ և դաստախաներ շինէ=Աղամալը ինձ 20 գերդազի տվեց, թե տանես Սրինջում տաս Աղազարին որ ինձ համար վարագույր և սփոռոց պատրաստի» (104)։

Փարդան, հնդ. pardhān—գործերի գլխավոր ղեկավար, տվյալ նահանգի իշխանության ներկայացուցիչը, որ վեզիրի իրավունքներ է ունեցել (Դեղ. 320)։ «Նիրհան ժե-ումն փարդանէն ըռուսխաթ ելայ=Նիրհան 15-ին փարդանից թույլտվություն ստացա» (243)։

Փարվանրկի. հվնբր. պրսկ. parvānegī—արտոնագրի (փարվանե) համար վճարվող տուրք։ «Խոտին բառնալէ չափուբրումն փարվանրկի տվի» (276)։ Փարվանակ (parvānak) նշանակել է նաև սուրհանդակ կամ ուղեցույց։

Փաֆայ, պրսկ. pāk—մաքուր, զուտ, լիովին, ամբողջովին բառից է, որ հանդիպում է և՛ առանձին, և՛ զանազան դրամների ու քաշերի բնույթը ճշգրտելու իմաստով. փաֆայ դիտր, փաֆայ սէր, փաֆայ բռուփի, փաֆայ ֆունտի և այլն։ «Էկրայ առի զII դիտր լեղակ փաքայ զտրին վերայ=էկրայում գնեցի 1,5 լիտր լեղակ փաքա լիտրի հաշվով» (327)։ «Ամատ ելաւ, բռուփու խսեայ=մուտք եղավ մաքուր (զուտ) ռուփիի հաշվով» (247)։ «Մուշկն փաքայ սէրով քաշեցին» (256)։

Փերի—տե՛ս Փէրի։

Փէշքաշ—տե՛ս Փիշքաշի։

Փէսայ—հնդ. paysa—մանր դրամ, ռուփիի 1/32 մասը։ Հաշվետումարի տվյալներով՝ 0,35 գր արծաթ։

Փէսաբար, հնդ. paysabār—քաշի միավոր։ Բնագրի և Ղ. Վանանդեցու տվյալներով՝ 21,258 գր. (զանձ. 16)։

Փէրի, հվնբր. պրսկ. parvān,-ից—մետաքսյա սպիտակ կտոր, վաճառվել է տարբեր չափերով։ «ը փէրի առի. մինն է ձեռն» (241)։ «Մախեցի զ փէրի, ն ձեռնանոց» (261)։

Փէքար, հնդ. boyār—բեռնակիր բանվոր։ «Փէքարանու... տվի= բեռնակիրների վճարեցի» (215)։

Փրբարի—տե՛ս Փթարի։

Փրարի—հանդիպում է նաև փրբարի և փարարի ձևով. պրսկ. patar—պղնձե թերթ։ «բ փաթարի առի լաղան ավթաֆի» (264)։ Այս դեպքում կարելի է հասկանալ «պղնձե թերթ դնեցի լաղան և սափոր սարքելու համար»։ Փրարի ձևով, բնագրում, թանկարժեք քարերը փաթաթելու կամ կապելու նյութի իմաստ ունի։ «Աղեղի խրմար փրթարու, բամպաքի խարճ=ակաթի համար փթարու և բամբակի ծախս» (328)։ Այստեղ թերևս հնդ. patta բառն է, որ նշանակում է մանր կտրատված մետաքսաթել, ժապավենաձև, կտորի եզրից թափված մետաքսի մանրուք։

Փիադայ, պրսկ. piāda—հետևակ. խոսքը առևտրական բեռներ փոխադրող բեռնակիր ծառաների մասին է։ «Մին խամ մուշկն, որ քաշեցին տարան նավապին, նազբրինց տան դրին, փիադի խարճ=մեկ անմշակ մուշկը, որ վերցրին տարան նավապի համար, դրին նազբրի տանը, փիադի (բեռնակրի) ծախս եղավ» (257)։ Հանդիպում է նաև փիադկան (piādegān) հոդնակի ձևով։

Փիադկան—տե՛ս Փիադայ։

Փիբ, հնդ. pet—դրամի փոխադրման փաստաթուղթ, ստացական, չեկ, մուրհակ։ «Բաղին

էլ տվի Թարեղումս փիթ փող=մնացորդն էլ տվի սույն Թվականին մուրհակով, չեկով դրամ» (282)։

Փինթ, հնդ. penth—շուկայական դրասենյակ, շուկային վերահսկող հաստատություն։ «սուլտանին փողն փինթին պիտիլ տալ» (282)։

Փիշազին, պրսկ. pish-az-in—սրանից առաջ, նախքան։ «Փիշազին Թարեղս=սույն Թվականից առաջ» (74)։

Փիշաքի, պրսկ. pishakī —նախապես ստացված, կանխավճար։ «Ղարարն է էր, ղ փիշաքի ինք տվէլ=որոշված էր 7, 4-ը կանխավճար էինք տվել» (136)։ «Բարդամէն յինք ամ առէլ փիշաքի=Բարեղամից ստացել եմ նախապես (կանխավճար)» (287)։

Փիշդաստի, պրսկ. pishdastī —օգնական, տեղակալ, փոխանորդ։ «նազրին փիշդաստին ա փէրի=մեկ-փերի նազրի տեղակալին» (258)։

Փիշխըզմաթ, պրսկ. pishkhedmat—սպասավոր, ծառա։ «Ալուին, որ է մեր տանտրոջ փիշխըզմաթն=Ալուին, որ մեր տանտիրոջ սպասավորն է» (226)։

Փիշքաշի, պրսկ. pishkashī —ընծայական, նվեր, նվերի անվան տակ տրվող տուրք կամ կաշառք։ «Քութու տանտրոջըն ինչ որ ջինս ամ տվել փիշքաշու, էն ուրէնց խըսկսումն գրած այ=Քութու տանտիրոջն ինչ որ ապրանք եմ տվել որպես նվեր, իրենց հաշվի մեջ գրված է» (151)։ «Զիկիչու տանտիրոջն կէս բաղչայ չայ տվի փիշքաշի=Զիկիչայի տանտիրոջը կես կապ թեյ տվի որպես նվեր» (197)։

Փիսուզ, պրսկ. pih-sūz—ձեթի ճրագ. կային պղնձից, արծաթից և այլ մետաղներից պատրաստված ճրագներ, որոնք վառվում էին տարբեր բուսական յուղերով, մեծ մասամբ թզի փայտից հանված յուղով։ «Մին փիսուզ դեղնայպըղընձէ ծախեցի» (218)։

Փոբայ—ըստ բնագրի թեյի և թամբաքուի քաշի միավոր։ «գ փոթա չայ Նեղկոսին խըսկսումն այ գրած» (186)։

Փոխտայ, պրսկ. pokhta—եփած, մշակված մարջան։ «ե դանայ մըոջամ... առի, վազնն գII մըսխալ, փոխտայ=5 հատ մարջան գնեցի, քաշը 3,5 մսխալ, եփած» (318)։

Փուխտայ—տե՛ս Փոխտայ։

Փուշակ, պրսկ. pushāk —հագուստ։ «Սուրաթումն ինձ փուշակի գնացել այ, թէ դերզկի մզուրի=Սուրաթում ինձ համար հագուստի ծախս է եղել, ինչպես նաև դերձակի վարձ» (74)։ «Նօքար բռնեցինք, տարէն ծ տօլուղն այ, խօրակ-փուշակն մեղնէ=ծառա վերցրինք, տարեկան 50 ռուբիկով, ուտելիքն ու հագնելիքը մեզանից» (135)։

Փոտակ, հվնբր. պրսկ. parda, pardak բառն է, որ նշանակում է վարագույր։

Փսոնի—բրբռ.—ուտելիք, սնունդ։

Փօբայ—տե՛ս Փոթայ։

Փօշտ, պրսկ. posht—մեջք, հակառակ երեսը։ Փօշտ բամասուկ անել—փաստաթղթի մյուս երեսում նշել. երբ պարտատերը մուրհակի մյուս էջում գրում էր պարտք տված գումարը ետ ստանալու մասին։

Քադամ, տիբ. khadak (kha-btags)—գլխաշոր կամ երեսծածկոց, մետաքսյա կամ այլ թանկարժեք, ոսկեթել երկար շալ, որ մատուցվում էր որպես նվեր, ի նշան հարգանքի։ Առավել թանկարժեքները կոչվում էին գէլբու քադակ՝ «արքայական» կամ «իշխանական քադակ»։ Կային նաև այլ տիպի քադակներ. օր. գրով քադակ, որի վրա հավանաբար տառազարդեր են եղել, տէլիտարկեայ քադամ, տարկէ քադակ և այլն։ «ա քադակ, որ յառաջմէ ամ տարել ախպօր մեռնելէն=մի քադակ նախապես եմ տարել, եղբոր մահվան կապակցությամբ» (174)։ «Մեր տանտրոջ տես գնալէ՝ քադակի=մեր տանտիրոջ տեսության գնալիս քադաքի [ծախս է եղել]» (210)։

Քաթ, հնդ. khat—երկար թախտ, մահճակալ, մահիճ, նստելու կամ պառկելու հարմարանք։ Պրսկ. նիմ-քաթ՝ կիսաթախտ-նստարան։

Քաթա, հնդ. katai—հաշիվ, հաշվեթուղթ, հաշվապահական մատյան։ «Ուր քաթումն կգրեմ ամատ ըռաֆտն=իր հաշվում մուտքն ու ելքը կգրեմ» (176)։ «Քաթումն զալամ-բը-զալամ գըգրեմ=հաշվեմատյանում հոդված առ հոդված կգրեմ» (84)։ «Ներբոյ գրեալս աղեղին քաթէն այ=ներքոգրյալը ակաթի հաշիվն է» (328)։

Քաթբարայ, թերևս պետք է հասկանալ նավախցիկի իմաստով. հնդ. khat—մահիճ և bāra խուց բառերից։ «Նաւին քաթբարայ... խարճ էր գնացել—նավախցիկի (՞) համար ծախսվել էր» (280)։

Քաթրայ—բնագրում՝ իշխանատուն կամ պանդոկ։ «Սէֆիխանին քաթրումն վարպետ Պետրոսն մին օգայ էր քրէ բռնէ=Սեֆի-խանի պանդոկում (՞) վարպետ Պետրոսը մի սենյակ էր վարձել» (249)։

Քալ—քաշի միավոր, ըստ բնագրի 20—24 քալը մեկ բեռ է եղել (195)։ «Նեկղոսին մին բաքու ամանաթ ըռէվանան քաշեցինք, ելաւ էII քալ, քիսակօվն և չարմօվն=Նիկողոսի մեկ բարու (տե՛ս) ոնանտը կշռեցինք՝ եղավ 7,5 քալ, կաշվով և պարկով միասին» (195)։ «ծդ քալ ուղ=54 քալ յուղ» (213)։

Քալայ, պրսկ. kalla—գլուխ։ «ը քալայ զանտ առի=8 գլուխ շաքար գնեցի» (342)։

Քալայգին—ըստ բնագրի կուճինի (տե՛ս) տեսակ։ «ը թան քալայգին կուճինն (202)։

Քալայգիր, պրսկ. kallagīr —գլխակալ, որ հագցնում էին ձիան գլխին։ «Մին քալայգիր՝ լղամօվն=մի գլխակալ իր սանձով» (192)։

Քակամ—քաշի միավոր։ Հաշվեմատյանների տվյալներով 1,26 գր.։

Քաղաբ, արաբ. kāghadh —թուղթ։ «լ դաստայ քաղաթ առի, դաստէն ծ վարազ այ=30 կապ թուղթ գնեցի, յուրաքանչյուր կապը 10 թերթ է» (238)։ «Քաղաբբահայ (kāghadh-bahā) =թղթի գին» (71)։

Քաղաբաբահայ—տե՛ս Քաղաթ։

Քաղամ—անծանոթ բառ։ Ըստ բնագրի երկարության չափ կամ որոշակի չափով կտրված կտոր։ «ը քաղամ ըռանկամիզ կուճինն», «ը քաղամ սիայ կուճին» (191)։

Քաղայբ—տե՛ս Քաղաթ։

Քամ, պրսկ. kam—քիչ, պակաս, քամ տալ—պակասեցնել, նվազեցնել, հանել. ասված է հանման գործողության մասին։ «Տանեմ էն յիրեսումն քամ կուտամ=կտանեմ մյուս էջում կհանեմ (հանման գործողություն կկատարեմ» (185)։ «Քամ չէ տված—չի հանած» (263)։

Քամբուղանայ—տե՛ս Քամպուտ։

Քամինայ, պրսկ. kamina—նվաստ, նվաստաղույն, խոնարհ։ «Քամինայ մուխլիզ—նվաստագույն, խոնարհ ծառա» (254)։

Քամպուտ, պրսկ. kambūd —պակասորդ, սովորաբար ասվում էր ոսկին հալելիս գոյացած պակասորդին։ «Յետոյ, ինչ որ քամպուտ գընայ՝ խարճումն կու գրեմ=հետո, ինչ, որ պակասորդ լինի ծախսում (ելքում) կգրեմ» (160)։ Քամբուղանայ (kambūdāna)—ոսկու պակասորդի համար վճարվող գումար կամ հավելյալ ոսկի։ «ը սէվէն քամբուղանայ այ գնացել=2 սեվան պակասորդի ծախս է գնացել» (189)։

Քամ տալ—տե՛ս Քամ։

Քայռայ-Քուռայ—տե՛ս Քուռայ։

Քան, պրսկ. kān—հանք։ «ժը ճոթ քանի բլօր առի=18 կտոր հանքային բյուրեղ գնեցի» (238)։

Քանտի—գործվածքի տեսակ։ «գ թան քանտի առի՝ տվի շիլայ շինեցին ըռանկայի գնաց =3 թան քանտի գնեցի տվեցի ներկեցին, ներկելու ծախս եղավ» (240)։

Քանտիգար, պրսկ. kandegar—փորագրիչ-նկարազարդող, այն արհեստավորները, որոնք փայտի վրա գործվածքները դաջելու համար զարդեր էին քանդակում։ Բնագրում հանդիպում է նաև քունտիգար ձևով։ «Էստուր ըռանկայու և քունտիգարի տվի=սրան (գործվածքին) ներկելու և նկարազարդման [վարձ] տվի» (83, 260)։ «Էստուր ըռանկըռիզի և քունտիգարի մըզուրի այ գնացել—սրան (գործվածքին) ներկարարի և նկարազարդողի վարձ է գնացել» (231)։

Քաշտա, պրսկ. kashida—ձգված, երկար։

Քաշտի, պրսկ. kashtī —նավ, նավակ, քաշտինման—նավակի նման, նավակի ձև ունեցող։ «քաշտինման թաս» (195, 218)։

Քառաբ անել, արաբ. karrāt —անգամ, մի քանի անգամ, բազմապատիկ բառից, որ նշանակում է բազմապատկման գործողություն։

Քառայ-Քուռայ—տե՛ս Քուռայ։

Քասայ, պրսկ. kāsa —թաս։ «ընծ արկաթէ քասէն ծախել ամ= 250 հատ երկաթյա թասերը վաճառել եմ» (202)։

Քասր, արաբ. kasr—թերի, պակաս, պակասորդ։ «Լասայ բարբաստ այ, արծաթ կը տան պակաս, յինք կառուն աւելի, էս ջանիպէ քասր=Լհասայում կարդ է, արծաթը պակաս տալիս են՝ ավել վերցնում, սրանից էլ պակասորդ է գոյանում» (176)։

Քար, պրսկ. kār —գործ, քար մրհօվրն—գործի կնիքով, այսինքն այն կնիքով, որն օգտագործվում է տնտեսական գործերին վերաբերող փաստաթղթերը կնքելու համար։ «Նեկղոսին թամասուկ կայ ինձ խետ, ուր դաստախաթօվրն և քար մրհօվն=Նիկողոսի ստացականը ինձ մոտ է, իր ձեռագրով գրված, կնիքով կնքված» (254)։

Քարաստալ, հվներ. հուն. krystallos—բյուրեղ։ «Թասպի, որ է քարաստալ=համրիչ՝ պատրաստված բյուրեղից» (202)։

Քարբար, պրսկ. kāhrobā—սաթ։

Քարդար, պրսկ. kārdār—վեղիր, գործավար, բարձր վարչական պաշտոն քաղաքներում։

Քարիգար, պրսկ. kārgar—սևագործ բանվոր, գործավոր։ «Զլայ տալէ քարիգարի մզուրի այ գնացել=փայլեցնելու համար բանվորի վարձ է գնացել» (312)։ «[Մարգարիթին] ծակելէ, քարիգարի մզուրի տվի=մարգարիտը ծակելու համար գործավորին վարձ տվի» (226)։

Քարսազի, պրսկ. kārsāzī—դումարի հաստատումը, պարարի վճարումը։ «Եռ փողին քարսազին արարել ամ=ես դրամի վճարումը կատարել եմ» (277)։

Քարվանքկի, հվներ. պրսկ. kārevāngāh—կարավանատեղ։ «Բառնալէ և թէ չափուիրէն քարվանքկի բերել է=բարձելու և նավահանգստից մինչև կարավանատեղը բերելու համար վճարվող վարձ» (272)։

Քարվանսարայ, պրսկ. kārevānsarāy—կարավանատուն, իջևան։

Քարվասարայդար, պրսկ. kārevānsarāydār—կարավանատան պետ, պանդոկապետ։ «Բեռան դուս ելնուլէ քարվայսարայդարուն խարճ տվի=բեռները դուրս տանելիս, պանդոկապետին վարձ տվի» (278—279)։

Քարքուն, պրսկ. kārkon—գործավոր, աշխատող, աշխատավոր։ «Քարքունի տվի բեռան կ դիան=մեկ բեռան համար գործավորին վճարեցի 60 դինար» (72)։

Քաֆ— 275 և 277 էջերի դրառումները թույլ են տալիս ասելու, որ խոսքը թանկարժեք քարի մասին է։ «լ բռաթի զմրուխի տվի Ընուփին, քաֆին ջանջալին խըմար... էս բ դանայ քարս կու խասանէ Կաշարկանփուռն» (277)։

Քաֆալայ, արաբ. kafāla(t)—խնամակալություն, երաշխավորություն «մին բռավանայ շինենք քաֆալանայ=առաքում կատարենք, երաշխավորված» (262)։ «Հաղեղաթն գրած այ ամատուն, հավալայ-քաֆալայ այ=իրողությունը մուտքում գրված է, երաշխավորյալ հանձնարարական (փոխանցում) է» (263)։

Քեշայ, թրք. keča—թաղիք, որ օգտագործվում էր ապրանքը հակերի մեջ կապելու համար։ «Քեշայ փաթայ, խակ կապելէ» (84)։

Քէնէ—տե՛ս Քեշայ։

Քէշ, պրսկ.kesh—մի տեսակ առաձգական կտոր, օգտագործվել է նաև բաղնիսում։ «Մին թան յամամի քէշ ամ պռէլ» (270)։ Հիշված է նաև «խամ քէշ», «լահուռի քէշ»։

Քէշտայ. պրսկ. kashida—ձգած, նեղ երկար գործվածք, հակերը կամ տոպրակների բերանը կապելու համար։ «Մին քէշտայ առի, խամի կապելէ խմար» (241)։

Քէսգի. թրք. kasgi—կտրուկ, շտապ, արագ, աբաղընթաց։ «Էկրոյ մին քէսգի ղասիտ աղարկեցինք Սուրաթն=Էկրայից մի շտապ նամակատար ուղարկեցինք Սուրաթ» (136)։

Քընար, պրսկ. kenār—եզր, ափ։ «Գնկին քընարումն=Գանգեսի ափին» (251)։ «Նեղայ-քնար լօնտրինայ=նեղ եզրով անգլիական մահուդ» (69)։ «գ շալէ լխէպին քնար դրի=3 բրդյա վերմակների եզրեր կարել տվի» (274)։

Քըսուր, արաբ. 'kesūr—մնացորդ, մի քիչ, մանրուք, մանր մունր բաներ։ «Քըսուր այ ծախել=մանր մունր բաներ է ծախել» (135)։ «Զիուս քըսուրի և խօրակի—ձիուս համար մանր բաների և ուտելիքի (81)։ «Քըսուր զարհուրիաթ և եմիշ առի=մի քիչ անհրաժեշտ բաներ և միրգ գնեցի» (70)։ «Յովանին քըսուրումն ը շիշայ գուլապ կեր, մինն Նազարէթն վեռեց, է շիշէն ծախեցի=Հովանի մնացորդների մեջ 8 սրվակ վարդաջուր կար, մեկը Նազարեթը վերցրեց, 7 սրվակը վաճառեցի» (97)։

Քիմին, թրք. kim—ոք, ոմն բառից՝ մեկին։ «Քիմին նաղտօվ ամ ծախէլ, քիմին տըվէլ ամ մշկի, քիմին սանադովն=մեկին կանխիկ եմ վաճառել, մեկին տվել եմ մուշկի դիմաց, մեկին էլ՝ ստացականով» (183)։

Քիսակ—քսակ։ «դ թան թալիս առի քիսակի խմար=4 թան վուշյա կտոր գնեցի քսակ կարելու համար» (146)։

Քիսայ, պրսկ. kisa—քսակ, արծաթ դրամի որոշակի քանակ։ «դ քիսայ խարճ ունէը տալու=4 քսակ հարկ ուներ վճարելու» (213)։

Քնար—տե՛ս Քընար։

Քուլի—տե՛ս Քուլիայ։

Քուլիայ, արաբ. kulliyya—ամբողջը, ընդամենը։ «Ելաւ քուլի ջամէն Ե Ξ =ամբողջի գումարը եղավ 5,062» (145)։ «Քուլիէն ինձ ջամա բռնեցի=ամբողջը իմ հաշվում գրեցի» (82)։ «Իմ քուլիայ խրտիս ջամէն ԼԸ քուռի=իմ ողջ գնումների գումարն է 38 քուռի» (87)։

Քունտի, պրսկ. kandan—փորագրել բայից՝ կտորներ դաջելու համար փայտի վրա կատարվող փորագրություն։ Տե՛ս Քանտիգար։

Քունտիգար—տե՛ս Քանտիգար։

Քուռայ, հնդ. Kura—ցածրորակ, հասարակ։ «Սրնճումն քուռայ ճոթն, որ կտան...=Սրինջում որ ցածրորակ կտոր են տալիս...» (78)։ «Քուռայ կտաւ... լաֆաֆի խմար—հասարակ կտավ ծածկոցի (ապրանքները փաթաթելու) համար» (135—136)։ Որոշ ապրանքների տեսականու վերաբերյալ խոսելիս օգտագործված է Քուռայ-Քուռայ կամ Քառայ-Քառայ, որ թվում է, պետք է հասկանալ «լավ ու վատ իրար վրա հաշված», «բոլորը միասին»։ «Առի զII տանկ մարգարիթ, ֆի տանկն է, տվի քառայ-քուռայ բաթէ ազատ, խալիս խն շայիջահանի=գնեցի 6,5 տանկ մարգարիտ, տանկը 7-ով, խառը (լավ ու վատ միասին), առանց տոկոսի, 42 շահիջահանի [ռուփի]» (326), կամ «ժզ լանկաքաշ [փանճէն] ծախեցի թշմրցու դալալին, ժ օր վադայ, քուռայ-քուռայ» (269)։

Քուրթայ, հնդ. kurta—շապիկացու կտոր։ «քուռթայ ալաջայ=գծավոր շապիկացու» (139)։

Քուրի, հնդ. kurī—երկու տասնյակ, որոշ ապրանքների գները նշվում են քուռիով, այսինքն 20 հատանոց կապոցներով (Գանձ. 30, Աշխ. 48 բ)։ Կոստանդի վկայությամբ Բասրայում և այլուր որոշ ապրանքների մեկ քուռին 21 միավորից էր բաղկացած (Աշխ. 30ա)։

Քուրսի, արաբ. korsī—չորս ոտքերով աթոռ, փոքրիկ թախթ, որի տակ հատուկ կրակարանով (մանղալ) կրակ էր դրվում, վրան վերմակ էր գցվում և ձմեռը շուրջը նստում էին և կիսով չափ մտնելով վերմակի տակ՝ տաքանում։ «գ լխէպ կարել տվի քուրսու=3 վերմակ կարել տվի քուրսու համար» (240)։

Քուսր—տե՛ս Քըսուր։

Քրէ, արաբ. kerāyeh—վարձ, վարձով տալ կամ վերցնել։ «Մին ձիոյ քրէ տվի, ինձ վեր ելնելէ, մինչի Լասա=մի ձիան վարձ տվի իմ հեծնելու համար, մինչև Լհասա»։ «Մին բեռան չուրի Զիկիչայ քրէն ժ=մինչև Զիկիչա մեկ բեռան վարձը 10 ռուփի է» (152)։

Քրէֆաշի, արաբ.-թրք. kerāyečī—վարձակալ, կամ վարձկան, վարձված որևէ բան։ «Բաղի քրէքաշին, բաղի քրէին փոզովըն [կու գրեմ]=մնացյալ վարձկանին, մնացյալ վարձի փողով կգրեմ» (151)։

Քոր, հնդ. kot—բերդ, ամրացված կետ, ապահով պահեստ, առևտրական կենտրոն։ «Սուպոնս ծախեցի ինկլիզի քոթումն=սուպոնս վաճառեցի անգլիացոց առևտրական կենտրոնում» (282)։

Քորիգարշի, հնդ. kothigārčī—պարետ, ինչպես նաև պարետություն կամ պարետանոց։ Բնագրից երևում է, որ այդպես է կոչվել այն հաստատությունը, որտեղ նստում էր քաղաքի զինվորական պարետը, որն ապրանքներն ստուգելուց հետո արտոնում էր մուտք գործել քաղաք։ «Ը ճոթ լօնտրինէս քոթիզարշումն չափել ին» (104)։ «ժ ճոթ լօնտրինէս քոթիգարշիցն խանեցի», «Քոթիզարշումն, չօրիդարի (տե՛ս) և ապրանքն տուն բերելէ մըզուրի (վարձ) այ գնացել» (102)։

Քորվալ, հնդ. kotvāl—բերդապետ, բերդապահ կայազորի հրամանատար, նաև ոստիկանապետ, որը հսկում էր քաղաքի առևտրականների ու արհեստավորների գործունեությանը։ Նրան ենթարկվում էին քաղաքի կարգապահական, հաճախ նաև հարկային ու դատական օրգանները։

Քոլոնծան—տե՛ս Գոլոնծան։

Քոսայ, հվներ. արաբ. kos'a—մի տեսակ չորքոտանի կամ բեռնակիր եզ։

Օդայ, թրք. odā—օթևան, բնակարան, սենյակ։ «օդի քրէ այ գնացել=բնակարանի վարձ է տրվել» (84)։ «մին օդայ էր քրէ բռնել=մի սենյակ էր վարձել» (249)։

Օլի ազար—տե՛ս Ազար։

Օվլայ գարմսի, արաբ.-պրսկ. ovlāy-garmesīr—բառացի վերին արևադարձային՝ տաք եղանակ։ «Օվլայ գարմսի, որ բաղի սամպուրի հավայ ունի=վերին արևադարձային, որ այրող քամու եղանակ ունի» (236)։

Օվրանկշայի, պրսկ. ovrangshahī—Դեհլիի սուլթան Մուհի-էդ-դին Օվրանգզիբ Ալամգիրի անունով կտրված արծաթ դրամ։ Մոտավոր տվյալներով 11 գր. արծաթ։

Ֆազիլ, արաբ. fāḍīl—ավելի, օգտագործված է նաև ֆազիլայ (fāḍīla) ձևով, որ նշանակում է ավելորդ, հավելյալ։ «ես ֆազիլ ոսկի ամ խարճել=ես ավել ոսկի եմ ծախսել» (235)։ «բ խակումն դրել այ բնձ թան, է թան Աղաղարն ֆազիլայ ուրնէն այ դրել=երկու հակում դրել է 250 թան, 7 թան Աղաղարը, հավելյալ, իր կողմից է դրել» (88)։

Ֆազիլայ—*տե՛ս Ֆազիլ։*

Ֆահմի. *արաբ.* fahm *արմատից—հասկանալ, գլխի ընկնել բայի հարակատար եղակի երրորդ դեմք։ «Քաթայ տալման, բաթայ-բէհաղն ֆահմի՝ տայ—հաշիվը տալիս իրավացին-անիրավացին հասկանա (պարզի), հետո տա» (267)։*

Ֆաղիր, *արաբ.* faḳīr*—աղքատ, չքավոր, մուրացիկ։ «Ֆաղրի ողորմութիւն ամ տվել» (243)։*

Ֆարդ, *արաբ.* fark *—տարբերություն։ «Նանցան քաշն, չուրի քշմրցուն քաշըն, սուկամումն մին սէվայ ֆարդ այ=նրանց քաշը, քշմիրցու քաշի համեմատ, սուկամում մեկ սեվա տարբերություն ունի» (182)։ «Ըռուզլամումն մին զալամ այ գրած, տեղս էլ մին զալամ շինեցի, որ ֆարդ չընկանէ=օրհաշվում մեկ նվագով էր գրված, այստեղ էլ մեկ նվագով դարձրի, որ տարբերություն չլինի» (319)։*

Ֆարդ, *արաբ.* fard*—մեկ, միակ, միավոր։ Հաշիվները գրված են առանձին թղթերի վրա, որոնք կոչվում են ֆարդ—միավոր (հաշվեթուղթ)։ Թուղթը սպառվելիս ելքն ու մուտքը հաշվվում էր և մնացորդը (բազի) փոխանցվում նոր թղթի կամ ֆարդի սկիզբը և նշվում՝ «էն ֆարդին ջամէն (կամ բազին) բերի գրի էս յիրեսումս»։*

Ֆարտ—*տե՛ս Ֆարդ։*

Ֆըլօրի—*տե՛ս Մառչիլ։*

Ֆրանկեար—*տե՛ս Ֆռանկեար։*

Ֆթնի շիշայ, *հվնբր. տիր.* futna (phe-tang)*—բառն է, որ նշանակում է ոսկու փոշի, որ պահվում էր հատուկ սրվակների մեջ։ «Ք դառտակ ֆթնի շիշայ և ք լի ծախել ամ Յովանին» (103)։*

Ֆի, *արաբ.* fi*—գին, արժեք, յուրաքանչյուր հատի, քաշի, երկարության միավորի գինը. արդի հաշվապահության մեջ «à» (40 աթոռ, à 15 ռուբլով)։ «Իմ է խակս, որ աղարկել այ Սուրաթն, քրէ այ տվել ֆի զուէրն* pII*=իմ 7 հակը, որ ուղարկել է Սուրաթ, վարձ է տվել, յուրաքանչյուր լիտրին 2,65» (89)։ «Իմ ք ճոթ լօնտրինէն ծախեցի Նավարսաթի որդի Բարղամին, ...վեր արեկ զնծք դազ, ֆի դազն* qII*, որ ելաւ ջամէն* բոքնծք*=իմ 8 կտոր լոնտրինան վաճառեցի Նավասարդի որդի Բարղամին, ստացվեց 352 դազ, դազը՝ 6,5-ով, գումարը եղավ 2288» (75)։*

Ֆուրայ, *արաբ.* fūta *—որոշակի չափսերով կտրված կտոր, որ մահմեդականներն օգտագործում էին բաղնիքում և սովորաբար վաճառվում էր զույգով։ «մին ջօռ ֆութայ էլ մին առի=մեկ զույգ ֆութա էլ մեկ գնեցի» (260)։*

Ֆուն—*քաշի միավոր։ Բնագրում ասված է, որ 10 ֆունը մեկ մսխալ է (221), այս հաշվով ֆունը հավասար է 0,37 գրամի։ Սակայն Կոստանդի մոտ 5 ֆունն է մեկ մսխալ։ Վերլուծելով Տիրեթում օգտագործվող լանկ (տե՛ս) քաշը, գրում է. «Մին լանկն ժ (10) մսխալ այ... մին մսխալն ե (5) ֆուն այ»։ Վերջում բացատրելով նաև, որ «Բուքանտայ ժ (10) մըսխալն Հաջամատան ը մսխալ դուս գկայ» (Աշխ. 119 ա)։*

Ֆուրզ, *պրսկ.* forz*—նավամատույց ծովափում կամ խոշոր գետերի ափին։ «Ապրանքս Սուրաթին ֆուրզիցն Նաղարեթին անման խանեցինք=ապրանքս Սուրաթի նավամատույցից Նաղարեթի անունով հանեցինք» (73—74)։*

Ֆռանկ—*ֆրանսիական, եվրոպական, եվրոպացի։*

Ֆռանկեար—*ֆրանսերեն, կամ եվրոպական լեզուներով։*

Ֆռանկի, *պրսկ.* farangī *—եվրոպական, ֆրանսիական։*

Ֆրանկսիզ—*ֆրանսիացի։*

Ֆրուխտ. *պրսկ.* frūkht *—վաճառք։ «զ փոթա չայ Նեկղոսին խըսէպումն այ գրած, էն ամ տվել, էնտուր ոնչ խրիտ այ գրած, ոնչ ֆրուխտ=3 փոթա թեյ Նիկողոսի հաշվում է գրած, այն եմ տվել, նրան ոչ առք է գրված ոչ վաճառք» (186)։*

Ֆօճ, *արաբ.* fovdj*—գունդ, զորագունդ։ Բնագրում՝ մեծ թվով պաշտոնյաներ։ «Դանտու չափութրիցն ա ֆօճ ին եկել, հալի մահալի, որ բեռներն դրին օդումն մրհեցին=Դանտու մաքսատնից շտապ մի գունդ (բազմաթիվ) մարդ էր եկել, որ բեռներս դրեցին սենյակում և կնքեցին» (251)։*

ՑԱՆԿԵՐ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աբրահամ, *որդի գազկցի Կարապետի 156, 159, 163, 171, 174, 177, 206, 227, 230, 322, 335, 353*
Ագիզ, *գափու 207*
Ագիզ, *զաֆրան 210, 211, 215*
Ագիզ, *շամու 207*
Ալավերդի, *184, 204*
Ալու *226*
Աղազար *77, 79—81, 85, 87, 88, 90, 91, 94, 98, 104—106, 115, 290—296, 301, 303, 309*
Աղազար, *հայր Մանուկի 318*
Աղամալ, *որդի Թորոսի, եղբայր Շադէլտիի 104, 106, 115*
Աղան, *խումցի 210*
Անի-Անեոլ *202, 212, 230, 232*
Անի-Կծոծփոլայ *տե՛ս Կծոծփոլայ*
Անի-Կոնե, *տանտեր 160*
Անի-Տուկ *206*
Ամդօ *224*
Այնփոլայ *152*
Անեոլ, *նէմօ, 183, 196 տե՛ս նաև Անի-Անեոլ*
Անեոլիր *տե՛ս Անեոլ*
Ասլան, *Ակնցի 186*
Ավդուլ, *Բաբայի ծառան 115, 118, 119, 306, 310, 311*
Ավետիկ *տե՛ս Ավետիք*
Ավետիք, *պարոն, որդի մուղդուսի Պետրոսի 69, 70, 79, 81—86, 90, 95, 98, 104, 106, 107, 109—119, 132, 134, 135, 137, 142, 155, 170, 290, 299, 301, 303—309, 311—313, 335*
Ատում, *վանեցի, հայր Թումաջանի 93, 108*
Աֆազ *210, 215*

Բաբա, *որդի Թաղվէրանենց Սուլթանումի 74, 81—82, 94, 111, 112, 114—117, 288, 306, 307, 309, 310*
Բաբա, *որդի Փանոսի 103, 104*
Բաբբսկիենկ, *մուքի 150*
Բաբուռ *250*
Բաբիարի *144*
Բալդիա *245*
Բաղդասար *69*
Բաղում, *երևանցի (Նոր Ջուղայի Բաղամաս) 70, 77, 79*
Բաղր-բանկ *208*
Բաբեղամ *տե՛ս Բարղամ*
Բարղամ, *որդի Նավարսաթի 75—76, 78, 102—104, 106, 107, 118, 287, 289*
Բիլման *265*
Բիրբանի, *բալդի 143*
Բիրջու, *դալալ 82, 298*
Բիմ *211*
Բուին, *շամու 234*

Գալուց, *որդի Մաթէրի 97*
Գամպայ *184, 207, 209, 210, 213—216, 227*
Գայոու, *տե՛ս Գառու*
Գանգռում, *չիբիդար 87, 88*
Գանձալ *202*
Գառու, *նիվար 154, 173—175, 179, 180, 182, 189, 202, 204, 225, 229, 233, 234, 254*
Գասպար, *շամբեցի 92—94, 97, 99, 293, 296, 297, 304*
Գարսու Գամղաս-Նամղաս *82*
Գեղան, *նավայ 184*
Գերամ, *հայր խոջայ Զաքարի և Ըմպրում-աղի 69*
Գնդլայ, *նաֆար 181, 188*
Գուբուկ *300*
Գումի, *ինջա, հայր Մուքէլի և Գազի 104*
Գառու *տե՛ս Գառու*
Գրիգոր, *հայր Մկրտչի 102*
Գրիգոր, *որդի Մուշեղենց Փանոսի 95, 103, 288*
Գրիգոր, *ուստա 264*
Գրիկոր, *հայր խաչիկի 260*
Գրիկոր *(ոմն) 282*

Դամայսայի *178, 354*
Դամուշ, *նէմօ 161*
Դավիթ, *հայր Յովանէսի 69, 191*

Դաւուր 183, 184, 201, 205—207, 211, 213, 215, 216, 218, 219, 227
Դարպա, դէվ 137, 170
Դարվան, մուսի 104, 106, 266, 269, 277, 279, 280
Դիլաք, հայր Ըստէփանի 98
Դինրնաք, սառաֆ 78
Դինտու, նիրբու 211
Դենտպան, նիվար 195
Դիվշանտ 207, 209
Դունիլա 233, 234
Դուջա, նէաֆօ 197, 211
Դուրբի, նաեք 212
Դուրկիդաս 204, 209, 220, 238
Դուրուկ տե՛ս Միրզայ-Դուրուկ
Դօրժա, տանտեր, եղբայր Յրին-Դարկեայի 198

Զաքար, խոջայ, որդի Գերաքի 69
Զինշնարան 275

Էլդրում, հայր Մարտիրոսի 94, 98, 301
Էրաշ, պապ Յարոնի 83

Ըմպրում-աղա, պարոն, որդի Գերաքի 69
Ընաճաք տե՛ս Հաֆիզ ընահաթ
Ընուփ, դալալ 142, 250, 252—255, 257, 259—263, 266, 267, 269, 270, 274—279, 282, 357
Ըռանիմ, պուտլու 206
Ըսմաիլ տե՛ս Ըսմահէլ
Ըսմահէլ, խոջայ 153, 164, 173, 178, 339, 344, 357
Ըսպանդիար, խան 236
Ըստէփան, հայր Վարդանէսի 273
Ըստէփան, որդի Դիլաքի 98
Ըրդուշ 210

Թաթոս, Շօռէնց 77
Թամ, դերձակ 99
Թիմշանտ, նվիսանդայ 91
Թորոս, հայր Աղամալի և Շագէլտիի 104
Թումաջան, որդի վանեցի Ատումի 93, 94, 108
Թուն 85
Թուրշիրամ 209
Թոփն, շամու 216
Թրիֆամ, դալալ 91—99, 106, 293, 301

Իսայի, Լուսիկէնց 265, 266, 269—271, 281—283
Իսամ 207

Լամուզոն, քօթվալ 160, 168
Լայնուրբու 213
Լօվզան, ցամփօ 137, 152, 174, 175, 203, 221, 228

Խաչիկ, հայր Յովանի 87, 92
Խաչիկ, որդի Գրիգորի 260, 266
Մատուր, որդի մուղդասի Ղուկասի 153, 157—159, 164, 174—176, 178—180, 185, 187, 202, 221, 222, 228, 230—233, 235, 241, 317, 328, 330—332, 335, 338, 339, 341, 346, 353, 357
Մատուր, հայր Յակոբջանի 120, 131
Մատուր, բաշալ, Պետրոսի պապը 201

Կանայ-Զնֆու, նիվար 153, 162, 163, 169, 171—173, 177, 178, 182, 183, 188, 189, 202, 204, 218, 219, 314, 316, 317, 322, 326, 353, 354
Կարապետ, գազկցի, հայր Աբրահամի 156, 159, 171, 174
Կափշու 216, 233
Կիսին, լամայ 175, 221
Կծոծփոլայ, նէմօ 152
Կոպալ տե՛ս Կոպալդաս
Կոպալդաս, դալալ 134, 137, 313

Հազուր, մոլա 191, 212
Հակու, շամու 211
Հարի, նաեք 237, 247
Հարուն 282
Հաֆրզ 208, 215, 225
Հաֆիզ ընահաթ, քըշմրցի 168, 173, 174, 179, 315, 316

Ղախմ 204, 207, 211, 212, 215, 239, 245, 252,
Ղարազօզ, հայր Մուրատխանի 74, 252
Ղարիմ տե՛ս Ղախմ
Ղրզուն 206
Ղուկաս, մուղդասի, հայր Մատուրի 157, 158, 164
Ղօնբան, դէլու 210, 216, 228, 269
Ղօնբաշ տե՛ս Ղօնթաճ
Ղօրան տե՛ս Ղօնթաճ

Մաղան, դալալ 74, 75, 92
Մաղօ, նիվար 179, 180, 209, 211
Մաթէր, հայր գալուցի 97
Մարոս, Մէլիջանենց 173, 179, 184, 188, 191—198, 201, 210, 212, 216, 217, 233, 238—240, 242, 244, 252—254, 256, 259, 263, 268, 270, 271, 273, 275—278, 282, 283, 357
Մարոս, ընկեր ագուլեցի Ոսկանի 74
Մանմաղ, հաջի 207, 212, 213
Մանրվէլ 104, 110, 277, 280, 281
Մանրվէլ, նոքար 269
Մանիրամ, դալալ 139
Մանոար, բանսարի 137, 164, 173, 179, 357

Մանուկ, որդի Աղաղարի 318
Մանվէլ տե՛ս Մանրվէլ
Մարգարբ, մուսի 103, 104, 106, 108
Մարկոս, որդի Թոփչէնց Պողոսի 92—94, 301
Մարուրէ, Լուսիկէնց 265, 266, 269—271, 273, 282
Մարտիրոս, հայր Նեկղոսի 193, 217
Մարտիրոս, որդի Էլդրումի 94, 98, 301
Մէլիջան, որդի Պողոսի 153, 159, 174—176, 178, 179, 182—187, 189, 202, 210, 213, 215, 216, 221—224, 226, 229, 230, 233—235, 237, 242, 269, 270, 315—317, 328, 331, 333, 334, 337, 340, 341
Միրզայ-Դուրուկ 273
Մկրտիչ, որդի Գրիգորի 102
Մկրտում, որդի Խանումաղենց Յովանէսի 94, 95, 100, 104, 106, 107, 111
Մնացական, Մատղաշ 309
Մնոար, բանսարի 236, 241
Մուռը, դէվ 153, 160, 172, 177, 207, 316, 317, 322, 326, 354
Մուսէս, Նաղջի 87
Մուսէս, Ավետիքի գործակատար (տղա) 70
Մուսլիմ, Նաշու 203, 205
Մուրատ 184, 185, 189, 191, 204, 207, 210, 212, 218—220, 257, 260, 270
Մուրատխան, որդի Ղարազօզի 74
Մուրադխան, որդի Ուրդիխանի 81, 83—85, 302, 304
Մուքէլ, որդի Գուբի 77, 104, 289
Մուքի 243

Յարիր, շամու 207
Յակոբ 196, 207, 208
Յակոբջան, Զաքուճ 260
Յակոբջան, որդի Մատուրի 120, 131
Յարոն, թոռ էրաշի 83—85
Յիրանանտ 277
Յովան, որդի Խաչիկի 82, 87, 92, 94, 95
Յովան, Շիրազի, որդի Պողոսի 93, 95, 96, 99—103, 106—114, 116—119, 132, 134—136, 295, 300, 305—307, 310—312
Յովանէս, որդի Սարգսի 136, 164, 191, 204, 213, 232, 334
Յովանէս, հայր Փանոսի 281
Յովանէս, որդի Դավթի 69, 74, 82, 107, 111, 119, 132, 134, 191, 262, 267, 305, 357
Յովանէս, Խանումաղենց, հայր Մկրտումի 94

Նազարէթ, որդի Բաղդասարի 69, 73—75, 92, 94, 97, 101, 111, 112, 136, 287, 288, 301, 313
Նասու, դէվ 175, 207, 221
Նավարսար հայր Բարղամի 75, 78, 104, 118, 287
Նեկղոս, որդի Մարտիրոսի 183—185, 187, 189, 191, 193—195, 201, 202, 204, 205, 209, 210, 214—218, 226—228, 230—235, 238, 250, 253, 254, 256, 263, 271
Նէմտան, դէվ 181
Նէմօր, ճալնկին 313, 351
Նուրիջան 211, 223, 224, 227

Նազէլտի, զասապ, որդի Թորոսի, եղբայր Աղամալի 104
Նաին տե՛ս Շահին
Նանին 208, 242
Նամբեցի տե՛ս Գասպար շամբեցի
Նեխ 209, 213

Ոսկան, Ագուլեցի 74

Ումպուշար 206, 210
Ուրգեն, շամու 162
Ուրդիխան, հայր Մուրատխանի 81

Զաղուրշա 210
Զայփուկ 206
Զիրիլ, շամու 210
Զուշուր 345

Պետրոս, վարպետ 238, 249, 251, 259, 278
Պետրոս, մահտեսի, հայր Ավետիքի 69
Պետրոս, Զալմազ, նօքար 134, 161, 164
Պետրոս, Բաշալ Մատուրի թոռ 261—264, 267
Պետրոս, հայր Պողոսի 134
Պետրոս 211, 214
Պէնձօ 206
Պրնշիկ տե՛ս Պնչիկ
Պնչիկ 202, 203, 224
Պողոս, Թոփչէնց, հայր Մարկոսի 92
Պողոս, հայր Շիրազի Յովանի 93, 107, 305
Պողոս, որդի Պետրոսի 134
Պողոս, հայր Մէլիջանի 159
Պողոս, տղայ 141, 142, 170, 174, 175, 179, 181
Պումուլ, դէվայ-ճալնկին 162, 167

Չենքի, դալալ 257—259
Չէկալիան, նիվար 153, 163, 172, 173, 178, 181, 316, 317, 322, 326, 338, 354
Չիկչվան 120, 131
Չունսի, դերձակ 216
Չուտի, դերձակ 211

Սարուր 185, 203, 208, 212, 213, 225
Սարսար, նաֆար 207, 210

Սպեղ, նաչու 218, 220
Սայի-բէգ 78
Սարգիս, հայր Յովանէսի 136, 164, 191
Սէֆի-խան 249
Սրբարզան 206
Սիմոն 74
Սուլթանում, Թաղվէրանենց, հայր խոջա-Բաբայի 74
Սուփայ, գալալ 78—80, 91

Վալապդաս 81—83, 85
Վարդանէս, որդի Ըստէփանի 273

Տալզան 211
Տատան, դէվայ 216
Տելիփօլայ 152
Տէլ, ցամփօ 202
Տէր-Պետրոս տե՛ս Պետրոս, հայր Պողոսի

Տրիֆ-Գարկեայ, եղբայր տանտէր Գօրժայի 198

Փանոս, գալալ 257, 258
Փանոս, Թօփալ, եղբայր Ավետիքի 74
Փանոս, Մուշեղենց, հայր Գրիգորի 95, 103
Փանոս, որդի Յովանէսի 281
Փանոս, տղայ 266, 269—271, 276

Քազակ, մուրիայ 150
Քիրուենկայ, նէմօ 211
Քուրա 206
Քուրու 214—216

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Ագուլիս 74
Ալամգանջ 139
Ալեմփուր 279
Ակն 186
Ամդայնազար 103, 104 տե՛ս նաև Լաշկար
Անշալայ 309

Բաղդամ 243—247, 348
Բաքնայայ 248
Բանկայզար 230, 232—234
Բանարիս տե՛ս Բնարիս
Բանդար 140, 338
Բանդար-Աբաս 70, 71, 73, 74, 95
Բանդար-ի Սուրաթ տե՛ս Սուրաթ
Բանկալայ 97
Բասրայ 305
Բէրամփուր 77, 79, 105, 113
Բէֆրնթփուր 260
Բիար տե՛ս Բիհար
Բիհար 140, 159, 260, 265, 266
Բնարիս 114, 135, 136, 138—140, 147, 158, 159, 166, 277, 311, 334, 342
Բուրանդ տե՛ս Բութանտ
Բուրանտ 114—119, 132, 136, 141, 191, 306, 308—310, 319, 345
Բուրսայ 74
Բրվօն 93, 94, 300
Բրվօջ տե՛ս Բրվօն

Դագրիզար 248
Դագուվալ 289
Դազկ (Նոր-Ջուղայի թաղամաս) 156
Դանդամինփուր 248
Դար 251
Դարասու 72
Դրնդամ տե՛ս Գրնթաք
Դրնբամ, գետ 143
Դրնկենփուր տե՛ս Գնկինփուր
Դնկայ, գետ 251
Դնկէփուր տե՛ս Գնկինփուր
Դնկինփուր 143, 249
Դնֆրայ 248
Դորբփուր 347
Դուշրար 100
Դօվրիբաս 246

Դազրմա 331
Դամ 211, 221, 230, 232, 235, 246
Դամամի 248
Դանտի 251
Դարբանկայ 237, 245
Դօվլաբայպատ 328

Եալվա 345
Երուսաղէմ 191
Երևան տե՛ս Յարևան

Զիգիչայ տե՛ս Զիկիչայ
Զիկիչայ 137, 152, 164, 195, 197, 220, 335, 345

Էկրայ 76, 79, 81—87, 90—94, 99, 104, 106—111, 113—115, 117—120, 132, 134—139, 142, 146, 148, 149, 155, 157, 158, 160, 161, 163, 164, 170, 240, 260, 270, 292, 296, 299, 303—310, 312, 316, 317, 319, 325—332, 334, 335, 348—350, 353

Ըռաջմալ 261, 279
Ըռաջվարայ 248, 357
Ըսպահան 69—71, 73, 74, 92—96, 108, 113, 114, 132, 153, 182, 185, 193, 194, 215, 217, 220, 254, 282, 288, 293, 304, 305, 310—312
Ըստամբոլ 74

Թաջզանջ (էկրայում) 84, 114, 135, 303, 330
Թարվիզ 71, 137
Թիապ (Բանդար—Աբասում) 71
Թուրի 158

Իզմիր 74

Լադաղ 193, 217
Լանուտ 148, 170
Լանուտփուր 107, 305
Լանուփուր տե՛ս Լանուտփուր
Լաշկար 103, 105, 117, 118, տես նաև Ամդայնազար
Լաշմինար 277
Լատ 71
Լասայ 137, 152, 153, 156, 164, 168, 170, 171, 174, 184, 187, 188, 191, 193, 196—198, 205, 215, 218, 219, 221, 228, 230, 236, 237, 239—244, 252, 315, 317, 319, 320—322, 326, 328—335, 337—347, 350, 351, 357
Լամայուտ 146, 158, 261, 262, 270, 273, 278
Լիսաի 147, 150, 198, 199, 348

Խէրապատ 79, 81, 84, 85, 107, 108, 113—116, 118, 119, 302—304, 306—309
Խրայ 207
Խուրջայ 81, 82, 84—86, 96, 117, 299, 302
Խում 210

Կալկարայ 282
Կանօղ 113, 114, 307
Կաշարկեանփուր 277
Կօտրանայ 248

Հանիփուր տե՛ս Հաջիփուր
Հաջիփուր 247—251, 259, 277, 337
Հերանանտ 277, 282
Հուկլի 264, 265, 266, 270, 271, 273, 277, 278, 280
Հօրը(՞) 221

Ճալնի 187
Ճասուրնա 212

Մազար 146
Մանիար 70
Մաշառուայպատ 340
Մարվանփուր 236
Մինափուր 143, 144
Մլրան 135, 136, 329
Մուզայֆարփուր 248

Յաջիփուր տե՛ս Հաջիփուր
Յարևան (Նոր Ջուղայի թաղամաս) 70, 77, 79
Յրնդրստան տե՛ս Յընդուստան
Յրնդուստան 69, 119, 132, 135, 170, 206, 218, 242, 247, 330, 336, 350
Յրնդստան տե՛ս Յընդուստան
Յուկլի տե՛ս Հուկլի
Յօրբար 176, 207, 225, 232, 234

Նարանզար 248
Նարբրդէնու, գետ 105, 118
Նէպալ տե՛ս Նէքպալ
Նէմբալ տե՛ս Նէքպալ
Նէքպալ 135—137, 140, 143—145, 147, 149, 150, 157, 158, 164, 170, 171, 173, 178, 182—184, 192, 195, 198—201, 218, 220, 225, 226, 236, 237, 240, 242, 245, 247, 249, 251, 256, 259, 265, 266, 271, 329—333,337—339, 341—347, 350, 357
Նէքպայլ տե՛ս Նէքպալ
Նէքպատ տե՛ս Նէքպալ

Շազադափուր տե՛ս Շաղադփուր
Շազադփուր 138, 158, 332, 351
Շամբ 92—94, 97, 99, 293, 296, 297, 304
Շիրազ 69—71, 73, 77, 79, 93, 95, 99, 102, 104, 108, 305
Շմուրապատ 138

Ռնուզուր 135

Զանանէր 248

Պատրինկայ 143—145, 236, 243, 245—248, 250, 259, 337
Պասրայ 93, 95, 96, 108, 109, 153, 293, 295, 298, 300, 304
Պարսպատիա 238
Պուսան 183

Չալալփուր 265, 266
Չանապատ 82, 83, 260, 299
Չանկալ 238
Չլալփուր տե՛ս Չալալփուր
Չլէսէր 135
Չմնա, գետ 138
Չուղայ 69

Սամսու 238

Սանֆու 246
Սանֆо 200
Սլինկ 157, 159, 174, 175, 177, 178, 181—185, 187, 189, 201—206, 209, 210, 212, 214, 215, 221, 226—228, 230, 233, 240, 256, 259, 321
Սուրաթ 69, 70, 73—75, 77, 80—82, 84, 86—91, 93—98, 100, 102—104, 106, 108, 109, 111—116, 118, 132, 134, 136, 287, 288, 292—294, 296—301, 303, 305—311, 313
Սրինն 76—81, 85—88, 90—94, 98, 99, 104—106, 115, 119, 289, 290, 292, 293, 295, 297, 299, 300, 303, 309

Վազիրխան 138
Վալանդ 138, 333
Վան 93
Վանք (Ս. Ամենափրկիչ) 357

Տինկրայ 237

Փարանայ 132, 135—143, 147, 149, 150, 156, 158, 159, 164, 170, 194, 215, 219, 220, 228, 238, 245, 247, 248—252, 254, 265, 277—281, 333—335, 337—344, 349, 350, 357
Փանօվար 279
Փէր 259

Քարմանտու 136, 147, 200, 238, 244, 245, 333, 338, 347, 348
Քանկեայ 214
Քանսա 331, 338, 341
Քամպու 246
Քասայ 150, 151, 198, 199, 331, 345
Քասար 140, 158, 163
Քըշնարկի 87, 92
Քիլիսուրմ[ա] 71
Քշմիր 179, 315, 350
Քշմիր տե՛ս Քշմիր
Քուրի 135, 150, 152, 164, 170, 192, 197—200, 231, 237, 322, 329, 331, 335, 345—347
Քունկի 95, 206, 293, 304

Օվրանկապատ 75, 76, 78, 93—95, 101—107, 110, 115, 117, 287—289
Օվրանկշայի (՞) 257, 262, 271

Ֆարուռայ 273, 279

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 5
Հովհաննես Ջուղայեցու Հաշվետումարը 8
Ռուզնամա 67
Քաթաներ 285
Բառարան՝ անծանոթ և օտար բառերի ու տերմինների 359
Յանկեր 419

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՏԵՐ-ԴԱՎԹՅԱՆ ԶՈՒՂԱՅԵՑՈՒ ՀԱՇՎԵՏՈՒՄԱՐԸ

Աշխատասիրությամբ
ԼԵՎՈՆ ՍՏԵՓԱՆԻ ԽԱՉԻԿՅԱՆԻ ԵՎ
ՀԱԿՈԲ ԴԱՎԹԻ ՓԱՓԱԶՅԱՆԻ

Տպագրվում է Մաշտոցի անվան Մատենադարանի
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչական խմբագիր
Ժ. Մ. ԱԴՈՆՑ
Գեղարվեստական խմբագիր
Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱՆՅԱՆ
Տեխնիկական խմբագիր
Ռ. Խ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Սրբագրիչներ՝
Ջ. Գ. ՆԱԹԱՆՅԱՆ, Է. Ա. ՍՈՒԽԻԿՅԱՆ

Հանձնված է շարվածքի 4.09.1980 թ.։ Ստորագրված է տպագրության 26.01. 1984 թ.։ Չափը 70×108¹/₁₆, թուղթ № 1։ Տառատեսակ «Գրքի սովորական», բարձր տպագրություն։ Պայմ. 37,45 մամ., տպագր. 26,75 ներկ. մամուլ։ Հրատ.-հաշվարկ. 28,96 մամուլ։ Տպաքանակ 1000։ Հրատ. № 5779։ Պատվեր № 815։ Գինը 4 ռ 90 կոպ.։

Типография Издательства АН Арм.ССР, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24.
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24։
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության Էջմիածնի տպարան
Типография Издательства АН Арм. ССР, 378310, г. Эчмиадзин.